

Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2 (26)

2 0 2 3

Գյումրի 2023

«Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուն հիմնադրվել է 1998թ.
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտխորհրդի որոշմամբ:
Ընդգրկված է ՀՀ ԿԳՄՍՆ ԲՈԿ-ի կողմից ընդունված պարբերականների ցանկում:

ISSN 1829-4316
eISSN 2953-8076
DOI: 10.52971/18294316

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝

ՀԱՅՐԱՊԵՏՑԱՆ ՄԵՐԳՈ՝ (գլխավոր խմբագիր) բան. գիտ. դոկտոր, ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ
ԱԿՈՂՈՎ ԱՐԿԱՐԻ՝ (գլխ. խմբագրի տեղակալ), պատմ. գիտ. թեկն., ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ
ԲԱԶԵՑԱՆ ԿԱՐԻՆԵ՝ (պատ. քարտուղար) պատմ. գիտ. թեկն., ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ

ԲԱՐԱԼՅԱՆ ՄԵՐԳԵՑ՝ բան. գիտ. դոկտոր, ԳԱԱ ՀԱԻ, Երևան, ՀՀ
ԲԱԼՅԱՆ ԿԱՐԵՆ՝ ճարտ. թեկնածու, պրոֆեսոր, IAAM թղթակից անդամ Մոսկվա, ՌԴ
ԳՐԻԳՈՐՅԱՆ /Հայկազուն/ ԱՇՈՏ՝ ճարտ. դոկտոր, պրոֆեսոր, ՃԱԹԻ, Երևան, ՀՀ
ՂԵՎԵՆՂԵՐ ԿՈՒՄԱՐ՝ բան. գիտ. դոկտոր PhD, ԲՀՀ, Կուրուկչետրա, Հնդկաստան
ԽԱՉՏՉՑԱՆ ԳՈՒՐԳԵՆ՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՎՊՀ, Վանաձոր, ՀՀ
ԽԱՉՏԱՐՅԱՆ ԼԱԼԻԿ՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՉՊՄՀ, Երևան, ՀՀ
ԽԵՍՉՑԱՆ ԷՍԹԵՐ՝ բան. գիտ. թեկնածու, ԳԱԱ ՀԱԻ, Երևան, ՀՀ
ԽՈՍՐՈՒՅՎԱ ԱՆԱՀԻՏ՝ պատմ. գիտ. թեկնածու, Լորթ Փարք համալսարան, Չիկագո, ԱՄՆ
ԿԱՆՈՐ ՌՈՒՄԼԱՆ՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՄՊՀ, Մայկոպ, ՌԴ
ԿԱՎԵՆԼԻՇՎԻԻ ՌՈՒՆ՝ պատմ. գիտ. դոկտոր, ՍՁՊՀ, Ախալցխա, Վրաստան
ԿՐՅՈՒՉՎՈՎ ԻԳՈՐ՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀԿԴՀ, Ստավրոպոլ, ՌԴ
ՀԱՅՐԱՊԵՏՑԱՆ ԱՐՄԵՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ, ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ՝ արվ. թեկնածու, դոցենտ ԵՊԿ ԳՄ, Գյումրի, ՀՀ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
ՀՈՒՍԿԱ ՅԱԹԻՄԵՏ՝ բան. գիտ., թեկնածու, ՄՊՏՀ, Վորոնեժ, ՌԴ
ՂԱԶԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ՝ աստվածաբանության դոկտոր, ԱՊՀ, Աթենք, Հունաստան
ՄՍՀԵ ԺԱՆ - ՊԻԵՐ՝ հայագետ, ԱԳԱ անդամ, Փարիզ, Ֆրանսիա
ՄՄՐԳԱՐՅԱՆ ԱՐԱՔՍ՝ արվ. թեկնածու, դոցենտ ԵԳԱ ԳՄ, Գյումրի, ՀՀ
ՄՄՐՈՒՔՅԱՆ ԱՐՄԵՆ՝ պատմ. գիտ. դոկտոր, ԳԱԱ ՊԻ, Երևան, ՀՀ
ՄԿՈՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ՝ մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԳՐԻՍ՝ պատմ. գիտ. դոկտոր, ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ
ՌՈՒՆԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ՝ արվ. դոկտոր, ԳԱԱ ԱԻ, Երևան, ՀՀ
ՄԱՂՈՎՍԿԻ ՄԻՒՍԱՆ՝ պատմ. գիտ. դոկտոր PhD, ՎՀ, Վարշավա, Լեհաստան
ՄԱՀԱԿՅԱՆ ԿԱՐԻՆԵ՝ հոգ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԲԵՆԻԿ՝ պատմ. գիտ. թեկնածու, ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ
ՑԱԿԱՆՅԱՆ ՌՈՒՄԼԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, ԳԱԱ ԱԻ, Երևան, ՀՀ
ՕՐԴՈՒՆՅԱՆ ԷՄԻԼ՝ քաղ. գիտ. թեկնածու, ԳԱԱ ՓՄԻԻ, Երևան, ՀՀ

ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ». N 2 (26) /
Հայագիտություն և հասարակական գիտություններ // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի հոդվածների
ժողովածու Խմբ. խորհուրդ՝ Ս. Հայրապետյան և այլք.- Գյումրի, «Ռ.Ավետիսյան» ԱԶ, 2023, -220 էջ:

Խմբագրության հասցեն՝ 3101, ՀՀ, Գյումրի, Վ.Սարգսյան 5ա:
էլ. հասցեն՝ scient.works@shirakcenter.sci.am
կայքէջը՝ www.shirakcenter.sci.am
Հեռախոսը՝ +374/94/ 411 228

ISSN 1829-4316
eISSN 2953-8076
DOI: 10.52971/18294316

© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2023

Республика Армения
Национальная академия наук
Ширакский центр арменоведческих исследований

НАУЧНЫЕ ТРУДЫ

ВЫПУСК

2 (26)

EDITION

SCIENTIFIC WORKS

Shirak Centre for Armenological Studies
National Academy of Sciences
Republic of Armenia

Гюмри 2023 Gyumri

Периодический сборник статей «Научные труды» учрежден Ученым советом ШЦАИ НАН РА в 1998.
Входит в перечень периодических изданий, утвержденных ВАК-ом МОНКС РА.

The periodical collection of “Scientific Works” established in 1998 by the decision of the scientific board of Shirak’s Center of Armenological Studies of NAS, is indexed in the list of SCC MESCS RA.

ISSN 1829-4316
eISSN 2953-8076
DOI: 10.52971/18294316

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

АЙРАПЕТЯН СЕРГО - главный редактор, РА
АКОПОВ АРКАДИЙ- зам. гл. редактора, РА
БАЗЕЯН КАРИНЕ- отв. секретарь, РА

АЙРАПЕТЯН АРМЕН, РА
АРУТЮНЯН АСМИК, РА
БАДАЛЯН СЕРГЕЙ, РА
БАЛЪЯН КАРЕН, РФ
ВАРДАНЯН БЕНИК, РА
ГРИГОРЯН (АЙКАЗУН) АШОТ, РА
ДЕВЕНДЕР КУМАР, Индия
ЖАН-ПИЕР МАЭ, Франция
КАВРЕЛИШВИЛИ РОИН, Грузия
КАЗАРЯН ГЕВОРГ, Греция
КАНДОР РУСЛАН, РФ
КРЮЧКОВ ИГОРЬ, РФ
МАРГАРЯН АРАКС, РА
МАРУКЯН АРМЕН, РА
МКОЯН АРТАШЕС, РА
ОГАНИСЯН АРТАК, РА
ОРДУХАНИЯН ЭМИЛЬ, РА
ПЕТРОСЯН САРГИС, РА
РУХКЯН МАРГАРИТ, РА
СААКЯН КАРИНЕ, РА
САДЛОВСКИЙ МИХАЛ, Польша
ХАЧАТРЯН ГУРГЕН, РА
ХАЧАТРЯН ЛАЛИК, РА
ХЕМЧЯН ЭСТЕР, РА
ХОСРОЕВА АНАИТ, США
ХУАКО ФАТИМЕТ, РФ
ЦАКАНЯН РУСЛАН, РА

EDITORIAL BOARD

HAYRAPETYAN SERGO editor-in-chief, RA
AKOPOV ARKADI vice editor, RA
BAZEYAN KARINE secretary, RA

HAYRAPETYAN ARMEN, RA
HARUTYUNYAN HASMIK, RA
BADALYAN SERGEY, RA
BALYAN KAREN, RF
VARDANYAN BENIK RA,
GRIGORYAN (HAYKAZUN) ASHOT, RA
DEVENDER KUMAR, India
JAN-PIER MAHE, France
KAVREISHVILI ROIN, Georgia
GHAZARYAN GEVORG, Greece
KANDOR RUSLAN, RF
KRYUCHKOV IGOR, RF
MARGARYAN ARAKS, RA
MARUQYAN ARMEN, RA
MKOYAN ARTASHES, RA
HOVHANNISYAN ARTAK, RA
ORDUKHANYAN EMIL, RA
PETROSYAN SARGIS, RA
RUKHKYAN MARGARIT, RA
SAHAKYAN KARINE, RA
SADLOVSKI MIKHAL, Poland
KHACHATRYAN GURGEN, RA
KHACHATRYAN LALIK, RA
KHEMCHYAN ESTER, RA
KHOSROEVA ANAHIT, USA
HUAKO FATHIMET, RF
TSAKANYAN RUSLAN, RA

“Научные труды” ШЦАИ НАН РА NN 2(26). Арменоведческие и общественные науки / НАН РА:
Сборник статей: Редакционный. совет: С.Айрапетян и др.: -Гюмри, “ЧП Р.Аветисян”, 2023, 220 с.

“Scientific Works”N2(26)of SCAS of NAS RA: Ed.Board:S.Hayrapetyan & others:Gyumri,“IE RA”.2023,220p.

Адрес: 3101, РА, Гюмри, ул. В.Саргсяна 5а
Address: 30101, 5 a V. Sargsyan Street, Gyumri, RA
E-mail: scient.works@shirakcenter.sci.am
hppt: www.shirakcenter.sci.am
мел./tel.: +374/94/411-228

ISSN 1829-4316
eISSN 2953-8076
DOI: 10.52971/18294316

@ Ширакский центр арменоведческих исследований НАН РА. 2023
@ Shirak Center for Armenological Studies of NAS RA. 2023

ՀՏԴ՝ 94 (3/9)

DOI: 10.52971/18294316-2023.26.2-5

ԱՇՇՈՒՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ Մ.Թ.Ա. III ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԿԶԲՆԵՐԻՑ
ՄԻՆՉԵՎ Մ.Թ.Ա. XV ԴԱՐԻ ՎԵՐՁԵՐԸ

Ռուսյան Ա. Ցականյան

ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Հին Մերձավոր Արևելքի քաղաքակրթությունների ուսումնասիրման գործում իր ուրույն տեղն ունի Ասորեստանի և ասորեստանցիների պատմության ուսումնասիրությունը: Ելնելով ընտրված ժամանակագրական շրջաններից, այն է՝ մ.թ.ա. III հազարամյակի սկզբներից մինչև մ.թ.ա. XV դարի վերջերը, վերլուծվում են Աշշուրի քաղաքի ֆիզիկաաշխարհագրական դիրքի, ծագման, քաղաքական և պաշտամունքային նշանակության, ինչպես նաև քաղաքի և ասորեստանյան պետության անցումային փուլերը: *Մեթոդներ և նյութեր.* Աշխատանքում կիրառվել է հետազոտման պատմահամեմատական մեթոդը: Աղբյուրների ուսումնասիրության ժամանակ կիրառվել է այդ մեթոդի համադրման և հակադրման սկզբունքը: Հիմնականում օգտագործվել են մերձավորարևելյան և մասնավորապես՝ Ասորեստանի տիրակալների թողած արձանագրությունները: *Վերլուծություն.* Նյութի ուսումնասիրության ընթացքում մանրակրկիտ քննության են ենթարկվել Ասորեստանի պատմության փուլաբաժանումն ու նրա սկզբունքները, ժամանակագրական խնդիրներն ու հինասորեստանյան և միջինասորեստանյան արքայացանկերը: Բնութագրված են պետականության վաղ փուլում պետական կառավարման մարմինների ձևավորման և զարգացման եղանակները, ինչպես նաև Աշշուր պետության կառավարման համակարգը: *Արդյունքներ.* Աշշուրի վաղ շրջանի տիրակալներից Ծիլուլու - Սուլիլի/Սուլե նույնականացումը, մինչև հավելյալ հաստատող սեպագիր նյութի հայտնաբերումը, պետք է համարվի թեական: Պուգուր-Սինի համեմատությունն ու նույնականացումը AKL-ի այլ տիրակալների հետ՝ չունի բավարար աղբյուրագիտական հիմք կամ մասնագիտական գրականության մեջ դեռևս կարոտ է հիմնավորման:

Բանալի բառեր՝ Միջագետք, Աշշուր, Ասորեստան, Արքայ, քաղաք-պետություն, արքայացանկ, Պուզուր-Աշշուր I, Պուզուր-Սին, Ադասի, Բել-բանի, Աշշուր-բել-նիշեշու: Բնչպես հղել՝ Ցականյան Ռ., Աշշուրի պետությունը մ.թ.ա. III հազարամյակի սկզբներից մինչև մ.թ.ա. XV դարի վերջերը // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Հ. 2 (26): 5-22 էջեր: DOI: 10.52971/18294316-2023.26.2-5

THE STATE OF AŠŠUR FROM THE BEGINNING OF THE 3RD MILLENNIUM BC TO THE END OF THE 15TH CENTURY BC

Ruslan A. Tsakanyan

Institute of Oriental Studies NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: The study of the history of Assyria and the Assyrians has its important place in the study of the Civilizations of the Ancient Near East. Based on the selected chronological periods, that is, from the beginning of the 3rd Millennium BC to the End of the 15th Century BC, the physico-geographic location, origin, political and religious significance of the city of Aššur and the transitional stages of the city and then the state are discussed and analyzed. **Methods and materials:** The work uses a historical-comparative research method. The principle of comparison and contrast of this method was applied in the study of sources. Mostly inscriptions left by the rulers of the Ancient Near East and especially Assyria were used. **Analysis** During the study of the material, the stages of the history of Assyria and its principles, problems of chronology, as well as Old Assyrian and Middle Assyrian royal lists were examined in detail. The methods of formation and development of government bodies at the early stage of statehood as well as the management system of the Assyrian State are characterized. **Results:** The early Assyrian rulers of Šilulu - Sulili/Sule identification, pending the discovery of additional corroborating cuneiform material, must be considered theaic. The comparison and identification of Puzur-Sin with other rulers of AKL does not have sufficient source material.

Key words: *Mesopotamia, Aššur, Assyria, Akkad, city-state, king list, Puzur-Ashur I, Puzur-Sin, Adasi, Bel-bani, Ashur-bel-nisheshu.*

Citation: Tsakanyan R. *The State of Aššur from the Beginning of the 3rd Millennium BC to the End of the 15th Century BC.* // "Scientific Works" of SCAS NAS of Armenia. Gyumri. 2023. V. 2(26). 5-22 pp. DOI: 10.52971/18294316-2023.26.2-5

ГОСУДАРСТВО АШШУР С НАЧАЛА III ТЫСЯЧЕЛЕТИЯ ДО Н.Э. ДО КОНЦА XV ВЕКА ДО Н.Э.

Руслан А. Цаканян

Институт востоковедения НАН, Ереван, РА

Аннотация

Введение: Изучение истории Ассирии и ассирийцев занимает важное место в изучении цивилизаций древнего Ближнего Востока. На основе выделенных хронологических периодов, то есть с начала 3-го тысячелетия до н.э. до конца 15-го века до н.э., обсуждаются и анали-

зируются физико-географическое положение, происхождение, политическое и религиозное значение города Ашшур и переходные этапы города, а затем государства. *Методы и материалы*: В работе использован историко-сравнительный метод исследования. Принцип сравнения и противопоставления этого метода был применен при изучении источников. В основном использовались надписи, оставленные правителями Ближнего Востока и особенно Ассирии. *Анализ*: В ходе изучения материала были подробно рассмотрены этапность истории Ассирии и ее принципы, проблемы хронологии, а также древнеассирийские и среднеассирийские царские списки. Охарактеризованы методы становления и развития органов государственного управления на раннем этапе государственности, а также система управления Ассирийского государства. *Результаты*: Идентификация раннего ассирийского правителя Цилулу-Сулилу/Суле, до тех пор, пока не будут обнаружены дополнительные подтверждающие клинописные материалы, должна считаться теической. Сравнение и отождествление Пузур-Сина с другими правителями АКЛ не имеет достаточного исходного материала.

Ключевые слова: Месопотамия, Ашшур, Ассирия, Аккад, город-государство, царский список, Пузур-Ашшур I, Пузур-Син, Адаси, Бел-бани, Ашшур-бел-нишешу.

Как цитировать: Цаканян Р. *Государство Ашшур с начала III тысячелетия до н.э. до конца XV века до н.э.* // “Научные труды” ШЦАИ НАН РА. Гюмри. 2023. Т. 2 (26). сс. 5-22
DOI: 10.52971/18294316-2023.26.2-5

ՆԱԽԱԲԱՆ. Ասորեստան պետությունն իր անվանումը ստացել է երկրի գլխավոր քաղաքական կենտրոն Աշշուրից (*Aššur*): Աշշուրը գտնվել է ներկայիս Քալաթ-Շերկաթ բնակավայրի տարածքում՝ Իրաքի Հանրապետության Սալադին մարզում, Տիգրիս և Փոքր կամ Ներքին Ջաբ գետերի խառնարանից հյուսիս՝ Ջեբել Խամրիի հյուսիսային ճյուղ հանդիսացող Ջեբել Սախուլ բլրաշարի վրա՝ Տիգրիսի աջ ափին¹: Վերջինս էլ իր անվանումը ստացել է ասորեստանցիների գլխավոր, քաղաքի հովանավոր և ռազմի աստված *Աշշուրի* անունից: Երկրում և նրա սահմաններից դուրս տեղի ունեցող ցանկացած իրադարձություն կապվում էր Աշշուր աստծո և նրա կամքի հետ: Փաստացի իշխանությունն Աշշուրում աստվածապետական էր: [30] Աշշուր աստվածը հանդես էր գալիս որպես արքա, այդ իսկ պատճառով՝ քաղաքի կառավարիչ-արքաները կամ տիրակալները (*rubā'u/rubū* [45, p. 71; 46, p. 168; 36, p. 78 n. 2]) կրում էին *išši'akkum* (համարժեք է շումերական ÉNSI-ին) «փոխանորդ, տեղապահ»՝ *išši'ak Aššur.KI* տիտղոսը և միաժամանակ, ըստ երևույթին, համատեղում էին նաև Աշշուրի գլխավոր քրմի՝ *šangū*-ի (Աշշուր աստծո տեղապահը երկրի վրա), դատական՝ *da'ānu*-ի, զորքերի գլխավոր հրամանատարի և այլ գործառույթներ [32, pp. 144-145; 2, էջ 230: 1, էջ 56: 5, էջեր 98-99]: Այս առումով հիշատակելի է Աշշուրի 27-րդ տիրակալ Ծիլուլուի/Սուլիլի¹/ (մ.թ.ա. մոտ XXII-XXI դար) արձանագրությունը՝ «1. *A-šūr.KI* 2. *LUGAL* 3. *Ši-lu-lu* 4. *ÉNSI A-šūr.KI* 5.

¹ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի հրատարակած «Հայաստանի հարակից երկրների պատմություն» ակադեմիական հրատարակության առաջին հատորի մեջ առկա է տեխնիկական վրիպակ՝ «...Տիգրիսի հետ Մեծ Չարի միախառնման վայրից քիչ հյուսիս ...Տիգրիսի ձախ ափին»: Եթե վերցնում ենք Մեծ կամ Վերին Չար գետը, ապա՝ նրանից հարավ: Աշշուրը գտնվել է երկու Չարերի [21, pp. 33-37; 37, pp. 208-209; 17, p.28; 7; 8] միջև՝ Մոսուլից 100 կմ հարավ ու Բաղդադից 390 կմ հյուսիս և աշխարհագրականորեն՝ գետի աջ ափին [1, էջ 54]:

DUMU *Da-ki-ki* 6. NIMGIR URU A-šūr.KI «1. *Աշշուր* 2. *արքա* է, 4. *Ծիլուլուն*՝ 4. *Աշշուրի տեղապահը*, 5. *Դակիկիի որդին*, 6. *Աշշուր քաղաքի մունետիկը*» [28, pp. 12-13]: Աշշուրի տիրակալներին դիմում էին որպես տեր՝ *bēlu*, վերակացու, կառավարիչ՝ *waklum* (շումերական համարժեքը՝ PA) [43, pp. 51-52] և տիրակալ՝ *rubā'u* [43, pp. 53-54; 41, pp. 713-714; 42, pp. 193-195, 201-203; 45 pp. 70-72; 47]:

Մ.թ.ա. մոտ XXI դարի կեսերին, աստիճանաբար աքքադականացվող Աշշուրը ձեռք բերեց անկախություն և սկսեց հանդես գալ որպես առանձին համայնք-պետություն՝ URU (*ālu*). *Aššur*.KI, որը հետագայում կոչվեց KUR (*mātu*). *Aššur*.KI: Հետագայում, ասորեստանյան պետության զարգացմանը զուգընթաց, երբ Աշշուրի սահմանները մի քանի հարյուր անգամ զերագանցում էին քաղաք-պետության կամ համայնքային պետության սահմանները՝ բուն Աշշուր երկրի տարածքը սկսվեց կոչվել *Libbi māti* (տառացի՝ *սրտի երկիր*)՝ հայրենիք, իսկ Աշշուր քաղաքը՝ *Libbi-āli* (տառացի՝ *սրտի կամ ներքին քաղաք*): Նա մեծավ մասամբ համատեղում էր նաև ավագների խորհրդի կողմից ընտրված և վարչական ու դատական գործառնություններ ունեցող *ukullum*-ի պաշտոնը [1, էջ 56; 5, էջ 99]: Փաստացի, նրա իշխանությունը բացարձակ էր և ժառանգական:

Ինչպես Հին Միջագետքի այլ քաղաք-պետություններում, այնպես էլ Աշշուրում, սկզբնապես մեծ էր համայնքային ավագանու դերը: Աշշուրում մեծ էր ինքնակառավարման մարմինների դերը, ինչպիսին էր «*ālum šaḥer rabi*»՝ «մեծերի և փոքրերի ժողովը (ժողովրդական ժողովը)»: Վերջինս, սակայն, մ.թ.ա. II հազարամյակի սկզբներին սկսեց կորցնել իր նշանակությունը՝ տեղը զիջելով «*քաղաքի տան*»՝ *bīt āli*-ի անդամներին, այն է՝ ավագների խորհրդին՝ *paršum āli* (*քաղաքի ավագներ*) [1, էջ 55-56; 33, p.89]: *išši'akkum*-ը, իսկ հետագայում արդեն արքան՝ *šarrum* (շումերական LUGAL-ը), միաժամանակ *bīt āli*-ի անդամ էին: Ամեն տարի, ավագների խորհրդի անդամներից վիճակահանությամբ ընտրվում էր այդ տարվա անվանահայրը՝ *limmu* [33, p.89; 36, pp.709, 742], և հերթական էպոնիմի անունով էլ կոչվում էր տվյալ տարին: Վերջինիս տնօրինության տակ էր երկրի գանձարանը, որը գտնվում էր էպոնիմի նստավայրում՝ *bīt limi*-ում: Շատ հաճախ էպոնիմ էին ընտրվում նաև ասորեստանյան արքաները [33, p.89: 2, էջ 230]: Պալատական ամբողջ տնտեսությունը (*ēkallum*) գտնվում էր միջնաբերդում (*birtum*): Վարչական ամբողջ շրջանը, որը համայնքի տնտեսական շրջանից ձգվում էր մինչև *birtum*, կոչվում էր տվյալ «քաղաքի» (*ālum*) «երկիր» (*mātu*): Եվ հենց Աշշուրի *birtum*-ն էլ կարելի է համարել Հին ասորեստանյան պետության հիմքը:

Աշշուրի լիիրավ կամ համայնքային (*alāiu* հետագայում՝ *kalzu*) քաղաքացին կոչվում էր *awīlum* (amēlu)՝ *մարդ*: Այստեղ «մարդ» բառը հանդես է գալիս որպես եզրույթ: «Մարդ» բառից բացի, ինչպես արդեն նշեցինք, օգտագործվում էր նաև «աշշուրցի»՝ *aššūrāiu* եզրը, ինչպես նաև՝ *mār āli* (քաղաքի որդիներ) և *mār'ū Aššur* (Աշշուրի որդիներ) [11, p. 336]:

Աշշուր աստծո տաճարը գտնվում էր *Էպիխ* լեռան վրա և կրում էր շումերական É.ĪUR.SAG(GAL).KUR.KUR.RA՝ «*Լեռան հողերի (մեծ) տուն*» կամ «*երկրների / հողերի լեռ*» [29, p.202, A.0.105.1, l. 22; 2]: Հետագա ավանդույթը և մասնավորապես Շուլմանու-աշարեդ (*Սալմանասար*) I (մ.թ.ա. 1272-1243 թթ.) արձանագրությունը տաճարի կառու-

ցումը վերագրում է քաղաքի տիրակալ Ուշպիային («վրաններում բնակվող» 17 «արքաներից» վերջինը՝ մ.թ.ա. մոտ XXV- XXIV դար)՝ «112. *e-nu-ma* É.ĤUR.SAG.KUR.KUR.RA 113. É *Aš-šur* EN-ia šá ^m*Uš-pi-a* 114. ŠID *Aš-šur a-bi i-na pa-na* 115. *e-pu-šu-ma e-na-ah-ma*» «112-115. *Այն ժամանակ Էխուրսագկուրկուրրան՝ իմ տիրոջ՝ Աշշուրի տաճարը, որը նախկինում կառուցել էր Ուշպիան՝ Աշշուրի տեղապահը, իմ նախահայրը*» [28, p.185]: Այդուհանդերձ, հնագիտական հետազոտությունների ժամանակ պարզվել է, որ Աշշուր քաղաքի տարածքում հնագույն տաճարը պատկանում է Բշթար դիցուհուն [7, pp.25-26; 10, pp. 5-9; 14]: Հետաքրքիր է նաև, որ հենց Բշթարի տաճարում է հայտնաբերվել մինչ օրս հայտնի «հին ասորեստանյան ժամանակաշրջանի» վաղագույն արձանագրությունը ոմն Ինիլպաբայի որդի *Բոտիտի* (մ.թ.ա. մոտ XXIII դար) կողմից: Չնայած որ Բոտիտի անունը տեղ չի գտել ասորեստանյան արքաների ոչ մի ցանկում, այդուհանդերձ, ըստ երևույթին, նա եղել է Աշշուրի կառավարիչը Աքքադի կամ Ուրի III հարստության ժամանակահատվածում [19, pp. 155-157; 28, p. 7; 46, p. 19 n.4]: Հարկ է նշել նաև, որ ամրեական առաջնորդ Շամշի-Ադդուի (Ադադ I-ի) (մ.թ.ա. մոտ 1808-1776 թթ.) կառավարման ժամանակաշրջանում Աշշուրի և Ադադի պաշտամունքների միաձուլման փորձ է կատարվել [46, p. 39]: Շամշի-Ադդուից (Ադադ) I-ից սկսած և ընդհուպ մինչև մ.թ.ա. X դար՝ Միջին ասորեստանյան ժամանակաշրջանի ավարտը, ասորեստանյան արքաների տիրոջներում և արձանագրությունների մեջ հիշատակվում է նաև շումերական դիցարանի գլխավոր աստծո՝ Էնլիլի անունը՝ «^dUTU-šir-^dIŠKUR ša-ki-in ^dEn-lil ÉNSI ^dA-šur» - «*Շամշի-Ադդու, նշանակված էնլիլ աստծո կողմից, Աշշուրի տեղապահ...*» [28, pp. 55-57, 59-60, 67-68, 110-111]: Իսկ Թուկուլտի-Նինուրտա I-ը (մ.թ.ա. 1242-1206 թթ.) իր արձանագրության մեջ իրեն անվանում է Էնլիլի սիրելին և նրա կողմից ընտրված՝ «*ni-šit* ^dBAD (*Enlil – hēn*)» [28, pp. 233-247]: «šakin Enlil iššak Aššur» արտահայտությունը դառնում է արքայական արձանագրությունների կարևորագույն բաղադրիչ:

Դեռևս նախորդ դարի առաջին կեսին կարծիք հայտնվեց, ըստ որի՝ հնարավոր է, որ Աշշուրը ստեղծված լիներ շումերների կողմից մ.թ.ա. XXVIII-XXVII դարում որպես շումերական առևտրական հենակետ[6, c.13]: Ըստ քաղաքը պեղող գերմանացի հայտնի հնագետ Վալտեր Անդրեի՝ Աշշուր քաղաքը սկզբնապես պաշտպանական կառույցներ չի ունեցել[9]: Ըստ ավանդության և մասնավորապես՝ Աշշուր-ոհիմ-նիշեշուի (մ.թ.ա. մոտ 1407-1400 թթ.) արձանագրության մեջ քաղաքի պարիսպների կառուցումը վերագրվում է քաղաքի տիրակալ Կիկկիային (մ.թ.ա. XXI դարի երկրորդ կես)՝ «5. ÉNSI BĀD ša ^m*Ki-ki-a* ^m*I-ku-nu-um* 6. ^mLUGAL-*ke-en Pū-zurš-d*A-šūr 7. ^{md}A-šūr-né-ra-ri DUMU *Iš-me-d*Da-gan 8. *ab-ba-ia ...*» «5-8. *Այն պարիսպը, որը կառուցել էին Կիկկիան, Բկունումը* (մ.թ.ա. մոտ 1934-1921 թթ.), *Շարրուկենը* (Սարգոն I (մ.թ.ա. մոտ 1920-1881թթ.)), *Պուզուր-Աշշուրը* (Պուզուր-Աշշուր II (մ.թ.ա. մոտ 1880-1873 թթ.)), (և) *Աշշուր-նիրարին* (Աշշուր-նիրարի I (մ.թ.ա. XVI դարի երկրորդ կես), *Իշմե-Դագանի* (Իշմե-Դագան II մ.թ.ա. XVI դարի առաջին կես)) *որդին՝ իմ նախահայրերը ...*» [28, p. 101: 2, էջ 232: 1, էջ 56]:

Վաղ շրջանում Աշշուրի բնակչությունն, ըստ երևույթին, էթնիկ առումով միատարր չի եղել: Ելնելով «ասորեստանյան արքայացանկում» (այսուհետ AKL[19, pp. 197-198; 25, pp. 136-146; 18, pp. 114-120, 127-128; 22; 49, pp. 11-37; 27, pp. 101-115; 26, pp.1, 157:

1, էջ 112]) տեղ գտած վաղ ասորեստանյան կառավարիչների անձնանուններից՝ գիտնականները եկել են այն եզրակացության, որ այդ անձնանուններն արքայական չեն և պատկանում են «սուբաբական» լեզուների աշխարհին [14: 1, էջ 55: 2, էջ 232]: Մ.թ.ա. մոտավորապես XXI դարի վերջերին Աշշուրում աճում է տեղի նստակյաց-երկրագործական բնակչության հետ ինտեգրված արքայացիների դերը: Վերջիններս Միրիա և Միջագետք ներթափանցած սեմախոս ցեղերի հյուսիսային ճյուղն էին, որոնց հետագայում սկսեցին կոչել *aššurāiu* «աշշուրցի», երկիրը՝ *Aššur* «Աշշուր»: Այս շրջանում, հավանաբար, Աշշուրում հաստատվեց արքայական ծագում ունեցող տիրակալների հարըստություն [1, էջ 56]: Ընդունված է Աշշուրի «հին ասորեստանյան հարստության» հիմնադիր համարել *Պուզուր-Աշշուր I* (մ.թ.ա. մոտ XXI դարի վերջին քառորդ), որին հաջորդում է որդին *Շալիմ-ախումը* (մ.թ.ա. մոտ XXI դարի վերջին քառորդ) [15, pp. 268-270; 16], ապա շարունակվում հորից-որդի ժառանգականության սկզբունքով:

Սկզբնապես Աշշուրը պաշտամունքային-քաղաքական, ապա առևտրա-արհեստագործական համայնքային քաղաք-պետություն էր: Քաղաքը հյուսիսից և արևելքից սկզբնապես ողողված է եղել ջրերով՝ արևելքից Տիգրիս գետը, իսկ հյուսիսում՝ արհեստական ջրանցքը: Աշշուրն ընկած է հյուսիսից՝ Հայկական լեռնաշխարհից ներթափանցող տեղումների գոտու եզրին, ինչը նշանակում է, որ հողագործությունը լիովին կախված չի եղել ռոտումից: Հյուսիսից հարավ և արևելքից արևմուտք ձգվող քարավանային կարևոր երթուղիների նկատմամբ քաղաքը հիանալի դիրքում է գտնվել [12; 13; 33, p.81]:

Առևտրատնտեսական գործոնների պատճառով Հարավային Միջագետքից դեպի հյուսիս ընկած տարածքներ, այդ թվում՝ նաև դեպի Աշշուր գրեթե բոլոր ժամանակահատվածներում էլ բնակչության հոսք է նկատվում: Քար, փայտանյութ, մետաղ և այլ շինանյութ հայթայթելու ու գնելու համար Շումերի և Աքքադի համայնքներն իրենց առևտրական գործակալներին՝ *tamkārum*, ուղարկում էին մոտակա և հեռավոր տարածաշրջաններ: Եվ, հենց Շումերի վաղդինաստիական ժամանակաշրջանում է, որ արքյուններն առաջին անգամ հիշատակում են Աշշուր տեղանվան մասին:

Ինչևէ, հետագայում աշշուրցիները նույնպես հիմնեցին առևտրական գաղութներ: Չնայած այն հանգամանքին, որ Աշշուրի ֆիզիկաաշխարհագրական դիրքը գտնվում էր մթնոլորտային տեղումների բարենպաստ գոտում, ի տարբերություն Միջագետքի հարավային շրջանների, բավականին քիչ էին նաև բերրի հողատարածքները [44, pp.13-35]: Այդ պատճառով սկզբնական շրջանում Աշշուրի տնտեսության մեջ գերիշխում էր անասնապահությունը: Աշշուրի երկրագործական տնտեսության հիմքը հիմնականում համայնքային հատվածն էր: Եվ քանի որ երկրագործությունը մեծ եկամուտներ չէր բերում, համայնքային ազնվականությունը սկսեց զարկ տալ առևտրի և արհեստագործության զարգացմանը, ինչի արդյունքում ստացված շահույթն ավելին էր, քան երկրագործությունից ու անասնապահությունից ստացվածը: Արդյունքում, Աշշուրը դարձավ խոշոր առևտրական քաղաք, և համայնքը սկսեց զբաղվել տարանցիկ առևտրով [2, էջ233]:

Մ.թ.ա. III հազարամյակում իր ռազմավարական դիրքի պատճառով Աշշուրը կարևոր դեր է խաղացել լայնածավալ առևտրում: Իսկ արդեն մ.թ.ա. II հազարամյակի

սկզբներին նրա տիրակալների կողմից քաղաքական քայլեր են ձեռնարկվում առևտուրը մեծացնելու նպատակով [39, p. 72]: Առևտրային հիմնական ուղիների վրա անվտանգություն և անխափան փոխանակում ապահովելու նպատակով կազմակերպվում էր մշտական գաղութների և առևտրային կետերի՝ *kārum*-ների մի ամբողջ շարք [15; 16; 45; 46; 47]:

Մ.թ.ա. XX դարի առաջին քառորդում Աշշուրի տիրակալ *Իլուշումնան* (մ.թ.ա. մոտ 1994-1975 թթ.) [19, p. 198; 21; 22; 31; 11; 4: 1, էջեր 112-113] Աշշուրի և Հարավային Միջագետքի միջև առևտրատնտեսական հարաբերությունների բարելավման նկատառումներով հանձն է առնում մի շարք տնտեսական միջոցառումներ՝ հաստատելով առևտրական ազատություն (*addurārum (andurāru)*)՝ մաքսատուրքից ազատում և առևտրական ազատ տեղաշարժ [28, p. 18; 46, pp. 126-128; 13, p. 10; 12; 39, p. 72]: Իլուշումնանի հաջորդ *Էրիշում I* (մ.թ.ա. մոտ 1974-1935 թթ.) խրախուսում է որոշ ապրանքատեսակների՝ ոսկու, պղնձի, գարու, բրդի և այլնի ազատ առևտրական շրջանառությունը [26, p. 18; 46, pp. 128-130; 13, p. 10; 39, p. 72]:

Մ.թ.ա. XX դարի վերջին և XIX դարի սկզբներին՝ Իկունումի և նրա որդի Շարուկեն I-ի կառավարման ժամանակաշրջանում, աշշուրցի առևտրականները մեծամասշտաբ գործունեություն են ծավալում Փոքր Ասիա թերակղզու կենտրոնական և արևելյան շրջաններում [1, էջ 56-58]: *Պուզուր-Աշշուր II* (մ.թ.ա. մոտ 1880-1873 թթ.) և *Նարամ-Սինի* (մ.թ.ա. մոտ 1872-1829/1819 թթ.) կառավարման ժամանակաշրջանի վերաբերյալ տեքստերից հայտնի է դառնում, որ աշշուրցիները Աշշուրի պաշտպանական պարիսպների վերանորոգման համար *kārum*-ներից ֆինանսական օժանդակություն են խնդրում [12; 46, pp. 128-130; 13, p. 10; 39, p. 72]: Առևտրական գաղութների աստիճանական թուլացմանը ու անկմանը զուգահեռ՝ քաղաքական անկում ապրեց նաև «հին ասորեստանյան հարստությունը»: Մասնագետների մոտ ընդունված է «հին ասորեստանյան հարստության» վերջին ներկայացուցիչ համարել *Էրիշում II* (մ.թ.ա. մոտ 1829/1819-1809 թթ.):

Աշշուր աստծո տաճարից հայտնաբերված և, ամենայն հավանականությամբ, մ.թ.ա. I հազարամյակի սկզբներին կազմված ասորեստանյան միապետների ցուցակներում՝ AKL-ում պահպանված տեղեկությունների համաձայն՝ մ.թ.ա. III հազարամյակում Աշշուրի տարածքը իշխում էին 17 առաջնորդներ, որոնք «բնակվում էին վրաններում»՝ «17 LUGAL.MEŠ ^{a-ni}a-ši-bu-tu kúl-ta-ri» (*Տուղիա, Ադամու, Յանգի, Սուխլամու* (անունը հնարավոր է կարդալ նաև *Լիլամու* [19, p. 146]), *Խարիսարու, Մանդարու, Իմու, Խարսու, Դիդանու, Խանու, Զուարու, Նուարու, Աբազու, Բելու, Ազարախ, Ուշպիա² և Ապիաշայր*, ըստ երևույթին, մինչսեմական ժամանակաշրջանի անասնապահական ցեղի առաջնորդներ էին) [19, pp. 197-198; 22; 25, pp. 136; 33, pp. 58-86; 49; 18, pp. 114-120, 127-128; 27, pp. 101-115; 36, pp. 740-752: 1, էջ 112]: Ըստ տիրող կարծիքներից մեկի՝ նրանցից

² Ուշպիան Շուվանու-աշարեդ I (մ.թ.ա. 1272-1243 թթ.) [28, p. 185] և Աշշուր-ռեշա-իշի I (մ.թ.ա. 1132-1115 թթ.) [28, p. 320] արձանագրություններում հանդես է գալիս որպես տոհմի նախահայր [2, էջ 232, ծնթ. 9]:

շատերը չեն կարող լինել Աշշուրի տիրակալներ: Թե կոնկրետ որտեղ են նրանք իշխել, մնում է անհասկանալի [22; p.615 n.1]:

Ինչևէ, Ուշայիայից հետո, AKL-ում ավելացված են նաև Շամշի-Ադդու I-ի թվով 10 նախնիները, որոնք ցանկում ներկայացված են ոչ թե սկսած Ուշայիայից, այլ իր հայր Իլու-կաբկաբուից մինչև Ուշայիա՝ որդուց-հայր սկզբունքով: Այս կերպ ամորեացի առաջնորդը, ամենայն հավանականությամբ, քաղաքական և քարոզչական նկատառումներից ելնելով, ձգտել է օրինական տեսք տալ իր իշխանությանը [36, p.746]: Ցուցակն ըստ հաջորդականության ունի հետևյալ տեսքը՝ Ուշայիային հաջորդում է որդին՝ Ապիաշալը [15, pp. 38-39, 294 n. 5] և հայր-որդի հաջորդականության սկզբունքով՝ *Խալեն, Մամանուն, Խայանուն, Իլու-Մերը, Յակմեսուն, Յակմենուն, Յազկուր-Էլը, Իլու-կաբկաբուն* [15, pp. 294-298] և վերջինիս որդուն ու Շամշի-Ադդու I-ի եղբայր *Ամինումը* [15, pp. 295-297]: Նշենք, սակայն, որ Ամինումի անունը հայտնի է նրա ծառաներին պատկանող երկու կնիքի արձանագրություններից [22, p.615 n.1]: Իրականում Խալեից մինչև Իլու-կաբկաբու չպետք է տեղ գտնեն ասորեստանյան միապետների ցանկում: Միննույն ժամանակ Աքքադի և Ուրի III հարստության ժամանակաշրջաններից հայտնի են Աշշուրի առնվազն չորս կառավարիչներ՝ *Իտիտին, Ազուզուն, Չարրիքումը* և ոմն *Ուրդանումի որդին*, որոնք անպայմանորեն պետք է տեղ գտնեն ասորեստանյան միապետների ցանկում:

Աքքադի տերության (մ.թ.ա. 2334-2154 թթ.) ժամանակահատվածում, ըստ Աշշուրից գտնված հին արքադական արձանագրությունների, քաղաքը եղել է Աքքադի տիրապետության տակ: Այն հիշատակված է Սարգոն (Շարրու-կին) Աքքադացու (մ.թ.ա. 2334-2279թթ.) տերության կազմում [21, pp.36-37; 2, էջ234; 1, էջ 55]: Աքքադի հաջորդ արքա Ռիմուշի (մ.թ.ա. 2278-2270 թթ.) կառավարման շրջանով է թվագրվում վերոհիշյալ Ինիլաբայի որդի *Իտիտին*: Աշշուրի այս կառավարիչն, ըստ իր իսկ արձանագրության, արշավանք է ձեռնարկել դեպի Գասուր (հետագայի Նուզին)[28, p.7; 24, pp.238-239]: Աքքադական ժամանակաշրջանի հաջորդ հայտնի կառավարիչը՝ *Ազուզուն* է: Վերջինս թվագրվում է Աքքադի երրորդ տիրակալ Մանիշտուսուի (մ.թ.ա. 2269-2255 թթ.) կառավարման ժամանակահատվածով [28, p.8; 24, pp.82]:

Աքքադի անկումից հետո Աշշուրը ամենայն հավանականությամբ հայտնվել է կուտիական, ապա և Ուրի III հարստության (մ.թ.ա.2112-2003 թթ.) տիրապետության տակ: Ուրի III հարստության արքաներից Ամար-Մինի (մ.թ.ա. 2046-2038 թթ.) կառավարման ժամանակահատվածով է թվագրված հաջորդ՝ Չարրիքումի արձանագրությունը [38; 23, pp. 272, 278]:

Հաջորդը «*Ուրդանումի որդու*» վնասված և թվագրության չենթարկվող արձանագրությունն է [28, p.10; 26, p.3]: Եթե փորձենք ենթադրել, կամ եթե պարզվի, որ վերոնշյալ Ուրդանումը Աքքադի տիրակալ Նարամ-Մինի (մ.թ.ա. 2254-2218 թթ.) կառավարման ժամանակաշրջանից հայտնի *Ուրդանն* է, ապա ասորեստանյան միապետների ցանկում նա պետք է լինի Չարրիքումից առաջ [24, p.173; 15, p.266; հմմտ.՝ 1, էջ112]: Աշշուրի հաջորդ կառավարիչ *Ամինումի* անունը դաջված է երկու կնիքների վրա[28,p.11; 26, p.5]:

Ամինումից հետո ասորեստանյան արքայացանկը հիշատակում է վերջինիս որդուն՝ *Սուլիլիին* (տարբերակ *Սուլե* [25, p.137 n. 41, p.155 n. 41]): Վերջինիս հաճախ նույ-

նականացնում են վերոհիշյալ *Օհլուլուի* հետ: Օհլուլուի՝ Քանեշից հայտնաբերված վերոշարադրյալ արձանագրության մեջ նրա հայրանունը նշված է որպես «DUMU (*māru*) *Da-ki-ki*» [28, p.12 line 5], իսկ Սուլիլին՝ «[^m]Su-li-li DUMU ^mA-mi-ni» [25, p.136 line 22]: Ինչպես տեսնում ենք, հնչյունային առումով Օհլուլու և Սուլիլի անունները բավականին համահունչ են, սակայն բավական տարբեր են նրանց Դակիլի և Ամինու հայրանունները: Ելնելով վերոշարադրյալից՝ ստացվում է այնպես, որ Սուլիլին Իլու-կաբկաբուի թոռն է և Շամշի-Ադդու I-ի եղբորդին: Ինչպես տեսնում ենք, այստեղ արհեստականությունը բավական մեծ է: Այս առումով հայտնի աքքադագետ Ա. Ք. Գրեյսոնը նշում է, որ նրանց նույնականացումը հնարավոր է, բայց ո՛չ միանշանակ [26, p.5; 28, p.2; հմմտ. նաև՝ 46, pp.124-125]: Ինչևէ, Օհլուլու/Սուլիլիին ընդունված է համարել որպես ամենավաղ անկախ կառավարիչ [15, pp.168-269; 46, p.124: 1, էջ 5]: Օհլուլու/Սուլիլիից հետո ասորեստանյան AKL-ում նշված են *Կիկկիյան* [15, pp.268-269] (Աշշուր-ոհմ-նիշեշուի (մ.թ.ա. մոտ 1407-1400 թթ.) վերոհիշյալ արձանագրության մեջ Կիկկիյան հանդես է գալիս որպես Աշշուր քաղաքի պարիսպների կառուցող և նախահայր), *Ակիան*, ապա և «Հին ասորեստանյան հարստության» հիմնադիր համարվող Պուզուր-Աշշուր I-ը: Ընդունված է համարել, որ Պուզուր-Աշշուր I-ից սկսած՝ Աշշուրում իշխում են բացառապես աքքադական ծագմամբ տիրակալներ:

Ինչպես վերը նշվեց, «Հին ասորեստանյան հարստության» վերջին ներկայացուցիչ է համարվում Էրիշում II-ը (մ.թ.ա. մոտ 1829/1819-1809 թթ.): Ըստ ասորեստանյան արքայացանկի հիշատակության՝

«Շամշի-Ադդուն (Ադադ) (I), Իլու-կաբկաբուի որդին, [Նարասամ-Սինի³] ժամանակ գնաց Կարդունիաշ (Բաբելոն): Իրնի-Ադդուի էպոնիմատի ժամանակ, [Շամշի]-Ադդուն [բարձրացավ] Կարդունիաշից: Նա վերցրեց [Էկալլատումը]: Նա երեք տարի բնակվեց Էկալլատումում: Ատասար-Իշթարի էպոնիմատի ժամանակ Շամշի-Ադդուն բարձրացավ [Էկալլատումից]: Նա գահից վտարեց [Էրիշումին (II), Նարասամ-Սինի որդուն]: Նա վերցրեց գահը: Նա իշխեց 33 տարի» [25, pp.138-139]:

Այս ժամանակահատվածում ամորեական հարստություններ էին հաստատվել Սիրիայում և Միջագետքի տարբեր շրջաններում [15; 16]: Շամշի-Ադդուի հայր Իլու-կաբկաբուն Էկալլատումի տիրակալն էր: Նա, ըստ երևույթին, ամորեական Խանա կամ Նումիա ցեղից է եղել: Շամշի-Ադդուն, հաջորդելով իր եղբայր Ամինումին, դարձել է Էկալլատումի (ներկայիս Խան-Շուրեյմիա) [15; 16; 46, pp.24-26: 1, էջ58]: Մ.թ.ա. 1809/1808 թ. Շամշի-Ադդու I-ը (մ.թ.ա. մոտ 1808-1776 թթ.) նվաճում է Աշշուրը և իշխում 33 տարի: Անընդմեջ ռազմարշավների ու նվաճումների արդյունքում վերջինիս իշխանությունը տարածվում էր Սիրիայից մինչև Զագրոսյան լեռներ և Հայկական լեռնաշխարհի հարավային սահմանամերձ շրջաններից մինչև Պաղեստին: Շամշի-Ադդուին հաջորդում է որդին՝ *Իշմե-Դագան I-ը* (մ.թ.ա. մոտ 1775-1736 թթ.): Իշմե-Դագան I-ին հաջորդում է որդին՝ *Մուտ-Աշկուրը* [15, pp.320, 322, 324: 2, էջ235] ապա *Ռիմուշը* (Remu-...): Երկուսի գահակալման շրջանը միասին, ամենայն հավանականությամբ, կազմել է մոտ 29 կամ, միգուցե, 19 տարի: Չի բացառվում նաև, որ նրանք իշխած լինեն

³ Խոսքը Աշշուրի տիրակալ Նարասամ-Սինի (մ.թ.ա. մոտ 1872–1829/1819 թթ.) մասին է:

ոչ թե Աշշուրում, այլ Էկալլատումում [48, pp.111-112; 49, pp.24-26; 21, p.58; 22, p.614; 34, p. 8; 36, pp.749-750]: Վերջիններիս անունները բաց են թողնված AKL-ում, սակայն առկա են ոչ կանոնական VAT 9812 ցուցակում [40, pp.5-8; 48, pp.111-112]: Իսկ AKL-ն, Իշմե-Դագան I-ից հետո հիշատակում է «DUMU *la ma-ma-na* («ոչ մեկի որդի»)»՝ *Աշշուր-դուգուլին*, որն իշխում է 6 տարի:

Աշշուր-դուգուլի [15, p.288 n.86] կառավարման ընթացքում հաջորդաբար իշխում են ևս 6 «DUMU *la ma-ma-na*»՝ *Աշշուր-սպլա-իդին*, *Նածիր-Սինը*, *Սին-նամիրը*, *Իպրի-Իշթարը*, *Ադադ-ծալուլուն* և *Ադասին*: Ըստ AKL-ի՝ այս վեցը միասին կառավարել են ոչ ավել քան մեկ տարի [19, p.198; 25, pp.138-139]: Վերջիններս, ըստ երևույթին, չեն ունեցել արքայական ծագում և, ամենայն հավանականությամբ, բռնակալներ են եղել [1, էջ 63]: Կարելի է ենթադրել, որ Աշշուր-դուգուլի կառավարման ամբողջ վեց տարիների ընթացքում գահակալական պայքար է եղել, որի արդյունքում որպես Աշշուրի տիրակալ հանդես են եկել ևս վեց հավակնորդներ: Վերջնական արդյունքում, ըստ երևույթին, հաղթանակ է տարել *Ադասին* [15, p.288 n.86], քանզի, ըստ AKL-ի՝ նրան հաջորդում է որդին՝ *Բել-բանին*, ապա թողը՝ *Լիբայան* և վերջինիս որդի *Շարմա-Ադադ I-ը*: Փաստացի, Ադասայից սկսած մինչև Ասորեստանյան տերության մայրամուտը՝ մ.թ.ա. 605 թ.-ը, բացառությամբ *Լուլլայայի*, որ նույնպես «DUMU *la ma-ma-na*» էր՝ Ասորեստանում շուրջ մեկ հազարամյակ իշխում է Ադասիի տոհմը [2, էջ 231]:

Հետաքրքիր է, որ շուրջ մեկ հազարամյակ անց՝ Նոր-ասորեստանյան կայսրության արքա *Աշշուր-աիսա-իդինան* /Ասարխադդոն/ (մ.թ.ա. 681-669 թթ.) Բել-բանինին համարում է տոհմի հիմնադիր՝

«48. *Ասորեստանի արքա Բել-բանիի արքայական ժառանգ*» («48. *lib-lib-bi LUGAL-ti šá* ^mEN-*ba-<ni>* MAN KUR *Aš-šur*.KI» [35, p.106]), և

«16-17. *Ասորեստանում արքայական տոհմի հիմնադիր Բել-բանիի, Ադասիի որդու՝ հավերժական տոհմի արքայական ժառանգը*» («16. LUGAL-*u-ti da-ru-u* 17. *ša* ^mdEN-*ba-ni* DUMU ^mA-*da-si mu-kin* LUGAL-*u-ti* KUR *Aš-šur*.KI» [35, p.184]):

Եվ պատահական չէ նաև, որ Ասորեստանյան արքայական տոհմը մասնագիտական գրականության մեջ շատ հաճախ կոչվում է «*Ադասիյան*»:

Ինչ վերաբերում է Լուլլայային, ապա նա, ըստ երևույթին, բռնակալ է եղել, հնարավոր է, որ անգամ լուլուբեյ [1, էջ 63], կառավարել է 6 տարի, որից հետո իշխանությունն անցել է *Կիդին(Շու^ո)-Նինուային*: Վերջինս Շարմա-Ադադ I-ի թոռ *Բազայայի* որդին էր: Ըստ AKL-ի՝ նա կառավարում է 14 տարի [19, p.198; 25, pp.138-139]:

Աշշուրի Անու-Ադադի տաճարից հայտնաբերված մի արձանագրության (BM 115688, 1922-8-12,63, Ass 6366, Ass ph 972-73) մեջ ոմն Աշշուր-բել-շամեի որդի *Պուզուր-Սինը* [15, p.289 n. 86] կրում է «*iššak Aššur*» տիտղոսը: Արձանագրության մեջ նա հայտնում է, որ գահից զրկել է «... *osurp utrušig* և *n'š* *Աշշուրի մարմնից ... չարության մարմնավորում Սսինումին*»: Նույն արձանագրությունից հայտնի է դառնում, որ Ասինումը [15, p.289 n.86] Շամշի-Ադդու I-ի ժառանգներից է [28, pp.77-78; 11, p.387; 46, p.37]: Փորձ է արվել անգամ արձանագրության 5-րդ տողում հիշատակված «*a-sí-nim*»-ն ընթերցել ոչ որպես հատուկ անուն, այլ որպես գոյական՝ *assinnu* և հասկանալ որպես Իշթարի տա-

ճարի ներքինացված քուրմ և նույնացնել Ռիմուշի հետ [40, p.6]: Փաստացի, Պուգուր-Սինը վերականգնում է բնիկ աշշուրցի տիրակալների իշխանությունը: Ըստ վերջերս հայտնած մի կարծիքի՝ հնարավոր է, որ նա իշխել է Իշմե-Դագան I-ի, Մուտ-Աշկուրի և Ռիմուշի կառավարման ժամանակահատվածի ինչ-որ միջակայքում [48, p.112]: Իսկ ըստ մեկ այլ կարծիքի՝ հնարավոր է, որ Պուգուր-Սինը նույնական լինի AKL-ի № 51-ում հիշատակված Շարմա-Ադադ I-ի որդի Իբտար-Սինի (IB.TAR-Sin) հետ [40, p.6]: Ըստ նույն հեղինակի՝ Աշշուր-դուգուլն էլ համապատասխանում է AKL-ի № 51-ում հիշատակված Լուլլայայի հետ [40, pp.5-8]: Այս պարագայում, Աշշուր-դուգուլը պետք է իշխած լինի Բազայայից հետո [40, p.8]: Եթե անգամ ենթադրենք, որ Աշշուր-դուգուլը համապատասխանում է Լուլլայային, ապա Պուգուր-Սինի պարագայում բաց է թողնված մի կարևոր հանգամանք: Ըստ Պուգուր-Սինի արձանագրության՝ նրա հայրն Աշշուր-բել-շամեն է եղել, իսկ ըստ AKL-ի՝ Իբտար-Սինի հայրը Շարմա-Ադադ I-ն է:

Ինչևէ, Կիդին-Նինուային հաջորդում է որդին *Շարմա-Ադադ II*-ը (կառավարել է 3 տարի), ապա վերջինիս եղբայր *Էրիշում III*-ը (կառավարել է 13 տարի): Երբում III-ի որդի և հաջորդ տիրակալ *Շամշի-Ադադ II*-ը (կառավարել է 6 տարի), ապա *Իշմե-Դագան II*-ը (կառավարել է 16 տարի): Իշմե-Դագան II-ի որդին՝ *Շամշի-Ադադ III*-ը (կառավարել է 16 տարի) Պուգուր-Սինից հետո Աշշուրի հաջորդ տիրակալն է, որի անունից հինգ արձանագրություն է հայտնի [28, pp.79-82]: Իշմե-Դագան II-ի թոռ *Պուգուր-Աշշուր III*-ի (մ.թ.ա. մոտ 1520-1497 թթ.) կառավարման ժամանակահատվածում, սահմանային վեճերի կարգավորմանն ուղղված պայմանագիր է կնքվում Կասսիտական Բաբելոնիայի արքա Բուրնա-Բուրիաշ I-ի հետ [3, էջ20-21, 21 ծնթ.9.]: Նա կառուցում է նաև Աշշուրի «*Նոր քաղաքի*» պարիսպները [28, pp.90-91]:

Մ.թ.ա. XVIII դարի Աշշուր պետության քաղաքական պատմության մասին քիչ բան է հայտնի: Մ.թ.ա. մոտ XV դարի կեսերին Աշշուրը նվաճվում է միտանական արքա *Սաուսադաստարի/Սաուշտատար/* կողմից [20]: Սակայն, պետք է նշել, որ Միտանների տիրապետության ներքո Աշշուրի ենթակայության խնդիրները շարունակում են մնալ քննարկման փուլում: Աշշուրը նվաճելուց հետո միտանական արքայի հրամանով քանդվում են Աշշուրում Պուգուր-Աշշուր III-ի կողմից կառուցված «*Նոր քաղաքի*» պարիսպները: Աշշուրի տեղական իշխանությունները Միտանների կողմից, ըստ երևույթին, չեն վերացվել: Պուգուր-Աշշուր III-ից հետո Աշշուրում իշխում է որդին՝ *Էնլիլ-նաճիր I*-ը (մ.թ.ա. մոտ 1496-1484 թթ.), ապա վերջինիս որդին՝ *Նուր-իլին* (մ.թ.ա. մոտ 1483-1472 թթ.): Նուր-իլիից հետո գահը անցնում է նրա որդի *Աշշուր-շադունին* (մ.թ.ա. մոտ 1472): Սակայն վերջինս իշխում է ընդամենը մեկ ամիս և զոհ գնում հորեղբոր՝ *Աշշուր-նաբի I*-ի (մ.թ.ա. մոտ 1471-1452 թթ.) կողմից կազմակերպված պալատական դավադրությանը: Աշշուրը միտանական տիրապետության տակ ընկավ ըստ երևույթին կա՛մ Աշշուր-ռաբի I-ի, կա՛մ վերջինիս որդու՝ *Աշշուր-նադին-ախիսե I*-ի (մ.թ.ա. մոտ 1451-1430 թթ.) գահակալման ժամանակ: Այսպիսով, ամենայն հավանականությամբ, միտանական տիրապետության ժամանակաշրջանում Աշշուրում իշխած գահակալներն էին՝ *Էնլիլ-նաճիր II*-ը (մ.թ.ա. մոտ 1429-1424 թթ.) և *Աշշուր-նիրարի II*-ը (մ.թ.ա. մոտ 1423-1417 թթ.):

Աշշուր-նիրարի II-ին հաջորդած *Աշշուր-բեղ-նիշեշուի* (մ.թ.ա. 1416-1408 թթ.) կառավարման ժամանակահատվածում վերականգնվում են Աշշուրի պաշտպանական պարիսպները: Ելնելով Աշշուր-բեղ-նիշեշուի ամրաշինարարական գործունեությունից, եգիպտա-միտաննական հակամարտությունից և Միտաննիում օրեցօր նկատվող քաղաքական ճգնաժամից՝ արդեն Աշշուր-բեղ-նիշեշուի կառավարման սկզբներից կարելի է ամենայն վստահությամբ նշել, որ նա գործում էր որպես անկախ տիրակալ [3, էջ19-20; 2, էջ236]: Դեռ ավելին, ելնելով միջագային հարաբերությունների ընձեռած բարենպաստ պայմաններից, Աշշուր-բեղ-նիշեշուն, օգտագործելով հարմար առիթը, առաջին հերթին կարգավորում է հարաբերությունները հարավային հարևանի՝ Կասսիտական Բաբելոնիայի հետ: Աշշուր-բեղ-նիշեշուի և Բաբելոնիայի արքա Կարահինդաշ I-ի միջև կնքվեց մի նոր պայմանագիր, որը, ըստ երևույթին, կրկնում էր Պուգուր-Աշշուր III-ի և Բուրնա-Բուրիաշ I-ի միջև կնքված պայմանագիրը: Աշշուր-բեղ-նիշեշուի և Բաբելոնիայի արքա Կարահինդաշ I-ի միջև կնքված պայմանագրի փաստից ելնելով՝ ակնհայտ է, որ Աշշուրի տիրակալը, լինելով միտաննական տիրապետության տակ, հազիվ թե, կարողանար միջագային դիվանագիտական կապ հաստատել երրորդ երկրի հետ: Այսպիսով, ելնելով վերոշարադրյալից. կարելի է հստակորեն նշել, որ Աշշուրի նկատմամբ միտաննական տիրապետության ժամանակագրական խնդիրները վերանայման և նորովի խմբագրման կարիք ունեն: Աշշուր-բեղ-նիշեշուի հաջորդները շարունակեցին նրա քաղաքականությունը, և Աշշուրը, դուրս գալով քաղաքական ճգնաժամից, բռնեց հզորացման ուղին [3, էջ20-21]:

Ընդունված տեսակետի համաձայն՝ Հին ասորեստանյան թագավորության համար որպես ներքին շրջան մասնագետները համարում են մ.թ.ա. XVIII դարի երկրորդ կեսը, որից հետո՝ ընդհուպ մինչև մ.թ.ա. XV դարի վերջը կամ Միջին ասորեստանյան թագավորության ժամանակաշրջանը, համարվում է *«խավարի ժամանակաշրջան»* [46, p.24] կամ *«անցումային շրջան»* [21, p.VIII]:

Աշշուր քաղաք-համայնքի, Աշշուրի պետության և Աշշուրի տերության տիրակալների ցանկը

1. «Վրանաբնակ» նախահայրերի շրջան

- | | |
|------------------------|--------------------------|
| 1. Տուղիա | 10. Խանու |
| 2. Ադամու | 11. Զուարբու |
| 3. Յանգի | 12. Նուարբու |
| 4. Սուխլամու (Լիլամու) | 13. Աբազու |
| 5. Խարխարու | 14. Բելու |
| 6. Մանդարու | 15. Ազարախ |
| 7. Իմսու | 16. Ուշպիա |
| 8. Խարսու | 17. Ապիաշալ ⁴ |

⁴ Ըստ AKL-ի՝ Ապիշալին հորից որդի հաջորդում են՝ 1. *Խալե*, 2. *Սամանում*, 3. *Խալսանում*, 4. *Իլու-Մերր*, 5. *Յակմնում*, 6. *Յակմնեմ*, 7. *Յազկուր-Էլր*, 8. *Իլու-կաթկաթու* և 9. *Ամինու*: Այս կառավարիչները ամրոթացին նախահայրերն են և, ըստ երևույթին, պետք է դուրս մղվեն Աշշուրի կառավարիչների ցանկից:

9. Դիդանու

2. Աշշուրի «*համայնքային*» և «*քաղաքահամայնքային*» տիրակալներ

2.1. Աքքադի (մ.թ.ա. 2334-2154թթ.) և Ուրի III հարստության (մ.թ. ա. 2112-2003 թթ.) տիրապետության ժամանակաշրջան:

1. Իտիտի (մ.թ.ա. XXIII դարի 1-ին քառորդ) - Ինինլաբայի որդի
2. Ագուգու (մ.թ.ա. XXIII դարի երկրորդ քառորդ)
3. Չարրիքում (մ.թ.ա. XXI դարի 2-րդ կես)
4. Ուրդանումի որդի⁵:

2.2. Անկախ «*քաղաքահամայնքային*» շրջան:

1. Ամինու (մ.թ.ա. XXI դարի 2-րդ կես)
2. Ծիլուլու/Սուլիլի/Սուլե (մ.թ.ա. XXI դարի 2-րդ կես) – որդի⁶
3. Կիկկիա
4. Ակիա

3. «Հին ասորեստանյան» թագավորություն

1. Պուգուր-Աշշուր I (մ.թ.ա. մոտ XXI դարի 2-րդ կես⁷)
2. Շալիմ-ախումը (մ.թ.ա. մոտ XXI դարի վերջ) – որդի
3. Իլուշումնա (մ.թ.ա. մոտ 1994-1975 թթ.) – որդի
4. Էրիշում I (մ.թ.ա. մոտ 1974–1935 թթ.) – որդի
5. Իկունում (մ.թ.ա. մոտ 1934–1921 թթ.) – որդի
6. Շարրու-կեն (Մարգոն) I (մ.թ.ա. մոտ 1920–1881 թթ.) – որդի
7. Պուգուր-Աշշուր II (մ.թ.ա. մոտ 1880–1873 թթ.) – որդի
8. Նարամ-Սին (մ.թ.ա. մոտ 1872–1829/1819 թթ.) – որդի
9. Էրիշում II (մ.թ.ա. մոտ 1829/1819-1809 թթ.)

3.1. Ամորեական շրջան

1. Շամշի-Ադադ (Ադդու) I (մ.թ.ա. մոտ 1808-1776 թթ.) – Իլու-կաբկաբուի որդի
2. Իշմե-Դագան I (մ.թ.ա. մոտ 1775-1736 թթ.) – որդի
3. Մուտ-Աշկուր,
4. Ռիմու[2],
5. Ասինում – երեքը միասին 29/19 տարի (մ.թ.ա. մոտ 1735-1717/07 թթ.)
6. Պուգուր-Սին (մ.թ.ա. մոտ 1717-1706 թթ.) - Աշշուր-բեկ-շամեյի որդի
7. Աշշուր-դուգուլ (մ.թ.ա. մոտ 1705-1700 թթ.) - «*ոչ մեկի որդի*»
8. Աշշուր-ապլա-իդին,
9. Նաժիր-Սին,
10. Սին-նամիր,
11. Իպթի-Իշթար,
12. Ադադ-ճալուլու,
13. Ադասի - «*ոչ մեկի որդիներ*», ոչ ավել քան մեկ տարի (մ.թ.ա. մոտ 1700 թթ.):

3.2. Անկախության «*անցումային*» կամ «*խավարի*» ժամանակաշրջան

⁵ Աքքադի տիրակալ Նարամ-Սինի (մ.թ.ա. 2254-2218թթ.) կառավարման ժամանակաշրջանից հայտնի է ոմն Ուրդա/խի, նույնականացումը ենթադրելի հավանական է:

1. Բել-բանի (մ.թ.ա. մոտ 1699-1690 թթ.) – Ադասիի որդին
2. Լիբայա (մ.թ.ա. մոտ 1689-1673 թթ.) – որդի
3. Շարմա-Ադադ I (մ.թ.ա. մոտ 1672-1661 թթ.) – որդի
4. Իբտար-Սին (IB.TAR-Sin) (մ.թ.ա. մոտ 1660-1649 թթ.) – որդի
5. Բազայա (մ.թ.ա. մոտ 1648-1621 թթ.) – Բել-բանիի որդի
6. Լուլլայա (մ.թ.ա. մոտ 1620-1615 թթ.) - «ոչ մեկի որդի»
7. Կիդին/Շու-Նինուա (մ.թ.ա. մոտ 1614-1601 թթ.) – Բազայայի որդի
8. Շարմա-Ադադ II (մ.թ.ա. մոտ 1600-1598 թթ.) – Կիդին/Շու-Նինուայի որդի
9. Էրիշում III (մ.թ.ա. մոտ 1597-1585 թթ.) – եղբայր
10. Շամշի-Ադադ II (մ.թ.ա. մոտ 1584-1579 թթ.) – որդի
11. Իշմե-Դագան II (մ.թ.ա. մոտ 1578-1563 թթ.) – որդի
12. Շամշի-Ադադ III (մ.թ.ա. մոտ 1562-1547 թթ.) – որդի
13. Աշշուր-նիրարի I (մ.թ.ա. մոտ 1546-1521 թթ.) – եղբայր
14. Պուգուր-Աշշուր III-ի (մ.թ.ա. մոտ 1520-1497 թթ.) – որդի
15. Էնլիլ-նածիր I (մ.թ.ա. մոտ 1496-1484 թթ.) - որդի
16. Նուր-իլի (մ.թ.ա. մոտ 1483-1472 թթ.) - որդի
17. Աշշուր-շադունի (մ.թ.ա. մոտ 1472) – որդի
18. Աշշուր-ռաբի I-ի (մ.թ.ա. մոտ 1471-1452 թթ.) - 15. Էնլիլ-նածիր I-ի որդի
19. Աշշուր-նադին-ախիսե I-ի (մ.թ.ա. մոտ 1451-1430 թթ.) - որդի
20. Էնլիլ-նածիր II (մ.թ.ա. մոտ 1429-1424 թթ.) - եղբայր
21. Աշշուր-նիրարի II (մ.թ.ա. մոտ 1423-1417 թթ.) – եղբայր:

4. Միջինասորեստանյան թագավորություն

1. Աշշուր-բել-նիշեշու (մ.թ.ա. 1416-1408 թթ.) - Աշշուր-նիրարի II-ի որդի,
2. Աշշուր-ռիմ-նիշեշու (մ.թ.ա. 1407-1400 թթ.) – եղբայր,
3. Աշշուր-նադին-ախիսե II (մ.թ.ա. 1399-1390 թթ.) – որդի,
4. Էրիբա-Ադադ I (մ.թ.ա. 1389-1363 թթ.) – Աշշուր-բել-նիշեշուի որդի,
5. Աշշուր-ուբալլիտ I (մ.թ.ա. 1362-1327 թթ.) – որդի,
6. Էնլիլ-նիրարի I (մ.թ.ա. 1326-1317 թթ.) – որդի,
7. Արիկ-դեն-իլի (մ.թ.ա. 1316-1305 թթ.) – որդի,
8. Ադադ-նիրարի I (մ.թ.ա. 1304-1273 թթ.) – որդի,
9. Շուլմանու-աշարեդ (Մալմանասար) I (մ.թ.ա. 1272-1243 թթ.) – որդի,
10. Թուկուլտի-Նինուրտա I (մ.թ.ա. 1242-1206 թթ.) – որդի,
11. Աշշուր-նադին-ապլի (մ.թ.ա. 1205-1202 թթ.) – որդի,
12. Աշշուր-նիրարի III (մ.թ.ա. 1201-1196 թթ.) – որդի,
13. Էնլիլ-կուդուրրի-ուծուր (մ.թ.ա. 1195-1191 թթ.) – Թուկուլտի-Նինուրտա I որդի,

14. Նինուրտա-ապիլ-Էկուր (մ.թ.ա. մոտ 1190-1178 թթ.⁶) – Բլի-պադայի⁷ որդի,
15. Աշշուր-դան I (մ.թ.ա. մոտ 1178-1133 թթ.) – որդի,
16. Նինուրտա-թուկուլտի-Աշշուր (մ.թ.ա. 1133 թթ.) – որդի,
17. Մուսակկիլ-Նուսկու (մ.թ.ա. 1133 թթ.) – եղբայր,
18. Աշշուր-ռեշ-իշի I (մ.թ.ա. 1132-1115 թթ.) – որդի,
19. Թուկուլտի-ապիլ-Էշարրա (Թիզլաթպալասար) I (մ.թ.ա. 1114-1076 թթ.) – որդի,
20. Աշարեդ-ապիլ-Էկուր (մ.թ.ա. 1075-1074 թթ.) – որդի,
21. Աշշուր-բել-կալա (մ.թ.ա. 1073-1056 թթ.) – եղբայր,
22. Էրիբա-Ադադ II (մ.թ.ա. 1055-1054 թթ.) – որդի,
23. Շամշի-Ադադ IV (մ.թ.ա. 1053-1050 թթ.) – Թուկուլտի-ապիլ-Էշարրա I-ի որդի,
24. Աշշուրնաճիրպալ I (մ.թ.ա. 1049-1031 թթ.) – որդի,
25. Շուլմանու-աշարեդ II (մ.թ.ա. 1030-1019 թթ.) – որդի,
26. Աշշուր-նիրարի IV (մ.թ.ա. 1018-1013 թթ.) – որդի,
27. Աշշուր-ռաբի II (մ.թ.ա. 1012-972 թթ.) – Աշշուրնաճիրպալ I-ի որդի,
28. Աշշուր-ռեշա-իշի II (մ.թ.ա. 971-967 թթ.) – որդի,
29. Թուկուլտի-ապիլ-Էշարրա II (մ.թ.ա. 966-935 թթ.) – որդի,

5. Նորաստրեստանյան թագավորություն

1. Աշշուր-դան II (մ.թ.ա. 934-912 թթ.) – Թուկուլտի-ապիլ-Էշարրա II-ի որդի,
2. Ադադ-նիրարի II (մ.թ.ա. 911-891 թթ.) – որդի,
3. Թուկուլտի-Նինուրտա II (մ.թ.ա. 890-884 թթ.) – որդի,
4. Աշշուրնաճիրպալ II (մ.թ.ա. 883-859 թթ.) – որդի,
5. Շուլմանու-աշարեդ III (մ.թ.ա. 858-824 թթ.) – որդի,
6. Շամշի-Ադադ V (մ.թ.ա. 823-811 թթ.) – որդի,
7. Շամմուրամաթ (մ.թ.ա. 811-? թթ.) – կին, խնամակալ,
8. Ադադ-նիրարի III (մ.թ.ա. 810-783 թթ.) – որդի,
9. Շուլմանու-աշարեդ IV (մ.թ.ա. 782-773 թթ.) – որդի,
10. Աշշուր-դան III (մ.թ.ա. 772-755 թթ.) – եղբայր,
11. Աշշուր-նիրարի IV (մ.թ.ա. 754-745 թթ.) – եղբայր,
12. Թուկուլտի-ապիլ-Էշարրա III (մ.թ.ա. 745-727 թթ.) – Ադադ-նիրարի III-ի կամ Աշշուր-նիրարի IV-ի որդին,
13. Շուլմանու-աշարեդ IV (մ.թ.ա. 727-722 թթ.) – որդի,
14. Շարրու-կին (Սարգոն) II (մ.թ.ա. 722-705 թթ.) – եղբայր,
15. Մին-ախխե-Էրիբա (Մինախխեռիբ) (մ.թ.ա. 705-681 թթ.) – որդի,
16. Աշշուր-ախա-իդդինա (Ասարխադոն) (մ.թ.ա. 681-669 թթ.) – որդի,
17. Աշշուր-բանի-ապիլ (Աշշուրբանիպալ) (մ.թ.ա. 669-627 թթ.) – որդի,

⁶ Կառավարել է 3 կամ 13 տարի [25, pp.143 n. 56; 155 n. 56]:

⁷ Բլու-պադան եղել է Աշշուր-նիրարի III-ի վեզիրը և Խանիզավրադի կառավարիչ-արքան [19, p.200 n. i]: Նինուրտա-ապիլ-Էկուրի մայրը Լա-Լիբբին Թուկուլտի-Նինուրտա I-ի դուստրն է, իսկ հայր Բլի-պադան Ադադ-նիրարի I-ի կրտսեր որդի Իբաշի-իլի թոռը (Ադադ-նիրարի I - Իբաշի-իլի – Զիբի-Աշշուր – Աշշուր-իդդինա): Նինուրտա-ապիլ-Էկուրի տատ Էպիրատ- ...-ը Շուլմանու-աշարեդ I-ի դուստրն է և Աշշուր-իդդինի կինն է [41, p.716, Table 32.1]:

18. Աշշուր-Էտիլ-իլանի (մ.թ.ա. 627-623⁰ թթ.) – որդի,
19. Սին-շուսու-իշիբ (մ.թ.ա. 627-626⁰ թթ.) – բռնակալ,
20. Սին-շարբու-իշկուն (մ.թ.ա. 623-612⁰ թթ.) – Աշշուր-բանի-ապլիի որդի,
21. Աշշուր-ուբալլիտ II (մ.թ.ա. 612-609/07/05⁰ թթ.) – որդի:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. Գրեկյան Ե. *Աշշուրի պետությունը* // Հայաստանի հարակից երկրների պատմություն: Հատ. 1, խմբ. Ա. Վ. Քոչյան: Երևան: 2013, էջեր 54-63:
2. Ցականյան Ռ. *Ատրեստանի պատմության պարբերացման հարցի շուրջ* // Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ, ԳԱԱ ԱԻ: Երևան: 2014, №№ 9-10, էջեր 229-246:
3. Ցականյան Ռ. *Միջինատրեստանյան տերության արտաքին և ներքին քաղաքականության որոշ հարցերի շուրջ* // Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ: 2018, № XXXI, էջեր 19-33:
4. Ցականյան Ռ. *Ատրեստանի պատմության ժամանակագրական խնդիրները (գերերկար, երկար, միջին, կարճ և գերկարճ թվագրումներ)* // Արևելագիտության հարցեր: 2022, № XXI, էջեր 239-247:
5. Քոչյան Ա. *Ատրեստանի քաղաքական կարգը և բանակը* // Հայաստանի հարակից երկրների պատմություն: Հատ. 1, խմբ. Ա. Վ. Քոչյան: Երևան: 2013, էջեր 97-101:
6. Дьяконов И.М. *Развитие земельных отношений в Ассирии*. Ленинград. 1949. 153 С.
7. *Discoveries at Ashur on the Tigris. Assyrian Origins. Antiquities in the Vorderasiatisches Museum, Berlin*. By P. O. Harper, E. Klengel-Brandt, J. Aruz, K. Benzell. New York: The Metropolitan Museum of Art. 1995. III+145 p.
8. Abbas N., Wasimi S. A., Al-Ansari N. *Impacts of Climate Change on Water Resources of Greater Zab and Lesser Zab Basins, Iraq, Using Soil and Water Assessment Tool Model* // World Academy of Science, Engineering and Technology, International Journal of Environmental, Chemical, Ecological, Geological and Geophysical Engineering, 2017, vol. 11, № 10, pp. 808-814.
9. Andrae W. *Die Festungswerke von Assur: A: Baudenkmäler aus Assyrischer Zeit, II. Wissenschaftliche Veröffentlichungen der Deutschen Orient-Gesellschaft, № 23*. J.C. Hinrichssche Buchhandlung, Leipzig, 1913. Textband: vii + 179 pages, 110 plates. Tafelband: 108 plates.
10. Andrae W. *Die Die archaischen Ishtar-Tempel in Assur. A: Baudenkmäler aus Assyrischer Zeit, IV. Wissenschaftliche Veröffentlichungen der Deutschen Orient-Gesellschaft, № 39*. J.C. Hinrichssche Buchhandlung, Leipzig, 1922. 120 p. 68 tafeln.
11. Arkhipov I. *The Middle East after the Fall of Ur: From Assur to the Levant* // The Oxford History of the Ancient Near East, Editors: Radner K., Moeller N. and Potts D. T., Volume 2: From the End of the Third Millennium BC to the Fall of Babylon, Oxford 2022, pp. 310-407.
12. Barjamovic G., Hertel T. K., Larsen M.T. *Ups and Downs at Kanesh: Chronology, History and Society in the Old Assyrian Period*. PIHANS 120, Leiden: NINO 2012. IX+161 p.
13. Barjamovic G. *A Historical Geography of Anatolia in the Old Assyrian Colony Period*. CNIP 38. Copenhagen: Museum Tusulanum Press. 2011. XVIII+519 p.
14. Bär J. *Sumerians, Gutians and Hurrians at Ashur? A Re-Examination of Ishtar Temples G and F* // Iraq, № 65. 2003. pp. 143-160.
15. Bloch Y., Wasserman N. *The Amorites: A Political History of Mesopotamia in the Early Second Millennium BCE*. Culture and History of the Ancient Near East, Volume: 133. Leiden; Boston: Brill. 2023. 588 p.
16. Bloch Y. *The Conquest Eponyms of Šamšīr-Adad I and the Kaneš Eponym List* // Journal of Near Eastern Studies, Vol. 73, № 2. 2014. pp. 191-210.
17. Cancik-Kirschbaum E. C. *Die Assyrer: Geschichte, Gesellschaft, Kultur*. München. 2008. 128p.
18. Chavalas M. *Genealogical History as "Charter": A Study of Old Babylonian Period Historiography and the Old Testament* // In Millard A. R.; Hoffmeier J. K.; Baker D. W. (eds.). Faith, tradition, and history: Old Testament historiography in its Near Eastern context. Winona Lake, Indiana. 1994. pp. 103-128.

19. Chen F. *Study on the Synchronistic King list from Ashur*. Cuneiform monographs, vol. 51. Leiden; Boston: Brill. 2020. XVIII + 249 p.
20. Dassow von E. *Mittani and Its Empire // The Oxford History of the Ancient Near East*, Editors: Radner K., Moeller N. and Potts D. T., Volume 3: From the Hyksos to the Late Second Millennium BC. Oxford. 2022. pp. 455-528.
21. Frahm E. *Assyria: The Rise and Fall of the World's First Empire*. New York. 2023. 528 p.
22. Frahm E. *List of Assyrian Kings // E. Frahm (ed.), A Companion to Assyria*, Blackwell Companions to the Ancient World, Hoboken, NJ: John Wiley 2017, pp. 613-16.
23. Frayne D. R. *Ur III Period (2112-2004 B.C.)*. The Royal Inscriptions of Mesopotamia. Early Periods, 3/2, Toronto, Buffalo and London: University of Toronto Press. 1997. XLIV+489 p.
24. Frayne D. R. *Sargonic and Gutian Periods (2334-2113 BC)*. The Royal Inscriptions of Mesopotamia. Early Periods, 2, Toronto, Buffalo and London: University of Toronto Press. 1993. XXV+338p.
25. Glassner J.-J. *Mesopotamian Chronicles*. Writings from the Ancient World 19. Atlanta: Society of Biblical Literature. 2004. XX + 365 p.
26. Grayson A. K. *Assyrian Royal Inscriptions*. Vol. I. From the Beginning to Ashur-resha-ishi I. Otto Harrassowitz. Wiesbaden. 1972. XXII+158 p.
27. Grayson A. K. *Königslisten und Chroniken // Reallexikon der Assyriologie*. Band 6. Berlin: Walter de Gruyter. 1980-1983. pp. 86-135.
28. Grayson A. *The Assyrian Rulers of the Third and Second Millennium BC (to 1115 BC)*, The Royal Inscriptions of Mesopotamia Assyrian Periods, Vol. I, Toronto-Buffalo-London. 1987. XXII-355p.
29. Grayson A. *The Assyrian Rulers of the Early First Millennium B. C. II (858-745 B.C.)*, The Royal Inscriptions of Mesopotamia Assyrian Periods, Vol. III, Toronto-Buffalo-London. 1996. 296 p.
30. Holloway S. W. *Aššur is King! Aššur is King!: Religion in the Exercise of Power in the Neo-Assyrian Empire*. Culture and history of the ancient Near East. Vol. 10. Leiden, Boston, Köln, Brill. 2001. xxxiv + 559 pp., 4 maps, 27 illustrations.
31. Höflmayer F. *Establishing an Absolute Chronology of the Middle Bronze Age // The Oxford History of the Ancient Near East*, Editors: Radner K., Moeller N. and Potts D. T., Volume 2: From the End of the Third Millennium BC to the Fall of Babylon, Oxford 2022, pp. 1-46.
32. Jakob S. *Economy, Society, and Daily Life in the Middle Assyrian Period // In Frahm, E. (ed.), A companion to Assyria*. Malden, MA: Wiley-Blackwell. 2017. pp. 143-160.
33. Kuhrt A. *The Ancient Near East c. 3000-330 BC*, Vol. I, London-New York. 1995. XXVIII+381P.
34. Kupper J.-R. *Northern Mesopotamia and Syria // The Cambridge Ancient History, II/1*. Chicago. 1973. pp. 1-41.
35. Leichty E. *The Royal Inscriptions of Esarhaddon, King of Assyria (680-669 BC)*. Royal Inscriptions of the Neo-Assyrian Period 4. Winona Lake, Indiana: Eisenbrauns. 2011. XXXV + 352 P.
36. Lewy H. *Assyria c. 2600-1816 B.C. // The Cambridge Ancient History, I/3*. Chicago. 1971. pp. 729-770.
37. Liverani M. *The Ancient Near East: History, Society and Economy*. Routledge. 2013. 648 p.
38. Michałowski P. *Aššur during the Ur III Period // in Here & There: Across the Ancient Near East*. Studies in Honour of Krystyna Lyczkowska, ed. Drewnowska O. Warszawa. 2009. pp. 149-156.
39. Michel C. *The Old Assyrian Trade in the light of Recent Kültepe Archives // The Canadian Society for Mesopotamian Studies*. 2008, № 3. pp. 71-82.
40. Reade J. *Assyrian King-Lists, the Royal Tombs of Ur, and Indus Origins // Journal of Near Eastern Studies*. Vol. 60, No. 1. 2001. pp.1-29.
41. Reculeau H. *Assyria in the Late Bronze Age // The Oxford History of the Ancient Near East*, Editors: Radner K., Moeller N. and Potts D. T., Volume 3: From the Hyksos to the Late Second Millennium BC. Oxford. 2022. pp. 707-800.
42. Reculeau H. *Claiming Land and People. Conceptions of Power in Syria and Upper Mesopotamia During the 2nd Millennium BCE // In Schmidt-Hofner, S., Ambos, C., and Eich, P. (eds.). Raum-Ordnung: Raum und soziopolitische Ordnungen im Altertum*. Heidelberg: Winter. 2016. pp. 175-214.
43. Ridder Jan de J., Kryszat G. *Murder in Anatolia: An Urgent Letter from the Ruler of Aššur // Altorientalische Forschungen*. № 50/1. 2023. pp. 51-62.

44. Ur J. *Physical and Cultural Landscapes of Assyria* // In Frahm, E. (ed.), *A companion to Assyria*. Malden, MA: Wiley-Blackwell. 2017. pp. 13–35.
45. Veenhof K. *The Old Assyrian period (20th–18th century BCE)* // In Frahm, E. (ed.), *A companion to Assyria*. Malden, MA: Wiley-Blackwell. 2017. pp. 57–79.
46. Veenhof K. R., Eidem J. *Mesopotamia: The Old Assyrian Period*. *Orbis Biblicus et Orientalis* 160/5. Academic Press Fribourg Vandenhoeck & Ruprecht Göttingen. 2008. 383 p.
47. Veenhof K. R., *The Old Assyrian List of Eponyms from Karum Kaniš and its Chronological Implications* // *Zeitschrift für Assyriologie und Vorderasiatische Archäologie*, 2004, Bd. 94, pp. 304-306.
48. Yamada S. *The Transition Period (17th to 15th Century BCE)* // In Frahm, E. (ed.), *A companion to Assyria*. Malden, MA: Wiley-Blackwell. pp.2017. 57–79
49. Yamada S. *The Editorial History of the Assyrian King List* // *Zeitschrift für Assyriologie und Vorderasiatische Archäologie*, 1994, Bd. 84, pp.11 – 37.

References

1. Grekyan Y. The State of Ashur [*Ashuri petut'yuny*] History of Neighbouring Countries of Armenia. Vol. I. Ed. of. A. V. Kosyan. IOS NAS RA. Yerevan. 2013, pp. 54-63 (in Armenian)
2. Ts'akanyan R. On the Periodization of the Assyrian History [*Asorestani patmut'yan parberats'man harts'i shurf*], Middle East, 2014, IX-X, IOS NAS RA, Yerevan, pp. 229-246 (in Armenian)
3. Ts'akanyan R. On Some Foreign and Domestic Policy Issues of Middle Assyrian Empire [*Mijinasoestanyan terut'yan artaqin ev nerqin qaxaqakanu'tyan vorosh harts'eri shurf*] , The Countries and Peoples of the Near and Middle East, XXXI, 2018, pp. 19-33 (in Armenian)
4. Ts'akanyan R. Chronological Problems of Assyrian History (extra-long, long, middle, low, ultra-low dates) [*Asorestani patmut'yan zhamanakagrakan xndirneri (geryerkar, erkar, mijin, karch' ev gerkarch' t'yagrumer)*], *Journal of Oriental Studies*. Yerevan. 2022, № XXI, pp. 239-247. (in Armenian)
5. Kosyan A. The Political Order and the Army of Assyria [*Asorestani qaxaqakan kargy ev banaky*] History of Neighbouring Countries of Armenia. Vol. I. Ed. of. A. V. Kosyan. IOS NAS RA. Yerevan. 2013, pp 97-10. (in Armenian)
6. Diakonoff I. M. Development of Land Relations in Assyria [*Razvitie zemelnyx otnoshenii v Assirii*]. Leningrad. 1949. 153 p. (in Russian)

Ընդունվել է / Принята / Received on: 05.09.2023

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: 25.09.2023

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: 27.11.2023

Տեղեկություններ հեղինակի մասին

Ռուսլան Արշակի ՑԱԿԱՆՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու,
ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի, գիտաշխատող, Երևան, ՀՀ,
Էլ. հասցե՝ rooslantsakanyan@gmail.com <https://orcid.org/0009-0003-6148-0933>

Ruslan Arshak TSAKANYAN: PhD in History, Researcher,
The Institute of Oriental Studies NAS, Yerevan, RA,
e-mail: rooslantsakanyan@gmail.com <https://orcid.org/0009-0003-6148-0933>

Руслан Аршакович ЦАКАНЯН: кандидат ист. наук, научный
сотрудник Института востоковедения НАН, Ереван, РА,
эл.адрес: rooslantsakanyan@gmail.com <https://orcid.org/0009-0003-6148-0933>

ՀՏԴ՝ 93/94

DOI: 10.52971/18294316-2023.26.2-23

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԿՂԱՐՋՔԻ ՃՅՈՒՂԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Լիանա Նազարյան

ԳԱԱ պատմության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Բագրատունիների Տայք-Կղարջքի ճյուղը հիմնվել էր VIII դ. վերջին երեսնամյակում: Այն հիմնել էին Հայոց իշխան Աշոտ Կույր Բագրատունու որդի Վասակն ու սրա որդի Ատրներսեհը: Վերջինիս որդի Աշոտ կուրապաղատի իշխանության օրոք հիմք դրվեց Բագրատունիների վրացական իշխանությանը: Դրանից հետո գերագույն իշխանության համար պայքարում Բագրատունիների Տայք-Կղարջքյան ճյուղը տրոհվեց երկու մասերի՝ Տայքի և Կղարջքի: *Մեթոդներ և նյութեր.* Աշխատանքում կիրառվել են պատմահամեմատական, ինչպես նաև սկզբնաղբյուրների համադրության և վերլուծության մեթոդներ: *Վերլուծություն.* Աշխատանքում քննվել են տոհմաճյուղի տրոհման պատճառներն ու ընթացքը, Աշոտ կուրապաղատից հետո իշխանության բաժանումը նրա որդիների ու թոռների միջև: *Արդյունքներ.* Աշխատանքում ներկայացվում են գերագույն իշխանության համար պայքարի մասնակիցները, և անդրադարձ է կատարվում Աշոտ կուրապաղատի ժառանգների տիրույթներին: Նրանց պայքարի արդյունքում Բագրատունիների վրացական ճյուղը բաժանվեց երկու մասի՝ Տայքի ու Կղարջքի: Մրանցից Տայքի ճյուղի ներկայացուցիչները ձեռք բերեցին թագավորի ու կուրապաղատի, իսկ Կղարջքինը՝ երիսթավների երիսթավ տիտղոսները:

Բանալի բառեր՝ *Բագրատունիներ, Կղարջք, Տայք, Աշոտ կուրապաղատ, Ատրներսեհ, Բագրատ, Գուարամ, Սմբատ պատմիչ, «Վրաց Տարեգիրք»:*

Ինչպես հղել՝ Նազարյան Լ. *Բագրատունիների Կղարջքի ճյուղի առաջացումը* // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Հ. 2(26): 23-32 էջեր:

DOI: 10.52971/18294316-2023.26.2-23

THE ORIGIN OF KGHARJK BRANCH OF THE BAGRATUNIS

Liana Nazaryan

Institute of History of NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: The Tayk-Kgharjk branch of the Bagratunis was founded in the last thirty years of VIII century. It was founded by the son of Armenian prince Ashot Kuir Bagratuni: Vasak, and his son Atrnerseh. During the rule of the latter's son Ashot Curopalates, the Georgian rule of the Bagratunis was established. After that, in the struggle for supreme power, the Tayk-Kgharjk branch of the Bagratunis split into two parts: Tayk and Kgharjk. **Methods and materials:** Historical-comparative, as well as primary sources combination and analysis methods were used in the work. **Analysis:** The reasons and process of the dynasty branch division were studied in the work. After Ashot Curopalates, the power was divided among his sons and grandsons. **Results:** The work presents the participants of the struggle for supreme power and refers to the domains of the heirs of Ashot Curopalates. As a result of their struggle, the Georgian branch of the Bagratunis was divided into two parts: Tayk and Kgharjk. From these, the representatives of the Tayk branch acquired the titles of king and Curopalates, and the ones of Kgharjk - the Eristavi of Eristavis.

Key words: *the Bagratunis, Kgharjk, Tayk, Ashot Curopalates, Atrnerseh, Bagrat, Guararm, Smbat Historian, "Georgian Chronicle."*

Citation: Nazaryan L. *The Origin of Kgharjk Branch of the Bagratunis* // "Scientific Works" of SCAS NAS RA. Gyumri, 2023. V. 2 (26). pp.23-32. DOI: 10.52971/18294316-2023.26.2-23

ПРОИСХОЖДЕНИЕ КХАРДЖКСКОЙ ВЕТВИ БАГРАТИДОВ

Лиана Назарян

Институт истории НАН, Ереван, РА

Аннотация

Введение: Тайк-Кхарджкская ветвь Багратидов была основана в последнее тридцатилетие VIII в.. Она была основана сыном армянского князя Ашота Слепого Багратуни Васакком и его сыном Атрнерсехом. При сыне последнего Ашоте Куропалате установилось грузинское правление Багратидов. После этого в борьбе за верховную власть Тайк-Кхарджкская ветвь Багратидов распалась на две части: Тайк и Кхарджк. **Методы и материалы:** В работе использовались историко-сравнительный, а также методы объединения и анализа первоисточников. **Анализ:** В работе исследованы причины и процесс разделения ветвей династии. После Ашота Куропалата власть разделилась между его сыновьями и внуками. **Результаты:** В исследовании представлены участники борьбы за верховную власть и говорится о владениях наследников Ашота Куропалата. В результате их борьбы грузинская ветвь Багратидов разделилась на две части: Тайк и Кхарджк. Представители тайкской ветви получили титулы царей и куропалатов, а кхарджкские - эристав эриставов.

Ключевые слова: *Багратиды, Кхарджк, Тайк, Ашот Куропалат, Атрнерсе, Баграт, Гуарам, историк Смбат, „Летопись Картли“.*

Как цитировать: Назарян Л. *Происхождение Кхарджкской ветви Багратидов* // "Научные труды" ШЦАИ НАН РА. Гюмри, 2023. Т. 2(26). сс.23-32. DOI:10.52971/18294316-2023.26.2-23

ՆԱԽԱԲԱՆ. Բագրատունիների Տայք-Կղարջքի ճյուղը հիմնել են Հայոց իշխան Աշոտ Կույրի (732-748) որդի Վասակն ու վերջինիս որդի Ատրներսեհը (VIII դ. վերջին երեսնամյակում): Ատրներսեհի դուստր Լատավրիան ամուսնացել է Վրաց Խոսրովյան դինաստիայի վերջին գահակալ Ջուանշերի հետ: Ուստի Ատրներսեհը, խնամփանալով վերջինի հետ և ստանալով որոշ տիրույթներ, սկիզբ է դնում նոր իշխանական տոհմի՝ Բագրատունիների վրացական ճյուղի գլխավորությամբ: Այն հիմնադրվել է մինչ Ջուանշերի մահը, այսինքն՝ 787 թ.: Վերջինի մահից հետո իշխանությունն անցել է Ատրներսեհի որդի Աշոտ Բագրատունուն, որն էլ Բյուզանդական կայսրից ստացել է կուրապաղատի տիտղոս [4, էջ 77]: Այդ իշխանությունն է, որ վրաց պատմագիտական գրականությունն անվանում է «Տառ-Կլարջեթիի» (Տայք-Կղարջքի) կամ «Քարթվելական թագավորություն», նույնիսկ՝ «Իբերական թագավորություն» [17, էջ 445, 14, էջ 31]:

Աշոտ կուրապաղատի (787-826) իշխանության կազմում էին Տայքը, Կղարջքը և այլ տարածքներ: Ընդ որում, Բագրատունիների իշխանության հաստատման ժամանակաշրջանում, առավել հստակ՝ մինչև Աշոտի որդիների կառավարումը, մեծ էր հատկապես Կղարջքի դերը՝ Արտանուջ կենտրոնով: Դա պայմանավորված էր նրանով, որ Կղարջքը, մինչ Բագրատունիների այնտեղ հաստատվելը, Վրաց Խոսրովյան դինաստիայի կառավարման ընթացքում պատկանում էր Վրաց պետությանը և ազդեցիկ էր այդ ժամանակաշրջանում: Հետևաբար, անցնելով Բագրատունիներին, այն շարունակեց պահպանել իր նշանակությունը: Իսկ Տայքը, որ մինչ VIII դ. երբեք չէր եղել Վրաց պետության կազմում՝ այնտեղ Բագրատունիների իշխանության հաստատման սկզբնական շրջանում չունեի նույն դերը, ինչ Կղարջքը: Սակայն IX դ. երկրորդ կեսից նկատելիորեն մեծանում է նաև Տայքի նշանակությունը, իսկ X դ. կեսերին, երբ Դավիթ կուրապաղատի շնորհիվ Տայքի իշխանությունը հասավ հզորության գագաթնակետին, նրա գերիշխանությունն ընդունում էին նաև Բագրատունիների Կղարջքի ճյուղի ներկայացուցիչները:

Այսպիսով, եթե իշխանության հաստատման ժամանակաշրջանում Բագրատունիների Տայք-Կղարջքի ճյուղը միասնական էր, ապա 826 թ. Աշոտ կուրապաղատի մահից հետո այն տրոհվեց առանձին ճյուղերի՝ Տայքի և Կղարջքի: Ի դեպ, Աշոտ կուրապաղատից հետո նախ նրա իշխանությունը բաժանվեց, ապա նաև՝ Բագրատունիների տոհմը: Ընդ որում, կենտրոնական իշխանության հարցում հաճախ գերապատվությունը տրվել է գլխավորապես Կղարջքին: Սակայն միշտ չէ, որ վերջինիս առաջնորդներն են գերակա եղել Տայքի իշխանների նկատմամբ: Է. Թաղաիշվիլին հենց Բագրատունիների Տայքի ճյուղին է վերագրում թագավորի տիտղոս կրելը [16, էջ 51: 19, էջեր 113-114]: Իրականում աղբյուրների տեղեկություններն իսկապես վկայում են Բագրատունիների վրացական ճյուղի բաժանումը Տայքի և Կղարջքի: Այժմ անդրադառնանք այդ խնդրին և պարզենք, թե դա երբ և ինչպես է տեղի ունեցել:

Աշոտ կուրապաղատի իշխանության մասնատումը IX դ. կեսերին

Աշոտ կուրապաղատը, ինչպես վերը նշեցինք, մահացավ 826 թ., իսկ նրա իշխանությունը բաժանվեց երեք որդիների՝ Ատրներսեհի, Բագրատի և Գուարամի միջև: Նրանցից միջնակը՝ Բագրատը, ժառանգեց կուրապաղատի տիտղոսը [11, էջեր 98, 105:

18, էջ 63]: Վրաց պատմիչ Դավթի որդի Սմբատը, որը Աշոտի մահը թվագրում է 826-ով, նշում է, որ դրանից հետո կուրապաղատի ձեռք բերած տիրությունները գրավել են արաբները, քանի որ նրա որդիներն անչափահաս էին, իսկ երբ չափահաս դարձան, վերադարձրին այն ամենը, ինչը պատկանում էր իրենց հորը [18, էջ 63]: Համաձայն Սմբատ պատմիչի՝ մինչև չափահաս դառնալը երեք եղբայրները գտնվում էին Արտանուշում, իսկ Կղարջքը, Շավշթն ու Նիգալը հարկ էին վճարում արաբներին [18, էջ 63]: Վրացական մեկ այլ աղբյուր՝ Գրիգոր Խանձթեցու վարքագիրը, նույնպես վկայում է, որ Աշոտի որդիները գտնվում էին Կղարջքում, բայց նրա տեղեկություններից չի երևում, որ նրանք անչափահաս էին [11, էջեր 98, 105-107 և այլն]: Հավանաբար, Դավթի որդի Սմբատն արաբների կողմից Աշոտի տիրությունների նվաճումը փորձում է բացատրել նրա որդիների մանկահասակ լինելով: Դատելով աղբյուրների վկայությունից՝ Աշոտի որդիներին է մնացել իշխանության կենտրոնական հատվածը, ինչպես նաև Տայքի հյուսիսային (առանց Կոդ գավառի) և հյուսիսարևմտյան տարածքները, իսկ արաբները տիրել էին բուն Վիրքին և շրջակա տարածքներին՝ մինչև Քսան գետը:

Աշոտ կուրապաղատի միջնեկ որդի Բագրատը, բյուզանդական կայսեր համաձայնությամբ (հավանաբար խոսքը Ֆեոֆիլ (829-842) կայսեր մասին է) ժառանգել էր կուրապաղատի տիտղոսը [11, էջ 105]: Իսկ «Վրաց Տարեգրք»-ի հաղորդմամբ, երբ Խալիդի որդի Մուհամմեդը (Մուհամմադ իբն Խալիդ) եկավ Քարթլի (Վիրք), Բագրատը գնաց նրա մոտ և նրանից ստացավ Քարթլին [13, էջ 49: 12, էջ 141]: Մուհամմադ իբն Խալիդը (845-849) Հայաստան ու Վիրք եկել է հոր մահից հետո: Նրան ուղարկել էր Վասիկ խալիֆը (842-847) [7, էջ 395], ուստի Բագրատը նրա մոտ պետք է գնացած և Քարթլին ստացած լիներ 845-847 թթ. միջակայքում: Բանն այն է, որ, ինչպես վկայում է աղբյուրը, Բագրատը Վիրքին տիրել է Մուհամմադի հայր Խալիդ իբն Յազիդի երրորդ անգամ այնտեղ գնալուց և սպանվելուց հետո, իսկ վերջինիս որդի Մուհամմադ իբն Խալիդ իբն Յազիդը հոր մահից (845 թ.) հետո է գնացել Վիրք և այն տվել Բագրատին [13, էջ 49: 12, էջ 141]: Արքայազն Վախուշտը նշում է, որ Բագրատը տիրեց Քարթլիին (Վիրք), ինչպես նաև Վերին Քարթլիին կամ Սամցխեին [10, էջ 187]: Այսպիսով, Աշոտ կուրապաղատի որդիներից Բագրատը հոր իշխանության տարածքներից տիրեց Քարթլիին (Վիրքը) և Սամցխեին:

«Վրաց Տարեգրք»-ի համաձայն՝ Աշոտ կուրապաղատի կրտսեր որդի Գուարամը գրավեց Ջավախքը, Թրիալեթը (Թռեղքը), Տաշիրը, Աբոցը (Աշոցքը) և Արտահանը [13 էջ 50: 12, էջ 142]: Հավանաբար, նա այդ տարածքները գրավել էր արաբներից, քանզի աղբյուրը հաջորդիվ նշում է, որ նա պայքարել է արաբների դեմ, երբեմն հաղթել, երբեմն էլ՝ պարտվել [13, էջ 50: 12, էջ 142]: Ինչպես վերը նշվեց, նրա հոր տիրությունների մի մասն ընկել էր արաբների տիրապետության տակ, ուստի պարզ է, որ Գուարամը նրանցից պետք է գրավեր այդ տարածքները: Նույն աղբյուրը նաև վկայում է, որ «Գուարամն իր տիրությունները կիսում է եղբայրների՝ Ատրներսեհի և Բագրատի հետ, իսկ Աբոցը (Աշոցքը) տվել էր աներորդուն՝ Հայոց թագավորին» [13, էջ 50: 12, էջ 142]: Ըստ Վախուշտի «Գուարամ մամփալը տիրեց Ջավախքին, Թրիալեթին (Թռեղքը), Աբոցին (Աշոցքը) և որոշ մասերի Սոմխիթից (Հայաստանից), քանի որ Գուարամ մամփալն ամուսնացած

էր Հայոց թագավորի դստեր հետ» [10, էջ 187]: Ըստ Դավթի որդի Սմբատի՝ Գուարամը մահացել է 882 թ. [15, էջ 36], այդ ժամանակաշրջանում «Հայոց արքա» ասելով պետք է հասկանալ Հայոց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն, որը դեռևս թագավոր չէր հռչակվել: Ինչ վերաբերում է եղբայրների հետ տիրույթները կիսելուն, ապա կարծում ենք՝ խոսքն այստեղ ոչ թե Գուարամի տիրույթների, այլ իրենց հոր իշխանությունը բաժանելու մասին է: Հակառակ պարագայում կստացվի, որ Գուարամի հիշյալ տարածքներն են բաժանվել եղբայրների միջև: Եվ քանի որ նրանցից Բագրատը մահացել էր 876 թ. [19, էջ 115: 15, էջ 33: հմմտ. 12, էջ 225: 18, էջ 64: 10, 265]¹, հետևաբար, այդ տարածքները մինչ այդ պետք է տրված լինեին եղբայրներին:

Իսկ ի՞նչ եղավ Աշոտ կուրապաղատի ավագ որդի Ատրներսեհը: «Վրաց Տարեգիրք»-ը նրա մասին լռում է, իսկ Վախուշտի Բագրատիոնը վկայում է, որ նա տիրում էր Կղարջքին [10, էջ 187]: Դրա վկայությունն է նաև Դավթի որդի Սմբատի երկում նրա սերունդներին «Արտանուջելի» (Արտանուջեցի) կոչելը [18, էջեր 65, 67-68: 15, էջեր 35-36, 38]: Կարծում ենք, որ թեև աղբյուրներում Ատրներսեհի տիրույթ է նշվում լուկ Կղարջքը, սակայն նրա տիրույթները միայն այդ երկրամասով չեն սահմանափակվել:

Ինչպես վերը նշվել է, Աշոտ կուրապաղատից հետո նրա որդիները, կորցնելով արտաքին տարածքները, հաստատվել էին իրենց բուն տիրույթներում՝ Կղարջքում, Շավշքում ու Նիգալում: Սակայն աղբյուրները վերջին երկուսը չեն հիշում եղբայրներից և ոչ մեկի տիրույթներում: Քանի որ այդ տարածքները սահմանակից էին Կղարջքին, հետևաբար, ենթադրելի է, որ դրանք նույնպես մնացել էին Ատրներսեհի տիրապետության տակ: Այսինքն՝ եղբայրներից Բագրատն ու Գուարամը, դուրս գալով իրենց բուն տիրույթներից, ձեռք էին բերել իրենց հիշյալ տարածքները, իսկ ավագ եղբայրը մնացել էր Կղարջքում, որի կենտրոնը շարունակում էր մնալ Արտանուջը: Իսկ Ատրներսեհին պատկանող Կղարջքը սահմանակից էր Տայքի հյուսիսային հատվածին կամ Ստորին Տայքին ու Արսեացփորին: Ուստի տրամաբանական է, որ Տայքի հյուսիսային ու արևմտյան մասերը նույնպես մտել են Ատրներսեհի տիրապետության տակ, այդ իսկ պատճառով այն ևս բացակայում էր մյուս եղբայրների տիրույթներից:

Այսպիսով, Աշոտ կուրապաղատից հետո նրա իշխանությունը բաժանվեց երեք մասի: Ի դեպ, ինչպես տեսանք, Տայքը և Կղարջքը միասին պատկանում էր եղբայրներից ավագին՝ Ատրներսեհին: Սակայն Բագրատունիների տոհմը մասնատվեց հենց Տայքի ու Կղարջքի ճյուղերի: Հետևաբար, հարց է ծագում՝ ի՞նչ եղան մյուս եղբայրների տիրույթները:

Բագրատունիների տոհմի բաժանումը Տայքի և Կղարջքի ճյուղերի

Բագրատունիների վրացական ճյուղի բաժանման և Աշոտ կուրապաղատի որդիների տիրույթների ճակատագիրը պարզելու համար անհրաժեշտ է ծանոթանալ երեք եղբայրների սերունդներին: Նրանց մասին մանրամասն ներկայացված է Դավթի որդի

¹ Դավթի որդի Սմբատի երկի ռուսերեն թարգմանությունում, ինչպես նաև «Քարթլիս Ցխովրեբալի» ռուսերեն 2008 թ. հրատարակությունում վրիպակ է սպրդել, և Բագրատի մահը նշված է քրոնիկոն 101 թ. (881 թ.), սակայն Սմբատի երկի վրացերեն և ռուսերեն է. Թաղախիշվիլու հրատարակություններում նշված է քրոնիկոն 96 թ. (876 թ.), Ս. Բրոսսեն նույնպես նշում է 876 թ.:

Մմբատի երկում, նրա հետևությամբ՝ նաև Վախուշտի աշխատությունում, որտեղ, սակայն, առկա են որոշ անհամապատասխանություններ: Մմբատ պատմիչը նաև նշում է նրանց մահվան թվականները:

Համաձայն պատմիչի՝ ավագ եղբայր Ատրներսեհն² ուներ երեք որդի՝ Գուրգեն, որին խոր ծերության հասակում դարձրին կուրապաղատ, Աշոտ Կեկելայ և Մմբատ Արտանուջեցի, որին նշանակեցին անտիպատոս-պատրիկոս [18, էջ 63: 15, էջ 32: հմմտ. 10, էջ 188]:

Եղբայրներից միջնեկը՝ Բագրատ կուրապաղատը, նույնպես ուներ երեք որդի՝ Դավիթ, որը հոր մահից հետո (876 թ.) դարձավ կուրապաղատ, այսինքն՝ ժառանգեց այդ տիտղոսը, Ատրներսեհ և Աշոտ [18, էջ 63: 15, էջ 32: հմմտ. 10, էջ 189]:

Աշոտ կուրապաղատի կրտսեր որդին՝ Գուարամ մամփալը, ուներ երկու որդի՝ Նասր ու Աշոտ և դուստր, որն ամուսնացած էր Ափխազաց թագավորի որդի Ատրներսեհի հետ [18, էջ 63: 15, էջ 32: հմմտ. 10, էջ 187]:

IX դ. երկրորդ կեսից Աշոտ կուրապաղատի որդիների ու թոռների միջև պայքար է ծավալվում գերագույն իշխանության և, հատկապես, Քարթլիին (Վիրքին) տիրելու համար: Այդ պայքարին շուտով միջամտում է նաև Ափխազական թագավորությունը, որը նույնպես ցանկանում էր տիրել Քարթլիին (Վիրքին), իսկ ավելի ուշ՝ նաև Հայոց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին (ապագա թագավոր Աշոտ Ա (885-890)): Բագրատունիների վրացական ճյուղի ներսում գերագույն իշխանությունը պատկանում էր նրան, ով կրում էր կուրապաղատի տիտղոս: Հետևաբար, Աշոտ կուրապաղատի սերունդները պայքարում էին կուրապաղատի տիտղոսի համար, որը նրա մահից հետո անցել էր միջնեկ որդի Բագրատին ու սրանից հետո՝ սրա որդի Դավթին: Ուստի այդ տիտղոսի համար IX դ. երկրորդ կեսից պայքարում էին Աշոտ կուրապաղատի թոռները՝ Գուրգենը, Դավիթը և Նասրը: Սրանք երեք եղբայրների՝ Ատրներսեհի, Բագրատի ու Գուարամի որդիներն էին: Բագրատը և Ատրներսեհը՝ Գուրգենի հայրը, մահացել էին, իսկ կրտսեր եղբայր Գուարամը, ամենայն հավանականությամբ, ցանկանում էր տիրել ոչ միայն իր հորը պատկանած տարածքներին (դրանց մի մասը անցել էր Լիպարիտ Բաղվաշին), այլև ձեռք բերել գերիշխանություն, որը, ինչպես նշվեց, տվյալ պարագայում համարվում էր կուրապաղատի տիտղոս կրելը: Հենց այդ նպատակն էր հետապնդում նաև Գուրգենը:

Պայքարն ընթանում է երեք փուլով, որի արդյունքում նախ Գուարամի որդի Նասրի կողմից սպանվում է Դավիթ կուրապաղատը (876-881) [13, էջ 51: 18, էջ 64: 10, էջ 187, 189]: Շուտով Գուարամը դառնում է հոգևորական և հետո մահանում (882 թ.) [18, էջ 64]: Սակայն Դավիթ կուրապաղատի սպանությունը Նասրի համար չճառայեց իր նպատակին, բացի այդ, չմնաց անպատասխան: «Վրաց Տարեգիրք»-ը վկայում է, որ շուտով Նասրի դեմ համախմբվեցին «հայերը, Լիպարիտն ու վրացիները և Աշոտը՝ Դավթի եղբայրը, ինչպես նաև նրանց հետ՝ սարակինոսները [արաբները-Լ.Ն.]» [13, էջ 51: 12, էջ 142]: Նրանք պարտության են մատնում Նասրին և զավթում նրան պատկանող ամրոց-

² Ղ. Ալիշանը Բագրատունիների տոհմաճառում Ատրներսեհի մահը թվագրում է 860-ով և նրան կոչում «տեր Արտանուջի» (մանրամասն տե՛ս Ալիշան Ղ., Շիրակ, Տոհմացոյց Բագրատունեաց):

ները: Նասրը փախչում է Բյուզանդիա [13, էջ 51: 12, էջ 142: հմմտ. 18, էջ 64]: Համաձայն Սմբատ պատմիչի՝ նրա դաշնակից Գուրգենն էլ ստացավ կուրապաղատի տիտղոս [18, էջ 64: 15, էջ 33]: Այսինքն՝ Նասրի կողմից Դավիթ կուրապաղատի սպանությամբ վերջինիս տիտղոսն անցնում է Աշոտ կուրապաղատի ավագ որդի Ատրներսեհի տղա Գուրգենին: Փաստորեն, վերջինս այդ հակամարտությունում հասավ իր նպատակին:

Այսպիսով, Բագրատունիների վրացական ճյուղի ներսում գերիշխանությունն անցավ Տայքին ու Կղարջքին տիրող Գուրգենին: Իսկ Դավիթ կուրապաղատին պատկանած տիրույթներն, ըստ ուսումնասիրողների, ընկել են Հայոց իշխանաց իշխան Աշոտի տիրապետության տակ [19, էջ 101-102: 9, էջ 125]:

Նասրը, վերադառնալով Կոստանդնուպոլսից, փորձում է վերականգնել իր դիրքերը, սակայն այս անգամ նրա հորեղբորորդի Գուրգենը միանում է սպանված Դավիթ կուրապաղատի որդի Ատրներսեհին: Հայերի օգնությամբ նրանք պարտության են մատնում Նասրին, որն էլ սպանվում է 888 թ. [18, էջ 64: 13, էջ 51: 10, էջ 188]: Ըստ Զ. Անչաբաձեի՝ Նասրի տիրույթներն անցել են Դավիթ կուրապաղատի ժառանգին [9, էջ 125], այսինքն՝ Ատրներսեհին: Բյուզանդիայից վերադառնալուց հետո Նասրը Սամցխեում գրավել էր երեք բերդ՝ Օձրխեն, Ջվարիսցիխեն և Լոմսիանթան [13, էջ 51: 12, էջ 143], և նրա մահից հետո, հավանաբար, այդ բերդերն են անցել այլ իշխանների:

Նասրի մահով ընդհատվեց նաև Աշոտ կուրապաղատի կրտսեր որդու սերունդը: Նասրը որդի չունեի, իսկ նրա եղբայր Աշոտն առավել վաղ էր մահացել՝ դարձյալ անժառանգ [18, էջ 64: 15, էջ 33]:

Սակայն, շուտով թշնամանում են նաև Գուրգենն ու Ատրներսեհը: Վերջինիս, ինչպես վկայում է Սմբատ պատմիչը, հռչակում են վրաց թագավոր: Սմբատ պատմիչի տեղեկություններից պարզվում է, որ «Գուրգեն կուրապաղատն իր տիրույթ Տայքից ու Կալմախից տեղափոխվեց Շավշեթ և Արտահան: Իսկ դրանից հետո սկսեցին միմյանց դեմ զորք հավաքել և պայքարել իրար դեմ մի կողմից՝ Գուրգեն կուրապաղատն ու իր մարդիկ, մյուս կողմից՝ Վրաց թագավոր Ատրներսեհն ու Բագրատ Արտանուջեցին» [18, էջ 65: 15, էջ 34]: Վերջինս Գուրգենի եղբայր Սմբատ Արտանուջեցու որդին էր: Այդ պայքարի ընթացքում 891 թ. Գուրգեն կուրապաղատը մահանում է [18, էջ 65: 15, էջ 34]:

Դավթի որդի Սմբատի սույն տեղեկությունները լույս են սփռում մի շարք հարցերի վրա: Վերջնականապես հաստատվում է այն տեսակետը, որ Աշոտ կուրապաղատի ավագ որդի Ատրներսեհը տիրել էր ոչ միայն Կղարջքին, այլև Շավշեթին, Արտահանին և Տայքի որոշ հատվածներին: Նրա որդիներ Գուրգենը, Աշոտ Կեկելայր և Սմբատ Արտանուջեցին միմյանց միջև բաժանել էին իրենց հոր տիրույթները: Դատելով «Արտանուջեցի» անվանակոչումից՝ Սմբատը ստացել էր Կղարջքը՝ Արտանուջ կենտրոնով, Շավշեթն ու Արտահանը, հավանաբար, բաժին էին հասել Աշոտ Կեկելայրին, որի մասին տեղեկություններ է հայտնում նաև Կոստանդին Ծիրանաձինը, իսկ Տայքի տարածքները, փաստորեն, անցել էին Գուրգենի տիրապետության տակ: Սակայն վերջինս էլ դրանք զիջել է իր հորեղբոր թոռանը՝ Ատրներսեհ I թագավորին:

Ի տարբերություն վրացական աղբյուրների, հայկական և բյուզանդական աղբյուրներում Ատրներսեհը կոչվում է նաև կուրապաղատ [3, էջ 14: 2, էջ 237]: Հովհաննես

Դրասխանակերտցին մինչ Ատրնեքսեհի թագավոր հռչակվելը նրան կոչում է «մեծ իշխանն Վրաց» (Հայոց արքա Աշոտ Ա-ի մահվան կապակցությամբ ցավակցություն հայտնելիս), ապա նաև՝ «մեծ կուրապաղատն Վրաց» [5, էջեր 144, 161, 184]: Իսկ Կոստանդին Ծիրանածինը հայտնում է, որ Ատրնեքսեհին կուրապաղատի տիտղոս է շնորհել Լևոն VI Իմաստասեր կայսրը (886-912) [3, էջ 14]: Սմբատ պատմիչը Գուրգեն կուրապաղատից հետո այդ տիտղոսով է կոչում Ատրնեքսեհ I-ի որդի Աշոտին, որը մահացել է 954 թ.: Հետևաբար կարելի է ենթադրել, որ Գուրգենի տիրություններից բացի, նրա մահից հետո Ատրնեքսեհը ստացել է նաև կուրապաղատի տիտղոս, որը փոխանցվել է իր սերնդին, իսկ Գուրգենի որդիներին ու թոռներին, որոնք իշխում էին Կղարջքում, Շավշքում և Արտահանում, այդուհետ կոչում են էրիսթավների էրիսթավ [18, էջեր 64-65: 15, էջ 34]:

Այդպիսով, գերագույն իշխանության համար պայքարն ավարտվեց Բագրատունիների վրացական ճյուղի տրոհումով Տայքի ու Կղարջքի, որի հիմքը կուրապաղատ տիտղոսի կրելն էր, որը ժառանգաբար փոխանցվում է Ատրնեքսեհի որդիներին: Իսկ Կղարջքի ճյուղը վասալական կախվածության մեջ է ընկնում Տայքի ճյուղի ներկայացուցիչներից: Վերջիններս էլ վասալական կախվածություն ունեին Հայոց թագավորներից:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Բագրատունիների վրացական ճյուղը հիմնել են Վասակ և Ատրնեքսեհ Բագրատունիները VIII դ. վերջին երեսնամյակում: Այն հզորացավ Ատրնեքսեհի որդի Աշոտ կուրապաղատի օրոք: Վերջինի իշխանությունն ընդգրկում էր Կղարջքից ու Տայքի հյուսիսային և հյուսիսարևմտյան տարածքներից մինչև Քսան գետը արևելքում՝ ներառելով նաև Վիրքը: Սակայն Աշոտի մահից հետո նրա իշխանությունը մասնատվեց երեք մասի, իսկ IX դ. վերջին նաև Բագրատունիների վրացական ճյուղը բաժանվեց Տայքի ու Կղարջքի ճյուղերի: Սրանցից առաջինը վաստակեց նաև գերագույն իշխանությունը՝ կուրապաղատի ու թագավորի տիտղոսները, որոնք ժառանգաբար փոխանցվեցին Տայքի ճյուղի ներկայացուցիչներին: Իսկ Կղարջքի ճյուղի Բագրատունիները, որոնց հիմնադիրը Աշոտ կուրապաղատի ավագ որդի Ատրնեքսեհի սերունդներն էին, IX-X դդ. կրում էին միայն էրիսթավների էրիսթավ և մագիստրոս ու բյուզանդական այլ տիտղոսներ: Նրանք վասալական կախվածություն ունեին Տայքի Բագրատունիների նկատմամբ:

Գ ր ա կ ա ն ո լ թ յ ո ն

1. Ալիշան Ղ. *Շիրակ, տեղագրություն պատկերացոյց*: Ս. Ղազար տպ.: Վենետիկ: 1881: 7+192 էջ+2 քարտեզ+1 ներդիր:
2. Թեոփանեսի Շարունակոյ: *Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին: 15: Բյուզանդական աղբյուրներ*: Ե: Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրությունները՝ Հ. Բարթիկյանի: Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ.: Երևան: 1990: XLV+439 էջ:
3. Կոստանդին Ծիրանածին: *Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին: 6: Բյուզանդական աղբյուրներ*: Բ: Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Հ. Բարթիկյանի: Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ.: Երևան: 1970: LXV+ 370 էջ+2 քարտեզ:

4. Հախարումն պատմության Վարդանայ վարդապետի: Լուսարանեպ ի Սուրբ Ղազար: Վենետիկ: 1862: ԺԱ+184 էջ:
5. Յովհաննու կաթողիկոսի Գրասխանակերտեցոյ պատմոյին Հայոց: Էլեքտրատպ. օր. Ն. Աղանեանցի: Թիֆլիս: 1912: ԺԹ+427 էջ:
6. Ստեփանոսի Տարոնեցոյ Ատոկան Պատմոյին տիեզերական: Ի տպարանի Ի.Ն. Սկորիտոյովի: Ս. Պետերբուրգ: 1885: ԽԸ+439 էջ:
7. Տեր-Ղևոնդյան Ա. Արևիկայի ոստիկանների ժամանակագրությունը, //Հոդվածների ժողովածու: Երևան: 2003: 385-396 էջեր:
8. Brosset M. *Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX^e siècle*. 1^{re} partie. Imprimerie de L'Académie Impériale des Sciences. S.-Petersbourg. 1849. 694 p..
9. Анчабадзе З. *Из истории средневековой Абхазии (VI-XVII вв.)* Абхазкое гос. изд. Сухуми. 1959. 306 с.
10. Вахушти Багратиони. *История царства Грузинского*. Перевел, снабдил предисловием, словарями и указателем Н. Накашидзе. изд. „Мецниереба“. Тбилиси. 1976. 340 с..
11. Георгий Мерчул. *Житие Григория Хандзтийского*. Перевод Н. Я. Марра, с дневником поездки в Шавшетию и Кларджетию“. СПб.. 1911.- LXX+151+216 с..
12. Картлис Цховреба. *История Грузии*. главный редактор Р. Метревели. изд. „Артануджи“. Тбилиси. 2008. 455 с.+4 карта+15 картин.
13. *Летопись Картли*. перевод, введение и примечания Г. Цулая. Памятники грузинской исторической литературы. IV. изд. „Мецниереба“. Тбилиси. 1982. 113 с..
14. Лордкипанидзе М. *Из истории грузино-византийских взаимоотношений на грании X-XI вв.* //საქართველოს ფეოდალური ხანის ისტორიის საკითხები. II. თბილისი. 1972. 31-42 с..
15. Сумбат Давитис-дзе. *История и повествование о Багратионах*. Перевод, введение и примечания М. Лордкипанидзе. Памятники грузинской исторической литературы. III. изд. „Мецниереба“. Тбилиси. 1979. 69 с..
16. *ექვთიმე თაყაიშვილის არქივი*. საქართველოს სსრ მეცნიერებათა აკადემია კ. კეკელიძის სახელობის ხელნაწერთა ინსტიტუტი. აკადემიკოს ექვთიმე თაყაიშვილის არქივი № ფონდი 663, № ფონდი 51. სიუიუსას I, სიუიუსას II.
17. *საქართველოს ისტორიის ნარკვევები*. ტ. II. გამომცემლობა „საბჭოთა საქართველო“. თბილისი. 1973. 672 გვ..
18. სუმბატ დავითის ძის ქრონიკა. *ტაო-კლარჯეთის ბაგრატიონთა შესახებ*. გამოცემა მესამე, ტექსტი გამოსცა ვრცელი შესავლით, შენიშვნებით და ორი გენეალოგიური ტაბულით საქართველოს სსრ მეცნიერებათა აკადემიის ნამდვილმა წევრმა ე. თაყაიშვილმა. საქართველოს სსრ მეცნიერებათა აკადემიის გამომცემლობა. თბილისი. 1949. 95 გვ..
19. ჯავახიშვილი ივ. *ქართველი ერის ისტორია*. წიგნი მეორე. გამომცემლობა „საბჭოთა საქართველო“. თბილისი. 1965. 472 გვ.+7 ტაბული.

References

1. Alishan Gh. Shirak, topography of imagination [*Shirak, teghagrutyun patkeracocyl*]. S. Lazar print.: Venice. 1881. 7+192 p. (in Armenian)
2. Continuator of Theophanes [*Theophanesi Sharunakox*]. *Foreign sources about Armenia and Armenians*. 15. Byzantine sources. E. Translation from the original, preface and notes by H. Bartikyan. Armenian SSR GA ed. Yerevan. 1990. XLV+439 p. (in Armenian)
3. Constantine Porphyrogenetes [*Konstantin Tsiranatsin*]. *Foreign sources about Armenia and Armenians*. 6. Byzantine sources. B. Translation from the original, preface and notes by H. Bartikyan. Armenian SSR GA ed. Yerevan. 1970: LXV+ 370 p. (in Armenian)
4. The collection of the history of Vardana vardapet [*Havaquumn patmutyan Vardana Vardapeti*]. S. Lazar print.: Venice. 1862: JA+184 p. (in Armenian)

5. Ioannes Draschanacerenis Historia Armeniae [*Yohannu katolikosi Drasghanakertecvo patmutyun Hajoc*]. N. Aghanians. Tiflis. 1912: JT+427 p. (in Armenian)
6. The Universal History of Step'anos Tarōnec'I Asoghik [*Stefanosi Taronecvooy Asoghkan Patmutyun Tiezerakan*], In the printing house I.N. Skorokhodov. S. Petersburg. 1885. KGH+439 p. (in Armenian)
7. Ter-Ghevondian A. *The chronology of the Vostikan of Armenia* [*Armeniayi vostikanneri jamanakacuycy*], //Collected Articles. Yerevan. 2003. 385-396 p. (in Armenian)
8. Brosset M. *Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX^e siècle*. 1^{re} partie. Imprimerie de L'Académie Impériale des Sciences. S.-Pétersbourg. 1849. 694 p..
9. Anchabadze Z. From the history of medieval Abkhazia (VI-XVII centuries) [*Iz istorii Srednevekovoy Abghazii (VI-XVII vv.)*]. Abkhaz state. ed.. Sukhumi. 1959. 306 p. (in Russian)
10. Vakhushti Bagrationi. History of the Kingdom of Georgia [*Istoria Carstvo Gruzinskogo*]. Translated, supplied with a preface, dictionaries and an index by N. Nakashidze. ed. „Metsniereba". Tbilisi. 1976. 340 p. (in Russian)
11. Georgi Merchule. Life of Gregory of Khandzta [*Zhitie Grigorija Handztijskogo*]. Translated by N. Marr. With a diary of a trip to Shavshia and Klardzhia. St. Petersburg. 1911.- LXX+151+216 p. (in Russian)
12. Kartlis Tskhovreba. History of Georgia [*Istoria Gruzii*] . chief editor R. Metreveli. ed. „Artanuji". Tbilisi. 2008. 4 map+15 poto+455 p. (in Russian)
13. Chronicle of Kartli [*Letopis Kartli*]. Translation, introduction and notes by G. Tsulai. Monuments of Georgian historical literature. IV. ed. „Metsniereba". Tbilisi. 1982. 113 p. (in Russian)
14. Lordkipanidze M. From the history of Georgian-Byzantine relations on the verge of X-XI centuries [*Iz isttorii gruzino-vizantiskikh vzaimotnoshenii na granii X-XI vv.*] //issues of the history of the feudal age of Georgia. II. Tbilisi. 1972. 31-42 p. (in Russian)
15. Sumbat Davitis-dze. History and narrative about the Bagratians [*Istoria I povestvovanie o Bagrationakh*]. Translation, introduction and notes by M. Lordkipanidze. Monuments of Georgian historical literature. III. ed. „Metsniereba". Tbilisi. 1979. 69 p. (in Russian)
16. Archive of Ekvtime Takaishvili [*Ekvtime Takaishvilis arkhivi*]. Academy of Sciences of the USSR of Georgia Institute of Manuscripts named after Kekelidze K.. Archive of Academician Ekvtime Takaishvili Fond N 663, Fond N 51. table I, table II. (in Georgian)
17. Essays on the history of Georgia [*Sakartvelos istorii narkvevebi*]. t. II. "Soviet Georgia" publishing house. Tbilisi. 1973. 672 p. (in Georgian)
18. Chronicle of Sumbat David's son. About the Bagratians of Tao-Klarjeti [*Tao-Klarjetis Bagrationta shesakheb*]. The third edition, the text with an extensive introduction, notes and two genealogical tables was published by E. Takaishvili. Publishing House of the Academy of Sciences of the USSR of Georgia. Tbilisi. 1949. 95 p. (in Georgian)
19. Javakhishvili Iv. The history of the Georgian nation [*Kartveli eris istoria*]. Book two. "Soviet Georgia" publishing house. Tbilisi. 1965. 472 p. (in Georgian)

Ընդունվել է / Принята / Received on: 20.80.2023

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: 08.09.2023

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: 27 .11.2023

Տեղեկություններ հեղինակի մասին

Լիանա ՆԱԶԱՐՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու,
ԳԱԱ ՊԻ միջին դարերի պատմության բաժնի գիտաշխատող, Երևան, ՀՀ
Էլ. հասցե՝ Lian_nazaryan@mail.ru <http://orcid.org/0000-0002-5576-2710>

Liana NAZARYAN: PhD in History, Researcher at the Department
of Medieval History of the Institute of History NAS, Yerevan, RA,
e-mail: Lian_nazaryan@mail.ru <http://orcid.org/0000-0002-5576-2710>

Лиана НАЗАРЯН: кандидат исторических наук, научный
сотрудник отдела истории средних веков ИИ НАН, Ереван, РА
эл.адрес: Lian_nazaryan@mail.ru [http:// orcid.org/0000-0002-5576-2710](http://orcid.org/0000-0002-5576-2710)

ՀՏԴ՝ 061.2

DOI: 10.52971/18294316-2023.26.2-33

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ «ՈՐԲԱԽՆԱՄ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ
(1868-1875 թթ.)**

Գևորգ Ս. Սյվազյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Ալեքսանդրապոլը հիմնադրումից ի վեր եղել է Հայաստանի գաղթականության խոշորագույն կենտրոնակայաններից մեկը: Այդ պատմական «բախտը» նրան ուղեկցել է մինչև 1920-ական թթ. կեսերը: Հայության կյանքի գրեթե բոլոր օրհասական պահերին քաղաքն ընդունել և տեղավորել է հարյուրավոր վերաբնակ ընտանիքների: Հայրենակիցների նկատմամբ կարեկցանքը և հոգատարությունը դրսևորվել են որպես ալեքսպոլիցիների դիմագծի կարևոր տարրեր: Մեթոդներ և նյութեր. Հետազոտության ընթացքում կիրառվել են սկզբնաղբյուրային նյութերի որակական ցուցանիշով դասակարգման, ձեռագիր և տպագիր վավերագրերի համեմատության, դրանց հավաստիության ստուգման, պատմական փաստերի վերլուծության և համադրման մեթոդները: Վերլուծություն. Ուսումնասիրության մեջ ներկայացվել է Ալեքսանդրապոլում արևմտահայերի վերաբնակեցումից հետո ստեղծված այն իրավիճակը, որ տեղի մեծահարուստներին պարտավորեցրել է առաջնորդվել չքավորներին ձեռք մեկնելու պատգամով: Նրանց արարքները խուլ արձագանք են գտել հասարակ խավերի շրջանում, որոնք սկսել են գիտակցված աջակցել հատկապես կրթական գործին: Աստիճանաբար դա կրել է համակարգված բնույթ՝ ծնունդ տալով բարեգործական ընկերությունների: Հողվածում ամբողջական կերպով վեր են հանվել «Որբախնամ» ընկերության ստեղծման հանգամանքները, քննության են ենթարկվել դրա կառավարիչ մասնաժողովի հաշվեմատյանները, պարզվել են խոշոր նվիրատուների անունները: Արդյունքներ. Արխիվում պահվող ծառայողական ցուցակների համաձայն՝ կազմվել են ալեքսպոլի ճանաչված մանկավարժներ Ա. Արշակունու և Մ. Արաբաջյանի հակիրճ կենսագրականները: Տարեշրջաններով ցույց են տրվել «Որբախնամ» ընկերության ֆինանսական մուտքերը և

ծախսերը, կատարած աշխատանքները, հստակ մատնանշվել է այն ժամանակահատվածը, երբ այն դադարեցրել է իր գործունեությունը: Ակնարկվել է, որ ընկերությունը կարող էր և ներքաշված լինել ինչ-ինչ քաղաքական գործընթացների մեջ:

Բանալի բառեր՝ *դասագիրք, գրավաճառանոց, Թիֆլիս, ջանք, դպրոց, ձրիավարժ, գրե-նական պիտույքներ, նվիրատվություն:*

Ինչպես հղել՝ Այվազյան Գ., *Ալեքսանդրապոլի «Որբախնամ» ընկերությունը (1868-1875թթ.)* // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Ն. 2 (26): 33-44 էջեր: DOI: 10.52971/18294316-2023.26.2-33

“SOCIETY FOR THE CARE OF ORPHANS” OF ALEXANDRAPOL (1868-1875)

Gevorg S. Ayvazyan

Shirak Center for Armenological Studies of NAS, Gyumri, RA

Abstract

Introduction: Already in the first half of the 19th century, Alexandropol was a major center of settlers from Western Armenia. The city retained its historical "status" until the mid-1920s. Many Armenian families who left because of the Russian-Turkish wars and suffered from Ottoman rule found refuge here. The feeling of compassion and caring towards compatriots were an important feature of the external appearance of the people of Alexandropol. **Methods and materials:** The study used methods for classifying primary sources according to a qualitative indicator, comparing handwritten and printed documents, checking their reliability and comparative analysis of historical facts. **Analysis:** The study presents the situation that developed after the resettlement of Western Armenians in Alexandropol, which obliged the local rich to be guided by the covenant to help the poor. Their actions received a dull response among ordinary citizens. They began to consciously support, in particular, the cause of education, which over time began to take on a systematized character: charitable societies were formed. The article fully highlights the circumstances of the creation of the “Society for the Care of Orphans”, considers the accounting papers of the subcommittees managing the society, reveals the names of major benefactors. **Results:** According to the service lists of recognized educators A. Arshakuni and M. Arabajyan stored in the archive, their short biographies were compiled. The annual financial receipts and expenses of the society are shown, the work performed and the period when it stopped its activities are clearly indicated. It is assumed that the society could be involved in some political processes.

Key words: *textbook, bookstore, Tiflis, effort, school, student for free, stationery, donation.*

Citation: Ayvazyan G. *Society for the “Care of Orphans” of Alexandropol (1868-1875).* // «Scientific works» of SCAS NAS RA. Gyumri, 2023. V. 2(26). pp.35-44.

DOI: 10.52971/18294316-2023.26.2-33

**«ОБЩЕСТВО ПОПЕЧЕНИЯ СИРОТ» АЛЕКСАНДРОПОЛЯ
(1868-1875 гг.)**

Геворг С. Айвазян

Ширакский центр арменоведческих исследований НАН РА

Аннотация

Введение: Александрополь уже в первой половине XIX века был крупным центром переселенцев из Западной Армении. Свой исторический «статус» город сохранил до середины 1920-х гг. Здесь нашли убежище многие армянские семьи, уехавшие из-за русско-турецких войн и пострадавшие от османского владычества. Чувство сострадания и заботливости по отношению к соотечественникам были важной чертой внешнего облика алекпольцев.

Методы и материалы: В ходе исследования использовались методы классификации первоисточников по качественному показателю, сопоставления рукописных и печатных документов, проверки их достоверности и сравнительного анализа исторических фактов. **Анализ:** В исследовании представлена ситуация сложившаяся после переселения западных армян в Александрополь, которая обязывала местных богачей руководствоваться заветом о помощи неимущим. Их действия получили глухой отклик среди простых горожан. Они стали сознательно поддерживать в частности дело просвещения, которое со временем стало принимать систематизированный характер: образовались благотворительные общества. В статье полностью освещены обстоятельства создания «Общества попечения сирот», рассмотрены счётные бумаги управляющего обществом подкомиссий, раскрыты имена крупных благодетелей. **Результаты:** Согласно хранящимся в архиве служебным спискам знатных педагогов А.Аршакуни и М. Арабаджян составлялись их краткие биографии. Показаны ежегодные финансовые поступления и расходы общества, четко указаны выполненные работы и период, когда она прекратила свою деятельность. Предполагается, что общество могло быть вовлечено в какие-то политические процессы.

Ключевые слова: учебник, книжный магазин, Тифлис, усилие, школа, обучающийся бесплатно, письменные принадлежности, пожертвование.

Как цитировать: Айвазян Г. Общество «Попечения сирот» Александрополя (1868-1875гг.). //“Научные труды” ШЦАИ НАН РА. Гюмри, 2023. Т. 2(26). сс.35-44.

DOI: 10.52971/18294316-2023.26.2-33

ՆԱԽԱԲԱՆ. Հայ բարեգործական ընկերություններից մեկի՝ Ալեքսանդրապոլի «Որբախնամ» ընկերության գործունեությունն ուսումնասիրողների ուշադրությանը հիմնականում արժանացել է նույն քաղաքում հայտնի մեկ այլ՝ «Բարենպաստակ» ընկերության կապակցությամբ [17, էջ62-68: 10, էջ395]: Վերջինիս քաղաքական օրակարգի լուսաբանման ստվերում է մնացել «Որբախնամ»-ի հասարակահաճո առաքելության ներկայացումը: Այնինչ, որպես ինքնուրույն կրթամշակութային հանգույց, այն հետաքրքիր փաստեր է թողել Ալեքսանդրապոլի պատմությանը:

Արխիվներում և պարբերական մամուլում պահպանվել են ընկերության տարեկան հաշվետվությունները, հիմնադիրների հակիրճ կենսագրականները, նրանց հրապարակախոսական ժառանգությունից ընդարձակ հատվածներ: Դրանք չմշակված են և համապատասխան գիտական վերլուծության ենթարկվելուց հետո կարող են իրենց

արժանավոր տեղը գտնել հանրագիտարաններում, բառարաններում և հայ մշակույթի գործիչներին նվիրված հետազոտություններում:

1830-1831թթ. Ալեքսանդրապոլում հաստատված դարսեցի, կարինցի, բայազետցի, ալաշկերտցի արհեստավորները, զինվորականները, հոգևորականներն ու առևտրականներն իրենց համայնքային կյանքում նոր հորիզոններ են նվաճել: Օսմանյան պետության ոչ մահմեդականների նկատմամբ կիրառած սահմանափակումների ակնառու փոփոխությունը և քրիստոնյա Ռուսաստանի շնորհիվ կիսատ ազատությունների շահառուի հանգստությունից ծնվել է «ալեքսպոլցի» քաղաքային տիպը, որի բնորոշ հատկանիշներից են դարձել պատվախնդրությունը, արժանապատվությունը, առօրյա դժվարությունները պարտակող հումորը, մեծախոսությունը և լոթությունը, ավանդապահությունը, ազատասիրությունը:

Ալեքսպոլցին արագ է ընկալել, որ Շիրակում հյուր չէ, բայց երբեք չի մոռացել հարգել տիրապետող կայսրության օրենքները, պատեհ-անպատեհ առիթներով չօգտվել ըմբոստանալու իր բնական իրավունքից: Հայահավաքի քաղաքականության դրությունները չեն բթացրել ալեքսպոլցու ազգային որակները: Նա, որքանով թույլ են տվել ազգային գանձանակի հնարավորությունները, պետության հետ կիսել է չունևոր արյունակից եղբայրներին տեր կանգնելու հոգը. «...Հասարակութեան մեծ մասը ջերմեռանդ լինելով առ աղքատս դատարկաձեռն չէին երեւիր, այս առաձի մտօք, որ համարեա բոլորն էլ գիտեն թէ «Տուր ոսկեգօտուն մի քններ» [15, էջ 358]: Նրա մտահոգությունների շրջանակում են եղել նաև հայ մանուկների կրթության և հայեցի դաստիարակության կազմակերպման հարցերը: «Որբախնամ»-ի հիմնադիրներից մեկը՝ հայկաբան Մկրտիչ Արաբաջյանը, այդ առիթով գրել է. «...առանց հասարակական կամ ժողովրդական կրթութեան անկարելի է հասանել հասարակական բարեկենցաղութեան աստիճանին...» [1, էջ 142]: Ս. Պետերբուրգի ազգասերներից Սարգիս Վարդանյանն էլ այդ մասին հետևյալ կերպ է արտահայտվել. «...Ով մեր ժողովրդի համար բարի է ցանկանում, մեր կարծիքով, պետք է ուշ դարձնէ ժողովրդի կամ ընդհանուր կրթութեան վերայ, որում մասնակից պիտի լինի ժողովուրդը և նորա մատաղ սերունդը, որպէսզի կրթութիւնը հասանելի լինի բոլորի և ամէն մի անհատի համար» [19, էջ 45]:

1840-ականների կեսերից Ալեքսանդրապոլում գործել են արական և իգական բազմաթիվ դպրոցներ, թեև տեղական հասարակության պահանջումներն ավելին են եղել: Դրանցից խոշորներն էին Գավառական ուսումնարանը, Արդության, Վիճակային, և Սահականուշյան հոգևոր դպրոցները: Շատ ընտանիքների համար ուսման վարձավճարները բավական բարձր են եղել: Օրինակ, թիֆլիսաբնակ առևտրական Ղահրաման Արդությանի նյութական միջոցներով 1871 թ. բացված Արդության օրիորդական դպրոցի տարեկան վարձը կազմել է 24 ռ., այն դեպքում, երբ քաղաքում 1 կգ տավարի միսը վաճառվել է 10 կոպեկով, բրինձը՝ 11 կ., անարատ յուղը՝ 57 կ. [13, էջ 3: 9, թ. 1-2]: Հայտնի է, որ XIX դ. վերջին և XX դ. սկզբին հայ գործավորների տարեկան միջին եկամուտը կազմել է 100-120 ռ. [7, էջ 84]: Այդ պատճառով անվճարունակ աշակերտների կարիքները մշտապես գտնվել են տվյալ հաստատությունների վարչակազմերի և անհատ բարեգործների (աղաների) ուշադրության կենտրոնում: Աղքատների նկատմամբ առատաձեռնու-

թյամբ աչքի են ընկել Մատթեոս և Միրական Գորոյանները, Հակոբ, Հովհաննես և Թադևոս Տիգրանյանները, Հովհաննես և Մկրտիչ Բաբայանները, Կարապետ և Պետրոս Զիթողյանները, Նիկողայոս Աբրահամյանը, Գևորգ Շահխաթունյանը, Հովսեփ Կոստանյանը, Կարապետ Անանիկյանը, Հարություն Հարությունյանը և այլք: Ասվածին ապացույց կարող է լինել ցարական բանակի փոխգնդապետ Հովի. Տիգրանյանի մասին հետևյալ մեջբերումը. «...նոյն Դպրոցի (Ալեքսանդր և Սարգիս Արաբաջյանների - Գ.Ա.) աղքատ աշակերտաց և թե նոցա վարժապետներուն կերպ կերպ նիթական խնամքներ եւ օգուտներ անել. ոմանց գրքեր ընծայելով, ոմանց հանդերձ, դրամ, կօշիկ, գլխանոց, և ոմանց թուղթ, թանաք, գրիչ շնորհել, ևլն» [12, էջ 307]:

XIX դարում Ալեքսանդրապոլի և, առհասարակ, հայ հասարակական կյանքի բարդ խնդիրներից է եղել ազգային ծրագրերին մեծահարուստների մասնակցության ապահովումը: Շատերը գաղափարապես հասուն չեն եղել և, հետևաբար, ծուլ՝ այդ տիրություն: «...Մեր ազնուական ծագումն էլ, մեր մեծությունն էլ լուրջ մեր ազնուասրտութեան, բարեգործութեան և ընկերասիրութեան մեջ պետք է կայանայ, ուրիշ ճանապարհ չկայ մեզ, - գրել է մի հասկացող հայ: - Ո՛չ ոսկին և ո՛չ էլ արծաթն է մարդուս աղայ անողը և ազնուացնողը, այլ աղայական գործերը...» [11, էջ 42]: Կրթության անդաստանի գործող մշակներից ալեքսպոլցի ուսուցիչներ Աղաբեկ Արշակունուն և Մկրտիչ Արաբաջյանին հաջողվել էր աշակերտախնամության գաղափարի շուրջ համախմբել Ալեքսանդրապոլի բարձր և միջին խավերի հարյուրավոր ներկայացուցիչների:

Ա. Արշակունին 1865 թ. ավարտել էր Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, 1865-1884 թթ. որպես ուսուցիչ աշխատել Ներսիսյան և Թիֆլիսի մասնավոր, Ալեքսանդրապոլի Հոգևոր վիճակային և Արդության դպրոցներում: Երկար տարիներ եղել է Սահականուշյան օրհորդական դպրոցի տեսուչը, գործավարը և հայոց լեզվի ուսուցիչը: Կնոջ՝ ձեռագործության ուսուցչուհի և վերակացուհի Եղիսաբեթ Արշակունու հետ միասին ապրել են նույն դպրոցի շենքում: 1884 թ. տեղափոխվել է Երևան և աշխատանքի անցել թեմական դպրոցում (1884-1889, 1894-1903): 1889-1890 և 1890-1894 թթ. դասախոսել է Իգդիրի ծխական դպրոցում և Մբ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում [8]:

Ակնառու գործիչ էր Հոգևոր վիճակային և Արդության դպրոցների հայոց լեզվի ուսուցիչ, ճարտասան, Սահականուշյան դպրոցի տեսուչ, բարոյախոսության դասախոս, դասագրքերի հեղինակ և թարգմանիչ Մ. Արաբաջյանը: Ուսումը ստացել էր Ալեքսանդրապոլում, 1858-1875 թթ. թղթակցել Թիֆլիսի «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթին և Մբ Էջմիածնի «Արարատ» ամսագրին:

Հասարակական գործիչ Պետրոս Հայկազունու կողմից քննադատության են արժանացել Մ. Արաբաջյանի դասավանդման մեթոդները և կազմած դասագրքերը՝ «Երկար և ըմբռնելի» «Համառօտ քերականութիւն»-ը և «ձանձրացուցիչ ու հոգեմաշ» «Քերականական համաձայնութիւնը»: Չնայած բանասարկություններին՝ Մ. Արաբաջյանն, այնուամենայնիվ, սիրված ուսուցիչ էր իր աշակերտների կողմից: Նրա նախկին սաներից մեկը՝ Արշալուսը, գերմանացի փիլիսոփա Ֆրանց Կարլ Հոֆմանի երկերից մեկի իր կատարած թարգմանությունը, որ լույս է տեսել 1877թ. Թիֆլիսում՝ Հովհաննես Մար-

տիրոսյանի տպարանում, ձոնել է «Իւր հայրախնամ Ուսուցիչ՝ Յարգոյ Մկրտիչ Արաբաջեանցին»:

Հոգևոր վիճակային դպրոցի որբ և չքավոր աշակերտների դասագրքերի և գրենական պիտույքների, հանդերձանքի կարիքները հոգալու նպատակով Ա. Արշակունին և Մ. Արաբաջյանը 1868 թ. հուլիսի 1-ին Ալեքսանդրապոլում ստեղծել են մի ընկերություն և «գրասիրտ լսողաց կարեկցութիւնն ևս շարժելու առթիւ» անվանել «Որբախնամ»: Ընկերությանը սկզբից անդամակցել են 100 հոգի՝ շաբաթական 3կ. անդամավճարով: Այն ունեցել է 5-հոգանոց կառավարիչ մասնաժողով, գանձապետ և մատենապահ:

Փորձառու ուսուցիչները շատ ճիշտ էին կողմնորոշվել ընկերության նպատակի հարցում: Հայկական դպրոցներում իրոք զգալի էր հայերեն դասագրքերի պակասը. «...Այժմ դասական գրքերի հարկատրոսիւնը, համարձակ կարելի է ասել, այնքան զորացած է մեր մէջ, որ ոչ մի կանոնաւոր կերպով պատրաստուած դասագիրք ազգային լեզուով չէ կարող իւր ծախքը չհանել» [18, էջ 13]: Աշակերտները, եթե նույնիսկ կարողանում էին ձեռք բերել այդպիսիք, ապա՝ միջնորդավորված և թանկ գներով: Հայտնի է, որ 1875 թ. Հոգևոր դպրոցի աշակերտ Ալեքսանդր Քանանյանը Կ. Պոլսում հրատարակված Հայաստանի պատմության դասագիրքը ուսուցիչ Արսեն Կրիտյանից գնել էր 1 ռ. 60 կոպեկով [17, էջ 133], իսկ վերջինս էլ այն իր հերթին ձեռք էր բերել «Որբախնամ»-ի կառավարիչ մասնաժողովի անդամ Հաճիպապ Բսպիրյանից:

Ընկերության միջոցներով գնված դասագրքերը պետք է գտնվեին Հոգևոր դպրոցի ընթերցարանում, որը նախանձելի վիճակում չէր: Օրինակ, 1870 թ. Հովսեփ քհ. Կոստանյանի շնորհիվ այն հազիվ համարվել է 303 կտոր տարալեզու գրականությամբ [6, էջ 197]: Մատենապահը դասագրքերը պետք է վաճառեր հավելյալ օգուտով, իսկ որբ և չունևոր աշակերտներին դրանք պետք է տրվեին անվճար՝ օգտագործելուց հետո վերադարձնելու պայմանով: Բհարկե, տույժեր էին նախատեսվել դրանք վնասելու կամ կորցնելու պարագայում: «Ինքնարժեքը ծածկող դրամագլխի ավելցուկը տոկոսով կտրուի ընկերութեան անդամներից մէկ յուսալի անձի՝ հետզհետէ այդ ազգախնամ նպատակի համար մէկ նշանաւոր գումար կազմելու դիտաւորութեամբ» [4, էջ 115]: Հիմնադիրները մտածել էին նաև ուսանողների ընթերցասիրության փափագը գոհացնելու մասին: Հոգևոր դպրոցի գրադարանը ընկերության միջոցներով պետք է ստանար թերթեր և ամսագրեր:

Փաստորեն, ստեղծվել էր գրադարան գրադարանի մեջ. մի իրավիճակ, որի խելամիտ հանգուցալուծումը դրանք միավորելն էր: Ուստի, ամենայն հավանականությամբ, 1868 թ. վերջերին «Որբախնամ»-ը վերանվանվել է՝ դառնալով «Որբախնամ-Ընթերցասիրական»:

Ընկերությունն աշխատում էր թափանցիկ, իր կանոնադրության 20-րդ հոդվածի համաձայն՝ հաշվետու էր հանգանակված յուրաքանչյուր կոպեկի համար: 1869 թ. հունիսի 30-ի դրությամբ անդամատուրներից գոյացել էր 100 ռ. 55 կ.: Դրան գումարվել էր 4 ռ., որ ստացվել էր ռումինահայ Ստեփանոս Պալասանյանի նվիրած 4 հատ «Գործնական քերականության» առաջին հատորի վաճառքից [16]: Տարվա ընթացքում վաճառված գրքերից ստացվել էր 10 ռ. 49 կ. եկամուտ: Ընդհանուր հաշվարկով ընկերության

գանձանակում կար 115 ռ., որից գրքեր գնելու, ծառայի և կազմարարի աշխատավարձի համար ծախսվել էր 32 ռ. 77 կ.:

«Որբախնամ»-ը երկրորդ տարեշրջան թևակոխել է մեծ դժվարությամբ, քանի որ անդամներից շատերը չեն համաձայնել շարունակելու իրենց մուծումները: 1870թ. հուլիսի 12-ի հաշվետվությունից պարզվել է, որ ընկերության հաշվին կա 221 ռ. 9 կ., որը գոյացել էր 92 անդամների տուրքերից, վաճառված գրքերից (10ռ. 35կ.), դրամագլխի տուկոսից (8ռ. 40կ.) և թիֆլիսեցի Բաղդասար Աբովյանի ընծայած «Համառոտութիւն հայոց ազգի պատմութեան» երկի 4 օրինակի վաճառքից (4ռ.) [2, էջ 188]: Ընկերությունը տվյալ տարվա ընթացքում ծախսել է 22ռ. 68կ., 67ռ. կազմել են ապառքները, իսկ 131ռ. էլ նորից տրվել է տոկոսով: 1870-1871 տարեշրջանում ընկերությանը անդամակցել է 95 հոգի:

1872 թ. սեպտեմբերի 12-ին «Որբախնամ»-ի կառավարիչ մասնաժողովը, ունենալով 500 ռ. առձեռն գումար, ցանկացել է բացել գրավաճառանոց «յանուն և յօգուտ Հոգևոր ուսումնարանին Հայոց քաղաքիս համաձայն հաճութեան գերապատիվ հոգաբարձութեան նորին» [14, թ. 1] և այդ մասին գրավոր հայտնել Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ին: Ամենայն հավանականությամբ, այն չի բացվել:

1872-1873 թթ. տարեշրջանում ընկերությունն ունեցել է 207 ռ. 92 կ. եկամուտ, որից անդամատուրքերը կազմել են 130ռ. 89կ., իսկ տոկոսները և գրքերի վաճառքի փողերը՝ 77 ռ. 3 կ.: Դրանք գումարվել են նախորդ տարիներից կուտակված միջոցների (488 ռ. 49 կ.) և ստացվել է 696 ռ. 41 կ.: Հաշվետու տարվա ընթացքում ընկերության ծախսը կազմել է 113 ռ. 41 կ., մնացորդը 583 ռ. 6 կ. [14, թ. 8]:

Ալեքսանդրապոլում 1873 թ. մայիսի 20-ին Սահականուշյան ձրիավարժ հոգևոր դպրոցի հիմնումով խնամակարոտների քանակն աճել է, իսկ ընկերության հերկը՝ շատացել: Դպրոցի աշակերտուհիներից որբերը և չունևորները 1873 թ. ընկերությունից ստացել են 34ռ. 48կ., 1874թ.՝ 27ռ. 90կ., 1875թ.՝ 36ռ. 90կ. համարժեք ուսումնական պարագաներ (ընդամենը՝ 99 ռ. 28 կ.) [3]: Պատահական չէ, որ և՛ Արաբաշյանը, և՛ Արշակունին եղել են օրիորդաց դպրոցի վարչության մշտական անդամներ: 1873-1874 ուսումնական տարվա սկզբին դպրոցն ունեցել է 51, 1874-1875՝ 70, 1875-1876՝ 65, 1876-1877՝ 59, 1878-1879՝ 78, 1879-1880՝ 94, 1880-1881՝ 122, 1881-1882՝ 135 սանուհի [20, էջ 9-15]:

«Որբախնամ»-ը գործել է մինչև 1875 թ. մայիս ամիսը: Վերջին պահին ընկերության կառավարիչ մասնաժողովը որոշել է իր մոտ առկա ամբողջ գումարը՝ 700 ռ., նվիրաբերել Սահականուշյան դպրոցին: Հաստատության վարչությունը շահ ստանալու դիտավորությամբ դրանից 163 ռ. հանձնել է տպարանատեր Գևորգ Սանոյանին: Այդ գումարով հետագայում հրատարակվել է Ալեքսանդրապոլի մինչ այսօր հայտնի առաջին տպագիր գիրքը՝ գերմանացի նշանավոր մանկավարժ Ադոլֆ Դիստերվեգի «Տարրական երկրաչափություն» աշխատությունը [20, էջ 21: 10]:

ԵԶՐԱՆՆԳՈՒՄ. «Որբախնամ»-ն Ալեքսանդրապոլի առաջին խոշոր բարեգործական-մշակութային ընկերությունն էր, որի գործունեության հիմքում ընկած էր մասնակցային ժողովրդավարության սկզբունքը: Նրան բնորոշ էին կայունությունը, հետևողականությունը և կազմակերպվածությունը:

Ֆինանսների պակասով թելադրված՝ ընկերությունը չհասցրեց իրականացնել մեծածավալ նախագծեր, իր հովանու տակ վերցնել քաղաքի բոլոր ազգային դպրոցները, որը կանոնադրական պահանջ էր:

Խնամատարության գաղափարի շուրջ միավորվել էին հարյուրավոր արհեստավորներ և առևտրականներ, որոնք կարող էին ավելի ջանադիր լինել այդ գործում, բայց ավաղ...

«Որբախնամ» ընկերության կորիզն ազգային-պահպանողական էր, փափկամասը՝ հյուրեղ, իսկ տեսքն Ալեքսանդրապոլում՝ աննման:

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Յ Ո Ւ Ն

1. Արաբաջեանց Մ. «Գերայարգի պարոն պատգամաւորներ»: Մեղու Հայաստանի: Տփխիս: 1870: N18:
2. Արաբաջեանց Մ. «Խմբագրութեան պատուական Արարատայ»: Արարատ: Վաղարշապատ: 1870: Թիւ Ե:
3. Արաբաջեանց Մ. «
4. Հաշուեցուցակ Ալեքսանդրապոլու «Սահականուշեան Օրիորդաց Ուսումնարանի»: Մեղու Հայաստանի: Տփխիս: 1874: N12:
5. Արաբաջեանց Մ. «Մի քանի տեղեկութիւնք Աղեքսանդրապոլու Հայոց Ուսումնարանի, Ընթերցարանի եւ Բարեգործական նպատակաւ կազմուած Ընկերութեանց Վերայ»: Արարատ: Վաղարշապատ: 1869: Թիւ Ե:
6. Դիստերվեզ Ա. Սկզբունք երկրաչափութեան. Ազգային ուսումնարանաց համար: Թարգմանութիւն Մակարայ Տէր Սարգսեանց: Աղեքսանդրապոլ: Ի տպարանի Գեորգայ Սանոյանց: 1876: 136 էջ:
7. Կոստանեանց Յ. «Յարգոյ խմբագիր»: Մեղու Հայաստանի: Տփխիս: 1870: N25:
8. Համբարյան Ա., Արևելյան Հայաստանի բանվորների և արհեստավորների դրությունը XIX դարի վերջին և XX դարի սկզբին: Պատմաբանասիրական հանդես: Երևան: 1974, N2:
9. Հայաստան ազգային արխիվ: Ֆոնդ 48: Ցուցակ 1: Գործ 362: Թերթ 1:
10. Հայաստան ազգային արխիվ: Ֆոնդ 94: Ցուցակ 1: Գործ 129: Թերթ 1-2:
11. Հայոց պատմություն: Հ. III: Գիրք I: Նոր ժամանակաշրջան: Երևան: Ձանգակ-97: 2010: 704 էջ:
12. «Յարգոյ խմբագիր»: Մեղու Հայաստանի: Տփխիս: 1871: N6:
13. Մեծատունեանց Ե. «Առտնին դպրոց Արապաճեանց»: Արարատ: Վաղարշապատ: 1871: Թիւ Ե:
14. Մեղու Հայաստանի: Տփխիս: 1874: N25:
15. Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (Մատենադարան): Կաթողիկոսական դիվան: Թղթապանակ 222: Վավերագիր 8:
16. Չմշկեանց Ս. «Ազգային աղքատանոց կամ աղքատաց հոգատարութիւն Աղեքսանդրապոլու մէջ»: Արծուի Վասպուրական: Վանտոսպ: 1862: Թիւ 12:
17. Պալասանեան Ս. Գործնական քերականութիւն հայերէն լեզուի: Հատոր առաջին. Ստուգաբանութիւն: Թիֆլիզ: Համբ. Էնֆիաճեանցի եւ ընկերութեան տպարանումը: 1868: Դ,Դ, 205 էջ:
18. Պարսամյան Վ. Առաջին ժանդարմական գործը Ալեքսանդրապոլում: Երևան: Գիտհրատի տպարան: 1936: 160 էջ:
19. Սիմեոնեանց Մ. «Մի քանի խօսք ազգային հոգևոր դպրոցների մանաւանդ Ներսիսեան դպրոցի դասագրքերի պակասութեան վերայ»: Մեղու Հայաստանի: Տփխիս: 1870: N2:

20. Վարդանեանց Ս. «Մի քանի նկատմունք եւ առաջարկութիւններ»: Մեղու Հայաստանի: Տիփլիս: 1871: N6:
21. Տասնամեակ Սահականուշեան օրիորդաց հոգեւոր ուսումնարանին Հայոց Աղեքսանդրապոլու: Թիփլիս: Տպարան Մովս. Վարդանեանի եւ ընկ.: 1883: 26 էջ:

References

1. Arabadzhants M. The Honorable Gentlemen Deputies [Gerayargi paron patgamaworner] // «Armenian bee», Tiflis, 1870, N18. (in Armenian)
2. Arabadzhants M. To the edition of the venerable Ararat [Xmbagrut'ean patuakan Araratay] // «Ararat», Vagharshapat, 1870, N5. (in Armenian)
3. Arabadzhants M. Account of Sahakanoushian Women's Theological School [Hashuyets'uts'ak Alek'sandrapolu «Sahakanushean Oriordats' Usumnarani»] // «Armenian bee», Tiflis, 1874, N12. (in Armenian)
4. Arabadzhants M. Some information about the religious school, library and charitable societies of Alexandrapol [Mi k'ani teghecut'iwnk' Aghek'sandrapolu Hayots' Usumnarani, Ynt'erts'arani yev Baregortsakan nptakaw kazmuats Ynkerut'eants' Veray] // «Ararat», Vagharshapat, 1869, N5. (in Armenian)
5. Diesterweg A. Fundamentals of geometry. for national schools. Translation by M. Ter-Sargsyants. [Skzbunk' yerkrach'ap'ut'ean. Azgayin usumnarants' hamar, T'argmanut'iwn Makaray Ter Sargseants'] Alexandrapol: Typography G. Sanoyants, 1876. 136p. (in Armenian)
6. Kostanyants H. Venerable editor [Yargoy khmbagir] // «Armenian bee», Tiflis, 1870, N25.
7. Hambaryan A. The situation of workers and artisans in Eastern Armenia at the end of the 19th - beginning of the 20th centuries [Arevelyan Hayastani banvorneri yev arhestavorneri drut'yuny XIX dari verjin yev XX dari skzbin] // «Historical-Philological Journal», Yerevan, 1974, N2. (in Armenian)
8. National Archives of Armenia [Hayastani azgayin arkhiv]. Fund 48, list 1, case 362, sheet 1. (in Armenian)
9. National Archives of Armenia [Hayastani azgayin arkhiv]. Fund 94, list 1, case 129, sheet 1-2. (in Armenian)
10. History of Armenia [Hayots' patmut'yun]. Volume III, book I. New era. Yerevan: Zangak-97, 2010. 704p. (in Armenian)
11. Venerable editor [Yargoy Khmbagir] // «Armenian bee», Tiflis, 1871, N6. (in Armenian)
12. Metsatunyants E. Arabadzhants private school [Arrtnin dprots' Arapacheants'] // «Ararat», Vagharshapat, 1871, N5. (in Armenian)
13. «Armenian bee» [«Meghu Hayastani»], Tiflis, 1874, N25. (in Armenian)
14. The Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts - Matenadaran [Mesrop Mashtots'i anvan hin dzerrageri institut (Matenadaran)]. Patriarchal archive, folder 222, document 8, 10 sheet. (in Armenian)
15. Chmshkyants S. National shelter for the poor or care for the poor in Alexandrapol [Azgayin aghk'atanots' kam aghk'atats' hogatarut'iwn Aghek'sandrapolu mej] // «Eagle Vaspurakan», Vantosp, 1862, N12. (in Armenian)
16. Palasanyan S. Practical grammar of the Armenian language. Vol. I. Etymology [Gorcakan k'erakanut'iwn hayeren lezui: Hator arajin. Stugabanut'iwn]. Tiflis: Typography Ambartsum Enfiadzhyants and friends, 1868. 205p. (in Armenian)
17. Parsamyan V. The first gendarme case in Alexandrapol [Arrajin zhandarmakan gortsy Alek'sandrapolum]. Yerevan: Typography of scientific publications, 1936. 160p. (in Armenian)
18. Simonyants M. A few words about the lack of textbooks in national theological schools, especially in the Nersisyan school [Mi k'ani khosk' azgayin hovevor dprots'neri manawand Nersisean dprots'i dasagrk'eri pakasut'ean veray] // «Armenian bee», Tiflis, 1870, N2. (in Armenian)
19. Vardanyants S. A few comments and suggestions [Mi k'ani nkatmunk' yev arrajarkut'iwnner] «Armenian bee», Tiflis, 1871, N6. (in Armenian)

20. Decade of the Sahakanoushian Women's Spiritual School of Alexandropol [Tasnameak Sahakanushean oriordats' hovevor usumnararin Hayots' Aghek'sandrapolu]. Tiflis: Typography by Movses Vardanyan and friends, 1886. 26p. (in Armenian)

Ընդունվել է / Принята / Received on: 18.08.2023

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: 30.08.2023

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: 27. 11. 2023

Տեղեկություններ հեղինակի մասին

Պևորգ Սամվելի ԱՅՎԱԶՅԱՆ, պատմ. գիտ. թեկնածու, ԳԱԱ Ծիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող, Գյումրի, ՀՀ, էլ. հասցե՝ AyG.84@mail.ru, <https://orcid.org/0000-0001-5782-9395>

Gevorg Samvel AYVAZYAN: PhD in history, Researcher at Shirak Center for Armenological Studies of the NAS, Gyumri, RA, e-mail: AyG.84@mail.ru, <https://orcid.org/0000-0001-5782-9395>

Геворг Самвелович АЙВАЗЯН: кандидат истор. наук, научный сотрудник Ширакского центра арменоведческих исследований НАН, Гюмри, РА, эл. адрес: AyG.84@mail.ru, <https://orcid.org/0000-0001-5782-9395>

ՀՏԴ՝ 93.94

DOI: 10.52971/18294316-2023.26.2-43

**ԴՐՎԱԳՆԵՐ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՒՅՑ ԿՈՄԻՏԵԻ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ ԾԱՎԱԼԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ
1919-1920թթ.**

Արմեն Ս. Հայրապետյան

ԳԱԱ պատմության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, Գյումրի, ՀՀ

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ

Անվտիում

Նախաբան. 1919-1920թթ. Արևելյան Հայաստանում գործող հասարակական կազմակերպությունների գործունեությանը վերաբերող մի շարք հարցեր առայսօր կարող են լուրջ ուսումնասիրության: Սույն հոդվածի շրջանակներում ժամանակի պարբերական մամուլի հաղորդումների և հայտնաբերված նոր արխիվային փաստաթղթերի համադրմամբ առանձին հետազոտության առարկա ենք դարձրել Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի՝ Ալեքսանդրապոլում 1919-1920 թթ. ծավալված գործունեությունը: Մեթոդներ և նյութեր. Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը արխիվային նյութի անաչառ օգտագործումն է, հիմնահարցերի աղբյուրագիտական վերլուծությունը՝ իրադարձությունների անկողմնակալ լուսաբանման պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ: Վերլուծություն. Հոդվածում ներկայացվում է 1918-1920 թթ. Ալեքսանդրապոլի գավառում հաստատված գաղթականության սոցիալ-տնտեսական ծայրահեղ ծանր վիճակը, ինչպես նաև լուսաբանվում են քաղաքային իշխանությունների և Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտեի համատեղ քայլերն այն շտկելու ուղղությամբ: Արդյունքներ. 1918 թ. դեկտեմբերին սկսված հայ-վրացական կարճատև պատերազմից հետո Ալեքսանդրապոլի գավառը հայտնվեց սոցիալ-տնտեսական շատ ծանր իրավիճակում, որն անմիջապես ազդեց գաղթականության վիճակի վրա: Քաղաքը վերածվեց մուրացկանների բնակատեղիի: Քաղաքային իշխանությունների՝ գաղթականության վիճակը բարելավելու անկարողությունը շուտով հանգեցրեց զինված բախումների: Պա-

րենամթերքի մատակարարման հարցերը կարգավորելու համար Մերձավոր Արևելքի օգնության ամերիկյան կոմիտեն (Ամերկոմ) փորձեց բոլոր գաղթականներին հավաքել ցարական բանակի նախկին զորանոցներում: Սակայն 30000 մարդու մեկ տեղում կենտրոնացնելը լուծում չէր: Ընդհակառակը՝ թշվառությունը հանգեցրեց բարքերի անկման ու հիվանդությունների տարածման: Ահռելի մասշտաբների հասան սովամահության դեպքերը: Դրությունը փոխվեց միայն 1920թ. գարնանը, երբ ՀՀ իշխանություններին հաջողվեց շուրջ 36.000 գաղթականների տեղավորել Կարսի և Ալեքսանդրապոլի դատարկված գյուղերում:

Բանալի բառեր՝ *Ալեքսանդրապոլ, որբանոց, գաղթական, հանրակացարան, սով, Կարս, Պոլիզոն, զորանոց, բարեգործական կազմակերպություն:*

Ինչպես հղել՝ Հայրապետյան Ա. *Դրվագներ Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի Ալեքսանդրապոլում ծավալած գործունեությունից 1919-1920թթ.:* // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Հ. 2 (26): 43-53 էջեր:

DOI: 10.52971/18294316-2023.26.2-43

EPISODES FROM THE HISTORY OF THE ACTIVITIES OF THE AMERICAN RELIEF COMMITTEE IN ALEXANDRAPOL IN 1919-1920

Armen S. Hayrapetyan

Institute of History of NAS, Yerevan, RA
Shirak State University after M.Nalbandyan, Gyumri, RA
Shirak Center for Armenological Studies of NAS, Gyumri, RA

Abstract

Introduction: A number of issues related to the activities of non-governmental charitable organizations operating in Eastern Armenia in 1919-1920 still need to be seriously studied. In the framework of this article, by combining the reports of the periodical press of that time and newly discovered archival documents, we made the activity of the American Charity Committee in Alexandropol in 1919-1920 the subject of a separate study. **Methods and materials:** The methodological basis of the study is the archival material and the source-oriented analysis of the issues. We have used the historical-comparative method of unbiased coverage of events. **Analysis:** The article presents the extremely difficult socio-economic situation of the settlers settled in Alexandropol County in 1918-1920 and highlights the joint steps taken by the city authorities and the American Relief Committee in the Middle East to remedy it. **Results:** After the Armenian-Georgian short war in December 1918, the uyezd found itself in an extremely difficult socio-economic situation, which immediately affected the conditions of the emigrants. The city turned into beggars settlement. The inability of the city authorities to improve the migration situation led to armed collisions. To address food problems, the American Near East Relief Committee (Amercom) sought to concentrate migrants in former barracks of the tsarist army. However, the concentration of about 30,000 people in one place did not solve the problem. On the contrary, misery led to a decline in morals and the spread of diseases. The cases of starvation have reached enormous proportions. The situation changed only in the spring of 1920 when the Armenian authorities managed to accommodate about 36,000 migrants in the abandoned villages of Kars and Alexandrapol.

Key words: *Alexandrapol, orphanage, refugee, hostel, hunger, Kars, Poligon, barracks, charity organization.*

Citation: *Найрапетян А. Episodes from the History of the Activities of the American Relief Committee in Alexandrapol in 1919-1920. // "Scientific Works" of SCAS NAS RA. Gyumri, 2023. V. 2 (26). pp. 43-53. DOI: 10.52971/18294316-2023.26.2-43*

ЭПИЗОДЫ ИЗ ИСТОРИИ ДЕЯТЕЛЬНОСТИ АМЕРИКАНСКОГО КОМИТЕТА ПОМОЩИ В АЛЕКСАНДРОПОЛЕ В 1919-1920 ГГ.

Армен С. Айрапетян

Институт истории НАН, Ереван, РА
Ширакский государственный университет им. М. Налбандяна, Гюмри, РА
Ширакский центр арменоведческих исследований НАН РА

Аннотация

Введение: Ряд вопросов, связанных с деятельностью неправительственных благотворительных организаций, действующих в Восточной Армении 1919-1920 гг., все еще нуждается в серьезном изучении. В рамках этого доклада, объединив сообщения периодической печати того времени и вновь обнаруженные архивные документы, мы сделали предметом отдельного исследования деятельность Американского благотворительного комитета в Александрополе в 1919-1920 гг.. **Методы и материалы:** Методологическую основу исследования составляет непредвзятое использование архивного материала, источниковедческий анализ вопросов, с использованием историко-сравнительного метода непредвзятого освещения событий. **Анализ:** В статье представлено крайне тяжелое социально-экономическое положение переселенцев, расселенных в Александропольском уезде в 1918-1920 гг., и освещены совместные шаги, предпринятые городскими властями и Американским комитетом помощи на Ближнем Востоке для его исправления. **Результаты:** После короткой армяно-грузинской войны, начавшейся в декабре 1918 г., уезд оказался в очень тяжелом социально-экономическом положении, что сразу отразилось на состоянии беженцев. Город превратился в поселение нищих и попрошайек. Неспособность городской власти улучшить состояние беженцев привело к вооруженным столкновениям. С целью урегулирования вопросов снабжения продовольствием Американский комитет помощи на Ближнем Востоке (Амерком) попытался собрать всех беженцев в бывшие казармы царской армии. Однако сконцентрирование 30000 человек в одном месте не стало решением. Наоборот, бедственное положение привело к упадку нравственных устоев и распространению болезней. Больших масштабов достигло число смертей от голода. Положение изменилось лишь весной 1920 г., когда властям РА удалось разместить около 36000 беженцев в опустошенных селах Карса и Александрополя.

Ключевые слова: *Александрополь, детский дом, беженец, общежитие, голод, Карс, Полигон, барак, благотворительная организация.*

Как цитировать: *Айрапетян А. Эпизоды из истории деятельности Американского комитета помощи в Александрополе в 1919-1920 гг.. // "Научные труды" ШЦАИ НАН РА. Гюмри, 2023. Т. 2 (26). 45-56 сс. 43-53. DOI: 10.52971/18294316-2023.26.2-43*

ՆՄՆԱԲՄՆ. XX դ. սկզբի հայ գաղթականության պատմությունը հայ պատմագիտության թերևս ամենաուսումնասիրված հարցերից է: Անցած հարյուրամյակի ըն-

թացքում հայրենիքում և սփյուռքում հրատարակվել են հարյուրավոր հուշագրություններ ու գիտական մենագրություններ: Հրապարակի վրա առկա է փաստավավերագրական բնույթի հսկայական տպագիր նյութ: Այդուհանդերձ որոշ հարցեր, ինչպիսիք են, օրինակ՝ Արևելյան Հայաստանի տարածքում հաստատված գաղթականների թիվը, ըստ բնակության վայրերի նորեկների տեղաբաշխման հարցը, գաղթականության սոցիալական դրությունը, գաղթականության շրջանում բարեգործական կազմակերպությունների ծավալած որբախնամ ու հիվանդախնամ գործունեությունը և այլն, առայսօր լուրջ ուսումնասիրության չեն ենթարկվել:

Վերջին տարիների մեր ուսումնասիրությունները, որ հրապարակվել են ՀՀ և արտասահմանյան գիտական պարբերականներում, կոչված են Ալեքսանդրապոլի գավառի օրինակով լույս սփռելու վերոնշյալ հիմնախնդիրներից շատերի վրա: Շարունակելով այս ուղղությամբ մեր հետազոտությունները՝ ստորև արխիվային նորահայտ վավերագրերի և ժամանակի պարբերական մամուլի հաղորդումների համադրմամբ առանձին ուսումնասիրության առարկա կդարձնենք 1919-1920 թթ. Ալեքսանդրապոլի գավառում հաստատված գաղթականության սոցիալական վիճակի հարցը, կլուսաբանենք Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեի և ՀՀ իշխանությունների համատեղ ձեռնարկած քայլերը գաղթականության վիճակը բարելավելու և Ալեքսանդրապոլի հանրակացարանները բեռնաթափելու ուղղությամբ:

Իրադրությունն Ալեքսանդրապոլում 1918-1919 թթ.

1918թ. գարնանը տարածաշրջանում ռազմաքաղաքական իրավիճակը կտրուկ փոխվեց: Ապրիլի 1-ին սկսված թուրք-անդրկովկասյան պատերազմը նոր խուճապ առաջացրեց հայության շրջանում: Կարսի հանձնումից հետո ավելի քան 100000 քրիստոնյաներ շարժվեցին դեպի Ալեքսանդրապոլի գավառ [26, էջ2]: Թե գարնանային այդ օրերին որևէ մեկը զբաղվեց սրանց տեղավորմամբ, հայտնի չէ: Կարսի անկումից մեկ ամիս անց թուրքերը տիրեցին Ալեքսանդրապոլին և Արևելյան Շիրակի գյուղերին, իսկ մայիսի 28-ին մտան Մեծ Ղարաքիլիսա: Հայության համար օրհասական այդ օրերին, տասնյակ հազարավոր մարդիկ, փրկվելով թուրքական յաթաղանից, շարժվեցին դեպի Էջմիածին ու Փամբակ: Ականատեսների վկայությամբ միայն Փամբակում թուրքական ներխուժման նախօրեին կուտակվել էր մոտ 200.000 մարդ [8, էջ 57]:

Զինագրավված շրջաններում թուրքերը ձեռնամուխ եղան հայության ֆիզիկական բնաջնջման քաղաքականությանը, ինչի արդյունքում դիմախեղվեց գավառի ազգաբնակչության էթնիկ պատկերը: Ըստ պաշտոնական վիճակագրության՝ այդ եղեռնագործությանը զոհ գնաց մոտ 18000 մարդ (12000 սպանված, 6000 գերի) [12, թ. 179: 15, թ. 47: 24, թ.1]: Մինչդեռ վերջին տարիների մեր ուսումնասիրությունների համաձայն՝ թուրքական տիրապետության ընթացքում Ալեքսանդրապոլում, Արևելյան Շիրակի և Փամբակի գյուղերում կոտորվել է մոտ 20.000 մարդ, 6000-ը զոհ է գնացել սովին ու համաճարակային հիվանդություններին, ևս 15000-ը գերվել ու անվերադարձ քշվել է կայսրության խորքերը [21, էջեր 113-127: 22, էջեր 254-262]: Օսմանյան տիրապետությունը ծանր հարված հասցրեց նաև գավառի տնտեսությանը: Ալեքսանդրապոլում ՀՀ կառավարության ներկայացուցիչ Գ. Խոյեցյանի հաշվումներով՝ թուրքերը տարան մոտ 50000

գլուխ խոշոր և 100000 գլուխ մանր եղջերավոր անասուն, 5000 ձի, 2,5 մլն փութ ցորեն և 1 մլն փութ գարի [2, էջ 19]:

1918 թ. աշնանը աշխարհամարտում պարտված Օսմանյան կայսրությունը սկսեց դուրս բերել իր զորքերը զինագրավված տարածքներից: Թուրքերի հեռանալուց հետո Ալեքսանդրապոլի գավառի վարչական պատկերը փոխվեց: ՀՀ Մինիստրների խորհրդի որոշմամբ Փամբակի շրջանը (Մեծ Ղարաքիլիսայի տեղամաս) դարձավ նոր ձևավորված Դիլիջանի գավառի մաս [25, էջ 4], իսկ Արևելյան Շիրակի տարածքում ձևավորվեց Ալեքսանդրապոլի նոր գավառը՝ 4 տեղամասերով և 129 գյուղերով [16, թ. 20]:

Հաստատված խաղաղությունը հնարավորություն տվեց Ալեքսանդրապոլի գավառի ազգաբնակչությանը վերադառնալու: Կարս անցնելու հույսով դեպի Ալեքսանդրապոլ շարժվեցին նաև Անդրկովկասի տարբեր գավառներում ծվարած գաղթականների քարավանները: Հայաստանի կենտրոնական վիճակագրական բյուրոյի տվյալներով՝ արդեն 1919թ. հունվարին Ալեքսանդրապոլի գավառի բնակչության թիվը հասավ 152414-ի, որից 118053-ը բնիկներ էին, 31989-ը՝ արևմտահայեր, իսկ 2372-ը՝ ռուսահայ փախստականներ [9, թ.20] (համեմատության համար նշենք, որ 1915 թ.-ին գավառն ուներ 226740 բնակիչ) [30, c. 37]: Հաջորդ մեկ ամսվա ընթացքում Կարս անցնելու հույսով Վրաստանից Ալեքսանդրապոլ տեղափոխվեց ևս 25000 գաղթական [3, էջ 5]:

Ցավոք, խաղաղությունը երկարատև չեղավ: Հեռացող թուրքերը հայ-վրացական պատերազմ հրահրեցին, որը չարիք դարձավ տնտեսապես քայքայված գավառի ազգաբնակչության համար: Մովից մեռնող բնակչությանը փրկելու ակնկալիքով Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարությունը 1918 թ. դեկտեմբերի 30-ին դիմեց ՀՀ կառավարությանը՝ խնդրելով հեռու մնալ ծայրահեղ անցանկալի պատերազմից, դադարեցնել հացի վերջին պաշարների բռնագրավումը և վերջ տալ զորակոչին [11, թ.3], սակայն արդյունքի չհասավ: 1919 թ. փետրվարին, երբ ձմռան բուքերի պատճառով երկաթուղային հաղորդակցությունը Կարսի և Ջաջուռի միջև դադարեց, պարենավորման հարցը մտավ փակուղի, իսկ գավառը հայտնվեց սովի ճիրաններում: Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարության գաղթականական կոմիտեն, որ կոչված էր ապահովելու գաղթականության պարենավորման գործը, իր առաքելության մեջ ձախողվեց: Պարենավորման գործի տապալման հիմնական պատճառն աշխատանքների սխալ կազմակերպումն էր: Գաղթականության խնամատարության գործը հանձնարարվել էր երկու միմյանցից որակապես տարբեր կառույցների՝ ՀՀ պարենավորման ու խնամատարության նախարարությանն ու Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեին (այսուհետև՝ Ամերկոմ): Սրանց անհամաձայնեցված գործողությունները հանգեցրին սովի ու հազարավոր մարդկանց մահվան [17, թ.45-49]: Մովի տարածման գործում մեծ դերակատարություն ունեցավ նաև տեղական պաշտոնյաների առասպելական ընչաքաղցությունը՝ «երբ հաց ստացվում էր 100.000 մարդու համար, սակայն 30.000 գաղթականը դարձյալ մնում էր սոված» [7, էջ 2]:

Քաղաքը վերածվեց մուրացկանների ու հիվանդների բնակատեղիի, իսկ գաղթականությունն այնքան բարոյազրկվեց, որ «մայրն իր կիսակենդան երեխային գիշերը ծածուկ դուրս էր շպրտում փողոց, որպեսզի օգտվի սնունդի նրա բաժնից» [28, էջ 2]:

Առավել սարսափելի էր վիճակը գյուղերում: Մովն ու համաճարակային հիվանդություններն այստեղ ընդունեցին ահռելի մասշտաբներ: Ականատեսների վկայությամբ՝ բակերում նույնիսկ շուն ու կատու չէր մնացել, իսկ մարդիկ անասունների նման սարերում ու դաշտերում օրերով կանաչ էին ուտում [29, էջ 4]:

Համեմատաբար բարվոք վիճակում էին որբերը: 1919 թ. ապրիլի 12-ին ՀՀ խնամատարության նախարար Սահակ Թորոսյանի և Ամերկումի հայաստանյան բաժնի ներկայացուցիչ կապիտան Էլդերի միջև կնքված պայմանագրով ՀՀ տարածքում գործող որբանոցների, առանձին կայանների, ինչպես նաև թափառող որբերի խնամքն ու դաստիարակությունը հանձնվել էր կոմիտեի հոգածությանը: Նախարարությունն ապահովելու էր միայն կրթադաստիարակչական և բարոյահոգեբանական մթնոլորտի հսկողությունը: 1919 թ. մայիսի 1-ից Ամերկումի փաստացի հոգածության տակ էին անցել նաև Ալեքսանդրապոլում գործող որբանոցներն ու որբերի հիվանդանոցը [10, թ.153]:

Գաղթականության վիճակը բարելավելու քաղաքային իշխանությունների անկարողությունը հանգեցրեց կողմերի միջև հարաբերությունների ծայրաստիճան սրմանը՝ Ալեքսանդրապոլը վերածելով ռազմական գործողությունների թատերաբեմի: Ըստ «Հայաստանի ձայն» պարբերականի՝ ընդհարումները սկսվեցին մարտի վերջերին: Այն բանից հետո, երբ քաղաքի թաղամասերից մեկում հայտնաբերվեց բռնության հետքերով երկու դիակ, կողմերը՝ իբրև երկու թշնամի բանակներ, գնդացիներով և ատրճանակներով իրար դեմ դուրս ելան: «Քաղաքային իշխանություններն արտակարգ միջոցների դիմեցին ներքին պատերազմի առաջն առնելու համար, կասեցրին ռազմական գործողությունները, բայց մեղմել դրանց դրդապատճառները չկարողացան», - գրում է պարբերականը [23, էջ 2]:

Ծայրահեղության հասած գաղթականությունը փորձեց զենքի ուժով լուծել իր պարենավորման հարցը: Անօրինականություններն ու թալանը գավառում ընդունեցին համատարած բնույթ: Գաղթականների զինված խմբերի հարձակումները գյուղերի վրա, անասնագողությունն ու թալանը շարունակվեցին մինչև տարեվերջ: Իրավիճակը չփոխվեց նույնիսկ այն բանից հետո, երբ 1919 թ. ապրիլին Ալեքսանդրապոլում հայտարարվեց ռազմական դրություն [13, թ.35]: 1919 թ. սեպտեմբերի 4-ին ՆԳ նախարարին ուղղված իր զեկուցագրում Կարսի նահանգապետ Ս. Ղորղանյանը, իր անհանգստությունը հայտնելով Ալեքսանդրապոլում տիրող վիճակի մասին, գրել է. «Հարևան շրջանում իշխանության այդպիսի փլուզումը վարակում է շրջապատը: Հաճեցեք գործնական խիստ միջոցներ ձեռնարկել և սանձահարել անարխիան, քանի դեռ ուշ չէ և քանի դեռ դա մեր ուժերի սահմաններում է» [14, թ.66]:

Արդարության համար նշենք, որ չնայած ծայրահեղ ծանր նյութական վիճակին գաղթականության հիմնական մասը զերծ մնաց օրինազանց քայլերից:

ՀՀ կառավարության և Ամերկումի համատեղ ջանքերն Ալեքսանդրապոլը բեռնաթափելու ուղղությամբ

1919 թ. օգոստոսին գավառում պարենավորման գործը վերջնականապես մտավ փակուղի: Ցանկանալով քաղաքում ապաստանած գաղթականներին մեկ տեղ հավաքել և պարենավորման գործում այդ կերպ հստակություն մտցնել՝ տեղի Ամերիկյան կոմի-

տեն հրաժարվեց տարբեր հանրակացարաններում ու մասնավոր տներում հաստատվածներին, ինչպես նաև փողոցներում թափառող անօթևաններին սնունդ տրամադրել՝ պահանջելով սրանցից կենտրոնանալ «Պոլիգոն» կոչված նախկին գորանցի 59 հանրակացարաններում: Սա գաղթականության հետ նոր բախումների պատճառ դարձավ: Սակայն, տասնօրյա ընդհարումներից հետո սովի դատապարտված մարդիկ ստիպված եղան ընդունել կոմիտեի պայմանները:

«Ցառաջ» պարբերականն իր էջերում բազմիցս անդրադարձել է «Պոլիգոն»-ում հաստատված գաղթականության խնդիրներին, լուսաբանել նրանց օգնելու գործում Ամերիկոմի քայլերը, վեր հանել ու մատնանշել ապօրինությունների ողջ շղթան, որ հանգեցրել էր գաղթականության ծայրահեղ թշվառությանը [4, էջ 3: 5, էջ 2: 6, էջ2: 7, էջ 2]: Ստեղծված իրավիճակից դուրս գալու միակ ելքը պարբերականը տեսնում էր թուրքական արշավանքից հետո Արևելյան Շիրակի ու Կարսի անմարդաբնակ դարձած գյուղերում գաղթականներին տեղավորելու և նրանց գյուղատնտեսական գործիքներով ապահովելու մեջ [1, էջ 3]: Իսկ «Պոլիգոն»-ի հանրակացարաններում 24000-ից ավել գաղթական հավաքելու Ամերիկոմի ծրագիրը պարբերականը համարել է վտանգավոր, որովհետև՝

1. գաղթականության կենտրոնացումը մեկ վայրում անպայման հանգեցնելու էր հանցագործությունների թվի աճին,
2. տասնյակ հազարավոր մարդկանց կուտակումը այնպիսի շինություններում, որտեղ սենյակները միմյանցից առանձնացված չէին դռներով, բերելու էր բարքերի անկման և նպաստելու էր հիվանդությունների բռնկմանն ու տարածմանը (այդ թվում՝ նաև սեռական ճանապարհով փոխանցվող վարակիչ հիվանդությունների տարածմանը):
3. գաղթականներին տրամադրված գորանցային տիպի շենքերը կարճ ժամանակահատվածում վերածվելու էին ավերակների:

Ցավոք, պարբերականի կանխատեսումները շուտով իրականություն դարձան: Ամերիկոմին չհաջողվեց պարենավորման գործում շոշափելի հաջողությունների հասնել: Ցանկանալով սահմանափակել ավելորդ ծախսերը՝ կոմիտեն սկսեց օգտվել գաղթականների ձրի աշխատանքից: Որպես հետևանք՝ չվարձատրվող, բայց մեծ իշխանություն ձեռք բերած մարդիկ գտան եկամուտի այլ աղբյուրներ: «Գիշերային ժամերին հաճախ կարելի էր տեսնել, թե ինչպես են բացվում պահեստների կնքված դռները, թե ինչպես են Պոլիգոնի ճանապարհին անհայտանում սնունդ և հագուստ փոխադրող բեռնասայլերը, թե ինչպես են ոմանք միանգամից մի քանի ձեռք հագուստ ստանում, իսկ ուրիշները տկլոր մնալու պատճառով նույնիսկ հացի համար հերթ կանգնել չեն կարող», - գրել է բժիշկ Ս. Փիրումովը ՀՀ խնամատարության նախարարին ներկայացրած իր զեկուցագրում [19, թ.206]:

Իրականություն դարձան նաև մյուս կանխատեսումները. հաշված շաբաթների ընթացքում գորանցային շինությունները վերածվեցին ավերակների, պատուհանները և դռները հանվեցին, կոտրված ապակիները փոխարինվեցին կտուրներից պոկված թիթեղներով, շարքից դուրս եկան ջեռուցման համակարգն ու սանհանգույցը: Հանրակա-

ցարանային կյանքը գաղթականների շրջանում հանգեցրեց բարքերի անկմանն ու վեներական հիվանդությունների տարածմանը: Ահռելի մասշտաբներ ընդունեցին սովամահության դեպքերը: Ս. Փիրումովի հավաստմամբ հանրակացարաններում օրական մահանում էր մինչև 25 մարդ, սակայն դիակները շաբաթներով չէին հանձնվում, որովհետև ողջերն այդ կերպ յուրացնում էին մահացածների բաժին սնունդը [19, թ.206]:

Ստեղծված իրավիճակից միակ ելքը հանրակացարանների արագ դատարկումն էր: Գաղթականությանն անհրաժեշտ էր ժամ առաջ տեղավորել Կարսի և Ալեքսանդրապոլի դատարկված գյուղերում, նրանց տրամադրել սերմնացու, աշխատանքային գործիքներ և այդ կերպ փրկել տասնյակ հազարավոր անմեղների կյանքը:

«Պոլիգոն»-ը դատարկելու առաջին փորձը կատարվեց 1919 թ. դեկտեմբերի վերջերին, սակայն էական արդյունքներ չտվեց: Նախատեսված 2200 գաղթականներից Կարս տեղափոխել հաջողվեց միայն 300-ին: Չվստահելով իշխանությունների խոստումներին՝ գաղթականներն ըմբոստացան և հրաժարվեցին հանրակացարանները լքելուց: 1920 թ. հունվարի 9-ին ՀՀ խնամատարության նախարարին ներկայացրած իր զեկուցագրում Ամերկումի ներկայացուցիչ Ռոբինսոնն իրավիճակը ներկայացրել է հետևյալ կերպ. «...ոչ մեկը չի ուզում թողնել Պոլիգոնը, շատերը պառկում են գետնին և չեն ուզում մոտենալ գնացքին: Համառոտներին ես սպառնացել եմ զրկել սննդից» [27, էջ2]:

1920 թ. հունվարի վերջերին «Պոլիգոն»-ի դատարկման փորձը կրկնվեց 500 կարսեցիներ, 300 խնուսցիներ և 347 սասունցիներ ուղարկվեցին Կարս: 500 կաղզվանցիներ ուղևորվեցին իրենց բնակության նախկին վայրերը [18, թ.41, 54]: Հաջորդ երկու շաբաթների ընթացքում սրանց մեծ մասը, չդիմանալով ձմեռային ճանապարհի դժվարություններին և բնակության նոր վայրերում զրկված լինելով տարրական կենսապայմաններից, վերադարձավ Ալեքսանդրապոլ [20, թ.5]:

Հանրակացարանների դատարկման երրորդ՝ վերջին փուլը սկսվեց 1920թ. փետրվարի վերջերին: Կարևորագույն և արդեն անհույս թվացող այս առաքելությունը հնարավոր դարձավ միայն ՀՀ խնամատարության նախարարության Կարս-Ալեքսանդրապոլ շրջանի հաստուկ ներկայացուցիչներ Սմբատ Բորոյանի և Օնիկ Մխիթարյանի գրագետ գործողությունների շնորհիվ:

Հնարավոր ցնցումներից խուսափելու նպատակով գաղթականներից կազմակերպվեցին 3-5-հոգանոց խմբեր, որոնք գործուղվեցին՝ Կարսի և Ալեքսանդրապոլի լքված գյուղերն ուսումնասիրելու: Միաժամանակ այդ գյուղերը թուրք-թաթարական խուժանի հարձակումներից պաշտպանելու և դրանցում կարգ ու կանոն հաստատելու համար «Պոլիգոն»-ի գաղթականներից ստեղծվեց միլիցիայի 500-հոգանոց զորամաս (300 հեծյալ, 200 հետևակ):

Գաղթականության մեծ տեղաշարժը, որի արդյունքում վերջապես դատարկվեց ողջ Ալեքսանդրապոլը, սկսվեց 1920թ. փետրվարի 24-ին: Մոտ մեկ ամսվա ընթացքում տարբեր հաշվումներով քաղաքից հեռացան 25-26000 արևմտահայեր և 9-10000 կովկասահայեր, 5000 բասենցիներից 4000-ը հաստատվեց Մելիմի շրջանում, իսկ 1000-ը՝ Ալեքսանդրապոլի դատարկ գյուղերում: Մնացած 29400-ը տեղավորվեց Ալեքսանդրապոլի գավառի 6 և Կարսի շրջանի 15 գյուղերում [20, թ.9-10]: Նոր բնակավայրերում

գաղթականությունը հիմնականում ապահովվեց բնակարաններով, վարելահողով, արտատեղիներով, անասնակերով և առաջին անհրաժեշտության այլ պարագաներով:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. 1918 թ. դեկտեմբերին սկսված հայ-վրացական կարճատև պատերազմից հետո Ալեքսանդրապոլի գավառը հայտնվեց սոցիալ-տնտեսական շատ ծանր իրավիճակում, որն անմիջապես ազդեց գաղթականության վիճակի վրա: Քաղաքը վերածվեց մուրացկանների բնակատեղիի: Գաղթականության վիճակը բարելավելու քաղաքային իշխանությունների՝ անկարողությունը շուտով հանգեցրեց զինված բախումների: Պարենամթերքի մատակարարման հարցերը կարգավորելու համար Մերձավոր Արևելքի օգնության ամերիկյան կոմիտեն (Ամերկոմ) փորձեց բոլոր գաղթականներին հավաքել ցարական բանակի նախկին զորանոցներում: Սակայն 30000 մարդու մեկ տեղում կենտրոնացնելը լուծում չէր: Ընդհակառակը՝ թշվառությունը հանգեցրեց բարքերի անկման ու հիվանդությունների տարածմանը: Ահռելի մասշտաբների հասան սովամահության դեպքերը: Դրությունը փոխվեց միայն 1920 թ. գարնանը, երբ ՀՀ իշխանություններին հաջողվեց շուրջ 36.000 գաղթականների տեղավորել Կարսի և Ալեքսանդրապոլի դատարկված գյուղերում:

Գրականություն

1. Ալեք. *Ալեքսանդրապոլի գաղթականների վիճակը*: «Յառաջ» օրաթերթ: Երևան: 1919: N 44: 13 նույեմբերի:
2. Բաղալյան Խ. *Գերմանա-թուրքական օկուպանտները Հայաստանում 1918 թ.*: Երևան: ԵՀ հրատ.: 1962: 296 էջ:
3. *Գաղթականության մեջ*: «Զանգ» թերթ: Երևան: 1919: N 5: 12 յունարի:
4. Դրսեցի. *Ամերիկեան նպաստամատույցը Ալեքսանդրապոլում*: «Յառաջ» օրաթերթ: Երևան: 1919: N 61: 3 դեկտեմբերի:
5. Դրսեցի. *Խորթ գաւակները*: «Յառաջ» օրաթերթ: Երևան: 1919: N 64: 9 դեկտեմբերի:
6. Դրսեցի. *Պոլիգոնների զիջատիչները*: «Յառաջ» օրաթերթ: Երևան: 1920: N 16: 23 յունարի:
7. Դրսեցի. *Պոլիգոնների զիջատիչները*: «Յառաջ» օրաթերթ: Երևան: 1920: N 18: 25 յունարի:
8. Էլչիբեկյան Հ. *Ղարաքիլիսայի ճակատամարտը* // ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր»: Հասարակական գիտություններ: Երևան: 1947: N 8: էջ 51-64:
9. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ): Ֆոնդ 127: Ցուցակ 1: Գործ 2976:
10. ՀԱԱ: Ֆոնդ 105: Ցուցակ 1: Գործ 2853:
11. ՀԱԱ: Ֆոնդ 105: Ցուցակ 1: Գործ 3003:
12. ՀԱԱ: Ֆոնդ 121: Ցուցակ 1: Գործ 91:
13. ՀԱԱ: Ֆոնդ 201: Ցուցակ 1: Գործ 138:
14. ՀԱԱ: Ֆոնդ 201: Ցուցակ 1: Գործ 168:
15. ՀԱԱ: Ֆոնդ 202: Ցուցակ 1: Գործ 1271:
16. ՀԱԱ: Ֆոնդ 203: Ցուցակ 1: Գործ 4:
17. ՀԱԱ: Ֆոնդ 205: Ցուցակ 1: Գործ 689:
18. ՀԱԱ: Ֆոնդ 205: Ցուցակ 1: Գործ 801: Մաս 1:
19. ՀԱԱ: Ֆոնդ 205: Ցուցակ 1: Գործ 801: Մաս 2:
20. ՀԱԱ: Ֆոնդ 205: Ցուցակ 1: Գործ 830:

21. Հայրապետյան Ա. *Ժողովրդագրական գործընթացներն Ալեքսանդրապոլի գավառում 1918 թ. մայիս-նոյեմբեր ամիսներին* // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի: 2018: Հ. 21: էջեր 113–127:
22. Հայրապետյան Ա. *Օսմանյան ցեղասպանական քաղաքականության շարունակությունը Ղարաքիլիսայի շրջանում (1918 թ. մայիս-հոկտեմբեր)* // Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին և Վանաձորի պետական համալսարանի հիմնադրման 50-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու: Վանաձոր: 2019: էջեր 254–262:
23. *Հին ցալը*: «Հայաստանի ձայն» օրաթերթ: Երևան: 1919: N 53: 20 նոյեմբերի:
24. ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվ: Լեոյի ֆոնդ: ցուցակ 1: գործ 253:
25. *Ղարաքիլիսեի յանձնումը*: «Մշակ» օրաթերթ: Թիֆլիս: 1918: N 20: 18 հոկտեմբերի:
26. «Մշակ» Օրաթերթ: Թիֆլիս: 1918: N 81: 17 ապրիլի:
27. *Պոլիգոնի գաղթականները*: «Յառաջ» օրաթերթ: Երևան: 1920: N 9: 13 յունւարի:
28. *Պոլիգոնում տեղաւորուած գաղթականութեան ծանր վիճակը*: «Մարդկայնութիւն» շաբաթաթերթ: Ալեքսանդրապոլ: 1919: N 4: 28 մարտի:
29. *Սովը գաւառում*: «Ժողովուրդ»: Երևան: 1919: N 53: 18 մայիսի:
30. *Данные о пространстве и населении Закавказья* // «Кавказский календарь на 1916 год». Тифлис. Тип. Главного управления Наместника Кавказа. 1915. отд. III.

References

1. Alek. The Situation of the Emigrants of Alexandropol [*Alek'sandropoli gaght'akanneri vichaky*]. "Yaraj" Daily newspaper. Yerevan. 1919. N 44. November 13. (in Armenian)
2. Badalyan Kh. German-Turkish Occupiers in Armenia 1918 [*Germana-t'urk'akan okupantnery Hayastanum, 1918t'*]. Yerevan. Yerevan University Press. 1962. 296 p. (in Armenian)
3. Among the Immigrants [*Gaght'akanut'yan mej*]. "Zang". Daily newspaper. Yerevan. 1919. N 5. January 12. (in Armenian)
4. Drsetsi. American Relief Committee in Alexandropol [*Amerikyan npastamatuyts' komiten Alek'sandrapolum*]. "Yaraj" Daily newspaper. Yerevan. 1919. N 61. December 3. (in Armenian)
5. Drsetsi. Stepchildren [*Khort' zavaknery*]. "Yaraj" Daily newspaper. Yerevan. 1919. N 64. December 9. (in Armenian)
6. Drsetsi. Predators of Polygons [*Poligonneri gishatich' nery*]. "Yaraj" Daily Newspaper. Yerevan. 1920. N 16. January 23. (in Armenian)
7. Drsetsi. Predators of Polygons [*Poligonneri gishatich' nery*]. "Yaraj" Daily newspaper. Yerevan. 1920. N 18. January 25. (in Armenian)
8. Elchibekyan H. The Battle of Gharakilisa [*Gharak'ilisayi chakatamarty*]. "Bulletin of Social Sciences". Yerevan. 1947. N 8. p. 51-64. (in Armenian)
9. National Archives of Armenia (NAA) [*Hayastani azgayin arkhiv*]. Fund 127. List 1. File 2976. (in Armenian)
10. NAA [HAA]. Fund 105. List 1. File 2853. (in Armenian)
11. NAA [HAA]. Fund 105. List 1. File 3003. (in Armenian)
12. NAA [HAA]. Fund 121. List 1. File 91. (in Armenian)
13. NAA [HAA]. Fund 201. List 1. File 138. (in Armenian)
14. NAA [HAA]. Fund 201. List 1. File 168. (in Armenian)
15. NAA [HAA]. Fund 202. List 1. File 1271. (in Armenian)
16. NAA [HAA]. Fund 203. List 1. File 4. (in Armenian)

17. NAA [HAA]. Fund 205. List 1. File 689. (in Armenian)
18. NAA [HAA]. Fund 205. List 1. File 801. Part 1. (in Armenian)
19. NAA [HAA]. Fund 205. List 1. File 801. Part 2. (in Armenian)
20. NAA [HAA]. Fund 205. List 1. File 830. (in Armenian)
21. Hayrapetyan A. Demographic Processes in Alexandropol Uezd in May-November of 1918 [*Zhoghovrdagrakan gortsynt'ats'nern Alek'sandrapoli gavarrum 1918t'. mayis-noyember amisnerin*] // «Scientific Works» of SCAS NAS RA. Gyumri. 2018. Vol. 21. pp. 113-127. (in Armenian)
22. Hayrapetyan A. The Continuation of the Ottoman Genocidal Policy in the Gharakilisa Region (May-October 1918) [*Osmanyan ts'eghaspanakan k'aghak'akanut'yan sharunakut'yuny Gharak'ilisayi shrjanum (1918t'. mayis-hoktember)*] // Collection of materials of the international conference dedicated to the 150th anniversary of the birth of Hovhannes Tumanyan and the 50th anniversary of the foundation of Vanadzor State University. Vanadzor. 2019. pp. 254-262. (in Armenian)
23. The Old Pain [*Hin ts'avay*], "Hayastani dzayn" Daily newspaper, Yerevan, 1919, N 53, November 20 (in Armenian).
24. Archives of the History Institute of the NAS RA [*HH GAA Patmut'yan instituti arkhiv*]. Leo's fund. list 1. file 253. (in Armenian)
25. Surrender of Gharakilisa [*Gharak'ilisayi handznumy*], "Mshak", Daily Newspaper, Tiflis, 1918, N 20, October 18 (in Armenian)
26. "Mshak". Daily Newspaper. Tiflis. 1918. N 81. April 17. (in Armenian)
27. Polygon Immigrants [*Poligoni gaght'akannery*], "Yaraj" Daily newspaper, Yerevan, 1920, N 9, January 13 (in Armenian)
28. The plight of the Emigrants Settled in Polygon [*Poligonum teghavorvats gaght'akanut'yan tsanr vichaky*], "Mardkaynityun", Weekly newspaper, Alexandropol, 1919, N 4, March 28 (in Armenian)
29. Famine in the Province [*Sovy gavarrum*]. "Zhoghovurd" Daily newspaper. Yerevan. 1919. N 53. May 18. (in Armenian)
30. Data on the space and population of Transcaucasia [*Dannyye o prostranstve i naselenii Zakavkaz'ya*]. "Caucasian Calendar for 1916". Tiflis. Printing House of the Head Office of the Viceroy of the Caucasus. 1915. Op. III. p. 627. (in Russian)

Ընդունվել է / Принята / Received on: 02.09.2023
Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: 13.09.2023
Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: 27.11.2023

Տեղեկություններ հեղինակի մասին

Արմեն Սերգոյի ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի տնօրեն, Գյումրի, ՀՀ,
ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, Երևան, ՀՀ,
ԾՊՀ պատմության և իրավագիտության ամբիոնի դոցենտ, Գյումրի, ՀՀ,
Էլ. հասցե՝ a.hayrapetyan@shirakcenter.sci.am, <https://orcid.org/0000-0003-1051-5078>

Armen Sergo HAYRAPETYAN: PhD in History, Associate professor,
Director of the Shirak Center for Armenological Studies of NAS, Gyumri, RA,
Senior research worker, NAS Institute of History, Yerevan, RA,
Associate Professor of Shirak State University after M. Nalbandyan, Gyumri, RA,
e-mail: a.hayrapetyan@shirakcenter.sci.am, <https://orcid.org/0000-0003-1051-5078>

Армен Сергеевич АЙРАПЕТЯН: кандидат исторических наук, доцент,
директор Ширакского центра арменоведческих исследований НАН, Гюмри, РА,
старший научный сотрудник Института истории НАН, Ереван, РА,
доцент кафедры истории и правоведения ШГУ, Гюмри, РА,
эл. адрес: a.hayrapetyan@shirakcenter.sci.am, <https://orcid.org/0000-0003-1051-5078>

UDC: 93.94

DOI: 10.52971/18294316-2023.26.2-54

NAGORNO KARABAKH AS AN ITEGRAL PART OF SOVIET ARMENIA

Stepan R. Hasan-Jalalyan

"Council of Hasan-Jalalyans" Historical, Cultural,
Ethnographic Non-Governmental Organization, Yerevan, RA

Abstract

Introduction: The purpose of the article is to show, based on the primary sources and literature related to the issue, whether Azerbaijan ever recognized Artsakh as a part of Armenia, and if so, what significance did it have on the process of settlement of the Azerbaijan-Artsakh conflict?

Methods and materials: The article is written through a comparison and comparative study of the original sources related to the issue, as well as an examination analysis of the scientific works related to it. **Results:** As a result of joint examination of facts and documents related to the issue, as well as historical and political literature, we came to the conclusion that in spite of the decision of the Revolutionary Committee of the Soviet Socialist Republic of Azerbaijan of November 30, 1920, considering Nagorno Karabagh as a part of the Soviet Socialist Republic of Armenia and in spite of the decree of the Council of the People's Commissars of Soviet Armenia adopted on June 12, 1921 that Artsakh was an integral part of Soviet Armenia, the Caucasian Bureau of the Communist Party of Soviet Russia, a political body of a third country, that had no right to resolve territorial issues in this case, without any further discussions or votes, in fact, on 5 July, 1921 illegally adopted a resolution that included Nagorno Karabakh within the borders of Soviet Azerbaijan.

Key words: *Congress of the Armenians of Artsakh, Nagorno Karabakh, Shushi, Alexander Myasnikyan, Caucasus Bureau of the Central Committee of the Communist Party of Soviet Russia, Nagorno Karabakh Autonomous Region, Soviet Armenia, Soviet Azerbaijan, Defense Army of the Republic of Artsakh.*

Citation. Hasan-Jalalyan S. *Nagorno Karabakh as an Itegral Part of Soviet Armenia.* // "Scientific works" of SCAS NAS RA. Gyumri, 2023. V. 2 (26). pp. 54-61.

DOI: 10.52971/18294316-2023.26.2-54

НАГОРНЫЙ КАРАБАХ КАК НЕРАЗДЕЛЬНАЯ ЧАСТЬ СОВЕТСКОЙ АРМЕНИИ

Степан Р. Асан-Джалалян

Историко-культурная, этнографическая общественная организация
«Совет Асан-Джалалянов», Ереван, РА

Аннотация

Введение: На основе первоисточников и литературы по данному вопросу показать признавал ли когда-либо Азербайджан Арцах частью Армении, и если да, то какое значение это имело для процесса урегулирования азербайджано-арцахского конфликта. **Методы и материалы:** Статья написана путем сопоставления и сравнительного изучения первоисточников, относящихся к проблеме, а также экспертного анализа научных работ, связанных с ней. **Результаты:** В результате совместного изучения фактов и документов по данному вопросу, а также историко-политической литературы мы пришли к выводу, что 30 ноября 1920 года решением Революционного Комитета Азербайджанской Советской Социалистической Республики, признанный частью Социалистической Республики Советской Армении и согласно декрету, принятому Советом народных комиссаров Советской Армении 12 июня 1921г., Арцах, являющийся неотъемлемой частью Советской Армении, незаконным решением кавказского бюро коммунистической партии Советской России, не обсужденным и не поставленным на голосование партийным органом третьей страны, не имеющей права решать территориальные вопросы, то есть, по сути, не принятым, незаконным решением, был введен в границы Советского Азербайджана.

Ключевые слова: *Съезд армян Арцаха, Нагорный Карабах, Шуши, Александр Мясникян, Кавказское бюро Центрального комитета Коммунистической партии Советской России, Нагорно-Карабахская Автономная Область, Советская Армения, Советский Азербайджан, Армия обороны Республики Арцах.*

Как цитировать: Асан-Джалалян С. *Нагорный Карабах как нераздельная часть Советской Армении.* // "Научные труды" ШЦАИ НАН РА. Гюмри, 2023. Т. 2(26). сс. 54-61.

DOI: 10.52971/18294316-2023.26.2-54

INTRODUCTION: At the beginning of the establishment of the Soviet order in Armenia, Soviet Azerbaijan recognized Nagorno Artsakh as belonging to Soviet Armenia. In this context, the author has studied and presented a number of official documents that were accepted by Soviet Azerbaijan and Soviet Armenia. In the context of the developments taking place around the settlement of the Azerbaijani-Artsakh conflict, the need to make this legal fact the subject of negotiations becomes very important.

On April 28, 1920, the 11th Red Army of Soviet Russia entered Baku without resistance and established Soviet rule in Azerbaijan. The last, Tenth Congress of the Armenians of Artsakh took place in the village of Nerkin Taghavard in the Varanda province, on May 26, 1920. Most of the deputies present were Bolsheviks. Discussing the political situation in Artsakh and around Artsakh, the Congress decides:

1. to declare Nagorno Karabakh Soviet,
2. to establish a Revolutionary Committee,
3. to elect Sako Hambardzumyan as the Chairman of the Revolutionary Committee,
4. to establish a contact with the Shushi Revolutionary Committee [1, p. 34].

The internationally unrecognized Azerbaijan, which was created by the Ottoman Turkish invasion of Transcaucasia and which had appropriated the name of the province of Azerbaijan in northeastern Iran as a name for its own state, with the establishment of the Soviet regime, did not stop its illegal ambitions towards Artsakh.

On November 29, 1920, Soviet rule was established in the Republic of Armenia. Due to the establishment of the Soviet rule in Armenia, Nariman Narimanov, the Chairman of the Revolutionary Committee of Soviet Azerbaijan, sent a congratulatory message, stating that on November 30, the Revolutionary Committee of the Soviet Socialist Republic of Azerbaijan adopted a decision that “Nagorno Karabakh, Zangezur and Nakhichevan are considered a part of the Socialist Republic of Armenia” [4, doc. N 420, pp. 601-602].

The above-mentioned decision of the Revolutionary Committee of Soviet Azerbaijan, signed by Chairman of the Revolutionary Committee Nariman Narimanov and People's Commissar for Foreign Affairs Mirza Huseynov, on December 7, 1920 was published in the 2nd issue of the “Communist” newspaper in Yerevan with an Armenian translation [5].

On the occasion of the establishment of the Soviet rule in Armenia on December 1, 1920 Nariman Narimanov, the Chairman of the Revolutionary Committee of Soviet Azerbaijan, issued a declaration in which he had edited the previous decision on the Nagorno Karabakh conflict adopted just one day before by the Revolutionary Committee of Azerbaijan. That decision was made on November 30.

In the declaration, the Chairman of the Revolutionary Committee of Soviet Azerbaijan, in particular, stated that “...Zangezur and Nakhichevan provinces are an integral part of Soviet Armenia and that the working peasantry of Nagorno Karabakh is given full right to self-determination...” [4, doc. N 423, pp. 604-605].

The next day, on December 2, the declaration was published in the 178th issue of the Russian-language “Communist” newspaper in Baku [6].

Despite the fact that the Chairman of the Revolutionary Committee of Soviet Azerbaijan adopted the November 30, 1920 decision of the Revolutionary Committee of Soviet Azerbaijan to recognize Nagorno Karabakh as a part of Soviet Armenia, he then took a step back and by his declaration of December 1, 1920, only recognized the right of the people of Artsakh to self-determination, which “...recognition was equivalent to the proclamation of Nagorno Karabagh as an integral part of Soviet Armenia, as the will of its people (Artsakh – S. H.-J.) could not been distrusted” [2, p. 13].

Member of the Central Committee of the Communist Party of Soviet Russia Joseph Stalin, in a sign of the establishment of Soviet power in Armenia, on December 4, 1920 published a telegram in the “Communist” newspaper in Moscow and also an article in the “Pravda” newspaper, in which he stated in particular that “On December 1, Soviet Azerbaijan voluntarily renounced the disputed states and is giving Zangezur, Nakhichevan, Nagorno Karabakh to Soviet Armenia” [7; 8; 4, doc. N 425, pp. 606-607.].

Based on the December 1, 1920 resolution of the Revolutionary Committee of Soviet Azerbaijan Alexander Myasnikyan, the Chairman of the Council of People's Commissars of Soviet Armenia, on June 12, 1921 signed a decree stating that Nagorno Karabakh was now an integral part of Soviet Armenia. “Based on the Declaration of the Revolutionary Committee of the Socialist Soviet Republic of Azerbaijan and the agreement reached between the governments of Armenia and the Socialist Soviet Republics of Azerbaijan, it is declared that Nagorno Karabakh is now an integral part of the Socialist Soviet Republic of Armenia” [4, doc. N 441, p. 636].

The decree was published in the June 19, 1921 issue of the “Soviet Armenia” newspaper in Yerevan [9].

On June 22 of the same year, the decree was published in the Baku-based Russian-language newspaper “Bakinsky Rabochiy” [“The Baku Worker” Eng.] [10].

And so, two states had a dispute related to a specific territory, and for this purpose, the authorities of the given countries adopted legal acts within their jurisdiction regarding the subject of the dispute, these legal acts were published in the official press of the time. The issue seemed to be resolved. But this seems only at first glance.

On June 27, 1921 at its session the Chair of the Caucasus Bureau of the Central Committee of the Communist Party of Soviet Russia decided to convene an extraordinary plenum on the borders of the Transcaucasian republics [4, doc. N 448, p. 648].

On July 4, 1921, there convened a plenum of the Caucasus Bureau of the Central Committee of the Communist (Bolshevik) Party of Soviet Russia in Tbilisi, where, in addition to its eight members, Joseph Stalin, a member of the Central Committee of the Communist Party of Soviet Russia, was also present.

During the discussion on the issue of Artsakh, there appeared two solutions:

1. To leave Karabakh within the borders of Azerbaijan and to hold a referendum throughout Karabakh with the participation of the entire population, both Armenians and Muslims.
2. To include the mountainous part of Karabakh into Armenia, to hold a referendum only in Nagorno Karabakh, that is, among the Armenians.

As a result of voting from the above-mentioned two options, the second option was adopted, that is, to include Nagorno Karabakh into Soviet Armenia, to hold a referendum only in Nagorno Karabakh, that is, among the Armenians.

Immediately after the decision was made, Nariman Narimanov, the Chairman of the Council of People's Commissars of Soviet Azerbaijan, made the following statement: “Considering the importance of the Karabakh issue for Azerbaijan, I consider it necessary to transfer it to the Central Committee of the Communist Party of Russia for its final decision” [4, doc. N 450, pp. 649-650].

Based on Narimanov's statement, the following was decided. “Taking into account that the issue of Karabakh has caused a serious disagreement, the Caucasus Bureau of the Central Committee of the Russian Communist Party considers it necessary to transfer it to the Central Committee of the Russian Communist Party for its final decision” [4, p. 650].

However, the next day, on July 5, members of the Caucasus Bureau Ordzhonikidze and Nazaretsyan, raised the issue of reconsidering the decision of the Bureau on Karabakh made at the previous day's session.

Judging from the minutes of the July 5 plenum of the Caucasus Bureau, one may insist that there was no discussion on the issue and then no vote as such. Without discussing the issue or putting it to a vote, the following was decided:

1. Due to the need for national peace between the Muslims and the Armenians, the economic connections between Lower and Upper Karabakh, and its permanent connection with Azerbaijan, to leave Nagorno Karabakh within the borders of the Azerbaijani SSR, giving it broad regional autonomy with Shushi as its administrative center, which is part of the autonomous region.
2. To assign to the Central Committee of Azerbaijan the determination of the boundaries of the Autonomous Region and to submit for the approval of the Caucasus Bureau of the Central Committee of the Communist Party of Russia.

3. To instruct the Chairman of the Caucasus Bureau of the Central Committee to speak with the Central Committee of Armenia and the Central Committee of Azerbaijan about the candidacy of the Ambassador Extraordinary and Plenipotentiary of Nagorno Karabakh.

4. For the Central Committee of Azerbaijan to determine the extent of Nagorno Karabakh's autonomy; to submit it to the Caucasus Bureau for approval by the Central Committee of the Communist Party of Russia" [4, doc. N 451, p. 650].

In addition to the participants in the July 5 session of the Caucasus Bureau, People's Commissar for Foreign Affairs of Soviet Azerbaijan Mirza Huseynov was also present.

In fact, despite the fact that at the July 4 session of the Caucasus Bureau of the Central Committee of the Communist Party, it was decided to include Nagorno Karabakh in Soviet Armenia, and then, based on Narimanov's statement, it was decided to move the issue to the Central Committee of the Communist Party of Soviet Russia. On July 5, it was decided to bring Nagorno Karabakh within the borders of Soviet Azerbaijan without further discussion or voting on the issue.

It is necessary to note that the Artsakh issue was not transferred to the Central Committee of the Communist Party of Soviet Russia for a final settlement, as decided at the July 4 session of the Caucasus Bureau.

Thus, in spite of the decision of the Revolutionary Committee of the Soviet Socialist Republic of Azerbaijan of November 30, 1920, considering Nagorno Karabagh as a part of the Soviet Socialist Republic of Armenia and in spite of the decree of the Council of the People's Commissars of Soviet Armenia adopted on June 12, 1921 that Nagorno Karabakh was an integral part of Soviet Armenia, the Caucasus Bureau of the Communist Party of Soviet Russia, a political body of a third country, that had no right to resolve territorial issues in this case [3, p. 9], without any further discussions or votes, in fact, illegally adopted a resolution that included Nagorno Karabakh within the borders of Soviet Azerbaijan. Considering the above, we can claim that by an illegal decision of the Caucasus Bureau of the Central Committee of the Communist Party of Soviet Russia of July 5, 1921 the territory of Artsakh was forcibly included into Soviet Azerbaijan, without taking into account the will of the people of Artsakh. Considering the above-mentioned, at least the following questions arise:

1. according to which legal act did Soviet Russia intervene in the conflict settlement between Soviet Armenia and Soviet Azerbaijan,

2. According to which legal act, the Caucasian Bureau of the Central Committee of the Communist Party of Soviet Russia, that is, a third country party organization, made a decision on the settlement of the conflict between Soviet Armenia and Soviet Azerbaijan?

Answering the questions mentioned above, it should be noted that there was no legal act based on which Soviet Russia intervened in the settlement of the conflict between Soviet Armenia and Soviet Azerbaijan. And the Caucasian Bureau of the Central Committee of the Communist Party of Soviet Russia, as a third country party organization, did not have the right to resolve territorial issues defined by any legal act.

Seeing that the government of Soviet Azerbaijan was delaying the formation of the Nagorno Karabakh Autonomous Region, the Soviet supreme authorities undertook some steps. Thus, the Transcaucasian Regional Committee on December 14, 1922 made a decision to ensure the urgent implementation of the decision made on July 5, 1921 by the Caucasus Bureau [4, doc. N 462, p. 662]. On December 22 of the same year, a similar decision was made by the Union Council of the Transcaucasian Federation [4, doc. N 464, p. 664].

After delaying the formation of the Nagorno Karabakh Autonomous Region for two years, the Central Executive Committee of Azerbaijan on July 7, 1923 adopted a decree deciding to establish an autonomous region from the Armenian part of Nagorno Karabakh as an integral part of the AzSSR (Soviet Socialist Republic of Azerbaijan) with the center at Khankendi. In order to determine the borders of the Nagorno Karabakh Autonomous Region, it was decided to set up a joint committee consisting of the representatives of the central government of Nagorno Karabakh, the Plain Karabakh, Kurdistan and Soviet Azerbaijan [4, doc. N 464, p. 664].

The Soviet Azerbaijani authority, violating the illegal decision of the Caucasus Bureau, which was not discussed and adopted by a vote during the July 5, 1921 session, formed the autonomous region in only one part of the mountainous region, deliberately leaving the following geographical and historical territories belonging to Nagorno Karabakh outside the borders of the Nagorno Karabakh Autonomous Region: Shahumyan (currently occupied as part of the Goranboy region of Azerbaijan), the Shahumyan region of the present-day Republic of Artsakh (the Qarvachar region of the former Azerbaijani SSR, currently occupied by Azerbaijan), the Qashatagh region of the current Republic of Artsakh (the Lachin region of the former Azerbaijani SSR, currently occupied by Azerbaijan), Kovsakan [3, p. 10], now part of the Qashatagh region of the Republic of Artsakh (the Zangelan region of the former Azerbaijani SSR, currently occupied by Azerbaijan), Akna, now part of the Askeran region of the Republic of Artsakh (the Aghdam region of the former Azerbaijani SSR, currently occupied by Azerbaijan), Qashuniq (now the Kubatlu region of the former Azerbaijani SSR, currently occupied by Azerbaijan), Jrakan, now part of the Hadrut region of the Republic of Artsakh (the Jabrayil region of the former Azerbaijani SSR, currently occupied by Azerbaijan), Varanda, which is now part of the Hadrut region of the Republic of Artsakh (the Fizuli region of the former Azerbaijani SSR, is currently occupied by Azerbaijan), etc. The aforementioned territories, which are occupied by Azerbaijan today, are de jure an integral part of the territory of the Republic of Artsakh. Those territories were to enter into the administrative borders of the Nagorno Karabakh Autonomous Region by the illegal decision that was not discussed or voted on at the July 5 session of the Caucasus Bureau in 1921.

The government of Soviet Azerbaijan designed the map of the Nagorno Karabakh Autonomous Region in such a way that Artsakh had no land connection with Soviet Armenia. For this purpose, the Central Executive Committee of Azerbaijan on July 16, 1923 established a Kurdish province called Red Kurdistan between the territories of Soviet Armenia and the Nagorno Karabakh Autonomous Region. And after the dissolution of Red Kurdistan on April 8, 1929 the regions of Qarvachar, Lachin and Kubatlu were directly entered into Soviet Azerbaijan as its integral part.

In fact, the government of Soviet Azerbaijan without taking into account the opinion of the people of Artsakh by the decree of July 7, 1923 annexed most of the northern, southern, eastern and western parts of the territory of Artsakh as the territory of Soviet Azerbaijan.

As a result of the Azeri-Artsakh war of 1991-1994, the Defense Army of the Republic of Artsakh recaptured only a part of the territories legally belonging to the Republic of Artsakh after more than 60 years of Azerbaijani occupation. After the signing of the trilateral ceasefire agreement (Artsakh, Armenia, Azerbaijan) on May 12, 1994 some territories of the eastern parts of the Martakert and Martuni regions, the former Shahumyan region of the Republic of Artsakh with a total area of 1041 km² [11], which was about 9% of the constitutionally enshrined territory of the Republic of Artsakh, remained under Azerbaijani occupation.

Grossly violating the principles of the Helsinki Final Act in 1 august 1975 on non-use of force or threat of force and on peaceful settlement of disputes, as a result of the second aggression

unleashed by mercenary terrorists against the Republic of Artsakh on September 27, 2020, Azerbaijan occupied (violently seized) approximately 75% of the constitutionally enshrined territory of the Republic of Artsakh. Thus, summarizing the above, we can say that as a result of the two aggression wars unleashed against the Republic of Artsakh, Azerbaijan has occupied approximately 84% of the constitutionally enshrined territory of the Republic of Artsakh.

CONCLUSION: In spite of the decision of the Revolutionary Committee of the Soviet Socialist Republic of Azerbaijan of November 30, 1920, considering Nagorno Karabagh as a part of the Soviet Socialist Republic of Armenia and in spite of the decree of the Council of the People's Commissars of Soviet Armenia adopted on June 12, 1921 that Artsakh was an integral part of Soviet Armenia, the Caucasian Bureau of the Communist Party of Soviet Russia, a political body of a third country, that had no right to resolve territorial issues in this case, without any further discussions or votes, in fact, on 5 July, 1921 illegally adopted a resolution that included Nagorno Karabakh within the borders of Soviet Azerbaijan.

Գ ր ա կ ա ն ու լ թ յ ու ն

1. Աբրահամյան Հ., 1918-1920 թթ. արցախահայտյայտի համագումարների ժողովրդավարությունը. // «Պատմա-բանասիրական հանդես», N 3, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012, 21-36 էջեր:
2. Արցախի Հանրապետության նախագահի պաշտոնական ինտերնետային կայք, <http://www.president.nkr.am/en/nkr/generalInformation/>. (դիտվել է 11.08.2023)
3. «Նորհրդային Հայաստան» թերթ, N 106, Երևան, 19 հունիսի 1921:
4. «Կոմունիստ» թերթ, N 2, Երևան, 7 դեկտեմբերի 1920:
5. Газета “Коммунист”, N 178, Баку, 2 декабря 1920.
6. Газета “Коммунист”, N 1, Москва, 4 декабря 1920.
7. Газета “Правда”, N 273, Москва, 4 декабря 1920.
8. Газета “Бакинский рабочий”, Баку, 22 июня 1921.
9. Манасян А., *Карабахский конфликт: Минимальная папка политико-правовых фактов и аргументов*, Ереван, “Де-факто”, 2009, 47 с.
10. *Нагорный Карабах в 1918-1923гг.*, сборник документов и материалов, Ереван, “Изд. АН”, 1992, 756 с.
11. Avakian Sh., *Nagorno Karabagh: Legal aspects, fifth edition*, Moscow, “MIA”, 2015, 126 p.

References

1. Abrahamyan H., Democracy of the Congresses of the Artsakh Armenians in 1918-1920, [*1918-1920 artsakhahayutyay hamagumarneri zhoghovrdavarutyuny*], // “Historical-Philological journal”, N 3, Yerevan, “Gitutyun”, 2012, 21-36 pp. (in Armenian)
2. Manasyan A., Karabakh conflict: Minimum folder of political and legal facts and arguments, [*Karabakski konflikt: Minimalnaya papka politico-pravovikh faktov I argumentov*], Yerevan, “De-fakto”, 2009, 47 p., (in Russian)
3. Nagorno Karabakh in 1918-1923: Collection of documents and materials, [*Nagorny Karabakh v 1918-1923: sbornik dokumnetov I materialov*], Yerevan, “Academy of Sciences of Armenia”, 1992, 756 p., (in Russian)
4. Newspaper “Communist” [“*Komunist*” *terti*], N 2, Yerevan, December 7, 1920, (in Armenian)
5. Newspaper “Communist” [Gazeta “*Komunist*”], N 178, Baku, December 2, 1920, (in Russian)
6. Newspaper “Communist” [Gazeta “*Komunist*”], N 1, Moscow, December 4, 1920, (in Russian)
7. Newspaper “Pravda” [Gazeta “*Pravda*”], N 273, Moscow, December 4, 1920, (in Russian)

8. Newspaper “Soviet Armenia” [*Gazeta “Khorhrdayin Hayastan”*], N 106, Yerevan, June 19, 1921, (in Armenian)
9. Newspaper “Bakinsky rabochi” [*Gazeta “Bakinski rabochi”*], Baku, June 22, 1921 (in Russian)
10. Official website of the President of the Republic of Artsakh [*Artsakhi Hanrapetutyayn nakhagahi pashtonakan internetayin kayq*], <http://www.president.nkr.am/en/nkr/generalInformation/>. [date accessed: 11.08.2023].

Ընդունվել է / Принята / Received on: **22.10.2023**
Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **03.11.2023**
Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **27. 11. 2023**

Տեղեկություններ հեղինակի մասին

Stepan Ruben HASAN-JALALYAN: YSU Master student in Political Sciences,
President of "Council of Hasan-Jalalyans" Historical, Cultural Non-GO, Yerevan, RA
e-mail: Hasan-Jalal@yandex.com, <https://orcid.org/0009-0003-2567-7456>

Ստեփան Ռուբենի ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆ՝ ԵՊՀ-ի քաղաքագիտության մագիստրոս,
«Հասան-Ջալալյանների խորհուրդ» պատմամշակութային ՀԿ նախագահ, Երևան, ՀՀ,
Էլ. հասցե՝ Hasan-Jalal@yandex.com, <https://orcid.org/0009-0003-2567-7456>

Степан Рубенович АСАН-ДЖАЛАЛЯН: магистр политологии ЕГУ,
Председатель историко-культурной ОО «Совет Асан-Джалалянов», Ереван, РА
эл. адрес: Hasan-Jalal@yandex.com, <https://orcid.org/0009-0003-2567-7456>

ՀՏԴ՝ 930

DOI: 10.52971/18294316-2023.26.2-62

1920 թ. ԹՈՒՐԹ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻ
ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ
ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Նարինե Մ. Մովսեսյան

ԳԱԱ պատմության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. 1920 թ. թուրք-հայկական պատերազմի տարբեր հարցերի վերաբերյալ հայ պատմագրության մեջ իր ուրույն խոսքն է ասել խորհրդահայ պատմագրությունը: Հոդվածում ներկայացված է պատերազմի նախօրյակի ռազմաքաղաքական իրավիճակի անդրադարձը խորհրդահայ պատմագրության մեջ՝ որպես պատերազմի պատճառների վերհանման, հետևապես պատերազմի բնույթը, դրա ընթացքն ու ավարտը նախանշող ժամանակահատված: *Մեթոդներ և նյութեր.* Աշխատանքի մեթոդաբանական հետազոտության համար առաջնային հիմք են ծառայել խորհրդային ժամանակաշրջանի պատմաբանների մենագրություններն ու հոդվածները, որոնց պարունակած նյութերի համադրման, համեմատման և վերլուծության մեթոդաբանությամբ փորձ է արվել վեր հանել 1920 թ. թուրք-հայկական պատերազմի նախօրյակի ռազմաքաղաքական իրավիճակը խորհրդահայ պատմագրության մեջ: *Վերլուծություն.* Խորհրդային պատմագետները, ստեղծված անբարենպաստ ռազմաքաղաքական իրավիճակի պատճառները լուսաբանում են մասնակի դրդապատճառներով: Դրանցից հիմնականներն են. Հայաստանի արևմտամետ դիրքորոշում, Խորհրդային Ռուսաստանի կողմից առաջարկվող օգնության մերժում և այլն: *Արդյունքներ.* Աշխատանքի արդյունքում վեր են հանվում խորհրդային պատմագիտության դիրքորոշումները այն իրադարձությունների վերաբերյալ, որոնց պատճառով 1920 թ. աշնանը հայ ժողովուրդը կանգնեց թուրքական ոչնչացման վտանգի առաջ:

Բանալի բառեր` *Խորհրդային Հայաստան, պատմագրություն, Հայաստանի Հանրապետություն, Անդրկովկաս, քեմալական կառավարություն, թուրք-հայկական պատերազմ, ռազմաքաղաքական, խորհրդա-թուրքական հարաբերություններ:*

Ինչպես հղել` Մովսեսյան Ն., 1920 թ. թուրք-հայկական պատերազմի նախօրյակի ռազմաքաղաքական իրավիճակի լուսաբանումը խորհրդահայ պատմագրության մեջ. // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Հ. 2 (26): 62-74 էջեր: DOI: 10.52971/18294316-2023.26.2-62

ELUCIDATION OF THE MILITARY AND POLITICAL SITUATION ON THE EVE OF THE TURKISH-ARMENIAN WAR, 1920, IN THE SOVIET HISTORIOGRAPHY OF ARMENIA

Narine M. Movsesyan

Institute of History of NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: In 1920, on various issues of the Turkish-Armenian war, the Soviet-Armenian historiography expressed its special word in Armenian historiography. The article presents the military-political situation on the eve of the war in Soviet Armenian historiography as the explanation of the causes of the war, the period that determines the nature of the war, its course and end. **Methods and materials:** The primary basis for the methodological study of the work was monographs and articles by historians of the Soviet period, by the methodology of comparison, and analysis of the materials contained in them, in 1920 an attempt was made to identify the coverage of the military-political situation on the eve of the Turkish-Armenian war in Soviet Armenian historiography. **Analysis:** Thus, Soviet historians, the reasons for the current unfavorable military-political situation are highlighted by partial motives. The main ones are: Armenia's pro-Western position, Refusal of assistance offered by Soviet Russia, etc. **Results:** As a result of the work, the positions of Soviet historiography on those issues that, in their opinion, relate to 1920 are revealed. In autumn, the Armenian people faced the threat of Turkey's destruction.

Key words: *Soviet Armenia, historiography, Republic of Armenia, Transcaucasia, the Kemalist government, Turkish-Armenian War, military-political, Soviet-Turkish relations.*

Citation: Movsesyan N., *Elucidation of the Military and Political Situation on the Eve of the Turkish-Armenian War, 1920, in the Soviet Historiography of Armenia.* // «Scientific works» of SCAS NAS RA. Gyumri, 2023, 2 (26): pp. 62-74. DOI: 10.52971/18294316-2023.26.2-62

ОСВЕЩЕНИЕ ВОПРОСА ВОЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ СИТУАЦИИ НАКАНУНЕ ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. В СОВЕТСКОЙ - АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

Нарине М. Мовсесян

Институт истории НАН, Ереван, РА

Аннотация

Введение: В 1920 г. по различным вопросам турецко-армянской войны свое особое слово в армянской историографии высказала советско-армянская историография. В статье предс-

тавлен взгляд на военно-политическую ситуацию накануне войны в советско-армянской историографии как на период выявления причин войны и, следовательно, характер войны, ее ход и завершение. *Методы и материалы*: Первоочередной основой для методологического исследования работы послужили монографии и статьи историков советского периода, методологией сопоставления, сравнения и анализа содержащихся в них материалов была предпринята попытка выявить в 1920 г. освещение военно-политической ситуации накануне турецко-армянской войны в советской армянской историографии. *Анализ*: Таким образом, советские историки, освещают причины сложившейся неблагоприятной военно-политической ситуации частичными мотивами. Основные из них: Прозападная позиция Армении, отказ от помощи, предлагаемой Советской Россией и т.д. *Результаты*: В результате работы выявляются позиции советской историографии по тем вопросам, которые, по их мнению, относятся к 1920 году, осенью армянский народ встал перед угрозой уничтожения Турцией.

Ключевые слова: Советская Армения, историография, Республика Армения, Закавказье, кемалистское правительство, турецко-армянская война, военно-политический, советско-турецкие отношения.

Как цитировать: Мовсесян Н. Освещение вопроса военно-политической ситуации накануне турецко-армянской войны 1920 г. в советской - армянской историографии. // «Научные труды» ШЦАИ НАН РА. Гюмри, 2023, Т.2(26): сс.62-74. DOI:10.52971/18294316-2023.26.2-62

ՆԱԽԱԲԱՆ. Ինչպես ընդհանրապես Հայաստանի, այնպես էլ թուրք-հայկական պատերազմի պատմության տարբեր հարցերի վերաբերյալ խորհրդային (բոլշևիկյան, կոմունիստական) պատմագիտության ներկայացուցիչները մեզ հայտնի պատճառներով շատ հարցերում անխուսափելիորեն առաջ են քաշել միակողմանի, կուսակցական-դասակարգային դիրքորոշում: Խորհրդային հեղինակների կողմից թե՛ նախապատերազմյան ժամանակաշրջանի իրավիճակների, թե՛ պատերազմի ընթացքի ու դրանից հետո ընկած ժամանակահատվածի իրադարձությունների լուսաբանումը կատարվել է ոչ ամբողջական:

Պետք է նշել սակայն, որ խորհրդահայ մի շարք պատմաբաններ, հատկապես խորհրդային ժամանակահատվածի երկրորդ կեսին, չնայած մարքսիզմի տեսանկյունից են մեկնաբանել իրադարձությունները, սակայն մեծ ավանդ են ունեցել ժամանակի պատմագիտական մտքի ձևավորման հարցում:

Նրանցից շատերը, ապրելով ու ստեղծագործելով նաև հետխորհրդային ժամանակաշրջանում, ձեռքագտնելով գաղափարախոսական հարկադրանքից, վերանայեցին նախկին դիրքորոշումները, հանդես եկան նոր հոդվածներով, հրապարակումներով ու մենագրություններով, որտեղ շրջանառած նորահայտ փաստերի ու տեղեկությունների համադրմամբ նորովի անդրադարձան հարցին¹:

Այդ տեսանկյունից խորհրդային պատմագիտական միտքը պայմանականորեն կարելի է բաժանել երկու փուլի. մինչև 1980-ական թթ. վերջերն ընկած ժամանակաշրջանը և դրանից հետո: Հետևաբար, մեր նպատակն է փորձել նորովի անդրադառնալ նրանց տեսակետներին՝ վեր հանելու խորհրդային ժամանակաշրջանի պատմագիտական մտքի առանձնահատկություններն ու որոշել գաղափարական ուղղվածության ա-

¹ Նշված հեղինակներից են Է. Չոհրաբյանը, Լ. Խուրշուդյանը, Գ. Գալոյանը և այլք:

ռանցքները: Նշված խնդիրն ինքնին առաջ է քաշում հարցի արդիականության հիմնավորումը, ինչը ենթադրում է նորովի լուսաբանել խորհրդային պատմագիտության դեռևս ուսումնասիրության կարոտ էջերը:

**Ռուսաստանի անդրկովկասյան քաղաքականության լուսաբանումը
խորհրդահայ պատմագրության մեջ:**

Խորհրդահայ պատմագիտության միակողմանի դիրքորոշումն իր արտահայտությունը գտավ հատկապես թուրք-հայկական պատերազմի նախօրեին տարածաշրջանում իրադարձությունների լուսաբանման հարցում: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում խորհրդային հեղինակներն իրավացիորեն Հայաստանը համարել են մեծ տերությունների ռազմական բախումների, դիվանագիտական մրցապայքարի թատերաբեմ: Սակայն ստեղծված ռազմաքաղաքական անբարենպաստ իրավիճակի պատճառները, որոնք հանգեցրին պատերազմին, լուսաբանվում են մասնակի դրդապատճառներով: Դրանցից հիմնականներն են. Հայաստանի արևմտամետ դիրքորոշում, ՀՅԴ-ի կողմից վրացի մենշևիկների ու Ադրբեջանի մուսաֆաթականների հետ համագործակցում, ՀՀ կառավարության կողմից Սևրի պայմանագրի հետ հույսերի կապում և Խորհրդային Ռուսաստանի կողմից առաջարկվող օգնության (հիմնականում ռազմական) մերժում և այլն:

Վերջին միտքն առավել արտահայտվեց խորհրդային Ռուսաստանի անդրկովկասյան քաղաքականության անվերապահ արդարացման, նրա դրական դերի գերազանահատման ու չափազանցման առնչությամբ: Ըստ այդմ, Հայաստանի ազատագրության հարցը մեծապես կապվել է Խորհրդային Ռուսաստանի փրկարար ուժի հետ, իսկ այդ փրկության ի դերն ելնելը՝ Հայաստանի կառավարության կողմից Խորհրդային Ռուսաստանի առաջարկած օգնության մերժման, այդ թվում՝ նրան դեպի Թուրքիա տրանզիտի իրավունք տալու հարցում [1, էջեր 24-125: 15, էջեր 21-104: 18, էջեր 31-35: 5, էջ 68], ինչպես նաև այդ օգնությանն ուշ կամ առհասարակ չդիմելու հետ: Այնինչ, ըստ հեղինակների, այդ օգնությամբ կկասեցվեր պատերազմը [1, էջեր 49-50, 105: 22, էջեր 14, 254-255]:

Նշված ժամանակաշրջանի պատմագետների կողմից չի շեշտվում ռազմական օգնություն խոստանալու դիմաց Ռուսաստանի կողմից Հայաստանին ներկայացվող պայմանները. այն է՝ խորհրդային կարմիր բանակի մուտք Հայաստան, ինչը ոչ այլ ինչ էր, քան ՀՀ-ը խորհրդայնացնելու պայման: Հակառակ դրան, բոլշևիկյան կուսակցությունը ներկայացվում է որպես դաշնակցական կառավարության կործանարար քաղաքականությունը վեր հանող, Անդրկովկասի ժողովուրդներին բաժին ընկած բոլոր աղետներում ու դժբախտություններում ՀՅԴ հանցանքը բացահայտող միակ ուժը [17, էջ 440]:

Ջ. Կիրակոսյանի խմբագրականում Սևրի պայմանագրի իրագործմանն ուղղված դաշնակցական գործիչների ջանքերը ներկայացվում է որպես գործունեություն, որը դատապարտված էր ձախողման, ինչը նրանց տարավ ազգակործան ճանապարհով, այնինչ. «...Սովետական Ռուսաստանի վրա հենվելու դեպքում անհնար չէր թուրքական այլամերժ նացիոնալիզմի սանձարձակության չափավորումը» [10, էջ 54-55]: Նշված կարծիքը հաստատվում է այն «իրողությամբ», որ «Քեմալական Թուրքիայի հետ

դիվանագիտական առաջին իսկ կոնտակտներից սկսած՝ Մովետական Ռուսաստանի կառավարությունն արտաքին քաղաքականության իր բոլոր գործողություններով սատար էր կանգնում հայ ժողովրդին» [10, էջ 46]:

Լ. Խուրշուդյանն իր «Մովետական Ռուսաստանը և հայկական հարցը» մենագրության առաջաբանում նշում է. «Մինչդեռ նյութերի բարեխիղճ վերլուծությունը ցույց է տալիս, որ 1917-1918 թվականների չափազանց բարդ իրադրության պայմաններում հայ ժողովրդի միակ անշահախնդիր պաշտպանը եղել է Մովետական Ռուսաստանը» [6, էջ 6]: Նա գտնում է, որ կոմունիստական կուսակցությունը և խորհրդային կառավարությունն այդ ծանր տարիներին ջանք չեն խնայել, օգտագործել են բոլոր հնարավոր միջոցները հայ ժողովրդին փրկելու, Հայկական հարցը լուծելու համար: Մակայն «դաշնակցականները, երես դարձնելով հայ ժողովրդին Մովետական Ռուսաստանի անշահախնդիր օգնությունից, շարունակում էին հակահեղափոխական գործարքը մուսաֆաթականների և մենշևիկների հետ» [6, էջ 6],-գրում է Լ. Խուրշուդյանը:

Խորհրդային Ռուսաստանի հայամետ ու խաղաղասեր կեցվածքի աննախադեպ ջատագովությանը է տոգորված Ա. Եսայանի «Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը» աշխատությունը, որում նա Խորհրդային Ռուսաստանի՝ Հայաստանի պաշտպանելուն ուղղված «ջանքերի» նկարագրությանը մի ամբողջ գլուխ է նվիրել՝ «Մովետական Ռուսաստանի դիվանագիտությունը ամենուր հայ ժողովրդի շահերի պաշտպանության դիրքերում» խորագրով [4, էջեր 321-351]:

Հեղինակը, Խորհրդային Ռուսաստանին ներկայացնելով որպես թուրք-հայկական կոնֆլիկտը լուծելու ազնիվ մղումներով ու նպատակներով անշահախնդրորեն առաջնորդվող պատրաստակամ կողմ, կարծիք է հայտնում, որ նրա արտաքին քաղաքականությունն ուղղված էր Մերձավոր Արևելքում և Կովկասում ժողովուրդների միջև խաղաղություն հաստատելուն և պետությունների միջև եղած վեճերը արդարացիորեն կարգավորելուն: Ըստ նրա՝ Խորհրդային Ռուսաստանի կողմից Հայաստանին ցույց տրված օգնությունը բազմակողմանի էր և կոչված էր կայունացնելու Հայաստանի միջազգային իրավական վիճակը և վերացնելու հայ ժողովրդի գլխին կախված մահացու վտանգը [4, էջեր 230-231, 237, 241-242]:

Ս. Ալիխանյանի մենագրության խորագիրը խոսուն արտահայտությունն է նրա պատմագիտական հայացքների՝ «Մովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում»: Հեղինակը ներկայացնում է, որ իր կողմից նպատակ է դրվել բազմակողմանիորեն շարադրել Խորհրդային Ռուսաստանի կառավարության՝ դաշնակցական կառավարության հետ վարած տարբեր բանակցությունները, կոնկրետ փաստերով ցույց տալ, որ խորհրդային կառավարությունը ձգտում էր ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա լուծել հայ-թուրքական դարավոր վեճը, արդարացի սահմաններ որոշել այդ երկու ազգերի միջև և այլն [1, էջ 8-9]:

Ս. Կարապետյանը նշում է, որ «պատերազմի ընթացքում Հայաստանի դաշնակիցները՝ ԱՄՆ, Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան և ուրիշներ, հրաժարվեցին Հայաստանը պաշտպանել Թուրքիայի ագրեսիայից: ...Միակ երկիրը, որ բոլոր միջոցները գործ դրեց փրկելու հայ ժողովրդին կործանումից՝ Մովետական Ռուսաստանն էր» [7, էջեր

26, 34]: Այնինչ «Անտանտի պետությունները հրաժարվեցին օգնել դաշնակցական կառավարությանը՝ Հայաստանը թողնելով Թուրքիայի հռչակմանը» [22, էջ 27],-գրում է մեկ այլ խորհրդային հեղինակ՝ Ա. Վարդապետյանը:

Խորհրդահայ պատմագրությունը, հանձին Ե. Սարգսյանի, չի վարանել նշել, որ հայ ժողովրդի զինված պայքարը թուրքերի դեմ կրում էր Խորհրդային Ռուսաստանի աջակցությունը: Նա նշում է, որ խորհրդային ուժերը նպաստեցին կամավորական ջոկատների կազմավորմանը Ռուսաստանի տարբեր վայրերում ապրող հայերից, որոնք հասան Հայաստան, դրանց շարքերում կային նաև ռուս կարմիրզվարդիական-կամավորականներ: Այնուհետև, վկայակոչելով վրացական «Заря России» թերթի հրապարակումը, նշում է, որ 1918 թ. հունիսին 250 խորհրդային զինվոր հայերին օգնեցին՝ ջախջախելու թուրքական զորքը Նախիջևանի մոտակայքում [22, էջ 31-32]: Կարծում ենք՝ եթե, իրոք, Ռուսաստանի կողմից օգնական ջոկատներ են ուղարկվել Հայաստան, ապա զարմանալի է, որ գոնե խորհրդային պատմագրության կողմից այդ փաստը պատշաճ ուշադրության չի արժանացել:

Խորհրդային պատմագրությունն անխուսափելիորեն պետք է անդրադարձ կատարեր իրողություն դարձած ռուս-թուրքական (խորհրդա-քեմալական) հարաբերություններին, հետևաբար նաև խորհրդային Ռուսաստանի կողմից Հայաստանին լիարժեք օգնություն չտրամադրելու հարցին: Նրանք չեն ժխտում, որ մոսկովյան բանակցություններին զուգընթաց² խորհրդային կառավարությունը բանակցություններ էր վարում նաև Թուրքիայի հետ [1, էջ 111: 22, էջ 22]:

Ա. Եսայանը մեկնաբանում է, որ «...հայերի բնական և միակ հովանավորողը՝ Ռուսաստանը, այնտեղ սովետական իշխանության հաղթանակից հետո ներգրավված էր անհավասար կռվի մեջ համաշխարհային իմպերիալիզմի ու նրա դաշնակից ներքին հակահեղափոխության դեմ» [4, էջ 233]: Հետևաբար, ըստ հեղինակի, Ռուսաստանը չկարողացավ եղբայրական օգնության ձեռք մեկնել հայ ժողովրդին: Վկայակոչենք մեկ այլ մեջբերում Ա. Եսայանի մենագրությունից. «Հայ-թուրքական կոնֆլիկտը կարգավորելու ասպարեզում Սովետական Ռուսաստանը չէր կարող դուրս գալ իր հնարավորությունների սահմաններից և ոչ մի պարտավորություն չստանձնեց, որը չէր կարող կատարել» [4, էջեր 254-255]: Փաստորեն, պատմաբանը կարծում է, թե չնայած Խորհրդային Ռուսաստանը ձգտում էր իր ուժերի ներածի չափով օգնել, սակայն նրա հնարավորությունները՝ պաշտպանելու հայ ժողովրդի շահերը, սահմանափակ էին:

Ա. Եսայանը եզրահանգում է, որ Ռուսաստանի կողմից Թուրքիայի հետ բարեկամական հարաբերությունների հաստատումը հետապնդում էր թուրք և հայ ժողովուրդների միջև հակասությունների վերացման նպատակ՝ որպես ապացույց վկայակոչելով ՌՄՖՍՀ-ի արտգործնախարար (արտաքին գործերի ժողովրդական կոմիսար) Գ. Չիչերինի խոսքն այդ մասին [4, էջ 243]:

² 1920 թ. մայիս-հուլիս ամիսներին Մոսկվայում բանակցություններ էին ընթանում Խորհրդային Ռուսաստանի և դաշնակցական կառավարության միջև, որին Հայաստանի կողմից մասնակցում էր Լ. Շանթի գլխավորած պատվիրակությունը:

Նույն միտքն են արձանագրում պատմագիտության դոկտոր Ս. Ալիխանյանը և Ա. Վարդապետյանը՝ խորհրդա-թուրքական բարեկամության պայմանագրի կնքումը մեկնաբանելով հայ-թուրքական հարաբերությունները խաղաղ ճանապարհով լուծելու, Անդրկովկասի և Թուրքիայի հարաբերությունները կարգավորելու անհրաժեշտությամբ [22, էջ 22: 2, էջ 153]:

Մասնավորապես Ա. Վարդապետյանը, որի կարծիքը, ըստ մեզ, որոշակիորեն տարբերվում է, ներկայացնում է, որ այդ պահին Խորհրդային Ռուսաստանի ներքին և միջազգային դրությունը հարկադրեց ուշադրությունը կենտրոնացնել Անդրկովկասի սահմաններում կանգնած 11-րդ կարմիր զորամասերին՝ «...անցնել Հյուսիսային Կովկաս և ճնշել Սովետական իշխանության դեմ սկսված կոնտրոսկոպիոն խռովությունները» [22, էջ 16]: Հետևաբար, տվյալ պահին խորհրդային կառավարությունը չկարողացավ ուշադրություն դարձնել Հայաստանին: Սակայն նշենք, որ պատմաբանն այդ օգնությունը [իրավացիորեն³] դիտարկում էր Հայաստանը խորհրդայնացնելու գործընթացի նպատակ:

Է. Զոհրաբյանը խորհրդա-քեմալական հարաբերությունները քննարկում է Մուստաֆա Քեմալի կողմից Վ. Ի. Լենինին ուղղված 1920 թ. ապրիլի 26-ի նամակի բովանդակության վերլուծմամբ³: Ըստ այդմ՝ նա անդրադառնում է Քեմալի այն մտքին, որ թուրքական կառավարությունն իր վրա է վերցնում պատերազմական գործողություններն իմպերիալիստական Հայաստանի դեմ: Պատմաբանը հակադարձում է. «...այս հարցում նա (Քեմալը - Ն. Մ.) սխալվել էր: Սովետական Ռուսաստանը Հայաստանը ոչ միայն իմպերիալիստական չէր համարում, այլև իր գոյության առաջին իսկ օրից ձգտում էր իմպերիալիստական գիշատիչների ձեռքին խաղալիք դարձած հայկական հարցին արդարացի լուծում տալ...» [5, էջ 29-30]:

Է. Զոհրաբյանը չի ժխտում, որ 1920 թ. օգոստոսի 24-ին թուրքերի և ռուսների բանակցությունների արդյունքում կնքված պայմանագրի նախագծով համաձայնություն կայացվեց Թուրքիային ֆինանսական օգնություն ցուցաբերելու և զենք ու զինամթերք մատակարարելու մասին: Պրոֆեսորը, սակայն, Խորհրդային Ռուսաստանի նմանօրինակ վերաբերմունքի դրդապատճառների մասին կարծիք չի հայտնում, ինչը, կարծում ենք, հետաքրքիր կլիներ [5, էջ 46]:

**Խորհրդա-քեմալական հարաբերությունների լուսաբանումը
խորհրդահայ պատմագրության մեջ**

Գ. Գալոյանը, ներկայացնելով տարածաշրջանում մեծ տերությունների հակասությունները, նշում է, որ քեմալականները դրանք հմտորեն օգտագործում էին և անարգել առաջ շարժվում Հայաստանով: Պատմաբանը սնանկ է համարում ռուսների կողմից քեմալականների քաղաքականությանը տրված գնահատականը, այն է՝ թուրքերի հետ ռուսների համաձայնողական քաղաքականությունը նպատակ ուներ ապահովելու Անկարայի հեղափոխականների մասնակցությունը Արևելքի ազատագրության

³ Հարկ ենք համարում նշել, որ Մ. Քեմալի հիշյալ միտքն արտացոլված է ոչ թե Լենինին հղված հրա նամակում, այլ՝ նույն թվագրմամբ Թուրքական Ազգային մեծ ժողովի՝ Խորհրդային Ռուսաստանի կառավարությանն ուղղված առաջարկներում: [24, c. 50-51].

ընդհանուր շարժմանը: Գ. Գալոյանը շեշտում է, որ այս գնահատականը ոչ մի ընդհանրություն չունի իրականության հետ և չէր կարող հայերին համոզել դրանում, քանի որ «Անկարայի հեղափոխական իշխանությունները» Հայաստանում շարունակում էին Աբդուլ Համիդի ցեղասպանության քաղաքականությունը [3, էջ 303]:

Ըստ Ս. Քառյանի դիտարկման՝ Գ. Գալոյանի կարծիքն (տե՛ս Գալոյան Գ., «Հայաստանը և մեծ տերությունները», էջ 127) էականորեն տարբերվում էր խորհրդային պատմագիտության այն մոտեցումից, որ իբր խորհրդա-քեմալական հարաբերություններն անվերապահորեն բարեկամական էին: Գալոյանը նշում է, որ Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի հարաբերությունների ձևավորումն ընթանում էր փոխադարձ կասկածամտության մթնոլորտում [23, էջ 113]:

Պրոֆեսոր Ե. Սարգսյանը չի ժխտում Խորհրդային Ռուսաստանի նյութական օգնությունը Թուրքիային՝ դրանով ինքնըստինքյան ընդունելով քեմալա-բոլշևիկյան դաշինքը: Պատմաբանը, սակայն, շեշտադրում է այդ հարցում Թուրքիայի երկդիմի քաղաքականությունը, որը մի կողմից ուղղված էր արևմտյան իմպերիալիզմի դեմ համագործակցությանը, մյուս կողմից՝ Հայաստանի կործանմանը և Անդրկովկասյան երկրամասում Թուրքիայի հաստատվելուն⁴:

Ս. Ալիխանյանն անհեթեթ է համարում այն, որ թուրքերը Սարիղամիշի ուղղությամբ իրենց հարձակումը արդարացնում էին այդ տարածքների վրայով Խորհրդային Ռուսաստանի հետ կապ ստեղծելու հանգամանքով: Նա չի ժխտում, որ անգամ խորհրդային ղեկավար շրջաններում դրան հավատացողներ կային և խիստ քննադատում է վերջիններին: Հեղինակը չի հակառակվում Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողովում Չիչերինի այն կարծիքին, որ Թուրքիայի հարձակումը գուցե սթափեցներ դաշնակցականներին, և նրանք հասկանային, որ հայ ժողովրդի փրկությունը կապված է Խորհրդային Ռուսաստանի հետ բարեկամական հարաբերություններ սկսելու և Անտանտի իմպերիալիստներից հեռանալու հետ [1, էջ 139-140]:

Հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի համահեղինակները (որոնցից է Գ. Գալոյանը) մի կողմից կարծես ժխտում են քեմալա-բոլշևիկյան հարաբերությունների գոյության փաստը. «Պատերազմում կրած պատասխանատվությունն իր վրայից զցելու նպատակով, դաշնակցական կառավարությունը սկսեց աղաղակել Հայաստանի դեմ ուղղված ինչ-որ «համաձայնության» մասին, որն իբր թե գոյություն ուներ խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև» [9, էջ 106]:

Մյուս կողմից նրանք գրում են, որ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը միաժամանակ բանակցություններ էր վարում Մոսկվա ժամանած Անկարայի կառավարության պատվիրակության հետ՝ ձգտելով օգտագործել այդ բանակցությունները Հայաստանի և Թուրքիայի սահմանների հարցը ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքի հիման վրա լուծելու համար և փորձում վերջ տալ այն անորոշ վիճակին, որ

⁴ Ե. Սարգսյանը հետագայում գրած հոդվածում նորովի և ավելի քննադատաբար մոտեցավ հարցին: Վերանայելով նախկինում իր արտահայտած տեսակետները՝ նա գրում է, որ քեմալականների քաղաքական հաջողությանը քիչ չնպաստեցին Հայաստանի հեղկոմի ղեկավար հայ բոլշևիկները [19, էջեր 19-34: 23, էջեր 146-149]:

ստեղծվել էր այդ երկու երկրների միջև: Որպես սկզբնաղբյուր վկայակոչվում է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ Մուստաֆա Քեմալին ուղղված 1920 թ. հունիսի 3-ի Գ. Չիչերինի գրությունը. «Մովետական կառավարությունը հուսով է, որ դիվանագիտական բանակցությունները Ազգային մեծ ժողովին թույլ կտան հաստատել մի կողմից Թուրքիայի, մյուս կողմից Հայաստանի և Պարսկաստանի ճիշտ սահմանները, որ պահանջում են արդարությունը և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը» [9, էջեր 96-97]:

Հատորի հեղինակները, ցավոք, նույնպես ընդունում են այն ձևակերպումը, որ 1920 թ. Թուրքիայում նրա անկախության համար պայքար էր սկսվել օտարերկրյա իմպերիալիստների դեմ⁵: Հետևաբար, քանի որ քեմալականների շարժումն ուղղված էր ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի կատաղի թշնամիների՝ Անտանտի իմպերիալիստների դեմ, Խորհրդային Ռուսաստանը պաշտպանում էր այդ շարժումը: Միաժամանակ հատորում նշվում էր, որ ընդհանուր առմամբ հակաիմպերիալիստական քեմալական շարժումն Անդրկովկասում հետապնդում էր նվաճողական նպատակներ [9, էջ 96]:

Ինչ վերաբերում է տարածաշրջանում եվրոպական և ամերիկյան ներկայությանը, ապա խորհրդային պատմագիտական միտքը հատկապես պնդում էր, որ ամենից առաջ հայ ժողովրդի գլխին կախվել էր ամերիկյան մանդատով բերվող ստրկացման ահավոր սպառնալիքը. ՀՅԴ կառավարությունը շարունակում էր հույսեր կապել Սերի պամանագրի, հետևապես՝ Անտանտի տերությունների ու Ամերիկայի Միացյալ Նահանգների օգնության հետ [1, էջ 107: 4, էջեր 230, 243-244: 2, էջեր 6, 14: 11, էջեր 29-31: 20: 21]:

«Անտանտի և անգլո-թուրքական ինտերվենտների հետ ստոր գործարքի մեջ մտան Անդրկովկասի ժողովուրդների դիտերիմ թշնամիներ դաշնակները, մենշևիկները և մուսաֆաթականները՝ Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը օտարերկրյա զավթիչներին վաճառելու համար» [13, էջեր 32-33],-գրում է Մնացականյանը՝ ստալինյան դարաշրջանի հողվածում՝ ամփոփելով, որ այս ամենի արդյունքում, դաշնակները և ամերիկա-անգլիական իմպերիալիստները 1920 թ. ամռանը և աշնանը նոր դժբախտություններ բերին Հայաստանին՝ առաջին հերթին նկատի ունենալով պատերազմը [12, էջ 96]:

Նրանք արձագանքում են Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման առաջին իսկ օրերին «Կոմունիստ» թերթում լույս տեսած այն դրույթին, թե «Անտանտի արեւելեան քաղաքականութեան ստուեր դարձած՝ Հայաստանի դաշնակցական պետականութիւնը, հասցրեց երկիրը լիակատար սնանկութեան» [8, էջ 2]:

Նշենք, որ խորհրդահայ պատմաբանները թուրք-հայկական պատերազմի նախօրյակի իրադարձությունների լուսաբանման հարցում օբյեկտիվորեն են մեկնաբանում քեմալական Թուրքիայի հակահայկական գործողությունները Հայաստանի նկատմամբ: Նրանց կողմից շեշտվում է պատերազմի՝ թուրքերի կողմից նախապատրաստված լինելու հանգամանքը, Արևելյան Հայաստանը ոչնչացնելու ու հայությանը ֆիզիկապես բնաջնջելու հստակ ծրագիր ունենալը: Դրանով իսկ խորհրդային պատմագրությունը բացահայտում է, որ «հեղափոխական» Թուրքիան հանդես էր գալիս որպես իր նախորդի՝

⁵ Թեև քեմալական շարժումը սկիզբ է առնում 1919թ. հուլիսի 23-ից օգոստոսի 6-ը գումարված Էրզրումի կոնգրեսից:

սուլթանական Թուրքիայի իրավահաջորդն ու ժառանգորդը՝ վերաբացելով պանթուրքիզմի ու պանիսլամիզմի գաղափարաբախտությունը, ապացուցելով, որ հայերի ֆիզիկական ոչնչացումը տեղի էր ունենում պլանավորված՝ որպես պետական քաղաքականություն [5, էջեր 30, 32: 1, էջեր 12, 19-20, 112: 7, էջեր 10, 14-17: 4, էջեր 237, 248: 20: 9, էջեր 96,16,48]:

Թեև այս հարցերում ևս արտահայտվել է կուսակցական, խորհրդայնամետ կողմնորոշումը, ինչը ժամանակի շատ պատմաբանների դրդել է քեմալական շարժման հիմքում դնել դրա հակաիմպերիալիստական և միաժամանակ հակակոմունիստական, Խորհրդային Ռուսաստանի դեմ ուղղված լինելու բնույթը: Ընդգծելով թուրքական արշավանքի վտանգավորությունն ամբողջ կովկասյան տարածաշրջանի համար՝ Ե. Սարգսյանը թուրք օկուպանտների հարձակումը ներկայացնում էր որպես նախնառաջ ձգտում՝ «...վերացնելու ամեն ինչ, ինչը հիշեցնում էր խորհրդային իշխանության մասին, բոլշևիկների մասին» [18 էջ 30]: Կարծում ենք, նման քայլը կարող էր հանդիսանալ միայն որպես թուրքերի հեռահար նպատակ:

Խորհրդային պատմագետներից ոմանք, օրինակ՝ Ս. Ալիխանյանը, Ս. Կարապետյանը, ճշմարտացիությամբ մոտենալով հարցին, սխալ են համարում թուրք-հայկական պատերազմի ամբողջ մեղքը բարդել դաշնակցականների վրա և անտեսել քեմալականների գավթողական քաղաքականությունը, և համոզմունք են հայտնում, որ պատերազմն սկսել է թուրքական կողմը [1, էջ19: 7, էջեր 21-25]: Նրանք իրավացիորեն գրում են, որ Թուրքիայի արշավանքը Հայաստանի դեմ իր էությամբ, նպատակներով դուրս էր գալիս հայ-թուրքական հարաբերությունների շրջանակներից և սպառնալիք էր ոչ միայն Հայաստանի, այլև՝ ամբողջ Անդրկովկասի, ինչպես նաև Խորհրդային Ռուսաստանի համար:

Ե. Սարգսյանը և Ռ. Սահակյանը իրենց համահեղինակային աշխատության մեջ միանգամայն օբյեկտիվորեն մերժում են «ստալինյան այն միակողմանի գնահատականը», թե Անտանտի հրահանգով դաշնակները ձեռնարկեցին պատերազմ Թուրքիայի դեմ (տե՛ս Ի. Վ. Ստալին, Երկեր, հ. 4, էջ 458): Նրանք իրավացիորեն նշում են, որ Ստալինի այս գնահատականը կրկնվել է այդ շրջանի պատմությանը նվիրված բազմաթիվ աշխատություններում, որոնց հեղինակները անտեսում են քեմալականների ագրեսիվ պլանները, Հայաստանի գոյությանը իսպառ վերջ դնելու նրանց ծրագիրը [16, էջ 48]:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Այսպիսով, խորհրդահայ պատմագետները, հիմնականում անտեսելով Խորհրդային Ռուսաստանի կողմից Թուրքիային տրվող ռազմական և նյութական աջակցությունը, շեշտադրում են վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու և Հայաստանը թուրքական վերջնական նվաճումից ու ֆիզիկական բնաջնջումից փրկելու Խորհրդային Ռուսաստանի պատրաստակամությունը:

Նախապատերազմյան իրադարձությունների ոչ հայանպաստ ընթացքը նրանց կողմից մեծ մասամբ ներկայացվում է որպես միայն դաշնակցական կառավարության կողմից իրականացվող սխալ քաղաքականության արդյունք, նրանց՝ հակախորհրդային դիրքորոշման, Հայկական հարցի լուծման ճանապարհին խորհրդային առաջարկու-

թյուններից հրաժարվելու և Սևրի պայմանագրի ազգակործան քաղաքականությունը որդեգրելու, Թուրքիայի հետ անմիջական հարաբերություններ կառուցելու հետևանք:

Այդ ամենի պատճառով, ըստ նրանց, 1920 թ. աշնանը հայ ժողովուրդը կանգնեց թուրքական ոչնչացման վտանգի առաջ:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. Ալիխանյան Ս. *Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում*: Երևան: «Հայաստան» հրատ.: 1966: 412 էջ:
2. Ալիխանյան Ս. Գ. Կ. *Օրջոնիկիձեն և սովետական կարգերի հաստատումը Հայաստանում*: Երևան: ԳԱ հրատ.: 1974: 223 էջ:
3. Գալոյան Գ. *Հայաստանը և մեծ տերությունները*: Երևան: ԳԱ «Գիտություն» հրատ.: 1999: 539 էջ:
4. Եսայան Ա. *Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը*: Երևան: «Միտք» հրատ.: 1965: 374 էջ:
5. Չոհրաբյան Է. *Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները*: Երևան: «Զանգակ-97» հրատ.: 1979: 344 էջ:
6. Խուրշուդյան Լ. *Սովետական Ռուսաստանը և Հայկական հարցը*: Երևան: «Հայաստան» հրատ.: 1977: 210 էջ:
7. Կարապետյան Ս. *1920 թ. թվականի հայ-թուրքական պատերազմը և Սովետական Ռուսաստանը*: Երևան: «Հայաստան» հրատ.: 1965: 91 էջ:
8. «Կոմունիստ» // Երևան, դեկտեմբեր: N 5:
9. Հայ ժողովրդի պատմություն: Երևան: ԳԱ հրատ.: Հ. 7: 1967: 654 էջ:
10. *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)*: Խմբ. Ջ. Կիրակոսյան: Երևան: «Հայաստան» հրատ.: 1972: 809 էջ:
11. Հովհաննիսյան Կ. *Մայիսյան ապստամբությունը Հայաստանում* // «Պատմաբանասիրական հանդես»: Երևան: թիվ 2: 1960: էջեր 28-41:
12. Մնացականյան Ա. *Ամերիկյան ագրեսորների և նրանց գործակալների դեմ հայ ժողովրդի միացյալ պայքարի պատմությունից*, Երևան, ԵՀ հրատ.: 1953: 107 էջ:
13. Մնացականյան Ա. *Ամերիկյան ինգերիստիզմի 1917-1920 թթ. սովետական իշխանության դեմ կազմակերպած ագրեսիայի ձախողումը* // «Տեղեկագիր»: N 12: Երևան: 1951: էջեր 17-39:
14. Մնացականյան Ա. *Ռևոլյուցիան Անդրկովկասում և Ռուսաստանի պատվիրակները (1917-1921)*: Երևան: «Հայաստան» հրատ.: 1961: 548 էջ:
15. Սարգսյան Ե. Աբեղյան Խ., Սարգսյան Ա. Բ. *Լեզրանի միսիան* // «Բանբեր Հայաստանի արխիվների»: թիվ 3: Երևան: 1967: էջեր 21-104:
16. Սարգսյան Ե., Սահակյան Ռ. *Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ*: Երևան: «Հայպետհրատ»: 1963: 96 էջ:
17. Սարգսյան Ե. *Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918*: Երևան: «Հայաստան» հրատ.: 1964: 536 էջ:
18. Սարգսյան Ե. Վ. Բ. *Լենինը և հայ ժողովրդի ազատագրումը* // «Բանբեր Հայաստանի արխիվների»: թիվ 1: Երևան: 1970: էջեր 27-36:
19. Սարգսյան Ե. *Քեմալականների 1920-1921 թթ. արշավանքն Անդրկովկաս և 1921 թ. մարտի 16-ի Մուկուլյան պայմանագիրը* // «Լրաբեր հասարակական գիտությունների»: N 1: Երևան: 1992: էջեր 19-34:
20. Սիմոնյան Հր. *Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարահոսությունը և քաղաքականությունը*: Երևան: «Հայաստան» հրատ.: 1986: 564 էջ:
21. Սիմոնյան Հր. *Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից*: Երևան: «Հայաստան» հրատ.: 1991: 632 էջ:
22. Վարդապետյան Ա. *Հայաստանի կարմիր բանակը քաղաքացիական կռիվներում 1920-1921 թթ.* Երևան, ԵՀ հրատ.: 1980: 170 էջ:

23. Քաղյան Ս. Հայաստանի առաջին Հանրապետության պատմության պատմագրություն: Երևան: 2003: ԵՀ հրատ.: 113 էջ:
24. *Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества*, документы и комментарий/ ред. и сост. профессор Ю. Г. Барсегов. <http://old.genocide.ru/lib/barseghov/responsibility/v2-1/0648-0685.htm#659>. Գիտելի է՝ 03. 12. 2022.

References

1. Alighanyan S. The role of Soviet Russia in the liberation of the Armenian people [*Sovetakan Hayastani dery hay joghovrdi azatagman gorcum*], Yerevan: «Hayastan» publ., 1966. 412 p. (In Armenian)
2. Alighanyan S. G. K. Ordzonikidze and establishment of Soviet orders in Armenia [*G. K. Orjonikidzen ev sovetakan kargeri hastatumy Hayastanum*], Yerevan: «Izd. GA». 1974. 223 p. (In Armenian)
3. Galoyan G. Armenia and the great states [*Hayastany ev mec terutyunnery*], Yerevan: «GA Gitutyun» publ., 1999. 539 p. (In Armenian)
4. Yesayan A. Arenian question the international diplomacy [*Haykakan Harcy ev mijazgayin divanagitutyuny*], Yerevan: «Mitq» publ., 1965. 374 p. (In Armenian)
5. Zohrabyan E. Soviet Russia and Armenian-Turkish relations [*Sovetakan Rusastany ev haj-turkakan harabertyunnery*], Yerevan: «Yerevani Hamalsaran» publ., 1979. 344 p. (In Armenian)
6. Churshudyan L. Soviet Russia and Armenian question, [*Sovetakan Rusastany ev Haykakan Harcy*], Yerevan: «Hayastan» publ., 1977. 210 p. (In Armenian)
7. Karapetyan S. Armenian-turkish war in 1920 and Soviet Russia [*1920 tvakani hay-turkakan paterazmy ev Sovetakan Rusastany*], Yerevan: «Hayastan» publ., 1965. 91 p. (In Armenian)
8. «Komunist» // Yerevan: 1920. December. N 5. (In Armenian)
9. The history of Armenian people [*Hay joghovrdi patmutyuy*], Yerevan: «Izd. GA». volume 7. 1967. 654 p. (In Armenian)
10. Kirkakosyan J. Armenia in the documents of international diplomacy and Soviet forin political [*Hayastan mijazgayin divanagitaka ev svetaka artaqin qahxaqaqanutyany pastatgherum*], Yerevan: «Hayastan» publ., 1972. 809 p. (In Armenian)
11. Hovhannisyanyan K. May Uprising in Armenia, [*Mayisyan apstambutyuny Hayastanum*] // «Historical-philological journal», Yerevan: 1960. v. 2. pp. 28-41. (In Armenian)
12. Mnacakanyan A. From the history of the struggle of the Armenian people against the American aggressors and their agent [*Amerikyan agresoneri ev nranc gorcakanleri dem hay jwghovrdi mghac pajqari patmutyunic*], Yerevan: «Yerevan Pet hrat.» publi., 1953. 107 p. (In Armenian)
13. Mnacakanyan A. The failure of the aggression of American imperialism against the Soviet government in 1917-1920 [*Amerikyan imperializmi 1917-1920 tt. Sovetakan ishghanutyany dem kazmakerpac agresiyai dzaghoghummy*]//«Newsletter», Yerevan, 1951, v. 12, 17-39pp. (In Armenian)
14. Mnacakanyan A. The revolution in Transcaucasia and the delegates of Russia (1917-1921), [*Revolutian Andrkovkasum ev Rusastani patviraknery (1917-1921)*], Yerevan: «Izd. Haypethrat» publi., 1961: 548 p. (In Armenian)
15. Sargsyan E. Abeghyan Gh., Sargsyan A., B. Legrand's mission, [*Legrani misian*] //«Bulletin of Armenan Archives», Yerevan, 1967, v. 3, 21-104 pp. (In Armenian)
16. Sargsyan E., Sahakyan R. The changes of History of the New Period of the Armenian people in Turkish Historiography [*Hay joghovrdi nor shrjani patmutyany nengapoghummy turq patmagrutyan mej*], Yerevan: 1963. «Haypethrat» publ., 96 p. (In Armenian)
17. Sargsyan E. Turkey and its policy of conquest in Transcaucasia 1914-1918 [*Turqian ev nra nvacoghakan qaraqakanutyuny*], Yerevan: «Izd. Hayastan». 1964. 536 p. (In Armenian)
18. Sargsyan E. V. I. Lenin and the liberation of the Armenian people [*Leniny ev hay jochovrdi azatagrumy*]// «Bulletin of Armenan Archives», Yerevan, 1970, v. 1, 1970. 27-36 pp. (In Armenian)
19. Sargsyan E. Kemalists of 1920-1921 invasion of Transcaucasia and Moscow Agreement of March 16, 1921, [*Qemalakaneri 1920-1921 tt. Arshavanqn Andrkovkas ev 1921 t. marti 16-I Moskovyan paymanagiry*] // Yerevan, «Herald of social sciences», 1992, v 1, 19-34 pp. (In Armenian)

20. Simonyan Hr. The ideology and the politics of the Turkish national bourgeoisie [*Turq azgayin burjuaziayi gaghaparaghosutyuny ev qaxaqakanutyuny*], Yerevan: 1986, «Hayastan» publ., 564 p. (In Armenian)
21. Simonyan Hr. From the history of Turkish-Armenian relations [Tutq-haykakan haraberutyunneri patmutyunic]. Yerevan: 1991, «Hayastan» publ., 632 p. (In Armenian)
22. Vardapetyan A. The Red Army of Armenia in civil battles in 1920-1921 [Hayastani karmir banaky qaxaqaciakan krivnerum 1920-1921 tt.], Yerevan: 1980, «Yerevani Hamalsaran» publ., 170 p. (In Armenian)
23. Qaryan S. The historiography of the history of the Firste Repubik of Armenia [*Hayastani arajin Hanrapetutyun patmutyan patmagrutyun*], Yerevan: 2003. «GA Gitutyun» publ., 113 p. (In Armenian)
24. *Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарии*/ ред. и сост. профессор Ю. Г. Барсегов, т. 2, ч. 1. М., 2003, 50-51 с..
<http://old.genocide.ru/lib/barseghov/responsibility/v2-1/0648-0685.htm#659>. Дата Цитирования.-03. 12. 2022. Genozid armian. Otvetstvennost Turcii I obyazatelstvo mirovovo soobshestwa, dokumenti i komentarii, 2003. (In Russian)

Ընդունվել է / Принята / Received on: 22.08.2023

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: 23.09.2023

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: 27. 11. 2023

Տեղեկություններ հեղինակի մասին

Նարինե Մնացականի ՄՈՎՍԵՍՅԱՆ՝ ԳԱԱ պատմության
ինստիտուտի ավագ լաբորանտ, Երևան, ՀՀ,
Էլ. հասցե՝ narinem2006@gmail.com. [https:// Orcid.org 0009-0004-2506-530X](https://Orcid.org/0009-0004-2506-530X)

Narine Mnacakan MOVSESYAN: Senior Laboratory Assistant,
Institute of History of NAS, Yerevan, RA,
e-mail: narinem2006@gmail.com [https://Orcid.org 0009-0004-2506-530X](https://Orcid.org/0009-0004-2506-530X)

Нарине Мнацакановна МОВСЕСЯН: старший лаборант
Института истории НАН, Ереван, РА,
эл. адрес: narinem2006@gmail.com [https://Orcid.org 0009-0004-2506-530X](https://Orcid.org/0009-0004-2506-530X)

ՀՏԴ՝ 93/94 (093)

DOI:10.52971/18294316-2023.26.2-75

ՀԱՅ ՈՐԲԵՐԻ ՀԻՄՆԱՆԻՐՆԵՐԻՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ «ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐ»,
«ՃԱԿԱՏԱՄԱՐՏ» ԵՎ «ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԶԱՅՆԸ. ԺԱՄԱՆԱԿ»
ՕՐԱԹԵՐԹԵՐԻ ԷՋԵՐՈՒՄ¹

Մարիամ Վ. Հովսեփյան

ԳԱԱ պատմության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. «Ճակատամարտ», «Վերջին լուր» և «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ» օրաթերթերն անդրադարձել են հայ որբերի հիմնախնդիրներին: Այդ պարբերականները հրատարակվել են XX դ. առաջին կեսին Կ. Պոլսում: Լրագրողների ուշադրության կենտրոնում են եղել գաղթականների և ծնողագուրկ երեխաների կարիքները: Դրանց թվում էին կացարանի և կենցաղային անհրաժեշտության պարագաների, հագուստի և ուտելիքի բացակայությունը, առողջական խնդիրները: *Մեթոդներ և նյութեր.* Հոդվածը գրվել է պատմահամեմատական վերլուծության մեթոդով: *Վերլուծության ընթացքում* հաշվի են առնվել առկա գիտական գրականությունը, ժամանակակիցների հուշերը և մամուլի նյութերը: *Այս թեմայով* մեզանում առաջին անգամ է կատարվում ամբողջական և ամփոփ ուսումնասիրություն: Եզրահանգումները կարևոր են հատկապես այս առումով: Հոդվածում առկա է աղբյուրագիտական բավականաչափ նյութ Հայոց ցեղասպանության տարիներին հայ որբերի վիճակի, խնդիրների և նրանց համար կատարված աշխատանքի մասին: Այդ փաստագրական տեղեկությունները վերցված են մասնավորապես ժամանակի մամուլի հրատարակումներից: **Բանալի բառեր՝** որբեր, գաղթականներ, որբանոցների հիմնախնդիրներ, «Ճակատամարտ» օրաթերթ, «Վերջին լուր» օրաթերթ, «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ» օրաթերթ, ռեպորտաժներ որբանոցներից:

¹ Հոդվածը՝ որպես զեկուցում, ներկայացվել է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի կազմակերպած «Ալեքսանդրապոլ. գթասրտության քաղաք» միջազգային գիտաժողովին (19 մայիսի, 2023, Գյումրի):

Բնչպես հղել՝ Հովսեփյան Մ. Հայ որբերի հիմնախնդիրների անդրադարձը «Վերջին լուր», «Ճակատամարտ» և «Ճողովուրդի ձայնը. Ճամանակ» օրաթերթերի էջերում // ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Ն. 2 (26): 75-85 էջեր: DOI: 10.52971/18294316-2023.26.2-75

**THE REFERENCE TO THE PROBLEMS OF ARMENIAN ORPHANS
IN THE PAGES OF "VERJIN LUR", "CHAKATAMART" AND
"ZHOGHOVURDI DZAYNY. ZHAMANAK" DAILIES**

Mariam V. Hovsepyan

Institute of History of NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: "Chakatamart", "Verjin Lur" and "Zhoghovurdi dzayny: Zhamanak" dailies addressed the problems of Armenian orphans. Those periodicals were published in Constantinople in the first half of the 20th century. The needs of migrants and orphaned children were in the center of attention of journalists. Among them were the lack of shelter and household items, clothing and food, health problems. **Methods and materials:** Historical and comparative method was implemented. **Analysis:** The analysis covered the available scientific literature, memoirs of contemporaries and press materials. **Results:** For the first time in Armenia, a comprehensive study on this topic is being conducted. Conclusions are important especially in this regard. This article provides ample documentary and scientific evidence regarding the plight of Armenian orphans during the Armenian Genocide, including their challenges and the efforts made on their behalf. This documentary information is taken from press publications of that time.

Key words: *orphans, migrants, problems of orphanages, "Chakatamart" daily newspaper, "Verjin Lur" daily newspaper, "Zhoghovurdi Dzayny:Zhamanak" daily newspaper, reports from orphanages.*

Citation: Hovsepyan M. *The Reference to the Problems of Armenian Orphans in the Pages of "Verjin lur", "Chakatamart" and "Zhoghovurdi dzayny. Zhamanak" dailies.* // "Scientific works" of SCAS NAS RA. Gyumri, 2023. V. 2 (26). pp. 75-85. DOI:10.52971/18294316-2023.26.2-75

**ОТРАЖЕНИЕ К ПРОБЛЕМАМ АРМЯНСКИХ СИРОТ НА
СТРАНИЦАХ ГАЗЕТ "ВЕРДЖИН ЛУР", "ЧАКАТАМАРТ"
И "ЖОГОВУРДИ ДЗАЙН: ЖАМАНАК"**

Мариам В. Овсепян

Институт истории НАН, РА, Армения

Аннотация

Введение: Ежедневные газеты "Чакатамарт", "Верджин лур" и "Жоговурды дзайн: Жаманак" обращались к проблемам армянских сирот. Эти периодические издания опубликовались в Константинополе в первой половине XX века. Нужды мигрантов и детей-сирот оказались в центре внимания журналистов. Среди них отсутствие крова и предметов быта,

одежды и продуктов питания, проблемы со здоровьем. *Методы и материалы:* Статья написана с использованием метода историко-сравнительного анализа. *Анализ:* При анализе учитывалась имеющаяся научная литература, воспоминания современников и материалы прессы. *Результаты:* В Армении впервые на эту тему проводится комплексное и всестороннее исследование. Выводы особенно важны в этом отношении. В статье достаточно документально-научного материала о положении армянских сирот во время Геноцида армян, их проблемах и проделанной для них работе. Эти документальные сведения взяты из публикаций прессы того времени.

Ключевые слова: *дети-сироты, мигранты, проблемы детских домов, ежедневная газета "Чакатамарт", ежедневная газета "Верджин лур", ежедневная газета "Жоговурды дзайн: Жаманак", репортажи из детских домов.*

Как цитировать: Овсепян М. *Отражение к проблемам армянских сирот на страницах газет "Верджин лур", "Чакатамарт" и "Жоговурды дзайн: Жаманак" // "Научные труды" ШЦАИ НАН РА. Гюмри, 2023. Т. 2 (26). сс. 75-85. DOI: 10.52971/18294316-2023.26.2-75*

ՆԱԽԱԲԱՆ. Հայոց ցեղասպանության տարիներին այն վերապրողների ուշադրության կենտրոնում առաջնահերթ են եղել ծնողազուրկ դարձած մանուկների և դեռահաս որբերի խնդիրները: Դրանցով հիմնականում զբաղվել են դեռևս մնացած ազգային կառույցները, որոնք առավելապես կենտրոնացած էին Օսմանյան Թուրքիայի մայրաքաղաքում: Մուղրուսի զինադադարից հետո Կ. Պոլսում հրատարակվող հայկական պարբերականները մշտապես անդրադարձել են հայ որբերի փրկության, նրանց ապրելակերպի, հայեցի դաստիարակության և ազգային դիմագծի պահպանման խնդիրներին: Այս քննության շրջանակներում փորձ կարվի ներկայացնելու 1918-1923 թվականների կտրվածքով առավել բարձր վարկանիշ ունեցած ՀՅԴ Արևմտյան բյուրոյի «Ազատամարտ» պաշտոնաթերթի իրավահաջորդ, բայց ստեղծված հանգամանքների բերումով արդեն ոչ այդ կուսակցության խոսափող «Ճակատամարտ», ռամկավարների ոչ պաշտոնական մամուլի օրգան «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ» և չեզոք «Վերջին լուր» օրաթերթերի դիրքորոշումներն ու մոտեցումները հիշյալ հարցերի վերաբերյալ: Որբախնամ աշխատանքներին դրանք անդրադարձել են գրեթե բոլոր համարներում, բայց առավել ակտիվ են եղել քննարկումներն այդ թեմայի շուրջ 1921-1922 թվականներին: 1922 թվականին անգամ ռեպորտաժների շարքեր են տպագրվել Կ. Պոլսում և նրա շրջակայքում գտնվող հայկական որբանոցներից, որոնցում պատկերացում են տվել զինադադարից հետո որբանոցներում կատարված-չկատարվածի և որբերի առջև ծառայած խնդիրների մասին: Առաջին երկու պարբերականները արտահայտել են կուսակցական մոտեցումներ այդ հիմնահարցերի վերաբերյալ, իսկ երրորդ օրաթերթն ավելի ազատ էր իր դիրքորոշումներում և արտացոլում էր հասարակության բոլոր շերտերի կարծիքներն ու տեսակետները:

Արևմտահայ հատվածներում գործող որբանոցների առջև ծառայած խնդիրները՝ պոլսահայ թերթերի ուշադրության կենտրոնում

«Ճակատամարտ» օրաթերթը ոչ միայն պաշտպանել է տարագրյալ հայերի շահերն ու իրավունքները, այլև պատկերացում է տվել նրանց կյանքի և կենցաղի մասին՝ առավելապես կենտրոնանալով Կ. Պոլսում և դրա շրջակայքում հիմնված մանկատների

խնդիրների լուսաբանման վրա: Նպատակը հանրության ջանքերի համախմբումն էր՝ դրանց լուծման ուղղությամբ համատեղ ծրագրեր կազմելու և իրականացնելու առումով: 1922թ. մի խումբ լրագրողների կողմից պատրաստվող՝ որբանոցներից բերված ռեպորտաժների շարքն ամփոփված էր «Ինչպե՞ս կապրին մեր որբերը» խորագրի ներքո:

«Ճակատամարտի» ռեպորտաժներից մեկում ներկայացվում էր Գուլեղի հայկական որբանոցի վիճակը [5, N 963]: Այստեղ ապրում էին 930 հայ որբ երեխա և 25 ուսուցիչ [5, N 963]: Որբանոցին հատկացրել էին Գուլեղի նախկին զինվորական վարժարանի շենքը: «Ի՛նչ տխուր է պատկերը, կարելի չէ առանց վրդովումի և կսկիծի դիտել այդ բազմութիւնը, որ կատարեալ թշուառութեան պատկեր մը կը ներկայացնէ», - գրում էր թերթի լրագրողը [5, N 963]: Նրա խոսքերով՝ որբերը դեղնած դեմքեր ունեին, բայց դա ոչ թե ցրտից էր, այլ «զգալի էր, որ անոնք կը ծիրիին» [5, N 963]: Շատերը կմախքացած էին: Որբանոցի ընդհանուր մթնոլորտը թղթակցին մեկ անգամ ևս համոզել էր, որ պետական և ազգային մարմիններն աչքաթող էին արել հայ որբուկներին: Լրագրողը սրտի ցավով նկատում էր. «Տղոց վերմակները չուլեր են, որոնք կը գործածուին ախոռները՝ ձիերը ծածկելու համար: Անկողիները խոտեր են, բայց փտած են թէ՛ վրայի չուլը և թէ՛ ներսի խոտը»: Անկողիների մեջ ոջիլն էր վխտում: Այս որբանոցում սնունդը չափավոր էր, սակայն՝ անորակ և անբավարար քանակով. «Տղաքը երբեմն անօթի կը մնան, բացարձակ իմաստով, և կերակուր չեն ուտեր, որովհետեւ ուտուելիք բան չըլլար» [5, N 963], - կարդում ենք ռեպորտաժում:

Ռեպորտաժ կար Էսայան կամ Բերայի որբանոցից [5, N 980]: Այստեղ բնակվող 90 որբերի կենսապայմանները համեմատաբար տանելի էին: Երեխաները բոլորն էլ առողջ էին, կայտառ ու աշխույժ, կոկիկ, մաքուր և կրում էին նոր հագուստներ [5, N 980]:

Գատրգյուղի ազգային որբանոցը Կ.Պոլսում բացված հայկական որբանոցների մեջ ամենաբարվոք վիճակում էր գտնվում [5, N 1001]: Դա պայմանավորված էր այդ թաղի հայության բարեկեցիկ վիճակով: Այդտեղ հավաքված էին միայն տղա որբեր: 6-17 տարեկան այդ 106 որբերն իրենց կրթությունը ստանում էին Արամյան վարժարանում: 2 որբի 1 դասագիրք էր հատկացվում: Կայտառ ու կարմրաթուշ էին որբերը. «Բոլորի երեսին գոհունակութեան ժպիտ մը կը ցոլայ: Երջանիկ կը թուին և իրաւունք ալ ունին, որովհետեւ որբանոցը օժտուած է երախաներուն պահանջները գոհացնող բոլոր յարմարութիւններով» [5, N 1001]:

«Վերջին լուր» օրաթերթի առաջին էջերում էին տեղ գտնում որբերին վերաբերող հոդվածները և հարցազրույցները: Պարբերականն անդրադառնում էր արևելահայ և արևմտահայ հատվածներում տարբեր դժվարություններ հաղթահարելու գնով գոյատևող ծնողազուրկ դարձած հայ մանուկների տարաբնույթ խնդիրներին: 1922 թվականին լրագրող Միքայել Շամտանջյանը ««Վերջին լուր»-ի պտույտը ազգային հաստատությանց մեջ» և «Ինչպես կգործենք մենք» խորագրերով ռեպորտաժների երկու շարք էր սկսել այդ թեմայով: Դրանցում նա օբյեկտիվ պատկերացում էր տվել ազգային պատկան մարմինների կատարած որբախնամ աշխատանքում նկատվող հիմնական թերությունների և որբանոցների բացերի մասին: Այս տեսակետից կարևոր էին Կ. Պոլսի 4

արվարձաններում՝ Խազյուղում, Պալաթում, Պեշիկթաշում և Սկյուտարում Ազգային խնամատարության կողմից ֆինանսավորվող աղջիկների որբանոցների խնդիրների վերհանմանը նվիրված ռեպորտաժները:

Պեշիկթաշի որբանոցում սնունդը գոհացուցիչ էր, իսկ բժշկական հսկողությունը լրագրողը ձևական էր համարում [6, N 2438]: Թերացումներ էր նկատել նաև որբերի հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքներում. «Ազգային խնամոց յանձնուած որբերը պետք է դաստիարակուին այնպես, ինչպես կը փափաքինք, որ ըլլայ մեր վաղուան սերունդը: Խնամատարութիւնը բնաւ այս պարագան նկատի չառնէր» [6, N 2438]: Շամտանջանը փաստում էր, որ Ազգային խնամատարության կենտրոնը հաշվի չէր առել ամիսներ առաջ այդ որբանոցի խնամակալների կողմից իրեն ներկայացված այն դիմումները, որոնցում ներկայացված էին հաստատության կարիքները. «Արդիւնքը ոչինչէն աւելի բան մը չէ եղած» [6, N 2438]:

Հետաքրքիր տեղեկություններ էր պարունակում Պեշիկթաշի մանկանոցից բերված ռեպորտաժը: Այնտեղ կային թվային տվյալներ 3 տարեկանից փոքր երեխաների արհեստական կերով կերակրմանը և առողջության պահպանմանն առնչվող հարցերի վերաբերյալ: Ցավով էր նշվում, որ մայրական կաթ չուտելու և վատ առողջական վիճակում մանկատուն բերված ընկեցիկ այս երեխաների մեծ մասը մահանում էր [6, N 2420]:

«Ժողովուրդի ձայնը. Ժամանակ» օրաթերթում նույն ժամանակահատվածում տպագրված ռեպորտաժները, թղթակցություններն ու վերլուծական հոդվածները փաստում էին բազմաթիվ խնդիրների առկայությունը պոլսահայ որբանոցներում: Պարբերականի խմբագրակազմը կարծում էր, որ ժամանակն է դրանք շտկել ու վերացնել [4, N 1069]: «Ասոնց գլխաւորներէն մէկն է որբերու ճերմակեղէնի խնդիրը: Թէ՛ մաքրութեան համար և թէ՛ յառաջիկայ ամառուան մէջ հիւանդութիւնները արգիլելու համար ճերմակեղէններու թիւը աւելցնելու միջոցներուն վրայ կը խորհուի հիմա: Շատ տեղեր որբերը հազիւ մէկ-մէկ ձեռք ճերմակեղէն ունին», - այս մտահոգություններն էին թերթում արձանագրել Ազգային խնամատարության անդամները, երբ այցելել էին Գուլեղիի և «Եւտի-գուլեղի» որբանոցները [4, N 1069]: Ազգային խնամատարության ելևմտական հանձնաժողովի ներկայացուցիչները հանդես էին եկել հետաքրքիր և ինքնատիպ առաջարկով՝ կոչ անելով գնել «Հայ որբերու ի նպաստ» գրությամբ լուցկիներ, որոնց վաճառքից ստացված եկամուտն ուղղվելու էր որբախնամ ծրագրերի իրագործմանը [4, N 1069]: Նշվում էր, որ այդ լուցկիներն իրենց որակով և մատչելի գնով գրավիչ էին լինելու բոլոր հայերի համար, քանի որ նվիրական նպատակի համար էին վաճառվելու [4, N 1069]:

«Ժողովուրդի ձայնը. Ժամանակ» օրաթերթը թարմ տվյալներ էր հրապարակում նաև Արևմտյան Հայաստանում և նախկին հայաշատ բնակավայրերում գտնվող հայ տարագիրների և որբերի դրության վերաբերյալ: Հիշատակենք այն կարևոր հարցազրույցը Սամսոնում, Մարզվանում, Սվազում, Կեսարիայում, Թալասում, Կոնիայում, Էնկյուրիում գործող հայկական որբանոցներ այցելած բարեսիրական կազմակերպություններից մեկի ներկայացուցչի հետ, որը ցանկացել էր անանուն մնալ պարբերականի էջերում: Նա «մասնաւոր պաշտօն ունէր քննելու հայ որբանոցներու իսկական կացութիւնը» [4, N 760]: Նրա կարծիքով՝ բոլոր այդ քաղաքների որբանոցներում սպասվածից

ավելի գոհացուցիչ էին եղել որբերի կենսապայմանները, ինչը նա պայմանավորել էր Ամերիկյան նպաստամատույցի ու տեղերում գործող բարեսիրական կազմակերպությունների աշխատանքով [4, N 760]: Հատկապես կարևորել էր հայ կաթոլիկների, լուսավորչականների ու բողոքականների համատեղ որբախնամ ծրագրերը:

«Վերջին լուր», «Ճակատամարտ» և «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ» օրաթերթերն անդրադարձել էին նաև որբերին տրվող կրթության որակին ու մակարդակին: Պարբերականները մի կողմից լիովին հասկանում էին, որ ցեղասպանությունից հետո բավական դժվար կամ գրեթե անհնար էր վերականգնել հայկական կրթական համակարգը, բայց մյուս կողմից՝ չէին կարողանում հաշտվել որբերի կրթական գործի բարձիթողի վիճակի հետ:

Հայաստանի առաջին հանրապետության և Խորհրդային Հայաստանի որբախնամ աշխատանքների անդրադարձը պոլսահայ պարբերականների էջերում

1918 թ. հուլիսին Հայաստանի առաջին հանրապետությունում գործում էր 35 որբանոց՝ ավելի քան 2250 որբերով, իսկ Վրաստանում՝ 27 որբանոց՝ ավելի քան 1950 որբերով [1, էջ 14]: Որբանոցների կարիքները հոգում էին մի շարք բարեգործական կազմակերպություններ, ի թիվս որոնց՝ «Եղբայրական օգնության» կոմիտեն, Մոսկվայի Հայկական կոմիտեն, Կովկասի Հայկական բարեգործական ընկերությունը, Անգլիական բարեգործական ընկերությունը, Ամերկումը և այլ կազմակերպություններ [1, էջ 80]:

Որբերի և ընդհանրապես գաղթականների խնդիրներով զբաղվում էր պետական 4 կառույց: Դրանք էին՝ Հայաստանի Ազգային ժողովի գաղթականության հարցերի մշտական հանձնաժողովը, խնամատարության ու աշխատանքի, ներքին գործերի և հանրային կրթության նախարարությունները [2, էջ 62]: Արդեն 1918 թ. ընդունվել էին մի շարք օրենքներ գաղթականների և որբերի առջև ծառայած կենսական խնդիրները լուծելու նպատակով: Պետությունը փորձում էր սովի, համաճարակների, պատերազմական իրավիճակում հնարավորինս հոգալ գաղթականների և որբերի ներգաղթի, կեցության, խնամքի, աշխատանքով ապահովվածության, կրթության և առողջության պահպանման հարցերը [2, էջ 62]:

1919 թ. ապրիլին Հայաստանի խնամատարության և աշխատանքի նախարարությունը երկրի տարածքում գտնվող որբանոցներում և այլ վայրերում, այդ թվում՝ փողոցներում ապրող որբերի խնամքը հանձնում է Ամերկումին՝ Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեին [1, էջեր 4-6]: Ամերկումի խնամքին հանձնված հայ որբերի կրթության և դաստիարակության խնդիրները դրվում են ՀՀ խնամատարության և աշխատանքի նախարարության վրա [1, էջ 80]: 1919 թ. հունիսի 5-ին ՀՀ Նախարարների խորհրդի որոշմամբ Ամերկումին հանձնված որբանոցների սաների կրթության և դաստիարակության գործառույթը դրվում է հանրային կրթության նախարարության վրա [1, էջ 88]:

Հայաստանում սոցիալական պայմանների որոշակի բարելավմանը զուգընթաց՝ կառավարությունը որոշում է Ամերկումի խնամքին հանձնված որբանոցները կամ գոնե դրանց մի մասը վերցնել իր խնամքի տակ, որպեսզի հայ որբերը չենթարկվեին ամերիկյան դաստիարակության և վարք ու բարքի, նաև՝ կրոնագաղափարական ազդեցության

նր: Արդեն 1919 թ. հուլիսին Հայաստանը այդ կազմակերպությունից հետ է վերցնում 25 որբանոց ու մանկական 4 հիվանդանոց [1, էջ 90]: Աշնանը Հայաստանի որբանոցներում (թե՛ պետական, թե՛ Ամերկումի) գտնվող որբերի թիվը 23.110 էր [1, էջ 97]:

«Վերջին լուրը» 1922 թ. ապրիլի 26-ին տեղեկացնում էր, որ Ալեքսանդրապոլի մոտ ստեղծվել էր որբերի քաղաք, որտեղ Մերձավոր Արևելքի նպաստամատույց ընկերության շնորհիվ գործում էին որբանոցներ [6, N 2472]: «Որբերու այդ քաղաքին մեջ, որ աշխարհի ամենէն մեծ որբանոցը կրնայ կոչուիլ, 64 շէնքեր կան, ուր այժմ 5000է աւելի հայ որբեր պատսպարուած են: Ունին 800 բնիկներէ պաշտօնէութիւն մը՝ ուսուցիչ, հիւանդապահ, գրագիր: Բոլոր այս հաստատութեանց ծախքը կը հայթայթէ Ամերիկեան Նիր Իսթ Գըլիֆը», -կարդում ենք այդ արտատպված թղթակցության մեջ [6, N 2472]: Նշվում էր, որ ամերիկյան հովանավոր այս կազմակերպությունը վերաշինել էր այդտեղ գտնվող մի քանի շէնք, որոնք 20 տարի առաջ կառուցվել էին ռուս զինվորների համար իբրև զորանոցներ, բայց ավերակների էին վերածվել տարիների ընթացքում: Դրանք Խորհրդային Հայաստանի կառավարությունը տրամադրել էր Նպաստամատույցին [6, N 2472]: Արդեն կառուցվել էին որբերի համար դպրոց, արհեստանոց, հիվանդանոց և «6000 հոգիւնց քաղաքի մը համար պէտք եղած բոլոր շինութիւնները» [6, N 2472]:

1922 թ. հուլիսի 27-ի համարում պարբերականը ծավալուն վերլուծական հոդվածով անդրադարձել էր Մերձավոր Արևելքի Նպաստամատույց ընկերության (Նիր Իսթ Գըլիֆի) որբախնամ աշխատանքներին 1921 թվականի դեկտեմբերի 31-ի կտրվածքով [6, N 2472]: Թերթը մեջբերել էր այս կազմակերպության տարեվերջյան տեղեկագրից ընդհանրապես տարբեր ազգերի և մասնավորապես՝ հայ որբերի խնամատարությանը վերաբերող թվային տվյալներ: Դրանց համաձայն՝ Ալեքսանդրապոլի մոտ տեղակայված Նպաստամատույցի որբանոցներում մատնանշված ժամանակահատվածում խնամվում էին 18000 հայ որբեր [6, N 2472]: Ասվում էր, թե այդ հաստատություններից դուրս կային ևս 20000 որբեր, «որոնք ստոյգ մահուան պիտի դատապարտուին, եթե որբանոցներու մեջ կամ այլուր անկարելի ըլլայ զիրենք պատսպարել» [6, N 2472]: Նըշվում էր, թե որբանոցներում պատսպարված մանուկների մեծ մասն ոչ միայն ծնողագուրկ էին, այլև չէին ճանաչում իրենց ազգականներին, երբևէ չփվել նրանց հետ, «ինչ որ կ'ենթադրէ, թէ որբ մնացած են շատ պզտիկ տարիքէն, և իրենց պարագաները կոտորուած կամ մեռած են, կան տղաք, որոնք իրենց անունն իսկ չեն գիտեր» [6, N 2472]: Նպաստամատույցը փորձում էր գտնել որբերի հարազատներին և նրանց հանձնել որբերի կարիքների հոգատարությունը, եթե նրանք ի վիճակի կլինեին իրենց ընտանիք ընդունել և պահել որբ հարազատին: Այդ աշխատանքը բարդ և դժվար էր, քանի որ Հայաստանի բնակիչների մեջ շատ էին փախստականները կամ կոտորածների փրկված ընտանիքների բեկորները [6, N 2472]:

Ըստ «Վերջին լուր»-ի հաղորդած տեղեկությունների՝ Ալեքսանդրապոլից բացի՝ «Նիր Իսթը իր սեփական որբանոցները» ուներ Երևանում, որոնցում պատսպարված էր 3000 որբ, և շուրջ այդքան որբ երեխաներ էլ ընտանիքների կողմից խնամվելու էին կրկին Նպաստամատույցի օգնությամբ [6, N 2472]: Այդ բարեսիրական կառույցը որբանոցներ ուներ նաև Ղարաքիլիսայում, Էջմիածնում, Թիֆլիսում [6, N 2472]: Թերթը գրում

էր, որ Անդրկովկասում մեծ բարեգործական ծրագրեր էր իրականացնում Նպաստամատույցը. «Վանայ, Էրզրումի, Տրապիզոնի և Պիթլիսի 400000 փախստականներուն տղաքը այդ որբանոցներուն մէջ կը պատասպարուին» [6, N 2472]: Միրիայի որբանոցներում նույնպէս այս կազմակերպության աշխատակիցների ջանքերով խնամվում էր 6775 որբ [6, N 2472]: «Ամբողջ Կեդր. Անաստուլի մէջ, որ կը գտնուի Մուսթաֆա Քեմալի հսկողութեան տակ, Նիր Իսթ ունի 12 որբանոցներ, որոնք կը գտնուին իր երկսեռ գործակալներուն հսկողութեան տակ: Այս պայմաններով Նիր Իսթ կը պահէ 350 հայ որբեր Էնկիւրիի, 3190՝ Կեսարիոյ, 5176՝ Խարբերդի, 813՝ Գօնիայի, 1000՝ Սամսոնի, 1368՝ Սվազի, 455՝ Մարգուանի մէջ: Տակաւին ուրիշ մէկ քանի վայրերու մէջ ալ փոքր թուով որբեր կը հոգացուին Նիր Իսթի կողմէ», - կարդում ենք պարբերականի էջերում [6, N 2472]:

Ընթերցողներին թղթակիցները տեղեկացնում էին, որ հիշյալ բարեսիրական կազմակերպությունը որբերի խնամատարությունը հանձնարարում էր տեղական մարմինների անդամներին՝ չմիջամտելով որբանոցների վարչական ու ֆինանսական գործերին. «Միայն իր սնտուկէն կը կրկնապատկէ այն գումարները, որոնք տեղական միջոցներով կը հայթայթուին որբանոցներու տնտեսութեան համար: Իր ամբողջ ըրածը ընդհանուր հսկողութիւն մըն է, և կը ձգտի որբանոցները իրապէս իրենց անունին արժանի հաստատութիւններ դարձնելու» [6, N 2472]:

«Ժողովուրդի ձայնը. Ժամանակ» օրաթերթում նույնպէս բազմաթիվ հրապարակումներ կային Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի կողմից իրագործված որբախնամ աշխատանքների մասին: Մեջբերենք հատված ուշագրավ մի հեռագրից, որը 1921 թ. ապրիլին Ալեքսանդրապոլի որբանոցների պատասխանատուների կողմից ուղարկվել էր այդ կազմակերպության Բաթումի մասնաճյուղի վարիչին [4, N 786]: Այնտեղ գրված էր. «Ունէ գնով կարելի չէ ուտեստեղէն գտնել, 4 օրէն պիտի սպառինք» [4, N 786]: Ապրիլի 26-ին Բաթում հասած ուրիշ հեռագրում նշվում էր, թէ Ալեքսանդրապոլի որբանոցներից մեկի սաներից 170-ը «սնունդի պակասութեան պատճառով» մահացել էին [4, N 786]: Կ. Պոլսից «Գվեզըն» նավով Բաթում, ապա՝ Ալեքսանդրապոլի որբանոցներ են հասցվում պարենամթերք, սնունդ, ինչ հետևանքով փրկվում են հարյուրավոր կյանքեր [4, N 786]:

Պոլսահայ վերոհիշյալ պարբերականներն իրենց էջերում ներկայացնում էին Հայաստանի առաջին հանրապետության և հետագայում Խորհրդային Հայաստանի համապատասխան մարմինների կողմից իրականացվող որբախնամ, գաղթականների տեղավորման և նրանց խնդիրները լուծելու նպատակով կատարվող աշխատանքները: Դրանցից պարզ էր դառնում, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո երկրի իշխանությունները սկզբնական շրջանում դժվարանում էին կարգավորել գաղթականների ու որբերի հիմնախնդիրները: Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը 1920 թ. դեկտեմբերին այդ նպատակով որոշում է համագործակցել Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեի հայաստանյան կառույցի հետ: Բացի այդ՝ 1920 թ. դեկտեմբերին Ամերկումի խնամքի տակ էին գտնվում 18.500 հայ որբեր, որոնք տեղաբաշխված էին 3 քաղաքում՝ Երևանում (2500 որբ), Ալեքսանդրապոլում (9000 որբ) և Կարսում (7000 որբ) [1, էջ 152]: 1921 թ. ամռան սկզբին Խորհրդային Հայաստանում տեղակայված էր ավելի քան

25.000 որբ: Ընդ որում, նրանց հիմնական մասը համախմբված էր Ալեքսանդրապոլում կամ Որբերի քաղաքում (այն օրերին այդպես էին անվանում Ալեքսանդրապոլը [1, էջ 154]): Կարևորվում էր մասնավորապես սովի պայմաններում հայ որբերի խնամատարության գործը, քանի որ երկրում գրանցվում էին կենցաղավարության դաժան դեպքեր: Այս առումով տեղին է մեջբերել հետևյալ հատվածը «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ» թերթից. «Կարգ մը վայրերու մէջ կացութիւնը այնքան սարսափելի էր, որ ժողովուրդը ստիպուէր է սնանիլ մարդկային միսով, և կառավարութիւնը, վերջ դնելու համար այսպիսի փորձերու, սահմանած է շատ խիստ պատիժներ» [4, N 1083]:

1923թ. հունվարին Ամերկումի հովանավորությունից օգտվող որբանոցների խնամակալությանն էին դեռևս հանձնված 1-17 տարեկան 21.836 որբ [1, էջ 163]: 1925թ. փետրվարին Ամերկումի հետ կնքված համաձայնագրով՝ այլևս իրենց հսկողության տակ էին վերցնում հիշյալ որբանոցների կրթադաստիարակչական գործառույթները [3, էջ 98]:

Խորհրդային Հայաստանի Լուսժողովուրդում ստեղծվել էր որբերի հարցերով զբաղվող հատուկ հանձնաժողով, որը 1924 թ. պատրաստած տեղեկագրում հանգամանորեն վերլուծել էր երկրում գտնվող որբերի հիմնախնդիրները՝ առաջարկելով չափահաս որբերին ոչ այնքան արհեստներ սովորեցնել (քանի որ արհեստավորների պահանջարկ այն օրերին չկար), որքան ձգտել նրանց կապել գյուղական կյանքին՝ հնարավորություն տալով զբաղվել հողագործությամբ, անասնապահությամբ, մեղվաբուծությամբ, ծխախոտագործությամբ, բրնձի և այլ մշակաբույսերի աճեցմամբ [1, էջ 170]:

1923-1926 թթ. Խորհրդային Հայաստանում աշխատանքի էր տեղավորվել 15.000 չափահաս որբեր, որոնք, պետության կողմից ստանալով որոշակի ֆինանսական աջակցություն, հաստատվել էին գյուղերում, աշխատում էին քաղաքներում գտնվող գործարաններում և արհեստանոցներում [3, էջ 100]:

«Ճակատամարտ», «Ժողովուրդի ձայնը. Ժամանակ» և «Վերջին լուր» օրաթերթերը Խորհրդային Հայաստանի իշխանությունների կողմից գաղթականների ու որբերի տեղավորման, ուսման, կեցության, աշխատանքով ապահովման և կենցաղային այլ հարցերի լուծման նպատակով իրականացվող ծրագրերի, ինչպես նաև Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեի հետ համագործակցության վերաբերյալ իրենց ընթերցողներին տեղեկություն էին տալիս խորհրդահայ մամուլից արված արտասույումների միջոցով: Դրանք, բնականաբար, միակուսակցական ամբողջատիրական կառավարման համակարգով երկրին բնորոշ սուբյեկտիվ տեսանկյունից էին լուսաբանում կամ վերլուծում ցանկացած և մասնավորապես տվյալ ոլորտին առնչվող հիմնախնդիրները: Պարզ է, որ օրաթերթերի լսարանն օբյեկտիվ պատկերացում չէր կարող կազմել արևմտահայ տարագրյալներին մտահոգող էական հարցերի վերաբերյալ:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հիմնվելով վերոհիշյալ պարբերականների հրապարակումների վրա՝ կարող ենք փաստել հետևյալը.

- Օրաթերթերի խմբագրակազմերի տեսակետները հայ որբերի հիմնախնդիրները լուսաբանելու առումով գրեթե չէին տարբերվում: Երեք թերթերն էլ մեծապես կարևորում էին ընդհանրապես հայոց ապագա սերնդի և մասնավորապես՝ որբ երեխաների գոյատևման, նորմալ պայմաններում նրանց ապրելու, սովորելու, աշխատանքա-

յին հմտություններ ու մասնագիտություն ձեռք բերելու ուղղությամբ ազգային-եկեղեցական մարմինների կողմից իրականացվող, ինչպես նաև հայկական ու օտարազգի բարեսիրական, միսիոներական կազմակերպությունների կողմից կատարվող աշխատանքներին անդրադառնալը, նկատվող թերությունների, բացթողումների մասին հանրությանը տեղեկացնելով և հասարակական կարծիք ձևավորելու միջոցով կարող ուժերը համախմբելն ու համատեղ լուծումներ գտնելը:

- Այս բոլոր պարբերականներն որբերի հիմնախնդիրները դիտարկել են բազմակողմանիորեն, այն է՝ պատկերացում են տվել թե՛ արևելահայ, թե՛ արևմտահայ հատվածներում տիրող իրավիճակի և ձեռնարկվող որբախնամ ու որբափրկիչ ծրագրերի մասին: Ընդ որում, արևմտահայ հատվածում նրանց աշխատակիցներն էին ռեպորտաժներ, թղթակցություններ, լուրեր ու հոդվածներ պատրաստում գաղթակայաններից ու որբանոցներից, իսկ արևելահայ հատվածում կատարվող աշխատանքները ներկայացվում էին արևելահայ պարբերականներում տպագրված նյութերի արտատպումների միջոցով: Ի պատիվ հայության երկու հատվածներում աշխատող լրագրողների՝ նկատենք, որ նրանք բացարձակապես օբյեկտիվ էին իրենց հրապարակումներում, որոնք այսօր կարելի է իբրև սկզբնաղբյուր դիտարկել խնդրո առարկա ժամանակաշրջանում հայ որբերի խնդիրների ու դրանց լուծման նպատակով իրագործված աշխատանքների վերաբերյալ համարյա ամբողջական պատկերացում կազմելու համար: Թերթերի աշխատակիցների սուբյեկտիվությունը դրսևորվել է միայն նրանց զգացմունքները թաքցնել չկարողանալու մեջ, երբ խոսել են որբանոցների մեծ մասում տիրող կենցաղային պայմաններից կամ երբ ներկայացրել են հարցազրույցներ կիսատված որբերի հետ, որոնցում նրանք, արհամարհելով քաղցն ու իրենց կիսամերկ վիճակը, խոսել են հայրենասիրության, հայրենի երկրի ապագայի և ազգային խնդիրների մասին:
- Պոլսահայ վերոնշյալ օրաթերթերը հասկանում էին, որ միայն հայոց պետականության պայմաններում էր հնարավոր աստիճանաբար հասնել որբ երեխաների խնդիրների լիակատար լուծմանը: Այդ պատճառով լրագրողները Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո առավելապես արտատպումներ էին կատարում տեղական մամուլից, իսկ հանրապետական համարվող Թուրքիայում տիրող հայահալած քաղաքականության հետևանքով և գրաքննության պայմաններում նրանք, կարելի է ասել, որ թեև այլևս չէին գրում որբերի ու նրանց խնդիրների մասին, բայց այդ հոգեհույզ թեման շարունակում էր խոսվել թերթերի աշխատակիցների հոգիները, մանավանդ որ չափահաս ծնողագուրկ հայ երեխաներին թուրքական իշխանությունները գորակոչում էին բանակ [5, N 2813]՝ իրենց թշնամիների դեմ մղվող մարտերի առաջնագիծ ուղղորդելով հենց թուրքերի պատճառով անհայրենիք ու անտուն մնացած հայ որբացած տղաներին: Բացի այդ՝ որբերի մեծամասնությունը թուրքացվում կամ քրդացվում էր, ինչին գուցահեռ՝ նաև բազմաթիվ հայ որբ երեխաներ այդ շրջանում դուրս էին հանվում երկրից, որ այլևս երբեք չկարողանային վերադառնալ իրենց պատմական հայրենի եզերք՝ Արևմտյան Հայաստան և Օսմանյան կայսրության նախկինում հայաշատ բնակավայրերը:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. Ավետիսյան Ս. Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի գործունեությունը Հայաստանում (1918-1930թթ.): Երևան: Պատմության ինստիտուտի հրատ., 2009: 229 էջ:
2. Հայոց պատմություն: Հ. 4, գ. 1: Երևան: Չանգակ հրատ.: 2010: 799 էջ:
3. Մելիքսեթյան Հ. Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան: Երևան: ԵՀ հրատ., 1975, 296 էջ:
4. Ժողովուրդի ձայնը. Ժամանակ: Կ.Պոլիս: 1921, NN 760, 786, 1922, N 1069:
5. Ճակատամարտ: Կ.Պոլիս: 1922, NN 963, 980, 1001, 2813:
6. Վերջին լուր: Կ.Պոլիս: 1922, NN 2420, 2438, 247:

References

1. Avetisyan S. The activity of the American committee for Relief in the Near east in Armenia (1918-1930) [*Merdzavor Arevelqi Amerikyan npastamatuyc komitei gorts' uneuty' uny Hayastanum 1918-1930 thth.*], Yerevan, Publishing House of the Institute of History, 2009, 229 p. (in Armenian)
2. *Armenian history* [Hayoc patmuth'yun], v.4, b.1, Yerevan, Zangak-97 Publishing House, 799 p. (in Armenian)
3. Meliksetyan H. Forcible emigration of Western Armenians and repatriation of Diaspora Armenians to Soviet Armenia [*Arevmtahayeri brnagaxth'y ye'v sph'yurqahayeri hayrenadardz'uth'yuny Sovetakan Hayastan*], Yerevan, Publishing House of Yerevan State University, 1975, 296 p.(in Armenian)
4. "Zhoghovurdi dzayny: Zhamanak" [*Zhoghovurdi dzayny: Zhamanak*], Constantinople, 1921, NN 760, 786, 1922, N 1069. (in Armenian)
5. "Chakatamart" [*Chakatamart*], Constantinople, 1922, NN 963, 980, 1001, 2813. (in Armenian)
6. "Verjin lur" [*Verjin lur*], Constantinople, 1922, NN 2420, 2438, 2472. (in Armenian)

Ընդունվել է / Принята / Received on: 04.08.2023

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: 02.09.2023

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: 27. 11. 2023

Տեղեկություններ հեղինակի մասին

Մարիամ Վրամի ՀՈՎՍԵՓՅԱՆ՝ բան. գիտ. թեկնածու, ԳԱԱ պատմության ինստիտուտի հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության բաժնի ավագ գիտաշխատող, Երևան, ՀՀ,
էլ. հասցե՝ mariamhovsepian@mail.ru <https://orcid.org/0009-0005-9696-4246>

Mariam Vram HOVSEPYAN: PhD in Philology, Senior researcher of the Institute of History of the NAS, Yerevan, RA,
e-mail: mariamhovsepian@mail.ru <https://orcid.org/0009-0005-9696-4246>

Мариам Врaмoвнa OВCEПЯH: кандидат филол. наук, ст.научный сотрудник Института истории НАН, Ереван, РА,
эл. адрес: mariamhovsepian@mail.ru <https://orcid.org/0009-0005-9696-4246>

ՀՏԴ՝ 93.930

DOI:10.52971/18294316-2023.26.2-86

ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՒՅՑԻ
ՈՐԲԱՆՈՑՆԵՐՆ ԸՍՏ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ՎԵՐԱՊՐԱԾՆԵՐԻ
ՀՈՒՇԱՊԱՏՈՒՄՆԵՐԻ¹

Ինգա Էդ. Ավագյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ
«Կուսմայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան, Գյումրի, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. «Մեծ եղեռնը վերապրածները» մատենաշարում ընդգրկված հուշապատումներում մեծաթիվ են որբահավաքի, որբանոցների, որբախնամության մասին վկայությունները: Այս համատեքստում վկայությունների ամենախոշոր և հեղինակավոր մասը բաժին է ընկնում Ամերկումի որբախնամ գործունեությանը: Բացի Ալեքսանդրապոլում ծավալած երկարատև աշխատանքից, Ամերկումը իր մասնաճյուղերն էր սփռել նաև Արևմտյան Հայաստանի հայաշատ վայրերում: Այսպիսի որբանոցներից էր Սվազի որբանոցը, որի մասին գրում է Քաջունի Ղարազյոզյանը իր հուշերում: Ալեքսանդրապոլի Ամերկումի որբանոցում է հանգրվանել Բիթլիսի կոտորածներից մազապուրծ Միհրան Ղազարյանը: Կազաչի պոստի որբանոցում աշխատանքի էր մտել Հովհաննես Թոչուկյան-Հովհաննիսյանը, որ նախ հանգրվանել էր Երզնկայի, ապա Էրզրումի որբանոցներում: Մեթոդներ և նյութեր. Հոդվածը գրելիս օգտագործել ենք պատմահամեմատական, պատմահետազոտական, պատմաքննական, գուգորդման, վերլուծության, ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդներ: Հոդվածը խարսխված է «Մեծ եղեռնը վերապրածները» մատենաշարում ամփոփված և գրականության մեջ առկա նմանօրինակ նյութերի վերլուծության վրա: Վերլուծություն. Հուշագիրները իրենց պատումներում խոր երախտագիտություն են հայտնում միսիոներներին, որբանոցում աշխատող բժիշկներին,

Սույն զեկուցումը ներկայացվել է 2023 թ. մայիսի 19-ին կայացած «Ալեքսանդրապոլ. գթասրտության քաղաք» միջազգային գիտաժողովում:

դաստիարակներին, ուսուցիչներին: Խստաբարո դաստիարակությունը, որ հայ որբերը ստանում էին Ամերկոմի որբանոցներում, կարևոր էր այնքանով, որ այս մանուկները դարձան խորհրդային Լենինականի և երկրի բարեկիրթ հասարակության հիմքը: Արդյունքներ. Այսօր Ամերկոմի որբանոցների շենքերը դեռ կանգուն են Գյումրիում, դրանք լուռ վկաներն են այն ժամանակաշրջանի, երբ Ալեքսանդրապոլը ավելի քան մեկ տասնամյակ միակ գթասրտության քաղաքն էր աշխարհում:

Բանալի բառեր՝ *Ալեքսանդրապոլ, Սվազ, Էրզրում, Գարս, որբանոցներ, որբախնամ գործունեություն, Կազաչի պոստ:*

Ինչպես հղել՝ Ավագյան Ի., *Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույցի որբանոցներն ըստ Մեծ եղեռնը վերապրածների հուշապատումների // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»*: Գյումրի, 2023: Հ. 2 (26): 86-98 էջեր:

DOI: 10.52971/18294316-2023.26.2-86

THE NEAR EAST RELIEF COMMITTEE ORPHANAGES BASED ON THE MEMOIRS OF SURVIVORS OF THE ARMENIAN GENOCIDE

Inga E. Avagyan

Shirak Center for Armenological Studies of NAS, Gyumri RA
"Kumayri" Historical-Cultural Reserve-Museum, Gyumri, RA

Abstract

Introduction: There are a lot of episodes of testimonies about the collection of orphans, orphanages, and guardianship of children in the series of memoirs "Survivors of the Armenian Genocide". Against this background, the lion's share of this evidence relates to Amerkom's trusteeship. In addition to developing long-term activities in the city of Alexandropol, Amerkom created a network of branches of shelters in Western Armenia, where a large number of Armenians lived. One of these orphanages was established in Sivaz and Kajuni Karageozyan writes about this in his memoirs. During the First World War, the Turkish government founded orphanages to appease society. Mihran Ghazaryan, who was deported from Bitlis, lived in the Alexandropol orphanage of Amerkom prior to his adoption. Hovhannes Trchunyan-Hovhannisyan worked in the orphanage at the Cossack post. He had miraculously escaped from the massacre before that and ended up in the Erznga orphanage, and after that - in the Erzurum orphanage. **Methods and materials:** We have used comparative-historical research, survey, combination, inductive and deductive methods. The article is based on the series of memoirs "Survivors of the Armenian Genocide" and analysis of materials available in the literature. **Analysis:** The survivors of the Armenian genocide express their deep gratitude to the missionaries, doctors who worked in shelters, educators and teachers in their memoirs. The strict upbringing that the orphans received in the Amerkom shelters was so important that these children formed the basis of the supportive society of Soviet Leninakan. **Results:** The buildings of Amerkom in Gyumri still stand today. They are silent witnesses of the era when Alexandropol was the only city of mercy in the world for more than a decade.

Key words: *Orphanages of Alexandropol, Svaz, Erzurum, Kars, guardianship, Cossack post.*

Citation. Avagyan I. *The Near East Relief committee orphanages based on the memoirs of survivors of the armenian genocide* // «Scientific Works» of SCAS NAS RA. Gyumri, 2023.V.2 (26). pp. 86-98. DOI: 10.52971/18294316-2023.26.2-86

ПРИЮТЫ БЛИЖНЕВОСТОЧНОГО АМЕРИКАНСКОГО КОМИТЕТА ПО МЕМУАРАМ ПЕРЕЖИВШИХ АРМЯНСКИЙ ГЕНОЦИД

Инга Э. Авагян

Ширакский центр арменоведческих исследований НАН, Гюмри, РА
Историко-культурный музей-заповедник "Кумайри", Гюмри, РА

Аннотация

Введение: В серии мемуаров «Пережившие Армянский геноцид» в большом количестве встречаются эпизоды свидетельств о сборе сирот, сиротских приютах, опеке детей. На этом фоне львиная доля этих свидетельств относится к попечительской деятельности Амеркома. Кроме развития долговременной деятельности в городе Александрополе, Амеркомом была создана сеть ветвей приютов и в Западной Армении, где проживало многочисленное армянское население. Один из таких сиротских приютов был создан в Сивазе, об этом в своих мемуарах пишет Каджуни Карагеозян. Во время Первой мировой войны турецкое правительство для того чтобы успокоить общество основало сиротские приюты. В Александропольском приюте Амеркома до усыновления жил Мигран Казарян, который был депортирован из Битлиса. В сиротском приюте на Казачем посту работал Оганнес Трчунян-Оганни-сян, он до этого чудом спасшийся от резни оказался в приюте Ерзнга, а после - в Эрзрумском приюте. **Методы и материалы:** Статья написана на методах историкосравнительного, исторического-исследовательского, историко-аналитического, исторического сопоставления и анализа и методах индукции и дедукции. Статья основана на анализе мемуаров серии «Пережившие Армянский геноцид» и на анализе аналогичных материалов, которые встречаются в научной литературе. **Анализ:** В мемуарах, пережившие геноцид, выражают глубокую благодарность миссионерам, работавшим в приютах, воспитателям, учителям. Строгое воспитание, которое сироты получали в приютах Амеркома, было важным на столько, что эти дети легли в основу благосклонного общества Советского Лениакана. **Результаты:** Сегодня еще стоят здания Амеркома в Гюмри, они немые свидетели той эпохи, когда Александрополь более чем десятилетие являлся единственным городом милосердия в мире.

Ключевые слова: *Сиротские приюты Александрополя, Свиз, Эрзрум, Карс, попечительская деятельность, Казачий пост.*

Как цитировать: Авагян И. *Приюты Ближневосточного Американского комитета по мемуарам переживших армянский геноцид.* // «Научные труды» ШЦАИ НАН РА. Гюмри, 2023. Т. 2 (26). сс. 86-98. DOI: 10.52971/18294316-2023.26.2-86

ՆԱԽԱԲԱՆ. «Մեծ եղեռնը վերապրածները» մատենաշարը հրատարակվում է 2004թ.-ից: Նրանում հրատարակած հուշապատումներն են՝ «Ծննդավայրիցս դեպի Դեր Զոր. Քաջունի Ղարապոզյանի հիշողությունները» (2004 թ.), «Հուշեր անցյալից. Հայրապետ Տոնոյանի հիշողությունները» (2006 թ.), «1915 թ. Բիթլիսյան ողբերգություն. Մի-

րան Ղազարյանի հուշապատումը» (2008 թ.), «Հիշողություն մեր ընտանիքի պատմության մի քանի պահերից. Աղասի Մակարյանի հուշապատումը», 2016թ.՝ «Մեր գնդի ճակատագիրը (Հովհաննես Թռչունյան-Հովհաննիսյանի հուշապատումը» (2015 թ.): 2018թ. հրատարակվել է «Մեծ եղեռնը վերապրածները» մատենաշարի վեցերորդ գիրքը՝ «Իմ կյանքը. Գևորգ Հնայակյանի հուշապատումը»: Հոդվածը խարսխված է հուշապատումներից չորսում հուշագիրների՝ Ամերկումի որբանոցներում կատարած անդրադարձին և գործունեությանը, սույն նյութերի և գրականության մեջ առկա նմանօրինակ նյութերի ու արխիվային փաստաթղթերի վերլուծության վրա: Նպատակն է այս հուշապատումների պատմական փաստերի մեկտեղումը և համեմատումը, որից էլ բխում է հոդվածի նորոյթը և արդիականությունը: Գյումրիում պահպանվել են Ռուսական կայսրության գործառնոցների տասնյակ շենք-շինություններ, որոնցում տեղաբաշխված են եղել գթասրտության քաղաք Ալեքսանդրապոլի երեք նշանավոր որբանոցները՝ Սևերսկի, Կազաչի պոստ և Պոլիգոն: Հովեկներին հետաքրքրում է քաղաքի այս շրջանի պատմությունը, որում մեծ դեր են խաղում որբանոցները և դրանց լուռ վկան հանդիսացող և մշակութային արժեք ներկայացնող հուշարձան շենքերը: Ուստի ուսումնասիրությունը, կարծում ենք՝ կխթանի հովեկների հոսքի ուղղորդումը դեպի այս պատմական հուշարձանները:

Սվազի ամերիկյան որբանոցը Քաջունի Ղարագոյանի հուշերում

«Մեծ եղեռնը վերապրածները» մատենաշարում ընդգրկված հուշապատումներում մեծաթիվ են որբահավաքի, որբանոցների, որբախնամության մասին վկայությունները: Վկայությունների հեղինակավոր մասը բաժին է ընկնում Ամերկումի որբախնամ գործունեությանը: Բացի Ալեքսանդրապոլում ծավալված աշխատանքից, Ամերկումը իր մասնաճյուղերն էր սփռել Արևմտյան Հայաստանի հայաշատ վայրերում: Այսպիսիք էին Սվազի, Երզնկայի և Էրզրումի որբանոցները, որտեղ Նիսի Իստ Ռեյիֆի ջանքերով ընդարձակ որբահավաք գործունեություն է ծավալվել և մեծաքանակ որբեր են փրկվել ու հետ դարձել հայկական արմատներին: Սվազի որբանոցի մասին գրում է Քաջունի Ղարագոյանը իր «Ծննդավայրիցս դեպի Դեր-Ձոր» վերտառությամբ հուշերում [4, էջեր 36-41: 5, էջեր 134-139]: Նա հրաշքով փրկվել և հայտնվել էր Սվազի ամերիկյան որբանոցներից մեկում: Հրաշքով ողջ մնացած տղան անցել էր որբանոցից որբանոց և ստացել նախնական կրթություն: Քաջունու հայրենակից և մանկության ընկեր Շահնագար Քեթախեանը գրում է. «Այս անգամ նոր Կառավարութեան հրամանով դարձեալ կը հաւաքուէին, յանձնելու համար Ազգային Առաջնորդարան: Այս ի՞նչ բախտաւորութիւն ինձ նման որբերուն համար: Ու ինչ «սպտակ» ու «հարուած» մեր կեղեքիչներուն: Հաճի Աղան չուզեր զիս յանձնել, սակայն հրամանը խիստ է ու ստիպողական, ի վերջոյ սակայն կ'ըսէ.- Գնա՛, տղա՛ս, քեզ դպրոց կը դնեն, մարդ կ'ըլլաս. մեզ մի՛ մոռնար... Ու կ'երթանք Արամեան Դպրոց-Որբանոց, ու զիս կը յանձնեն Առաջնորդարան: Հոս կը սպասեն քոյրս եւ քեռայրս, նաեւ մեծ թուով (շուրջ երեք հարիւր) ինձմէ առաջ բերուած որբ տղաք: Քրոջս ուրախութեանը չափ չկայ, կը գրկէ զիս, կը համբուրէ...ալ ազատուած եմ Հայութեան համար, Հայ եկեղեցիին, Հայ Գիրին ու հայ Շունչին համար: Հայերէնս չեմ մոռցած. քանի մը օր չանցած՝ յստակ ու մաքուր կը խօսիմ մայրենի լեզուս. չեմ մոռցած չորս հովերուն ցրուած հարազատներս, անոնց անունները եւ մանկութեան յիշա-

տակները» [9, էջ 124]: Քաջունին, այս հրամանի համաձայն, հեռանում է թուրքի կողմից առևանգված ավագ քրոջ ընտանիքից և հայտնվում Սվազի որբանոցում: Լ. Ազատեանը բերում է մի ցուցակ, ըստ որի. «Ձինադարի շրջանին՝ ողջ մնացած որբերուն թիւը նոյնիսկ հարիւր հազարի չի հասնիր»: Սեբաստիա-Մարգուանի տարածքներում որբերի թիւը ըստ այդ ցուցակի հասնում էր 5600-ի [1, էջեր 36-37, 39, 104]: Ըստ Շ. Քէոթահեանի՝ Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց մարմինը (Ամերկում՝ Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտե)² «նախախնամական» դեր է կատարում վերապրող որբերի համար և իր փրկարար ձեռքը հասցնում մինչև Սեբաստիա՝ Արամյան վարժարան՝ Հողդարի բարձունքին կանգուն նախկին SIVAS TEACHERS' COLLEGE-ը փոխակերպելով նախակրթարանի աստիճանով որբանոց-դպրոցի: Այս մասին գրում է նաև Լ. Ազատեանը. «Արամեան որբանոց-վարժարանը կրնդունի հարիւրաւոր որբ երեխաներ, որոնք կը փոխադրուին նախկին Սվազի Ամերիկեան Ուսուցչական Գոլէճը: Այս հաստատութիւնը կ'ընդունի 300-է աւելի մանչեր՝ 5-16 տարիքի: Շէնքին երրորդ յարկը երեխաներու ննջարաններն էին» [1, էջեր 31-32]: Քաջունին իր ինքնակենսագրությունում գրում է. «Ես ապրեցի թուրքական և հայկական որբանոցներում, որտեղ և ստացա իմ նախնական կրթությունը»: Որբանոցի բժշկական հանձնաժողովի որոշմամբ Քաջունու ծննդյան թիվ է ընդունվում 1906-ը: «Հայրս փոքրամարմին էր, այդ պատճառով էլ նրան տվեցին 1906 թ. ծննդյան վկայական, և վերջապես փոքր երեխա էր, լավ չէր հիշում, բայց ենթադրում էր, որ ծնվել է 1904 թ.», -ասում է ավագ դուստրը: Բժիշկները փոքր երեխաների ծննդյան թիվը որոշում էին բերանում ծթկած կաթնատամների և հիմնական ատամների քանակով: Քաջունին հաճախ է անդրադարձել որբանոցում իրականացվող պատժաձևերին: Ավագ դստեր պատմածներից ուշագրավ է այն, որ մեղավոր երեխայի վրա կախել են համապատասխան պիտակով ցուցանակ, օրինակ՝ «ստախոս», և որբերին շարք կանգնեցնելուց հետո պտտեցրել շարքերի միջով, որից հետո մեղավորը ամբողջ օրը կրել է այդ պիտակը: Դաստիարակության այս տարբերակի մասին հիշում են նաև Ալեքսանդրապոլի ամերկումցիները: Քեմալական շարժման ժամանակ հայկական որբանոցները փոխադրվում են Մերձավոր Արևելքի արաբական երկրներ և Հունաստան: «Թուրքիոյ ներքին գաւառներուն մէջ ամէն օր ջարդի ու մահուան սարսափին տակ ապրող հայ որբերը հետզհետէ կը փոխադրուին ապահով երկիրներ: Սեբաստիոյ 5600 որբերը՝ Յունաստան, Խարբերդի 5300 որբերը՝ Լիբանան եւ Պաղեստին: Ամերիկեան Նպաստամատույցը եւ ՀԲԸՄ-ն իրենց վրայ կ'առնեն արևմտահայ որբութեան գրեթէ կեսէն աւելին հոգատարութիւնը Յունաստանի, Լիբանանի, Պաղեստինի եւ Եգիպտոսի մէջ: Կը բացուին կանոնաւոր դպրոցներ, արհեստանոցներ, կը կազմուին մարմնակրթական միութիւններ...» [3, էջ 948]: Շ. Քէօթահեանը հիշում է. «Օգտուելով Լոզանի Դաշնագրի տրամադրութիւններէն՝ Անկարայի Կառավարութեան հետ եղած մասնաւոր կարգադրութեան իբրեւ հետեւանք՝ Նպաստամատույցը կորոշէ Սեբաստիոյ, ինչպէս նաեւ Խարբերդի, Մուրիոյ եւ այլ վայրերու իր որբանոցները փոխադրել Պոլիս, առաւելապէս Յունաստան... Նոյեմբերի մէջ ենք (1922) եւ արդէն իսկ առաջին կարաւանը պատրաստ է դէպի Մամսոն ճամբայ ելլելու...» [9, էջ 154]: «Որբե-

² American Committee for Relief in the Near East- ACRNE

րու զանգուածային փոխադրութիւնը դէպի Սուրիա եւ Լիբանան տեղի կ'ունենայ 1922-1923 տարեշրջանին, Կիլիկիոյ պարպումին հետեւանքով: Նպաստամատույցի վարիչները, մտահոգուելով յոյն-թրքական բռնն պատերազմի հետեւանքներով, կ'որոշեն Թուրքիոյ հողամասին վրայ, հաւասարապէս հոգ տանել որքան քրիստոնէայ, նոյնքան եւ թուրք որբերուն: Նպաստամատույցը, ներքին գաւառներուն մէջ գտնուող որբերը՝ Կեսարիայէն, Գոնիայէն, Մարգուանէն, Սվազէն, Մամսոնէն եւ Տրապիզոնէն, ցամաքի ճամբով կը փոխադրէ Պոլիս, ուրկէ նաւով՝ Յունաստանի Փիրէ նաւահանգիստը, եւ կը տեղաւորէ զանոնք Յունաստանի 13 որբանոցներուն մէջ: Հազարաւոր որբեր Սուրիա եւ Լիբանան փոխադրելու ծանր աշխատանքն ու պատասխանատուութիւնը Ամերիկեան Նպաստամատույցը կը յանձնէ մեծ հայասէր, գուիցերիացի միսիոնար՝ Եակոբ Քինձլըրին...» [1, էջեր 36-37, 39 104]: Քաջունին չափահաս որբերի նման նավից իջնում և մնում է Կ. Պոլսում: Որբերի՝ Հունաստան տեղափոխվելու պատճառով բավականին երկար ժամանակ կտրվում է Շահնագարի և Քաջունու կապը:

Որբանոցներում ուսուցիչների և սաների ջանքերով հրատարակվել են պարբերաթերթեր: Սվազի որբանոցում Շ. Քէօթահեանի ջանքերով հրատարակվել է «Ալիս» պարբերաթերթը. «Տպաքանակ»-ու էր միայն վեց. անոնցմէ մին կը դրկէի նախապէս Գոլէճ, այժմ՝ Որբանոցի վերածուած ուսուցիչներուն, ուրիշ օրինակ մը՝ Աղջկանց Որբանոց եւ մէկն ալ՝ չափահաս աղջիկներու ապաստանարան-աշխատանոցը» [9, էջեր 126-129]: Ամերկումի որբանոցներում երեխաները սովորում էին կարել մաշիկներ, գործել գուլպաներ, գորգեր և կարպետներ, զբաղվում էին դերձակությամբ: Լ. Ագատեանը գրում է. «Այս գոլէճ-որբանոցին դիմացը կար մեծ աշխատանոց մը, ուր մեծ որբերը, դպրոցէն ետք, կուսանէին աստղծագործութիւն, կօշկակարութիւն եւ դերձակութիւն: Առանձին աղջկանց նախակրթարան վարժարան-որբանոց մըն ալ կար նախկին Հայկական Ազգային հիւանդանոցին տեղը: Ուրիշ մը, չափահասներու տունը երիտասարդ կիներ գորգ գործել, կարել, հիւսել եւ տնային տնտեսութիւն կը սորվէին: Ամերիկեան Միսիոնարական հիւանդանոցը, որ մօտիկ էր որբանոցին, կը հասներ որբերուն եւ հայերուն նոյնիսկ երբեմն թուրքերու կարիքներուն: Մանչ ու աղջիկներուն որբանոցները Սվազի մէջ կը փակուին 1922-ի վերջերը» [9, էջեր 32-33]: Աղջկանց որբանոցում էր պատասպարվել Քաջունու հորեղբոր աղջիկը՝ Համեստուհին: Սվազի որբանոցի տղաների և օրիորդների համագգեստների, կոշիկների մասին պատկերացում են տալիս պահպանված հազվագյուտ լուսանկարները:

Մատենաշարի երրորդ հուշապատումը Միհրան Ղազարյանի «1915թ. Բիթլիսյան ողբերգություն»-ն է: Միհրանը Ալեքսանդրապոլի Ամերկումի որբանոցում է հանգրվանել Անդրանիկի գորքերի հետ Բիթլիսից նահանջելուց հետո: Այս տեղեկությունը հայտնում են թոռնուհին և դուստրը: Բիթլիսեցի Նանեն Ալեքսանդրապոլի որբանոցից որդեգրում է Միհրանին և հարազատ մոր նման մեծացնում ու խնամում տղային: Սակայն Միհրանի հուշագրությունը ավարտվում է 1918 թ. աշնան մասին հիշատակությամբ, երբ նա նշում է, որ մինչև սույն թվականը մնացել է Դիլիջանի Ամերկումի թիվ երեք որբանոցում: Այս բացառիկ տեղեկությունով էլ ավարտվում է Միհրան Ղազարյանի՝ պատմականությամբ հագեցած հուշապատումը [6, էջ 226]:

Կարսի ամերիկյան որբանոցը Ադասի Մակարյանի հուշերում

Մատենաշարի չորրորդ հուշապատումը Ադասի Մակարյանի «Հիշողություն մեր ընտանիքի պատմության մի քանի պահերից» հուշապատումն է: Ադասին ներկայացնում է 1920թ. Կարսի ամերիկյան որբանոցում թուրքերի կազմակերպած ջարդը [7, էջեր 29-32]: «Օսմանյան բանակը Սարիղամիշի կողմից մոտենում էր Ղարս քաղաքին: Թուրքերն արդեն գրավել էին Մազրա կայարանը և քանդել երկաթգիծը, ինչի պատճառով ժողովրդի ունեցվածքով, այդ թվում և մեր, բարձած վագոններով գնացքները կանգնած էին Ղարս կայարանում. քաղաքը շրջափակված էր»: Կարսը լցված էր գաղթականներով, որոնք «գայլ տեսած ոչխարի հոտի պես իրենց այս ու այն կողմ էին նետում»: Խոր աշուն էր: Յուրտն ու խոնավությունը թափանցում էին մարդկանց մարմիններից ներս ու մտնում ոսկորների մեջ, ժողովուրդը, տուն ու տեղ թողած, փրկվելու համար փախչում էր դեպի «Չուխուր մայլա»³, այնտեղից՝ դեպի Արգինեի ձորը: Մակայն այստեղ նույնպես ճանապարհը փակ էր: Զորքի և թուրք խուժանի գնդակները հնձում էին փախստականներին: Գնդակների տարափից պրծնելու համար ժողովուրդը խնդրում էր ամերիկացիներին, որ թույլ տան, մարդիկ մտնեն որբանոցի շենքը: Մակայն ամերիկացիները, մտրակը ձեռքերին, ծեծում էին ներս մտնել ցանկացողներին, շատերի գլուխները կոտրում ու արգելում էին մտնել որբանոցի շենք: Բայց ժողովրդի ալիքը այնքան մեծացավ, որ նրանք այլևս չկարողացան դիմադրել, և բոլորը լցվեցին շենք, այդ թվում՝ և Մակարյանների ընտանիքը: Այս ներխուժումը բերում է նրան, որ թուրքերը գաղթականներին կոտորելու նպատակով ներխուժում են որբանոցի շենք և սպանող կազմակերպում:

Ղարադաղի ամրոցի կողմից եկող թուրքերի գնդակները սպանում ու վիրավորում էին ճանապարհներին ու փողոցներում գտնվող գաղթականներին: Գնդակները նույնիսկ թափանցում էին որբանոցի լուսամուտներից ներս, սպանում և վերքեր հասցնում ինչպես որբերին, այնպես էլ այդտեղ ապաստանած հայերին: Որբերը, կանայք ու երեխաները լալիս էին: Մակարյանը գրում է. «Այստեղ է սաված. «Մերը մոռացության է տվել զմանուկն»: Ներխուժելով քաղաք՝ ասկյարները մտան որբանոցի շենքը, սկսեցին սվինահարել ու գնդակահարել ժողովրդին, հենց այստեղ էլ՝ մեր աչքերի առաջ, սվինով ու հրացանի կրակոցով հիսունյոթ տարեկան հասակում սպանվեցին հայրիկս՝ Ալեքսանը, և երեսուն տարեկան ավագ եղբայրս՝ Լևոնը, որոնք անմեղ ու անզեն ծվարել էին որբանոցի շենքում: Նրանց աճյունները կես դարուց ի վեր հանգչում են անզերեզման»: Հոգեբանական ծանր իրավիճակում են գրվել տողերը տասնամյակներ անց: Արգինեի ձորում մութը վրա էր հասել, որբանոցի շենքից լսվում էին մոլեգին ճիչեր՝ սպանեցի՞ն, տարա՞ն... Ըստ հուշագրի՝ առևանգում էին երեխաներին, ջահել աղջիկներին, գեղեցիկ հարսներին ու կանանց, գերեվարում տղամարդկանց, հետո սպանելու նպատակով: Հոգեբանորեն շատ ծանր էր լուսացնել այդպիսի արյունալի ու մղձավանջային գիշերը: Երկար ու ցավալի տանջանքներից հետո բացվեց արյունոտ առավոտը, երբ դեռ լսվում էին հրացանի կրակոցները, վիրավորների ծանր հառաչանքները ու տանջալի տնքոցները: Շատերը օրերով չէին քնել, շատերն էլ կորցրել էին իրենց հարազատներին ու

³ Թարգմանաբար՝ Ձորի թաղ:

երեխաներին: Թուրքական հրամանատարությունը Արգինայի ձորում և ամերիկյան որբանոցի շենքերում ողջ մնացած ընտանիքներին հավաքեց և ասկյարների հսկողության ներքո քշեց դեպի Ղարս քաղաքի կենտրոնը: Ասկյարները սկսեցին առանձնացնել տղամարդկանց, որոնց ճակատագիրը հետագայում հայտնի դարձավ. ոչ մեկը ողջ չէր մնացել: Նրանց մեջ էին նաև Մակարյանների ընտանիքի ողջ մնացած անդամները: Թուրքերը, կանանց ու երեխաներին անցկացնելով կամուրջը, տարան ու ներկայեցին քաղաքում գտնվող զորանոցներում: Ստեղծված վիճակը Աղասու համար սուսկալի դարձավ: Այստեղ նա կորցրեց մորը, փոքր եղբորը՝ Գարեգինին, հինգ տարեկան քրոջը՝ Հոփսիմեին: 1920թ. աշնան ցուրտ օրերին՝ որպես հալածված մի թռչուն, նա ծվարեց քաղաքի մեծ զորանոցներից մեկում:

Երզնկայի, Էրզրումի և Ալեքսանդրապոլի որբանոցները Հովհաննես Թռչունյան - Հովհաննիսյանի հուշերում

Ալեքսանդրապոլի Կազաչի պոստի որբանոցում էր աշխատանքի մտել Հովհաննես Թռչունյան-Հովհաննիսյանը՝ նախ Երզնկայի, ապա Էրզրումի ամերիկյան որբանոցներում հանգրվանած որբը: Նրա հուշերը կազմել են մեր մատենաշարի հինգերորդ գիրքը, որ վերնագրված է «Մեր գնդի ճակատագիրը»:

«Առավոտ Իբրահիմ աղան գնաց եղբորս՝ Հարությունին բերեց: Դարձավ ինձ ու քրոջս. «Արե՛ք, հաց կերե՛ք, որ ձեզ տանեմ հանձնեմ հայոց շտաբը, որտեղ որ հավաքում են որբերին»: Բոլորը խառնվեցին իրար՝ Դուրսունը, Ֆաթիման, խանումս, թոփալ Հուսեյնը, չիդեն՝ ինչ էնեն: Համբուրեցին ամենքը, իրենց համար գովեցին, քույրիկս էնպիսի մի լաց էր դրել, որ չգիտեմ՝ ինչ անեմ» [8, էջեր 116-119]: Աղջնակը չէր ցանկանում բաժանվել քրոջուհի քույրիկից: Իբրահիմ աղան երեխաներին տանում է Երզնկայի հայոց շտաբը: Իբրահիմ աղան պատմում է, թե ինչ դժվարությամբ է պահել երեխաներին: Շտաբում շնորհակալություն են հայտնում նրան և խոստանում օգնել: Հետաքրքրվում են, թե Հովհաննեսը հայերեն գիտի, երեխաները արտասահմանում մարդ ունե՞ն: Իմանալով, որ երեխաների ավագ եղբայրը՝ Հմայակը, և հորեղբայր՝ Պետրոս ամին, Ռումինիայում են, հետաքրքրվում են հասցեով: Երեխան ասում է հասցեն՝ «Ֆոթիշեն քաղաք, Մնդիելի 55, Թռչունյան Պետրոս⁴»: Հովհաննեսը գրում է. «Հայրիկս որ նամակ էր գրում, ես միշտ մոտն էի, դրա համար էլ հասցեն հիշում եմ»: Երեխաներին ընդունողը նույն օրը հեռագիր է ուղարկում հորեղբորը՝ Ռումինիա, որ գան: Մինչ հարազատների գալը երեխաներին տանում են որբանոց, խոստանալով, որ էնտեղ իրենց լավ կնայեն: Իսկ Հազարվարդը շարունակում էր բարձր լացը, կարծես սիրտը վկայում էր, որ գլխին փորձանք պիտի գա:

Հովհաննեսը նկարագրում է Երզնկայի հայկական որբանոցի տեղադրությունը: Այն գտնվում էր հայոց թաղի Ժամի հրապարակի արևմտյան կողմում՝ Քյամախի ճանապարհի վրա գտնվող մեծ շենքում, որի առջևում պարտեզ կար: Հովհաննեսը պատմում է հիգիենայի կազմակերպման մասին. իրենց ներս մտնելուց հետո մայրապետները երեխաներին տանում, մազերը խուզում են, աղջիկներին տանում են երկրորդ հարկ,

⁴ Թռչունյանների այս ճյուղը երկար տարիներ հովանավորեց «Թռչունյաց տան» գործունեությունը Գյումրիում:

տղաներին՝ առաջին: Որբանոցում երեխաներին լավ էին նայում. թե՛ ուտելիքն էր լավ, թե՛ մաքրությունը: Մի թուրքական սպա կար՝ ազգությամբ հայ, Խարբեղից, նա երեխաներին մարզանք էր սովորեցնում, նշան բռնել, երգեցողություն: Պատի վրա կլոր շրջան էր գծում ու ասում. «Ամենքդ քսան քար հավաքե՛ք ու աշխատե՛ք խփել գծի մեջտեղը: Դա հավասար է զենքից կրակելուն»: Որբերի թիվն ավելանում էր, ամեն օր քրդերը բերում էին նորերին ու փող ստանում: Դերսիմից մի հայ աղջիկ բերեցին՝ տասնչորս տարեկան՝ անունը Եվա: Հայոց կոտորածի մասին քրդերեն երգ էր երգում: Էնպես լացով էր երգում, երեխաները ու մայրապետները, նրա շուրջը հավաքված, հետը լալիս էին: Որքան էլ քարսիրտ մարդ լիներ, այնտեղ լաց կլիներ: Նա երգելով բողբոջում էր ասածուն. «Դա-լիկո-դա-լիկո քյաֆուր խողեդա գուլում է օսման»: Երեխաներին դաս տվող խարբերոցի սպան մի իրիկուն գալիս ու տեսնում է, որ որբերը հավաքվել են աղջկա շուրջը, աղջիկը երգում է, երեխաներն ու մայրապետները՝ լաց լինում: Սպան բարկանում է մայրապետների վրա և հաջորդ օրը՝ առավոտյան, փորձում է երեխաների հոգեվիճակը սփոփելու նպատակով թատերական ներկայացում կազմակերպել: Նա տղաներին դերեր է բաշխում՝ սովորելու համար և բեմադրում «Բազազ Հարությունի» թատրոնը: Հովհաննեսը գրում է. «Բոլորին պաշտոններ տվեց, մի մեծ քթով տղա կար, նրան՝ սուլթան Համիդի, մեկին՝ ռուսի թագավորի, մյուսին՝ Բազազ Արտեմի, ինձ էլ աղջկա պաշտոն տվեց, սկսինք պարապելը: Երբ թատրոնը ներկայացրինք, նորից մի ուրիշը սկսինք պարապել՝ «Մատանան, տերտերը և մարդը»: Շատ խնդալու թատրոն էր, ես սատանայի դերը տարա: Երեքն էլ վագում են. սատանան՝ առջևից, տերտերը՝ նրա հետևից, մարդն էլ՝ տերտերի հետևից, վագում են, մեկը մյուսին չի հասնում. կլոր ֆռում ենք: Այս թատրոնը դուրսը ներկայացրինք, սաղ որբերը ծիծաղում էին»: Հովհաննեսը պատմում է որբանոցում հիգիենայի մասին, շորեր բաժանելու, սաբոն տալու և բաղնիք տանելու մասին [8, էջեր 116-119]: Էսպես մի ամիս երեխաները մնացին որբանոցում: Մի օր՝ առավոտ, տասներկու ֆուրգոն բերեցին, երեխաներին տեղավորին ֆուրգոնները. վեց ֆուրգոն՝ տղա, վեց ֆուրգոն՝ աղջիկ և հանկարծակի ուղևորվեցին դեպի Երզրում: Երզրումի ամերկումի որբանոցի բակից, երբ երեխաները խաղում էին, առևանգում են գեղեցկուհի Հազարվարդին, մի քանի օր քույրերը և տղաները փնտրում են աղջնակին, սակայն սպարոյում:

Հովհաննեսը Անդրանիկի բանակից գորացրվելուց հետո աշխատանքի անցնում Ալեքսանդրապոլի Կազաչիի որբանոցում: [8, էջեր 210-211]: «Մեզ ընդունողի անունը Հաջո էր: Մեր գնդի աբոզի նաչալնիկն էր»: «Դու եղել ես մեր Անդրանիկի բանակում, -մի քանի հարցեր տվեց, ես պատասխանեցի, -լավ, ես հիմա տեսնեմ, թե որտեղ քեզ նշանակեմ»: Էդ պահին ներկաներից մեկն ասում է, թե Աճեմյանն է եկել: Հաջոն էլ ելնում է Աճեմյանին դիմավորելու: Եկողը՝ Աճեմյանը Վարդանի հայրն էր, ով մեծ ներդրում էր ունեցել Կազաչի պոստի որբանոցի գործունեության մեջ: Աճեմյանը խոսում էր վանեցոնց լեզվով: Նա ձիապան է ուզում, քանի որ ձիապան տղան հիվանդացել էր: Հաջոն Հովհաննեսին է ուղարկում. «Էս լավ տղուն տար, պարո՛ն Աճեմյան»: Աճեմյանն էլ դառնում է Հովհաննեսին. «Արի գնանք, տղա՛ ջան, արի՛, գնանք ճաշարան»: Նա կանչում է ճաշարանի վարիչին ու ասում, որ տղային ճաշարանից միշտ ճաշ տա, օրը երեք ան-

գամ: «Էս քո հաց ուտելու տեղը, արի գնանք պահեստը,-պահեստի պետին կարգադրեց,-էս տղեն ինչ որ կզա կուզե, կտաս»: Ապա ուղեկցում է ձիանոց, ծանոթացնում գործին ու բանալին տալիս նրան: «Տղա՛ ջան, շատ մաքրասեր պիտի լինես, ձիերի վրան մաքուր պիտի պահես, թամբքերն էլ միշտ մաքու՛ր պահե, էս սրբիչները դրա համար են: Առավոտները ամերիկացիները ձիով գնում են քաղաք՝ աշխատանքի: Էս ձին կապիտան Հեքմանինն է, էս մի ձին էլ՝ կապիտան Յարոյինը, [2, էջեր 436-438]: Էս մեկն էլ միսոր Թոմսինն է, ամենքն իրենց համար ձի ունեն, դու միշտ էստեղ կլինես: Էստեղ մի հայ կա՝ ձիու բժիշկ, նա քեզ կասի՝ ինչ անես»: «Աճեմյանը ամբողջ Կազաչի պոստի պահեստների, որբերի ճաշարանների ղեկավարն էր: Ես շուտով ճանաչեցի կապիտան Հեքմանին, Յարոյին: Իմ աշխատանքի երրորդ օրն է, իրիկունը ձիերին մաքրում էի, մեկ էլ մի շուն՝ պոչը կտրած, մտավ գոմը: Ձիերը խրտնան, էս էլ մի քար առա ու խփեցի շանը, էս շունը սկսեց վնգստալը: Մի ամերիկացի եկավ ինձ կանչեց դուրս, սկսեց խոսել՝ շանը ցույց տալով. էս անտեր շունն էլ մախտուս ավելի էր վնգստում: Սկսեց ինձ ծեծելը, էս ձայն չէի հանում, մի լավ ինձ ծեծեց: Մտի՛կ արեք էս անասովածին, մի շան համար ինձ ծեծեց: Անցավ բավականին ժամանակ, մեր ֆելդշերը՝ Համբարձումը, կանչեց ինձ թե. «Արի՛, նորություն լսի՛ր: Էդ խելառ ամերիկացի բժիշկը հիմա հարձակվել է հիվանդանոցի որբերի վրա, հիվանդ երեխոց սկսել է ծեծելը, քույրերը հասել են երեխանց օգնության, դառել է քույրերին ծեծել: Հիմա տարել են քաղաք՝ ամերիկացիների շտաբը՝ կապիտան Հեքմանի մոտ»:

Հայաստանի ազգային արխիվում պահպանվել է ՀՀ վարչապետին ուղղված Ալեքսանդրապոլի բժիշկների միության գրությունը՝ թիվ 142. «Ալեքսանդրապոլի Բժշկական միությունը և «Կարմիր խաչի» Վարչության անդամները, մասնակցությամբ Հայաստանի «Կարմիր խաչի» Կենդրոնական վարչության փոխնախագահ Վ. Արծրունու, 1920թ. օգոստոսի 15-ի արտակարգ նիստում քննության առնելով ամսոյս 13-ին Կազաչի Պոստում տեղի ունեցած քստմնելի դեպքը և գտնելով, որ 1. ամսի 13-ին Ամերիկյան Նպաստամատույց Կոմիտեի Ալեքսանդրապոլի բժշկական մասի բժիշկ Հոտորը անխնա ձևով ծեծել է հիվանդանոցի որբերին յուր ձեռքի մտրակով, շատերին անելով արյունվա... նա նման վերաբերմունք միշտ ցույց է տվել ինչպես Պոլիգոնի, այնպես էլ Կազաչի Պոստի հիվանդանոցներում, անգութ կերպով ենթարկելով ծեծի 2. որ նույն դեպքի ժամանակ ենթարկվել են անարգանքի և լպիրշ վերաբերմունքի հիվանդանոցի մի քանի գթութեան քույրեր, միայն նրա համար, որ կամեցել են պաշտպանել ծեծվող երեխաներին և կապիտան Դինջիրֆիլդի ուշադրությունն են հրավիրել այդ տխուր և վայրենի վարմունքի վրա, իսկ քույրերից մեկին նույնիսկ ուզեցել են միլիցիաների ձեռքով բանտարկել պ. Դինջիրֆիլդի հրամանով 3. որ նույն հիվանդանոցի բժիշկ Ալթունյանը, որը ենթարկվել էր մտրակով խիստ ծեծի նույնպես որբ երեխաներին պաշտպանելու համար ճակատից վերք ստանալով... ժողովն որոշեց. ա. որ բժիշկ Հոտորը՝ որպես հոգեպես անհավասարակշիռ մի պաշտոնյա, չի կարող մնալ այդ աստիճանի պատասխանատու պաշտոնի մեջ՝ արատավորելով ամերիկյան մեծ և մարդասեր ժողովրդի անունը բ. որ պ. Դինջիրֆիլդը յուր կոպիտ ու անքաղաքավարի վարմունքով դեպի գթության քույրերը վիրավորել է գթության քույրերի ամբողջ կորպորացիան, որ այնքան անձնվի-

րաբար իր կյանքի գնով աշխատել է հայ որբերին խնամելու և դաստիարակելու ծանր գործում. Ժողովը յուր գայրույթն է հայտնում որբանոցի մյուս բժիշկների վերաբերմունքին այն քար անտարբերության համար, որ ունեցել են նոքա դեպի որբերը և նոցա տանջող բժիշկը, որպես հիվանդ մարդու: Ժողովը վճռեց ուղարկել սույն որոշումը Ամերիկայի միսիայի ներկայացուցիչ պ. Եարոյին, Հայաստանի կառավարությանը, և եթե նոցա ձայնը չսսվի, նաև Վաշինգտոն՝ Ամերիկյան մարդասեր կառավարությանը [2, էջեր 346-348]: Բողոքից հետո բժշկին հետ են ուղարկում ԱՄՆ՝ ստվերող անձնավորությունից մաքրելով Ամերիկոմի մարդասեր գործունեությունը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Ամերիկյան Նպաստամատույցը լայնածավալ գործունեություն իրականացրեց Արևմտյան Հայաստանում՝ որբահավաքների միջոցով հայկական ընտանիքներ վերադարձնելով առևանգված որբերին: Ալեքսանդրապոլում Ամերիկոմի ծավալած ամենաերկարատև որբախնամ գործունեությունը փրկել ու դաստիարակել է հազարավոր որբերի: Հուշագիրները երախտապարտ են Նիար Իս Ռիլիֆին, միսիոներներին, որբանոցներում և որբախնամ հիվանդանոցներում աշխատող բժիշկներին, քույրերին, դաստիարակներին, ուսուցիչներին: Ամերիկյան խստաբարո դաստիարակությունը, որ հայ որբերը ստանում էին որբանոցներում, կարևոր էր այնքանով, որ այս մանուկները դարձան Լենինականի բարեկիրթ հասարակության հիմքը: Այսօր որբանոցների շենքերը դեռ կանգուն են Գյումրիում: Շենքերից մեկում Երրորդ հանրապետության տարիներին գործեց «Թռչունյաց տուն» մանկատունը: Հուշարձան շենքերը լուռ վկաներն են այն ժամանակաշրջանի, երբ Ալեքսանդրապոլը ավելի քան մեկ տասնամյակ միակ գթասրտության քաղաքն էր աշխարհում: Նա այսօր արդեն գրավում է հովիտներին, գիտնականներին, ցեղասպանագետներին, նաև հնագետներին, և հեռու չէ այն օրը, երբ այդ կիսավերակ կառույցներում կկատարվեն ուսումնասիրություններ, նաև պեղումներ՝ գթասրտության օրերին վերաբերող նյութերով Ալեքսանդրապոլի պատմությունը համալրելու համար:




Սվազի որբանոցի շենքը



Սվազի որբանոցի աղջիկների համազգեստը



Սվազի որբանոցի տղաների համազգեստը



Կազաչի պոստի որբանոցը
Ալեքսանդրապոլում



Սևերսկու որբանոցը
Ալեքսանդրապոլում



Սևերսկու որբանոցի շենքն
այս պահին

Գրականություն

1. Ազատյան Լ. *Հայ որբերը Մեծ եղեռնի*: Լոս Անջելես: 1995: շ. 1: 240 էջ:
2. Ալեքսանյան Կ. *Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1914-1922 թթ. Փաստաթղթերի ժողովածու. ՀՀ ազգային արխիվ*: Եր.: «Հայկարի» հրատ.: 2015: 511 էջ:
3. Ահարոնեան Գ. *Յուշամատեան Մեծ եղեռնի 1915-65, հրատարակություն «Զարթոնք» օրաթերթի*: Պէյրուս: «Ատլաս» հրատ.: 1965. 1119 էջ:
4. Ավագյան Ի. *Մեծ եղեռնը վերապրածները: Ծննդավայրիցս դեպի Տեր-Ջոր. Քաջունի Ղարագրոզյանի հիշողությունները*: Գյումրի: «Էլդորադո» հրատ.: 2004: 96 էջ:
5. Ավագյան Ի. *Մեծ եղեռնը վերապրածները: Մերաստիայի որբանոցից Մայր Հայաստան. Քաջունի Ղարագրոզյանի հուշապատումը*: // Մեծ եղեռն – 90: Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր: Գյումրի: «Դպիր» հրատ.: 2005. էջ 134-138:
6. Ավագյան Ի. *Մեծ եղեռնը վերապրածները: 1915. Բիթլիսյան ողբերգություն. Միհրան Ղազարյանի հուշապատումը*: Գյումրի: «Դպիր» հրատ.: 2008: 312 էջ:
7. Ավագյան Ի. *Մեծ եղեռնը վերապրածները: Հիշողություններ մեր ընտանիքի պատմության մի քանի պահերից. Ադասի Մակարյանի հուշապատումը*: Գյումրի: «Էլդորադո» հրատ.: 2015: 116 էջ:
8. Ավագյան Ի. *Մեծ եղեռնը վերապրածները: Մեր գնդի ճակատագիրը. Հովհաննես Թոշունյան-Հովհաննիսյանի հիշողությունները*: Գյումրի: «Էլդորադո» հրատ.: 2016: 336 էջ:
9. Քեթրահեան Շ., *Յուշեր ու նիշեր, անձեր ու անցքեր նախաեղեռնէն մինչև ներկայս*: Լոս Անձելես: «Ալկո փրինթինգ քոմփանի» հրատ.: 1990: 376 էջ:

References

1. Aharonian. G. *The Memorial Book of Great Crime 1915-65, edition of "Zartong" daily* [Yushamatean Mets Yegherrni 1915-65, hratarakut'yun <<Zart'vonk'>> orat'ert'i] Beirut: "Atlas" publication, 1965. 1119 p. (in Armenian)
2. Aleksanyan K. *Western Armenian Emigration in Alexandropol Province 1914-1922. Collection of Documents, National Archives of Armenia* [Arevmtahay gagh't'akanut'yuny Alek'sandrapoli gavarrum 1914-1922 t't'. P'astat'ght'eri zhoghovatsu, Hayastani azgayin arkhiv]. Yerevan: "Haykarli" LLC publication, 2012. 511 p. (in Armenian)
3. Avagyan I. *Those who have survived the Armenian Genocide. On the Way to Der-Zor. Memories of Cajuni Gharagozyan* [Mets yegherrny verapratsnery. Tsnndavayrits's depi Ter-Zor. K'ajuni Gharagozyani hishoghut'yunnery]. Gyumri: "Eldorado" publication, 2004. 96 p. (in Armenian)

4. Avagyan I. *From Sebastia's Orphanage to Mother Armenia (Memories of Kajuni Gharagozyan)* [Sebastiayi vorbanots'its" Mayr Hayastan (K'ajuni Gharagozyani hushapatumy)] // The Great Genocide-90. Proceedings of the Republican Scientific Session. Gyumri: "Dpir" publication, 2005. 134-138 pp. (in Armenian)
5. Avagyan I. *Those who have survived the Armenian Genocide. 1915. Bitlis tragedy: Memories of Mihran Ghazaryan* [Mets yegherrny verapratsnery. 1915. Bit'lisyan voghbergut'yun .Mihran Ghazaryani hushapatumy]. Gyumri: "Dpir" publication 2008. 312 p. (in Armenian)
6. Avagyan I. *Those who have survived the Armenian Genocide. From the History of our Family. Memories of Aghasi Makaryan* [Mets yegherrny verapratsnery. Hishoghut'yun mer yntanik'i patmut'yan mi k'ani paherits'. Aghasi Makaryani Hushapatumy]. Gyumri: "Eldorado" publication, 2015. 116 p. (in Armenian)
7. Avagyan I. *Those who have survived the Armenian Genocide, The retreat of our regiment: Memories of Hovhannes Trchunyan-Hovhannisyan* [Mer gndi chakatagiry. Hovhannes T'rrch'unyan-Hovhannisyan hushapatumy]. Gyumri: "Eldorado" publication, 2016. 336 p. (in Armenian)
8. Azatyan L. *Armenian Orphans of the Genocide* [Hay vorbery Mets yegherrni]. Los Angeles: 1995. v.1, 240 p. (in Armenian)
9. Keotahian S., *Memoirs. Heroes and characters, people and holes from the beginning to the present* [Yusher u nisher, andzer u ants'k'ernakhayegherrnen minch'ev nerkays]. Los Angeles: "Alko Printing Company" publication, 1990. 376 p. (in Armenian)

Ընդունվել է / Принята / Received on: 17.07.2023

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: 08.08.2023

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: 27 .11.2023

Տեղեկություններ հեղինակի մասին

Ինգա Էդուարդի ԱՎԱԳՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկն., դոցենտ, «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի տնօրեն, ԳԱԱ Շիրակի հայազխտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող, Գյումրի, ՀՀ, էլ. հասցե՝ inga.avagyan.76@mail.ru <https://orcid.org/0000-0001-6260-1467>

Inga Eduard AVAGYAN: PhD in History, Associate Professor, Director of the “Kumayri” Historical and Cultural Preserve-Museum, researcher at Shirak Center for Armenian Studies NAS, Gyumri, RA, e-mail: inga.avagyan.76@mail.ru <https://orcid.org/0000-0001-6260-1467>

Инга Эдуардовна АВАГЯН: канд. ист. наук, доцент, директор Историко-культурного музея - заповедника «Кумайри», научный сотрудник ИЦАИ НАН, Гюмри, РА, эл. адрес: inga.avagyan.76@mail.ru <https://orcid.org/0000-0001-6260-1467>

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
HISTORY
ИСТОРИЯ

ՀՏԴ՝ 93.930

DOI: 10.52971/18294316-2023.26.2-99

Վ Ա Հ Ա Ն Չ Ե Ր Ա Չ Ի Գ Ո Ր Շ Ո Ւ Ն Ե Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը Գ Թ Ա Մ Ր Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Ք Ա Ղ Ա Ք
Ա Լ Ե Ք Ս Ա Ն Դ Դ Ա Պ Ո Լ ՈՒ Մ ¹

Հեղինակ՝ Ա. Հովհաննիսյան

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Հայոց ցեղասպանության տարիներին և դրանից հետո կարևորագույն խնդիրներից մեկը որբերին որբանոցներում տեղակայելու և հայկական միջավայր տեղափոխելու խնդիրն էր: Ստորև ներկայացվում է Վահան Չերազի գործունեությունը և նրա համագործակցությունը Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեի հետ: Վահան Չերազը Ալեքսանդրապոլում աշխատել է Նպաստամատույցում, զբաղվել հայ որբերի խնամակալությամբ, դաստիարակությամբ, ինչպես նաև կազմակերպել է սկսուտական և մարզական մանկապատանեկան խմբեր: 1919 թ. Նպաստամատույցի ջանքերով Ալեքսանդրապոլի փողոցներից հավաքում էին թափառաշրջիկ հայ որբերին, որոնց բժշկական գնման ենթարկելուց հետո տեղավորում էին կա՛մ հիվանդանոցներում, կա՛մ որբանոցներում: Այս որբերից Չերազը ձևավորում էր իր խմբակները: Ալեքսանդրապոլի որբանոցներում երեխաները օրական երեք անգամ սնունդ էին ստանում այն դեպքում, երբ նրանց թիվը շուրջ 25.000 էր: Սա մարդկության պատմության մեջ երբևիցե գոյություն ունեցած ամենամեծ որբանոցն էր և կոչվում էր «Որբաքաղաք»: Մեթոդներ և նյութեր. Հոդվածը գրելիս օգտագործել ենք պատմահամեմատական, պատմափաստագրական, պատմաքննական, զուգորդման, վերլուծության, ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդներ: Հոդվածը խարսխված է Չերազին վերաբերող փաստաթղթերի, տեղեկությունների, այլ նյութերի և գրականության մեջ առկա նմանօրինակ նյութերի վերլուծության վրա: Վերլուծություն. Հոդվածում ներկայացվել է Չերազի կեր-

1. Սույն հոդվածն իբրև գեկուցում ներկայացվել է 2023 թ. մայիսի 19-ին Գյումրիում ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի հրավիրած «Ալեքսանդրապոլ. գթասրտության քաղաք» միջազգային գիտաժողովում:

պարը՝ որպես սկաուտապետի, որը ջանում էր ցեղասպանություն վերապրած երեխաներին մարմնակրթության և սկաուտականության միջոցով առողջացնել հոգեպես՝ հասկանալով, որ այս սերունդն է դառնալու Խորհրդային Հայաստանի հասարակության հիմքը: Լինելով խորապես հավատացյալ մարդ՝ նա հավատ էր սերմանում որբերի մեջ: Նա դարձավ նաև խորհրդային Հայաստանում սպորտի հիմնադիրներից մեկը: Արդյունքներ. Այսօր Գյումրիում Չերազի կերպարը օրինակ է բոլոր սպորտդպրոցներ և խմբակներ հաճախող երեխաների և երիտասարդների համար: Նրա անունն է կրում Շիրակի պետական համալսարանի լսարաններից մեկը: Չերազի արձանը կանգնած է համանուն փողոցի սկզբնամասում, իսկ գյումրեցի և հայաստանցի սկաուտապետերը փորձում են Չերազի մանկավարժական մոտեցումներով դաստիարակել և կրթել իրենց սաներին:

Բանալի բառեր՝ *Սմերկում, Վահան Չերազ, Օնիկ Յազմաճյան, Տիգրան Խոյյան, ազատագրում, որբեր, Ալեքսանդրապոլի որբանոց:*

Ինչպես հղել՝ Հովհաննիսյան Հ., *Վահան Չերազի գործունեությունը գրասրտության քաղաք Ալեքսանդրապոլում* // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Հ. 2 (26) 99-109 էջեր: DOI:10.52971/18294316-2023.26.2-99

ACTIVITIES OF VAHAN CHERAZ IN THE CITY OF MERCY – ALEXANDRAPOL

Heghine A. Hovhannisyan

Armenian Genocide Museum-Institute, Yerevan, RA

Abstract

Introduction: During the Armenian genocide and after it, the distribution of orphans in orphanages and the provision of an Armenian environment for them became the most important problem. The report examines the activities of Vahan Cheraz and his cooperation with the Middle East Committee. Methods and materials: We have used comparative-historical research, survey, combination, inductive and deductive methods. The article is based on documents, information and materials about Cheraz and analysis of materials available in the literature. The American aid committee for the Middle East was created in 1918 by the decision of the United States Congress. Vahan Cheraz worked at the American Relief Committee in Alexandropol, took care of and raised Armenian orphans, and also organized scout and sports youth clubs. In 1919 with the efforts of the Near East Relief, they begin to collect stray Armenian orphans from the streets, who after a medical examination were distributed either to the hospital or to orphanages. From these orphans, Cheraz formed his circles. In shelters, children ate three times a day, even when their numbers reached up to 25,000. This was the largest orphanage that ever existed in the history of mankind, which was called "Orphan City". Analysis: The article presents the appearance of Cheraz - a scout leader who tries to develop physical skills and the scout movement among orphans and rehabilitate the mental state of children who survived the Armenian genocide, realizing that this generation is the basis of the society of Soviet Armenia. Being a deeply religious man, he sowed it among orphans. He becomes one of the founders of sports in Soviet Armenia. Results: Today in Gyumri, the image of Cheraz is an example for all children and young man, who attend sports schools and clubs. The auditorium of Shirak State University is named after him. A statue of Cheraz stands at

the beginning of the street with the same name, and scout leaders from Gyumri and Armenia are trying to educate and train their students using Cheraz's pedagogical methods.

Key words: *Near East Foundation, Vahan Cheraz, Onik Yazmachyan, Tigran Khoyan, liberation, orphans, Alexandrapol orphanage.*

Citation: Hovhannisyán H. *Activities of Vahan Cheraz in the City of Mercy – Alexandrapol* // «Scientific Works» of SCAS NAS RA. Gyumri, 2023.V.2 (27). pp. 99-109.

DOI: 10.52971/18294316-2023.26.2-99

ДЕЯТЕЛЬНОСТЬ ВААНА ЧЕРАЗА В ГОРОДЕ МИЛОСЕРДИЯ – АЛЕКСАНДРОПОЛЕ

Гегине А. Оганнисян

Музей-институт геноцида армян, Ереван, РА

Аннотация

Введение: Во время армянского геноцида и после него важнейшей проблемой становится распределение сирот в сиротских приютах и обеспечение армянской среды для них. Ниже представляем деятельность Ваана Чераз и его сотрудничество с Ближневосточным комитетом. **Методы и материалы:** Статья написана на методах историко-сравнительного, исторического-исследовательского, историко-аналитического, исторического сопоставления и анализа и методах индукции и дедукции. В основу статьи легли документы, сведения и материалы о Черазе и на анализе аналогичных материалов, которые встречаются в научной литературе. Ближневосточный Американский комитет помощи был создан в 1918г. по решению конгресса США: Ваан Чераз работал в Американском комитете помощи в Александрополе, занимался опекой, воспитанием армянских сирот, а также организовывал скаутские и спортивные молодежные кружки. В 1919г. усилиями Комитета помощи начинают собирать бродячих армянских сирот с улиц, которых после медицинского осмотра распределяли или в больницу, или в сиротские приюты. Из этих сирот Чераз формировал свои кружки. В приютах дети питались три раза в день, в том случае, когда их число доходило до 25.000. Это был самый большой, когда-либо существовавший сиротский приют в истории человечества, который назывался «Сиротским городом». **Анализ:** В статье предстает облик Чераз – вожатого скаутов, который старается развивать физические навыки и скаутское движение среди сирот и реабилитировать душевное состояние детей, которые пережили Армянский геноцид, понимая, что это поколение является основой общества Советской Армении. Являясь глубоко верующим человеком - он сеял ее среди сирот. Он становится одним из основателей спорта в Советской Армении. **Результаты:** Сегодня в Гюмри образ Чераз является примером для всех детей и юнош, которые посещают спортивные школы и кружки. Его именем названа аудитория Ширакского государственного университета. Статуя Чераз стоит в начале улицы с тем же названием, а скаутвожатые Гюмри и Армении пытаются педагогическими методами Чераз воспитать и обучать своих учеников.

Ключевые слова: *Американский благотворительный комитет, Ваан Чераз, Оник Язмачян, Тигран Хоян, освобождение, сироты, Александропольские сиротские приюты.*

Как цитировать: Оганнисян Г. *Деятельность Ваана Чераз в городе милосердия – Александрополе* // «Научные труды» ШЦАИ НАН РА. Гюмри, 2023. Т. 2 (26). сс. 99-109.

DOI: 10.52971/18294316-2023.26.2-99

ՆԱԽԱԲԱՆ. Կետայանների կամ Չերազների տոհմն Ակնա Չերազ ավանից է: Հետագայում Կ. Պոլիս տեղափոխված Մահտեսի Մինաս ամիրայի ճյուղից է սերվել տոհմի թվով ութ ամիրա, որոնք վարել են ազգային ու պետական պաշտոններ [6]:

Վահան Չերազը ծնվել է 1886 թ. օգոստոսի 16-ին Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կ. Պոլսում: Մովորել է Պոլսի Կենտրոնական վարժարանում և նույն վարժարանի տղաներին սովորեցրել ֆուտբոլ խաղալ: Այնուհետև Չերազը կազմում է «Մանթրալ» ֆուտբոլի խումբը և «Փրոթի կղզի» ֆուտբոլի համանուն խումբը [8]: Ֆուտբոլային թիմեր կային ստեղծված նաև Ալեքսանդրապոլի որբանոցներում՝ Պոլիգոնում «Ալեքսանդր Մարտունի Մյասնիկյան» [14, էջ 388]:

1914 թ., երբ սկսվում է Առաջին աշխարհամարտը, Վահան Չերազը մեկնում է Թիֆլիս, ընդգրկվում Ջորավար Անդրանիկի կամավորական ջոկատում և նրա հրամանատարությամբ մասնակցում տարածաշրջանում ընթացող մարտական գործողություններին՝ ընդհուպ մինչև 1919 թ. [9, էջ 148]: Անդրանիկի ջոկատի կազմալուծումից հետո Չերազը մեկնում է Պոլիս, իսկ 1920թ. ՀՀ կրթության նախարար Նիկոլ Աղբալյանի հրավերով Պոլսից տեղափոխվում Ալեքսանդրապոլ, որպեսզի հայրենիքում զարգացնի մարզական կյանքը [16]:

Սկաուտապետերի համագործակցությունը ՀԲԸՄ-ի հետ

1920 թ. Տիգրան Խոյյանի և Օննիկ Յազմաճյանի հետ Չերազը միանում է ՀԲԸՄ եռանդամ այն մարմնին, որ Հայաստանի կառավարության հրավերով պիտի մեկնեի հայրենիք՝ սկաուտական և մարզական շարժում կազմակերպելու համար [8]: ՀԲԸ միությունը հնագույն և ամենախոշոր բարեգործական կազմակերպությունն է սփյուռքում: Այն հիմնադրվել է 1906 թ. եգիպտահայ ազգային գործիչ Պողոս Նուբարի ջանքերով, որը նաև եղել է կազմակերպության առաջին նախագահը, իր հիմնական նպատակներից մեկն է համարել հայ որբերի բարեխնամ գործունեությունը կազմակերպելը: 1915 թ.՝ ցեղասպանությունից հետո, կազմակերպությունը որբանոցներ և ապաստարաններ է հիմնել Կիլիկիայում, ապա Լիբանանում, Սիրիայում, Երուսաղեմում և այլուր: Այդ տարիներին ՀԲԸՄ-ի գործունեության կարևոր բնութագրերից էր համագործակցությունը արտասահմանյան տարբեր բարեսիրական կազմակերպությունների, մասնավորապես Ամերիկյան Նպաստամատույց կազմակերպության հետ, որը մեծ դեր խաղաց հայ որբերի փրկության և խնամատարության գործում [11 էջ 142]: Այս կազմակերպության հետ սերտորեն համագործակցեցին երեք սկաուտապետերը:

1915-1931 թթ. ցեղասպանությունը վերապրած որբերի խոշորագույն հատվածը կենտրոնացած էր Ալեքսանդրապոլում [3, էջ 950-952]: Հայաստանի խորհրդայնացումից հետո Չերազը նախընտրում է մնալ հայրենիքում, 1921թ. մասնակցում է փետրվարյան ապստամբությանը: Արդեն խորհրդային կարգերի օրոք Վահան Չերազը Ալեքսանդրապոլում աշխատում է Ամերիկյան նպաստամատույց կոմիտեում, զբաղվում է հայ որբերի խնամակալությամբ, կազմակերպում սկաուտական և մարզական մանկապատանեկան խմբեր [6]:

Ամերիկյան նպաստամատույցի գործունեությունը Ալեքսանդրապոլում

Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեն (Ամերկոմ), որին անդամակցում է Չերազը, ստեղծվել է 1918 թ. ԱՄՆ-ի կոնգրեսի որոշմամբ, մինչ այդ գործող և Առաջին համաշխարհային պատերազմից տուժած երկրներին օգնություն ցույց տվող Հայաստանի և Միջին Արևելքի նպաստի ամերիկյան կոմիտեի հիմքի վրա [17]: ՀՀ խորհրդարանը 1919 թ. մարտի 2-ին հաստատեց որբերի խնամքը ստանձնելու Ամերկոմի առաջարկը [14, էջ 57-58]: ՀՀ խնամատարության և աշխատանքի նախարար Մահակ Թորոպյանը և Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեն ներկայացնող Ջոն Էլդերը 1919 թ. ապրիլի 12-ին Երևանում կնքեցին համաձայնագիր որբերի և որբանոցների խնամքը 1919 թ. մայիսի 1-ից Ամերկոմի հոգածությանը հանձնելու վերաբերյալ [4, էջ 80-112]: Ցարական Բանակի լքած գորանոցներն ու պահեստները ապաստարան դարձան շուրջ 20.000 անտուն որբերի համար [17, էջ 120-138]: 1919 թ. Ալեքսանդրապոլի քաղաքագլխի հետ կնքած պայմանագրի համաձայն՝ Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույցը ստանձնեց քաղաքի հայ որբերի խնամքը [1]: Ստորև բերում ենք քաղաքագլուխ Լևոն Սարգսյանի և Ամերկոմի ներկայացուցիչների միջև 1919 թ. մայիսի 22-ին կնքված փաստաթղթից մի հատված.

Հայկական Հանրապետական կառավարության և Ամերիկյան Նպաստամատույց կոմիտեի ներկայացուցչի փոխադարձ համաձայնությամբ Ալեքսանդրապոլում գտնված տասը որբանոց և մի որբերի հիվանդանոց սարքեցյալ ցուցակի համաձայն իրենց բոլոր գույքերով, ծառայողներով և որբերով հանձնել Ամերիկյան Նպաստամատույց կոմիտեի տեղական ներկայացուցիչներին միս Շեյնին, միս Նիլին և մր. Միտչելին 1919 թ. մայիսի 1-ին [2, էջ 277]:

1919 թ. Նպաստամատույցի ջանքերով Ալեքսանդրապոլի փողոցներից հավաքում էին թափառաշրջիկ հայ որբերին, որոնց բժշկական գնման ենթարկելուց հետո տեղավորում էին կա՛մ հիվանդանոցներում, կա՛մ որբանոցներում: Ըստ «Յուշամատենան Մեծ Եղեռնի» աշխատության՝ միայն Կազախի պոստում միաժամանակ պատսպարվել է 15000 որբ [3, էջ 951]: Որբանոցներում երեխաները օրական երեք անգամ սնունդ էին ստանում այն դեպքում, երբ նրանց թիվը շուրջ 25.000 էր: Սա մարդկության պատմության մեջ երբևիցե գոյություն ունեցած ամենամեծ որբանոցն էր և կոչվում էր «Որբաքաղաք»: Մերձավոր Արևելքի Նպաստամատույցը զբաղվում էր ինչպես որբերի մասնագիտական կրթությամբ, այնպես էլ պարտավորություն էր ստանձնել աշխատանք փնտրել որբանոցից հեռացողների համար, նրանց տեղավորել հարմար ընտանիքներում, հետևել նրանց ապրելակերպին և անհրաժեշտության դեպքում ցուցաբերել ցանկացած օգնություն: Մրան գուգահեռ՝ Նիկոլ Աղբալյանի ջանքերով առողջ սերունդ դաստիարակելու համար որբերին ներգրավում էին մարմնակրթական և սկաուտական խմբակների մեջ: Այստեղ կարևոր դերակատարություն ունեցան ՀԲԸՄ եռանդամ մարմնի երեք նշանավոր սկաուտապետերը: Վահան Չերազը, որ իր գործունեությունը կազմակերպեց Ալեքսանդրապոլում, Տիգրան Խոյանը և Օննիկ Յազմաճյանը՝ Երևանում և Ղարաբաղի սայում [15]: Որբերի տեղավորման խնդրի լուծման աշխատանքներն սկիզբ են առնում 1925թ. և շարունակվում են մինչ որբանոցների լուծարումը՝ 1929-1930 թթ.: Ոչ մի որբ չէր հեռանում որբանոցից անորոշ կարգավիճակով. նրանք որոշ ժամանակ դեռ

մնում էին կազմակերպության հսկողության ներքո: Չափահասները, հեռանալով որբանոցներից, աշխատանք էին գտնում և հայկական ընտանիքներ էին կազմում [13]: Իսկ ստեղծված կիսամարզական և սկաուտական խմբերի անդամները ստացան լիարժեք սպորտային պատրաստվածություն, ինչը հայկական նոր առողջ ընտանիքներ ստեղծելու գրավականն էր: Ամերկումը առերևույթ սերտ հարաբերություններ ուներ Անգլոկոմի հետ: Համագործակցության նախաձեռնություն էր երկու կոմիտեների սկաուտական խմբերի միացյալ մարզահանդեսի անցկացումը, որին հրավիրված էին ՀԽՍՀ լուսժողկոմի բարձրաստիճան պաշտոնյաներ [12, էջ 18]: 1931թ. Ամերիկյան դադարեցրեց իր նպաստամատույց գործունեությունը Ալեքսանդրապոլում: Հիմնական պատճառն այն էր, որ Ամերիկյան ցանկանում էր որբերին կրթել ամերիկյան առաջադեմ, իսկ խորհրդրդային Հայաստանը՝ բոլշևիզմի գաղափարներով: Ալեքսանդրապոլում գործում էին նաև փոքր որբանոցներ, որտեղ մանուկները նույնպես կրթվում և դաստիարակվում էին: 1922 թ. Բողիլ Բյորնի խնամքի տակ գտնվող «Լուսաղբյուր» կոչվող որբանոցում 33 որբուկները նույնպես զբաղվում էին մարմնամարզությամբ [5]: Բյորնի որբախնամ գործունեությունը կասեցվում է 1924թ. Խորհրդային Հայաստանի կառավարության կողմից. նրա փոքրիկ որբանոցը լուծարվում է, որբերը տեղափոխվում են Ամերկոմի որբանոցներ [5]: Նրա որբերից մի քանիսը անդամագրվում են Չերազի մարմնամարզական և սկաուտական խմբերին: Թե՛ Չերազը և թե՛ Յազնիկը մի նպատակ էին հետապնդում՝ մարմնամարզության միջոցով կերտել առողջ ոգի, հոգեպես ընկճված որբերին պարզել նոր շունչ՝ ապրելու և վերընձյուղվելու նպատակով: Բացի այն, որ Չերազը մեծ սկաուտապետ էր, նա նաև խորապես աստվածապաշտ անձնավորություն էր: Այս մասին է վկայում Կազաչի պոստ որբանոցում տեղի ունեցած միջադեպը:

Վահան Չերազը և հայ որբերը

1922 թ. աշնանը Չերազն իր տղաներին մի արտասովոր հանձնարարություն է տալիս՝ հսկել Ալեքսանդրապոլի Կազաչի պոստում մեծահասակ որբուհիների զբաղեցրած որբանոցները: Այս հրահանգը Չերազն արձակում է, երբ համոզվում է, որ ճիշտ են լուրերն այն մասին, թե որբուհիների արտաքննողների մոտ գտնվող թմբերի տակ մեծ թվով վիժած պտուղներ են թաղված [14, էջ286-287]: Ցանկանալով հաստատել կամ հերքել այդ լուրերը՝ նա որոշեց քննել գործը և Մերձավորարևելյան Նպաստամատույցի սուրհանդակին ուղարկեց ընկերոջ՝ Օնիկ Յազնիկյանի մոտ խնդրելով, որ գա և միանա գործի քննությանը: Քննության արդյունքում հաստատվում են Չերազի կասկածները, ուստի Չերազը և Յազնիկյանը կազմակերպում են այդ պտուղների քրիստոնեավայել վերաթաղումը՝ գերեզմանի վրա դնելով փայտի խաչ: Չերազը խոր աստվածավախություն էր դաստիարակում նաև իր սկաուտներին: Յազնիկյանը իր հուշերում նշում է, որ այդ օրվանից հետո սկաուտները գիշեր-ցերեկ հսկում էին մեծահասակ աղջիկների որբանոցները [14, էջ286-287]: Այս դրվագը հետաքրքիր է նաև նրանով, որ Վահան Չերազի խնամակալության և դաստիարակության տակ գտնվող տղաները դառնում էին իր օգնականները և օժանդակում նրան իր աշխատանքներում: Չերազի գործունեության կարևոր նպատակը ցեղասպանված որբերի առողջ ընտանիքների ստեղծումն էր: Մտահոգված լինելով իր որբերի ապագայով՝ Չերազը նախաձեռնում է

Արիաշեն գյուղի կառուցումը Սարդարապատում: Սակայն Արիաշենի կառուցումը խորհրդային կառավարության ջանքերով կիսատ է մնում [10, էջ 391]:

Չերազի ճակատագիրը և նրա ընտանիքը

1925 թ. հունվարի 12-ին Էջմիածնի տաճարում Վահան Չերազը պսակադրվում է Վարդանուշ Անդրեասյանի հետ [7]: Հայոց ցեղասպանությունը վերապրած Վարդանուշ Անդրեասյանը անցել էր ցեղասպանության բռնով, նրա առաջին ամուսնուն՝ դպրոցի տնօրենին, ողջ-ողջ այրել էին իր աշակերտների հետ [18]: Ընտրելով Վարդանուշին՝ նա իր ողջ գաղափարախոսությունը փորձում է ներդնել իր նորաստեղծ ընտանիքի հիմքում, սակայն պսակադրությունից տասնհինգ օր հետո Չերազին ձերբակալում են Ալեքսանդրապոլում, բանտարկում Թիֆլիսում, ապա՝ արքայապետ Միքիլ [6]: Ըստ 1926 թ. համաներման՝ Չերազը ազատվել է պատիժ կրելուց [7]: Նա կրկին ձերբակալվել է 1927թ. սեպտեմբերին Մերձավոր Արևելքի օգնության այլ հայ աշխատակիցների հետ և բանտարկվել Թիֆլիսում: Նրան մեղադրանք է առաջադրվել լրտեսության և Հայ Հեղափոխական Դաշնակցության անդամ լինելու մեջ: Եզրակացությունը եղել է հետևյալը. «Չերազին ճանաչել որպես սոցիալապես վտանգավոր և լրտեսության մեջ չափազանց կասկածելի տարր» [18]: Չերազին գնդակահարում են 1927 թ. դեկտեմբերի 21-ին Մետեխի բանտում [6]: Ճակատագիրը դաժան գտնվեց նաև Վարդանուշի հանդեպ: 1937 թ. նա, 42 տարեկան հասակում, սպանվեց Գյումրու բանտում՝ դառնալով ստալինյան բռնաճնշումների զոհ: Նրան առաջադրվել էր կեղծ մեղադրանք, որի համաձայն՝ Վարդանուշը իր տանը ակտիվիստների հետ հանդիպումներ էր կազմակերպել: Նրանց որբացած տասնամյա աղջկան՝ Բյուրակն Անդրեասյան-Չերազին որդեգրել է մորեղբայրը՝ Վարդգես Անդրեասյանը, որը, վախենալով հալածանքներից, փոխել է աղջկա ազգանունը [18]:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ: Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեն որբախնամ գործունեություն ծավալելով Արևելյան Հայաստանում, մասնավորապես՝ Ալեքսանդրապոլում, մահվան ճիրաններից փրկեց հազարավոր որբերի, որոնք ապրեցին, կրթվեցին և ստացան զանազան մասնագիտություններ Ալեքսանդրապոլի Սևերսկի, Կազաչի պոստ և Պոլիգոն որբանոցներում: Որբերի կրթության կարևոր հիմնասյուները կազմեցին մարմնակրթությունը և սկաուտական խմբերի ստեղծումը: Այս գործում աչքի ընկան Վահան Չերազը, Օնիկ Յազմաճյանը և Տիգրան Խոյյանը: Սկաուտապետերի կարգախոս դարձավ «Առողջ մարմնում, առողջ ոգի» կարգախոսը, որի արգասիքն էր դառնալու մարմնապես առողջացած երեխաների՝ վշտով լեցուն հոգիների առողջացումը, առողջ ընտանիքների ստեղծումը և սպորտի զարգացումը արդեն Խորհրդային Հայաստանում:



Նկ. 1: Վահան Չերազը սկաուտական համազգեստով



Նկ. 2: Վարդանուշ Անդրեայան



Նկ. 4: Բյուրակն Անդրեայան-Չերազ



Նկ. 3: Վահան Չերազի արձանը համանուն փողոցի սկզբնամասում՝ Գյումրի



Նկ.5: Սկաուտապետեր Վահան Չերազը, Օնիկ Յազմաճյանը և Տիգրան Խոյյանը Կ. Պոլսից հայրենիք վերադարձին, 1920 թ.

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Ալեքսանդրապոլի որբերը «Կազաչի պոստ» որբանցում «100 լուսանկարչական պատմություններ Հայոց ցեղասպանության մասին» հատուկ գործ // http://www.genocide-museum.am/arm/online_exhibition_10.php (12.01.2023)
2. Ալեքսանյան Կ. *Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1914-1922 թթ.* Փաստաթղթերի ժողովածու, Երևան. 2012. 511 էջ:
3. Ահարոնեան Գ. *Յուշանատեան Մեծ եղևնի. 1915-65, հրատարակություն «Զարթոնք» օրաթերթի:* Պէյրուբ: «Ատլաս» հրատ.: 1965. 1119 էջ:
4. Ավետիսյան Ս. *Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի (Ամերկոմ) գործունեությունը Հայաստանում 1918-1930 թթ.,* Երևան: «ԳԱԱ ՊԻ» հրատ.: 2009: 227 էջ:
5. Բողիկ Բյորն, Հայոց ցեղասպանության ակնատեսն և լուսանկարիչ (1871-1960) // http://www.genocide-museum.am/arm/online_exhibition_4.php (02.05.2021)
6. Բրոթի կղզիի ասպետին, Չերազին, Վահան Չերազ // (1886-1927) http://www.genocide-museum.am/arm/Vahan_Cheraz.php (21.11.2022)
7. Իշխանյան Վ. Ընտանեկան այբում. Վահան Չերազ, Մաս 2 // <https://inknagir.org/?p=6573> (21.11.2022)
8. ՀԲԸՄ-ի նահատակները, Վահան Չերազ // <https://www.Homenetmen.org/hy/martyrs/%D5%8E%D4%B1%D5%80%D4%B1%D5%86+%D5%89%D4%B5%D5%90%D4%B1%D4%B6/2> (12.01.2023)
9. Հովհաննիսյան Հ. *Ռուբեն Հերյանի և Վահան Չերազի գործունեության համեմատական վերլուծություն* // ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի: Հ. 3 (24): 2021: էջեր 148-154:
10. Մարտոյան Թ. *Ալեքսանդրապոլը՝ հայ մանկանց բույն. Վահան Չերազի բարեխնամ գործունեությունը* // Հայերի փրկության գործը Մերձավոր Արևելքում 1915-1923 թթ., Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, նոյեմբերի 8-9 2019թ. Երևան «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ: էջեր 376-396:
11. Մելքոնյան Է. *Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության պատմություն.* Երևան: «Մուղնի» հրատ.: 2005: 582 էջ:
12. Մերոպ Արքեպիսկոպոս Ազնեան. *Անգլիական Օգնության կոմիտեի (Անգլկոմ) գործունեությունը Հայաստանում 1920-ական թվականներին.* Փաստաթղթերի և նյութի ժողովածու. Մատենաշար 103: Երևան: «ԳԱԱ ՊԻ» հրատ. : 2014: 22 էջ:
13. Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույցի պատմությունը // http://www.genocide-museum.am/arm/online_exhibition_10.php (12.01.2023)
14. Ներսիսյան Ն. *Որբաքաղաք. Նպաստամատույց աշխատողներ, կոմիտեներ և «Նոր Հայաստանը կառուցողներ», Ալեքսանդրապոլ-Լենինական 1919-1931:* Երևան: «Չանգակ 97» հրատ.: 2018: 655 էջ:
15. Սպորտի զարգացումն առաջին հանրապետությունում. *Բնչպես մոխիրներից հառնեց ասնն ինչ* // <https://armeniasputnik.am/20200417/sporti-zargacumn-arajin-hanrapetutyunu> m-22738983.html (11.06.2023)
16. Վահան Չերազ. Որբերի մարմնի, մտքի և ոգու կերտողը // <http://archive3.ankakh.com/article/101547/%E2%80%8Bvahan-chyeraz%E2%80%A4-vorbyeri-marmni--mtqi-yev-vogu-kyertvoghe> (14.04.2023)
17. James L. Barton. *Story of Near east relief (1915-1930) an interpretation.* New York. The Macmillan company 1930. 480 p.
18. Birth of Vahan Chera (August 16, 1886) <http://thisweekinarmenianhistory.blogspot.com/2016/08/birth-of-vahan-cheraz.html> (18.02.2023).

References

1. *AGBU martyrs, Vahan Cheraz* [HBYM-i nahatakner, Vahan CH'eraz] <https://www.homenetmen.org/hy/martyrs/%D5%8E%D4%B1%D5%80%D4%B1%D5%86+%D5%89%D4%B5%D5%90%D4%B1%D4%B6/2> (12.01.2023) (in Armenian)
2. Aleksanyan K. *The Western Armenian emigration in Alexandropol province in 1914-1922*. [Arevmtahay gaght'akanut'yuny Alek'sandrapoli gavarrum 1914-1922 t't']. Collection of documents, Yerevan. 2012. 511 p. (in Armenian)
3. Aharonian. G. *The Memorial book of Great Crime 1915-65, edition of "Zartong" daily* [Yushamatean Mets Yegherrni 1915-65, hratarakut'yun <<Zart'vonk'>> orat'ert'i] Beirut: "Atlas" publication, 1965. 1119 p. (in Armenian)
4. Avetisyan S. *Activities of the American Relief Committee for the Middle East (Amercom) in Armenia 1918-1930* [Merdzavor Arevelk'i Amerikyan npastamatuyts' komite (Amerkom) gortsuneut'yuny Hayastanum 1918-1930 t't'.] Yerevan. "Institute of History" ed. 2009. 227 p. (in Armenian)
5. *A History of the American Benefit of the Middle East* [Merdzavor Arevelk'i Amerikyan npastamatuyts'i patmut'yuny] http://www.genocide-museum.am/arm/online_exhibition_10.php (12.01.2023) (in Armenian)
6. *Alexandropol's Orphans At "Kazachi Post" Orphanage. From the special project "100 photo stories about the Armenian Genocide"*. [Alek'sandrapoli vorbery «Kazach'i post» vorbanots'um «100 lusankarch'akan patmut'yunner Hayots' ts'eghaspanut'yan masin» hatuk nakhagtsits] <http://www.genocide-museum.am/arm/23.11.2019-100photos.php> (12.01.2023) (in Armenian)
7. Birth of Vahan Cheraz (August 16, 1886) <http://thisweekinarmenianhistory.blogspot.com/2016/08/birth-of-vahan-cheraz.html> (18.02.2023).
8. *Bodil Biorn, Armenian Genocide witness and photographer (1871-1960)* [Bodil Byorn, Hayots' ts'eghaspanut'yan akanates yev lusankarich' (1871-1960)] http://www.genocide-museum.am/arm/online_exhibition_4.php (02.05.2021) (in Armenian)
9. Hovhannisyan H. *Comparative analysis of the activities of Ruben Heryan and Vahan Cheraz* [Ruben Heryani yev Vahan CH'erazi gortsneut'yan hamematakan verlutsut'yun] // «Scientifik works» of SCAS NAS RA, Gyumri, 2021, v. 3(24), pp 148-154 (in Armenian)
10. Ishkhanyan V. *Family album. Vahan Cheraz, part 2* [Ishkhanyan V., yntaneakan albom. Vahan CH'eraz, mas 2] <https://inknagir.org/?p=6573> (21.11.2022) (in Armenian)
11. Martoyan T. *Alexandropol, a nest of Armenian children. The benevolent activities of Vahan Cheraz* [Alek'sandrapoly, hay mankants' buyn. Vahan CH'erazi barekhnam gortsuneut'yuny] // The cause of the salvation of Armenians in the Middle East 1915-1923, collection of materials of the international conference, November 8-9, Yerevan, 2019. "Armenian Genocide Museum-Institute" Foundation. pp 376-396 (in Armenian)
12. Melkonyan E. *History of the Armenian Charitable General Union*. [Haykakan Baregortsakan Yndhanur Miut'yan patmut'yun] Yerevan: "Mughni" ed. 2005. 582 p. (in Armenian)
13. Mesrop Archbishop Ashdjian. *The activities of the English Relief Committee (Anglicom) in Armenia in the 1920s*. [Angliakan Ognut'yan komitev (Anglkom) gortsuneut'yuny Hayastanum 1920-akan t'vakannerin]. Collection of documents and materials. Directory 103. Yerevan: "Institute of History" ed. 2014. 22 p. (in Armenian)
14. Nersisyan N. *The City of Orphans. Relief workers, commissars and "Builders of New Armenian" Alexandropol/Leninakan 1919-1931*. Yerevan: Publication Zangak -97, 2018 655 p.
15. *The development of sports in the First Republic. how everything rose from the ashes* [Sporti zargats'umn Arrajin hanrapetut'yunum. inch'pes mokhirnerits' harnets' amen inch'] <https://armeniasputnik.am/20200417/sporti-zargacumn-arajin-hanrapetutyunum-22738983.html> (11.06.2023) (in Armenian)
16. *"To the Knight of the Isle of Broth" by Cheraz, Vahan Cheraz (1886-1927)* [«Brot'i kghzii aspetin», CH'erazin, Vahan CH'eraz (1886-1927)] <http://www.genocide-museum.am/arm/VahanCheraz.php> (21.11.2022) (in Armenian)

17. *Vahan Chera. the builder of body, mind and spirit of orphans* [Vahan CH'era. vorberi marmni, mtk'i yev vogu kertoghy] [http://archive3.ankakh.com/article/101547 /%E2%80%8B vahan-chyeraz%E2%80%A4-vorbyeri-marmni--mtqi-yev-vogu-kyertvoghe](http://archive3.ankakh.com/article/101547/%E2%80%8Bvahan-chyeraz%E2%80%A4-vorbyeri-marmni--mtqi-yev-vogu-kyertvoghe) (14.04.2023) (in Armenian)

Ընդունվել է / Принята / Received on: 10.08.2023
Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: 30.08.2023
Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: 27. 11. 2023

Տեղեկություններ հեղինակի մասին

Հեղինե Արտակի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ավագ օպերատոր, Երևան, ՀՀ,
էլ. հասցե՝ hovhannisyana@mail.ru <https://orcid.org/0009-0004-5247-2146>

Heghine Artak HOVHANNISYAN: senior operator of Armenian Genocide Museum-Institute, Yerevan, RA,
e-mail: hovhannisyana@mail.ru <https://orcid.org/0009-0004-5247-2146>

Гегине Артаковна ОГАННИСЯН: Музей-институт геноцида армян, старший оператор, Ереван, РА,
эл.адрес: hovhannisyana@mail.ru <https://orcid.org/0009-0004-5247-2146>

ՀՏՂ՝ 902.4

DOI:10.52971/18294316-2023.26.2-110

ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ¹

Լուսինե Ս. Ալեքսանյան

Աստղիկ Գ. Միսնյան

«Պատմամշակութային արժեք-թանգարանների և պատմական միջավայրի
պահպանության ծառայություն» ՊՈԱԿ, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Հոդվածը նվիրված է «Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի Հնագիտության ֆոնդերի հնագիտական առարկաների հանձնման գործընթացին, մասնավորապես՝ «Մեծամորի» հայ-լեհական արշավախմբի կողմից «Մեծամոր» պատմահնագիտական արժեք-թանգարանի ֆոնդերը հնագիտական առարկաներով համալրելու գործընթացին: *Մեթոդներ և նյութեր.* Աշխատանքն իրականացնելու ընթացքում օգտվել ենք պատմահամեմատական մեթոդից, համադրվել է առարկաների թանգարանայնացման, պահպանության և վերականգնման ընթացքում տարբեր մասնագետների կողմից կիրառվող պրակտիկան, կատարվել է վերլուծություն թեմայի շուրջ: *Վերլուծություն.* Մշակման են ենթարկվել վերականգնման և ամրակայման ընթացքի հետ կապված փաստաթղթերը, ինչպես նաև հանձնման և ընդունման ակտերը: Վերոնշյալ թղթափաթեթային կազմվել է դեռևս մասնագետների կողմից, սակայն հեղինակները կատարել են ուսումնասիրություններ և համապատասխանացրել են ներկայիս պահանջներին և ժամանակի մարտահրավերներին: *Արդյունքներ.* Աշխատանքի արդյունքում ներկայացվել են այն հստակ քայլերը, որոնք անհրաժեշտ է կատարել ցանկացած առարկայի թանգարանայնացման և պահպանման գործընթացի շրջանակներում: *Հեղինակների ներդրումը.* Լուսինե Ալեքսանյանը ուսումնասիրել և ներկայացրել է ֆոնդերի պահ-

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6A060 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

պանման, հաշվառման և փաստաթղթավորման հետ կապված գործընթացը: Աստղիկ Սիմոնյանը ներկայացրել է թանգարանային առարկաների ամրակայման և վերականգնման գործընթացը, տվել է պահպանության համար անհրաժեշտ պայմանների չափորոշիչները:

Բանալի բառեր` *հնագիտություն, թանգարանայնացում, թանգարանային առարկա, ամրակայում, վերականգնում, պահպանություն, փաստաթղթավորում, Մեծամոր:*

Ինչպես հղել` Ալեքսանյան Լ., Սիմոնյան Ա., *Թանգարանային հնագիտական հավաքածուների հաշվառման և պահպանման առանձնահատկություններն արդի փուլում* // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Հ. 2(26): 110-118 էջեր: DOI: 10.52971/18294316-2023.26.2-110

FEATURES OF ACCOUNTING (CONSERVATION) AND STORAGE OF MUSEUM ARCHAEOLOGICAL COLLECTIONS AT THE MODERN STAGE

Lusine S. Aleksanyan

Astghik G. Simonyan

“Service for the Protection of Historical Environment and Cultural Museum-Reservations”
SNCO, Yerevan, RA

Abstract

Introduction: This article is dedicated to the process of transmission the archaeological objects of the Archaeology funds of the "Service for the Protection" SNCO, in particular to the process of adding archaeological artefact to the funds of the "Metsamor" Historical Archaeological Reserve-Museum by the "Metsamor" Armenian-Polish expedition. **Methods and materials:** We used the historical-comparative method, the practices used by various specialists during the museumization, conservation and restoration of objects were compared, an analysis was made on the topic. **Analysis:** The documents related to the restoration and conservation process, as well as the acts of transmission-reception, was processed. The above documentation is still compiled by professionals, but the authors have done research and adapted it to the current requirements and challenges of the time. **Results:** As a result of the work, the clear steps that need to be performed within the museumization and preservation process of any object have been presented. **Authors Contribution:** Lusine Aleksanyan studied and presented the process related to the preservation, safeguarding and documentation of funds. Astghik Simonyan presented the process of conservation and restoration of museum objects, gave the standards of conditions necessary for preservation.

Key words: *Archaeology, museumization, museum artefact, conservation, restoration, preservation, documentation, Metsamor.*

Citation: Aleksanyan L., Simonyan A. *Features of Accounting and Storage of Museum Archaeological Collections at the Modern Stage.* // “Scientific works” of SCAS NAS RA. Gyumri, 2023. V. 2(26). pp.110-118. DOI: 10.52971/18294316-2023.26.2-110

ОСОБЕННОСТИ УЧЕТА И ХРАНЕНИЯ МУЗЕЙНЫХ АРХЕОЛОГИЧЕСКИХ АРТЕФАКТОВ НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ

Լուսինե Ս. Ալեքսանյան

Աստիկ Գ. Սիմոնյան

“Служба по охране исторической среды и историко-культурных музеев-заповедников”

ГНО, Ереван, РА

Аннотация

Введение: В статье рассматривается процесс передачи археологических артефактов Фонду археологии ГНО «Служба по охране», в частности, процесс приема-сдачи в коллекцию Историко-археологического музея-заповедника “Мецамор” археологических артефактов, найденных во время раскопок, осуществленных армяно-польской экспедицией на территории археологического памятника “Мецамор” и их документирования. **Методы и материалы:** В ходе работы были использованы методы анализа, историко-сравнительный, проведен сравнительный анализ итогов мониторинга практики, применяемой различными специалистами при музеефикации, консервации и реставрации археологических предметов. **Анализ:** Были проанализированы документы, связанные с процессом реставрации и консервации, а также типовые акты приема-сдачи, которые были составлены соответствующими специалистами. Авторы предлагают усовершенствовать их соответственно к требованиям. **Результаты:** В результате работы представлены конкретные действия, которые необходимо выполнить в процессе музеефикации, реставрации и хранения артефакта. **Вклад авторов:** Лусине Алексанян проанализировала и предоставила материалы, связанные с хранением, учетом и учетной документацией. Астхик Симонян проанализировала процесс реставрации и консервации музейных предметов, зафиксировала режим хранения, необходимый для долговременного хранения археологических артефактов.

Ключевые слова: археология, музеефикация, музейный артефакт, консервация, реставрация, хранение, документация, Мецамор.

Как цитировать: Алексанян Л., Симонян А. Особенности учета и хранения музейных археологических артефактов на современном этапе. // “Научные труды” ШЦАИ НАН РА. Гюмри, 2023. Т.2 (26). сс.110-118. DOI: 10.52971/18294316-2023.26.2-110

ՆԱԽԱԲԱՆ Հողվածի թեման տարբեր ժամանակներում հետաքրքրել է ոլորտի մասնագետներին և ստիպել կազմել հնագիտական հավաքածուների հաշվառման և փաստաթղթավորման անհրաժեշտ գործիքակազմ, տալ առարկաների վերականգնման և ամրակայման հստակ քայլեր՝ ելնելով առարկայի նյութից և, իհարկե, նշել այն պայմանները որոնք անհրաժեշտ է առարկայի պատշաճ պահպանման համար: Վերոնշյալի մասին առկա է գրականություն, որը, սակայն, հիմնված է կոնկրետ երկրում առկա հավաքածուների ուսումնասիրության վրա, ուստի կարիք կա նմանատիպ ուսումնասիրություն կատարել հենց ՀՀ-ի օրինակով: Մասնագետների կողմից արդեն իսկ եղել են կազմված փաստաթղթեր և մեթոդներ թեմայի շուրջ, որը սակայն ժամանակ առ ժամանակ պետք է վերանայել և համապատասխանեցնել ժամանակի արդի պահանջներին և,

ինչու չէ, օգտվել գիտատեխնիկական արդի նվաճումներից և բարելավել առկա պահպանության պայմաններն ու վերականգնման, ամրակայման գործընթացները:

Աշխատության նպատակն է փաստագրել այն ճանապարհը, որն անցնում է ցանկացած հնագիտական առարկա թանգարանայնացման ամբողջ գործընթացի ժամանակ (սկսած առարկայի թանգարան հանձնումից՝ մինչև առարկայի վերականգնում և ֆոնդավորում), վեր հանել թանգարանայնացման ընթացքում առաջացած խնդիրները, տալ առարկայի թանգարանայնացումից հետո անհրաժեշտ պահպանության պայմանների չափորոշիչները:

Թանգարանայնացման գործընթացի վերջնանպատակը, կարելի է կարծել, առարկայի պատշաճ փաստաթղթավորումն ու հանձնումն է թանգարանին: Մակայն առարկայի հանդեպ թանգարանի մասնագետի պատասխանատվությունն այսքանով չի ավարտվում. սրան հաջորդում է ոչ պակաս կարևոր մի գործընթաց, որը, կարելի է ասել, իրենից չի ենթադրում ավարտ: Բանն այն է, որ ֆոնդավորելուց հետո առարկան կարիք ունի անընդհատ մոնիթորինգի և ժամանակ առ ժամանակ վերականգնման և ամրակայման, որի ոչ պատշաճ կատարման դեպքում առարկան ենթարկվում է անվերադարձ կորստի: Ոչ միայն ՀՀ-ում, այլև ամբողջ աշխարհում այսօր շարունակում են խոցելի մնալ թանգարանային առարկայի պահպանությունն ու փոխանցումը հաջորդ սերունդներին: Դրա պատճառները շատ են. սկսած հաճախակի դարձած բնական աղետներից (հրդեհ, երկրաշարժ, ջրհեղեղ ևն) և վերջացրած մարդածին գործոններով, ինչպիսիք են պատերազմը, պետության կողմից ոչ անհրաժեշտ քանակի օգնությունը թանգարաններին, թանգարանների տեխնիկապես ոչ բավարար հագեցվածությունը, նաև թանգարանի անձնակազմի ոչ բավարար պատրաստվածությունը վերոնշյալ մարտահրավերներին: Այսպիսով, թանգարանային առարկայի պահպանության պատշաճ կազմակերպումը բոլոր ժամանակներում շարունակում է մնալ արդիական:

Առարկայի ֆոնդավորում և պահպանություն

Հայաստանի Հանրապետության թանգարանները տարեցտարի համալրվում են հնագիտական արշավախմբերի գործունեության արդյունքում ձեռք բերված տարածամանակյա նոր նյութերով: Դրանց ընդունման, գրանցման, պահպանման, վերականգնման և հանրահռչակման վերաբերյալ ինչպես առաջ, այնպես և հիմա ծագում են բազմաթիվ խնդիրներ: Ուստի հնագիտական գտածոյի թանգարանայնացման կանոնակարգի ճիշտ սահմանումն ու իրականացումը կարևոր դեր ունի դրա հնարավոր երկար և անխաթար պահպանման գործում:

Թանգարանի ֆոնդի համալրման աշխատանքում հնարավոր սխալներից խուսափելու, առարկաների պատմամշակութային, գիտական, գեղագիտական և թանգարանային նշանակությունը որոշելու նպատակով հրավիրվում են փորձագետներ, որոնք տալիս են համապատասխան եզրակացություն՝ թանգարանի ֆոնդ ընդունելու վերաբերյալ: Փորձագետներից կազմված «Ֆոնդային հանձնաժողովը» ձևավորվում է տնօրենի հրամանի հիման վրա և հաստատվում ԿԳՄՄՆ-ի կողմից: Հանձնաժողովի դրական եզրակացությունը ստանալուց հետո սկսվում է առարկաների թանգարանայնացման հաջորդ փուլը:

Թանգարանի կողմից համալրման նպատակով թանգարանային նշանակության առարկաների ձեռքբերման բոլոր քայլերը ամրագրվում են ներթանգարանային կարգով հաստատված համապատասխան փաստաթղթերով: Նյութերն ընդունվում են ժամանակավոր պահպանության *ստացականով*: Համալրման նպատակով ժամանակավոր պահպանության հանձնված առարկաները պահվում են նախնական պահպանության ֆոնդասենյակում և գրանցվում են Նախնական ֆոնդի (ՆՖ) մատյանում՝ ստանալով թանգարանային առարկայական գույքային հերթական համար: Նախնական ֆոնդում հաշվառված և ծածկագրված առարկաները, անցնելով փորձաքննություն, թանգարանի ֆոնդային գնող հանձնաժողովի որոշմամբ ստանում են թանգարանային առարկայի կարգավիճակ: Առարկայի՝ թանգարանային առարկայի կարգավիճակ ստանալու փաստը ամրագրելու համար կազմվում է մշտական պահպանության ընդունման ակտ (նկար 1): Ակտի ստորագրվելու և ներթանգարանային կնիքով հաստատվելուց հետո արդեն թանգարանային առարկաները գրանցվում են Գլխավոր գույքամատյանում: Այսպիսով առարկան ստանում իր հերթական (ըստ ակտի) և կոտորակային (ըստ ակտում ներառված առարկաների քանակի) համարները:

Թանգարանի հիմնական ֆոնդում՝ գլխավոր մատյանում ընդգրկված առարկաները, գիտական մեկնաբանությունից հետո, բաժանում են հավաքածուների կամ ֆոնդերի և գրանցում համապատասխան բաժինների կամ ֆոնդերի մատյաններում և այսպիսով, անցնում գրանցման ու մշակման երկրորդ փուլ:

Թվարկված փուլերից յուրաքանչյուրում առարկան անցնում է ֆիզիկական և գիտական ուսումնասիրություններ. փաստվում է նյութը, պահպանվածության աստիճանը:

Թանգարանային առարկայի ամբողջականության պահպանումը և պատշաճ միջոցներով ապահովումը, այն ընդունման-հանձնման ակտով ընդունելու պահից, հանդիսանում է թանգարանի հիմնական պարտականությունը տվյալ առարկաների նկատմամբ:

Այս ամբողջ գործընթացը հենց սկզբից պետք է իրականացվի ընդունված ընթացակարգով և համապատասխան թղթավարությամբ: Փաստաթղթային փաթեթի պատրաստումը պետք է արձանագրի ինչպես առարկայի փաստացի ֆիզիկական տվյալները, այնպես էլ իրականացած աշխատանքները:

Թանգարանային առարկաների ընդունման համար առաջնային խնդիրներից է պաշտպանության և առարկայի ամբողջական վիճակի պահպանության հիմնական դրույթների ապահովումը: Թանգարանի՝ որպես առարկաների հիմնական պահպանի, առաջնային խնդիրը թանգարանային առարկաների ամրակայումն ու ամբողջականության ապահովումն է: Անգամ եթե առարկաները թանգարաններին են հանձնված և պահվում են բոլոր առումներով ապահով պահոցներում, հնարավոր չէ միանշանակ փաստել, որ մշակութային արժեքը պահպանում է նախնական տեսքը:

Հանձնումից հետո առարկաները շարունակում են գտնվել ֆոնդապահի և պահպանի ուշադրության ներքո, և առարկայի հետ կապված խնդիրները բարձրաձայնվում են պարբերաբար կատարվող մոնիթորինգի ժամանակ: Առաջացած խնդիրները բարձրաձայնվում են համապատասխան մասնագետի կողմից, տրվում է կարծիք և

անհրաժեշտ միջամտություն կատարելու համար (վերականգնում, ամրակայում ևն) հրավիրվում է վերականգնման հանձնաժողով: Վերջինս եզրակացություն է կազմում քննարկման դրված հարցերի շուրջ, և դրական եզրակացություն ստանալու դեպքում կատարվում են համապատասխան միջամտությունները: Նույն ընթացակարգով կատարվում է առարկայի հետհանձնումը ֆոնդ՝ կատարված փոփոխություններից հետո: Ցանկացած առարկա, որը «մուտք է գործում» լաբորատորիա, ձեռք է բերում վերականգնման վկայագիր, որտեղ լուսանկարահանվում է առարկան նախնաքան վերականգնումը, փաստվում է առարկայի նախնական տեսքը, վիճակը, տրվում է համապատասխան միջամտություններ կատարելու քայլերի նկարագրություն, նշվում են կատարված միջամտությունները, տրվում են անհրաժեշտ պահպանության պայմանների պարամետրերը և կատարվում վերջնական լուսանկարահանում: Այս ամենը կարևոր է անհրաժեշտության դեպքում առարկայի վրա հաջորդ անգամ միջամտություն կատարելու ժամանակ:

Թանգարանում, մասնավորապես՝ ֆոնդային պահոցներում ընդունվող և արդեն պահպանվող թանգարանային առարկաների նյութի «ծերացման» գործընթացն առավելագույնս հետաձգելու և առարկայի «մահանալը» հնարավորինս կանխելու նպատակով, պահպանության տարածքում անհրաժեշտ է ապահովել օդի $18\pm 1^{\circ}\text{C}$ ջերմաստիճան և $55\pm 5\%$ հարաբերական խոնավություն [1, էջ 67]: Սկզբունքորեն այլ է տարբեր նյութերից պատրաստված թանգարանային առարկաների ջերմախոնավային ռեժիմը:

Ջերմախոնավային ռեժիմի խախտումը առարկայի պահպանության համար լուրջ և անգամ կործանարար հետևանքներ կարող է ունենալ: Պահպանության տեսանկյունից առավել խոցելի են մետաղական առարկաները և օրգանական նյութերից պատրաստված նմուշները (կտոր, կաշի, փայտ, ոսկոր): Բարձր խոնավության հետևանքով տեղի է ունենում մետաղական առարկաների նյութի քայքայում (կոռոզիա՝ երկաթի վրա ժանգ, բրոնզի վրա դարչնականաչավուն փառ՝ պատինա): Օդի բարձր ջերմաստիճանի դեպքում մետաղական թանգարանային առարկաները ջրագրկվում են, ինչը հանգեցնում է առարկայի փոշիանալուն:

Խեցեղենը առավել կայուն է ջերմախոնավային ռեժիմի տատանումների նկատմամբ, սակայն վերջինիս խախտումը բերում է առարկայի փխրունության, դեֆորմացիայի: Առավել խոցելի են կավից պատրաստված այն առարկաները, որոնց վրա կատարվել է միջամտություն. այն է՝ ամրակայում և վերականգնում: Բանն այն է, որ վերականգնման ընթացքում օգտագործված նյութերը (սոսինձներ, գիպս ևն) ունեն «պիտանելիության» ժամկետ, և այդ ժամկետը լրանալուց հետո առարկան կրկին կարիք է ունենում միջամտությունների, իսկ ջերմախոնավային ռեժիմի ոչ պատշաճ ապահովումը կրճատում է վերոնշյալ ժամկետները:

Թանգարանային առարկաների պահպանության հաջորդ կարևոր պայմանը մաքուր օդն է. օդի աղտոտվածությունը հանգեցնում է թանգարանային առարկայի նյութի մեխանիկական վնասվածքների և քիմիական փոփոխությունների:

Առարկաների պահպանության համար կարևոր գործոն է նաև լույսի ֆակտորը. արևի անմիջական ճառագայթների ազդեցությունը ևս նպաստում է նյութի վիճակի

վատթարացմանը [2, c. 45]: Այս առումով առարկաները լույսի նկատմամբ իրենց զգայունությամբ բաժանվում են երկու խմբի.

- մետաղ, գիպս, խեցեղեն, ապակի՝ բարձր լուսադիմացկունություն,
- կտոր, թուղթ, կաշի, փայտ, գունավոր քարեր և ապակի՝ ցածր լուսադիմացկունություն:

Ուստի վերջիններս պիտի պահպանել փակ տուփերի մեջ կամ լուսակայուն ապակու հետևում, իսկ նյութի հետ աշխատելու դեպքում չպիտի գերազանցվի 50-70 լյուքսը (լույսի չափման միավոր) [4, c. 406]:

Տարբեր նյութերից ջերմախոնավային ռեժիմի օպտիմալ չափանիշները [3, c.16]

Նյութ	Ջերմաստիճանը C-ով	Խոնավությունը %-ով
Երկաթ	+18 – +20	մինչև 50
Անագ	Ոչ ցածր +13–ից	55-60
Պղինձ, արծաթ, մկնդեղ	+18 – +20	55-60
Խեցեղեն, ապակի	+15 – +18	55-65
Քար	+15 – +18	55-60
Փայտ, կաշի, կտոր	+15 – +18	55-60
Ոսկոր	+15	55-60

Մեծամորի հնագիտական հավաքածու

Մեծամորի հայ-լեհական արշավախումբը գործում է 2013 թվականից առայսօր (պրոֆ. Ա. Փիլիպոսյան, Ք. Յակուբյակ): Պեղումներն իրականացվում են քաղաքային թաղամասում և դամբարանադաշտում: Այժմ «Մեծամոր»-ի թանգարան հանձնվել է 2013-2017 թթ. կատարված պեղումների ընթացքում գտնված հնագիտական նյութը:

Մեծամորի պեղումների արդյունքում հայտնաբերված առարկաները նախքան թանգարանին հանձնումը անցնում են ուսումնասիրության երկար փուլ՝ արշավախմբի ղեկավարի գլխավորությամբ: Առաջին հերթին առարկաները, դաշտային ուսումնասիրությունից հետո տեղափոխվելով լաբորատորիա, լուսանկարահանվում են և նախապատրաստվում հաջորդ փուլին. այն է՝ ամրակայում և վերականգնում: Վերականգնման և ամրակայման փուլերից հետո առարկաները կրկին լուսանկարահանվում են և պատրաստվում թանգարանայնացմանը: Թանգարան հանձնվելիք առարկաները ցուցակագրվում են ըստ նյութի և դարաշրջանի, տրվում է առարկաների մանրակրկիտ նկարագրություն (արտաքին նկարագրություն, գույն, չափեր, քաշ, նյութ, պահպանվածության աստիճան, վերականգնված լինել/չլինելը): Նախապատրաստական փուլից հետո առարկաները հանձնվում են թանգարան՝ անցնելով վերոնշյալ բոլոր փուլերով:

Կարևոր խնդիր է նաև այն, որ դաշտային աշխատանքների ավարտից հետո պեղումների ղեկավարները հետևողականորեն զբաղվեն պեղված նյութերի ժամանակին մշակմամբ և համապատասխան կազմակերպությունների ֆոնդերին ի պահպանություն հանձնմամբ՝ դրանով իսկ այն հասանելի դարձնելով հետագա ուսումնասիրությունների համար:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Այսպիսով, հետագայում մի շարք խնդիրներից խուսափելու համար անհրաժեշտ է առարկայի թանգարանայնացման գործընթացը կատարել հստակ ֆիքսված կանոնակարգով և ապահովել անհրաժեշտ փաստաթղթավորումը: Թանգարան-պահպանի հիմնական պարտականություններից մեկն է նաև ջերմախոնավային ռեժիմին հետևելը և անհամապատասխանության դեպքում շտապ բարձրաձայնելը: Ոչ պակաս կարևոր է նաև ճիշտ ժամանակին թանգարանային առարկայի մաքրման և վերականգնման որոշում կայացնելը: Վերոնշյալ պարտականությունների ոչ պատշաճ կատարումը երբեմն բերում է առարկայի ամբողջական կամ մասնավոր կորստի:

Մակայն պետք է փաստել, որ առարկաների պահպանության ընթացքում ի հայտ են գալիս մի շարք խնդիրներ (համապատասխան պայմանների բացակայություն, ժամանակին ամրակայման և վերականգնման աշխատանքների հետաձգում կամ առհասարակ միջամտության բացակայություն ևն), ուստի մեր պարտականությունն է՝ որպես առարկայի պահպանի, բարձրաձայնել խնդիրները, գտնել ճիշտ լուծումներ, ապահովել առարկայի անվտանգ և պատշաճ պահպանությունը՝ դրանով իսկ թույլ չտալով առարկայի անվերադարձ կորուստը:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. Գևորգյան Լ. Թանգարանի գիտաֆոնդային աշխատանքների հիմունքներ: Երևան: «Պատմա-մանչակության արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ հրատ.: 2018: 120 էջ:
2. Воробьева С. Комплектование, учет, хранение и научное описание археологических коллекций в музеях: правовые аспекты и практический опыт. Уфа: Изд-во Национальный музей Республики Башкортостан. 2019. 160 с.
3. Степанов Ю. Основы реставрации. Тверь: Изд.-во “Тверской госуниверситет”. 2018. 56 с.
4. Юренева Т. Музееведение. Москва: Изд-во “Академический проект”. 2003. 560 с.

R e f e r e n c e s

1. Gevorgyan L. Basics of the museum's scientific fund works [*T'angarani gitafundayin ashxatanqneri himunqner*], Yerevan: “Service for the Protection of Historical Environment and Cultural Museum-reservations” SNCO publ., 2018. 120 p. (in Armenian)
2. Vorobyova S. Acquisition, accounting, storage and scientific description of archaeological collections in museums: legal aspects and practical experience [*Komplektovanie, uchet, hranenie i nauchnoe opisanie arheologicheskikh kollekcij v muzejah: pravovye aspekty i prakticheskij opyt*]. Ufa: National Museum of Republic Bashkortostan publ., 2019. 160 p. (in Russian)
3. Stepanov Yu. Restoration basics [*Osnovy restavracii*], Tver: “Tver University” publ., 2018. 56 p. (in Russian)
4. Yureneva T. Museology [*Muzeevedenie*], Moscow: “Academic Project” publ., 2003. 560 p. (in Russian)

Ընդունվել է / Принята / Received on: 04.08.2023
Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: 02.09.2023
Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: 27.11.2023

Տեղեկություններ հեղինակների մասին

Լուսինե Սեյրանի ԱԼԵՔՍԱՆՅԱՆ՝ «ՊԱԹ և ՊՄ պահպանության ծառայության» ֆոնդերի հաշվառման և պահպ. բաժնի պետ, Երևան, ՀՀ,
Էլ. հասցե՝ aleqsanyanlusine@gmail.com <https://orcid.org/0009-0003-5562-008X>

Lusine Seyrian ALEKSANYAN: head of Stock Accounting and Maintenance Department, “Service for the Protection of HE and CMR” SNCO, Yerevan, RA,
e-mail: aleqsanyanlusine@gmail.com <https://orcid.org/0009-0003-5562-008X>

Лусине Сейрановна АЛЕКСАНИЯН: зав. отделом учета и хранения фондов, “Служба по охране ИС и ИКМЗ” ГНО, Ереван, РА,
эл. адрес: aleqsanyanlusine@gmail.com <https://orcid.org/0009-0003-5562-008X>

Աստղիկ Գագիկի ՄԻՄՈՆՅԱՆ՝ «ՊԱԹ և ՊՄ պահպանության ծառայության» ԹԱՎ բաժնի-լաբորատորիայի վերականգնող մասնագետ, Երևան, ՀՀ,
Էլ. հասցե՝ ast.simonyan@yahoo.com <https://orcid.org/0009-0008-2808-9314>

Astghik Gagik SIMONYAN: Restoration Specialist of MIR Department-Laboratory, “Service for the Protection of HE and CMR” SNCO, Yerevan, RA,
e-mail: ast.simonyan@yahoo.com <https://orcid.org/0009-0008-2808-9314>

Астхик Гагиковна СИМОНЯН: Реставратор музейных предметов, “Служба по охране ИС и ИКМЗ” ГНО, Ереван, РА,
эл. адрес: ast.simonyan@yahoo.com , <https://orcid.org/0009-0008-2808-9314>

բանահյուսական ժառանգության հավաքման, հրատարակման և ուսումնասիրման պատմությունը՝ ըստ ժամանակային փուլերի: *Արդյունքներ*. Հետազոտությունը ցույց է տալիս, որ Շիրակի տարածաշրջանն ունեցել է հարուստ ու բազմաբնույթ բանահյուսական մշակույթ, որը պահպանվել է հավաքչական աշխատանքների շնորհիվ: Շիրակի բանահյուսական ժառանգության մեջ արտացոլված են տարածաշրջանի պատմությունը, ազգաբնակչության տեղաշարժերը, ավանդապահությունը, սովորություններն ու հավատալիքները: Ուսումնասիրությունը նաև ցույց է տալիս, որ Շիրակի ավանդական բանահյուսության վրա խորը կնիք են թողել զանգվածային տեղաշարժերը, որոնց հետևանքով տեղական բանահյուսական ժանրերը համալրվել են արևմտյան գավառներից բերված նոր թեմաներով ու պոեմներով, իսկ բարբառը ձեռք է բերել նոր ոճեր և բառեր:

Բանալի բառեր՝ Շիրակի մարզ, բանահյուսություն, ավանդություն, բանահավաքներ, Գյումրի, բանահյուսական նյութեր, բանահյուսական ժառանգություն, հավաքածու, ասույթաբանություն, ազգագրություն:

Ինչպես հղել՝ Խեմչյան Է, Քննություն Շիրակի բանահյուսական ժառանգության հավաքման և ուսումնասիրման հարցի շուրջ, // ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Հ. 2(26): 119-132 էջեր: DOI:10.52971/18294316-2023.26.2-119

RESEARCH AROUND THE QUESTION OF COLLECTING AND STUDYING THE FOLKLORE HERITAGE OF SHIRAK

Ester H. Khemchyan

Institute of Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: The collection and study of the folklore heritage of Shirak began in the second half of the 19th century. The progressive intelligentsia of the region, realizing the importance, necessity and relevance of the issue, started to collect and, if possible, to publish various ethnological materials of Shirak. The process of collecting, publishing and researching folklore material took place in stages, which was due to political turmoil and changes. **Methods and materials:** The research was based on the folklore materials of Shirak, kept in the archives of the Institute of Archeology and Ethnography of the National Academy of Sciences of the Republic of Armenia, folklore collections and studies published from the end of the 19th to the 21st century. For the study, historical-comparative, historical-geographical and quantitative methods were used. **Analysis:** In order to clarify the origins of the folklore heritage, the study first presents a scientific analysis of the naming myths of Shirak, then the historical path of the region and a picture of traditional folklore genres transmitted orally. The article presents in detail the history of collecting, publishing and researching the folklore heritage of Shirak by time phases. **Results:** The study shows that the Shirak region had a rich and diverse folklore culture, which was preserved thanks to the collecting works. The folklore heritage of Shirak reflects the history of the region, movements, traditions, customs and beliefs of the population. The study also shows that the traditional folklore of Shirak was deeply imprinted by mass migrations, as a result of which local folklore genres were

replenished with new themes and plots brought from the western regions, and the dialect acquired new phrases and words.

Key words: *Shirak region, folklore, legend, collectors, Gyumri, folklore materials, folklore heritage, collection, paremiology, ethnography.*

Citation: Khemchyan E., *Research Around the Question of Collecting and Studying the Folklore Heritage of Shirak* // «Scientific works» of SCAS NAS RA. Gyumri, 2023. V. 2(26), pp. 119-132. DOI:10.52971/18294316-2023.26.2-119

ИССЛЕДОВАНИЕ ВОКРУГ ВОПРОСА СОБИРАНИЯ И ИЗУЧЕНИЯ ФОЛЬКЛОРНОГО НАСЛЕДИЯ ШИРАКА

Эстер Г. Хемчян

Институт археологии и этнографии НАН, Ереван, РА

Аннотация

Введение: Собрание и изучение фольклорного наследия Ширака началось во второй половине XIX века. Прогрессивная интеллигенция региона, осознавая важность, необходимость и актуальность вопроса, взялась за собрание и по возможности издание разнообразных народоведческих материалов Ширака. Процесс собирания, издания и исследования фольклорного материала прошел поэтапно, что было обусловлено политическими суматохами и перемнами. **Методы и материалы:** Основой исследования служили фольклорные материалы Ширака, хранившиеся в архиве Института археологии и этнографии НАН РА, фольклорные сборники и исследования, изданные с конца XIX до XXI века. Для исследования использовались историко-сравнительный, историко-географический и количественный методы. **Анализ:** Для выяснения истоков фольклорного наследия исследование в начале представляет научный анализ мифов именованя Ширака, затем прошедший исторический путь региона и картину традиционных фольклорных жанров, переданных устным путем. В статье обстоятельно представлена история собирания, издания и исследования фольклорного наследия Ширака по временным фазам. **Результаты:** Исследование показывает, что ширакский регион имел богатую и разнообразную фольклорную культуру, которая сохранилась благодаря собирательским работам. В фольклорном наследии Ширака отражены история региона, передвижения, традиционность, обычаи и верования народонаселения. Исследование также показывает, что на традиционный фольклор Ширака оставили глубокую печать массовые миграции, в результате которых местные фольклорные жанры пополнялись новыми темами и сюжетами, привозившиеся из западных регионов, а диалект приобрел новые фразы и слова.

Ключевые слова: *Ширакский регион, фольклор, предание, собиратели, Гюмри, фольклорные материалы, фольклорное наследие, сборник, паремиология, этнография.*

Как цитировать: Хемчян Э. *Исследование вокруг вопроса собирания и изучения фольклорного наследия Ширака*, // «Научные труды» ШЦАИ НАН РА. Гюмри, 2023. Т. 2 (26). сс. 119-132. DOI:10.52971/18294316-2023.26.2-119

ՆՄՆԱԲԱՆ. Բանահյուսական հարուստ ավանդույթ ունեցող Շիրակի մարզում քանահյուսական նյութերի հավաքման և ուսումնասիրման գործընթացն անմիջական-

րեն արձագանքն է ժողովրդագիտության ուսումնասիրության այն հզոր շարժման, որը սկզբնավորվել էր Եվրոպայում և Ռուսաստանում: Մեփական արմատներին և հոգևոր արժեքներին մերձենալու, գնահատելու և պահպանելու նպատակով XIX դարի կեսերից հայ մտավորականներն ու հոգևորականները պատմական Հայաստանի տարբեր գավառներից սկսեցին հավաքել ժողովրդագիտական բազմազան նյութեր (հավատալիքներ, սովորույթներ, ծեսեր, տոներ, բանահյուսական բոլոր ժանրերը, կենցաղը, տարագր, ուտեստը, ժողովրդական բժշկությունը ու չգրված օրենքները ներկայացնող նյութեր), որոնք սկզբնական շրջանում տպագրվում էին մամուլի էջերում, այնուհետև հրատարակ իջան մի շարք հիմնարար ժողովածուներ [23: 24: 25: 21: 22]՝ սկզբնավորելով հայ բանահյուսության և ազգագրության գիտական ուսումնասիրությունը:

Առաջնորդվելով բանահյուսական «հում նյութի» արժեքով, որպես գիտական ուսումնասիրությունների հիմք, Գր. Խալաթյանը կարևորում էր դրանց հրատարակությունը [5, էջ VII]: Չբացառելով կրկնությունների հնարավորությունը և առկայությունը՝ տարբեր ազգագրական-բանահյուսական ժողովածուներում և թերթերում, Գր. Խալաթյանը մատնանշում էր, որ կրկնությունը «...անհերքելի արժեք ունի՝ վերստուգելով և հաստատելով նախնիքաց հողավածները և հայ ազգագրության համեմատական ուսումնասիրության համար ավելի առատ և ապահով նյութ պատրաստելով»: Այն, ինչ ազգագրական նյութի համար կրկնություն կարող է համարվել, բանահյուսական նյութի դեպքում կոչվում է տարբերակ և որքան շատ տարբերակ՝ այն թե՛ ներկայացվող տարածաշրջանում և թե՛ Հայաստանի մյուս պատմաազգագրական շրջաններում, նպաստում և ավելի որոշակի է դարձնում ուսումնասիրության եզրակացությունները:

Շիրակի բանահյուսության գրառման պատմությունն սկսվում է XIX դարի 50-ական թվականներից, երբ հայ ժողովրդի հոգևոր արժեքների գնահատումն ու հավաքումն արդեն վաղուց իր հաստատուն տեղն էր գրավել հայ ժողովրդի պատմության մեջ: Շիրակի պատմաազգագրական շրջանն իր գրաված դիրքով, պատմությամբ, ներէթնիկ յուրօրինակ շերտերով (Հայաստանի զանազան բնակավայրերից եկած գաղթականներ և պանդուխտներ), ավանդապահությամբ, խոսքաշենությամբ ու սրամտությամբ չէր կարող վրիպել բանահավաքների ուշադրությունից:

**Բանահավաքչության, հրատարակության և ուսումնասիրության գործընթացը
Շիրակում (XIX դարավերջ – XX դ.)**

Նետագոտությունն ընդգրկում է XIX դարից մինչև մեր օրերը տարածաշրջանի բանահյուսական նյութերի կենցաղավարման, շրջանառման, հավաքման և հրատարակման ընթացքը իր դրսևորումներով և բանահյուսական ժառանգության պատկերը: Տարածաշրջանի արմատական բնակչության հաղորդակցման լեզուն Շիրակի բարբառն է, որը մինչ այսօր ոչ միայն պահպանել է իր կենսունակությունը, այլև ժողովրդագրական զանգվածային տեղաշարժերի, փոխազդեցությունների ու փոխներթափանցումների հետևանքով ձեռք է բերել նոր որակ, որն առկա է թե՛ բանավոր խոսքում և թե՛ բանահյուսական նյութերի համատեքստում:

Պատմական բոլոր ժամանակահատվածներում բանավոր խոսքի պահպանվածությունը վտանգված է եղել: Կենցաղավարումից դուրս եկող որոշ իրողությունների

կորստյամբ պայմանավորված՝ մոռացության են տրվել դրանց ուղեկցող բանավոր խոսքի դրսևորումները: Որպես ցայտուն օրինակ կարելի է դիտարկել երկրագործական մշակույթին և կենցաղային արտադրամիջոցների գործողություններին ուղեկցող աշխատանքային երգերը (հորովել, սանդի, ճախարակի, խնոցու և այլ երգեր): Կարևորելով նման պատճառների աղետաբեր հետևանքները՝ անհրաժեշտ էր բանահյուսական նյութը գրառել ճիշտ ժամանակին և ճիշտ տեղում:

Շիրակի տարածաշրջանի բանահյուսական նյութերի հավաքման ժամանակագրական պատկերից ելնելով՝ պայմանականորեն տարբերակել ենք հավաքչական աշխատանքի երեք փուլ:

Առաջին փուլն ընդգրկում է XIX դարի 50-ականներից մինչև XX դարի 20-ական թվականները (բանահավաքներ՝ Աղեքսանդր Մխիթարյանց, Աղեքսանդր Ափրիկյան, Քաջբերունի, Տիգրան Նավասարդյան, Երվանդ Լալայան, Հովհաննես Կոստանյան և ուրիշներ):

Երկրորդ փուլը համընկնում է Հայաստանի երկրորդ հանրապետության ժամանակահատվածի հետ և բաժանվում է երկու ենթափուլի.

ա) 1920-ական թվականներից մինչև 1960-ական թվականներ (բանահավաքներ Գեղամ Թարվերդյան, Մնացական Թամրազյան, Խայաթ (Սուքիաս Զահրիյան), Նիկողոս Նիկողայան, Համբարձում Տեր-Վարդանյան, Վարդ Բոդյան:

բ) Երկրորդ ենթափուլն ընդգրկում է 1960-ական թվականներից մինչև 1990-ական թվականները և հիմնականում կապվում է Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության բաժնի բեղուն աշխատանքների հետ: Այս փուլում հավաքչական գործով զբաղվել են թե՛ ինստիտուտի գիտաշխատողներն ու բանահավաքները (Արտաշես Նազինյան, Սարգիս Հարությունյան, Արուսյակ Մահակյան, Արագ Կարապետյան) և թե՛ սիրող մտավորականների մի մեծ խումբ (Բարխուդար Ղազիյան, Պարույր Բարսեղյան, Հրաչ Մկրտչյան, Հրաչ Օհանյան, Ստեփան Խաչատրյան, Եղիշե Խաչատրյան և ուրիշներ):

Երրորդ փուլն ընդգրկում է 1990-ական թվականներից մինչև մեր օրերը և հիմնականում կապվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի հետ (բանահավաքներ՝ Կարինե Մահակյան, Հասմիկ Մատիկյան, Կարինե Բազեյան, Հասմիկ Հարությունյան և ուրիշներ):

Առաջին փուլ

Ազգային զարթոնքի, սեփական արմատներին մերձենալու և ինքնաճանաչման ու գնահատման մղումներով պայմանավորված, հետևելով ռուսական և եվրոպական փորձին ու ձեռքբերումներին՝ հայ մտավորականությունն ակտիվորեն ձեռք զարկեց ժողովրդագիտական բազմաբնույթ նյութերի հավաքմանը: XIX դարի երկրորդ կեսին ազգագրական և բանահյուսական նյութերի միջև դեռևս տարբերակում չէր դրվում [30, էջ 29], և սիրող բանահավաքները, ըստ իրենց նախասիրությունների, գրառում էին այն նյութերը, որոնք կարևորում էին: Շիրակի մարզի բանահյուսական նյութերի աշխարհագրական տարածման ու դրա ընդգրկման մասին պատկերացումները պայմանավոր-

ված էին նաև բանահավաքների շրջագայելու հնարավորություններով: Օրինակ, Քաջբերունին (1837-1920)² իր ծառայողական բազմամյա ուղևորությունների ընթացքում շրջելով Հայաստանի գավառներում, նաև Շիրակ, Կարս, Բասեն տարածաշրջաններում և ծանոթանալով ժողովրդի կյանքին ու կենցաղին, վարք ու բարքին, ժողովրդական սոներին և դրանց լրացնող ծիսական արարողություններին՝ գրառել է ինքնաստիպ ու բազմաժանր նյութեր, որոնց մի մասը տպագրվել է Ազգագրական հանդեսի VII-VIII և IX գրքերում [26: 27] «Հայկական սովորություններ վերնագրի տակ: Քաջբերունու հավաքչական աշխատանքն ինքնանպատակ չի եղել: Նա շրջագայությունների ընթացքում նկատել է, որ ժամանակի ընթացքում հայկական սովորություններից շատերը. «... աննկատելի կերպով արդեն մոռացվել են, ոմանք սակավ առ սակավ մոռացվում են կյանքի նոր հոսանքի ազդեցության տակ, ուրեմն մոռացվածը կարող է պահել միայն գրականությունը:» [26, էջ 114]

Առաջնորդվելով ազգային ավանդությունները, սովորությունները, երգերը ուսումնասիրելու և կորստից փրկելու ցանկությամբ՝ նա գրառել և հնարավորության սահմաններում տպագրել է իր գրառած նյութերն ու ուղեգրությունները: Քաջբերունին ինքնուրույն մոտեցում է ունեցել իր հավաքած նյութերի նկատմամբ, տարբեր գավառների նույնաստիպ նյութերի տարբերակները, բերել է կողք կողքի, վերլուծել և ցույց է տվել դրանց նմանություններն ու տարբերությունները, ներկայացրել տարածաշրջանային առանձնահատկությունները: Եթե Քաջբերունու հավաքչական գործունեությունը լայն ընդգրկում ուներ և կենտրոնացնում էր ողջ համահայկական ժողովրդագիտական նյութերը, ապա Շիրակի տարածաշրջանում աշխատած մյուս բանահավաքները առաջնորդվում էին զուտ տեղական բանահյուսական արժեքները գրանցելու և ուսումնասիրելու նկատառումներով: Դեռևս XIX դարի 80-ական թվականներին պեքսանդրապոլցի Աղեքսանդր Ափրիկյանը³ բանահավաքչական աշխատանքների ընթացքում նկատել էր, որ Շիրակի ազգաբնակչությունն անխառն չէ, և զգալի մաս է կազմում արևմտահայ գավառների գաղթականությունը, որը հետևանք էր թուրքական բռնաճնշումների և ռուս-թուրքական պատերազմների: Արևմտահայ փախստականները, տեղավորվելով Շիրակի գյուղերում, համատեղ կյանքի ընթացքում միավորվելով տեղացիների հետ, ընդունելով տեղացիների վարք ու բարքը, սովորությունները, դրանց ավելացնելով իրենց՝ տարբեր տարածաշրջաններից (Վասպուրական, Մուշ, Կարին, Ալաշկերտ և այլն) եկվորների սովորությունները, կենցաղը, լեզուն, հոգևոր մշակույթը՝ նպաստել էին ընդհանուր ժողովրդագիտական պատկերի նոր որակի առաջացմանը: Եկվորները նաև համալրել էին Շիրակի բարբառը սեփական ոճերով ու բառերով: Հեքիաթներ գրա-

² Քաջբերունին (Գաբրիել Տեր-Հովհաննիսյան) 1858 թ. ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, 1859 թ. ընդունվել և 1864 թ. ավարտել է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը: Կես դար ծառայել է իբրև գավառական բժիշկ: Մասնագիտությանը զուգահեռ գրադրել է գրականությամբ, հայագիտությամբ, ժողովրդագիտությամբ: Գրական ասպարեզ է իջել «Տեր Սարգիս» վեպով:

³ Աղեքսանդր Ափրիկյան, ծնվել և ապրել է Ալեքսանդրապոլում, հայտնի հայագետ Գրիգոր Խալաթյանի մանկության ընկերն է, գրադրել է բանահավաքչությամբ և հայ ժողովրդական հեքիաթների դիտարկմամբ, որն ընդհատվել է վաղաժամ մահվան պատճառով: 1880 թ. գրառած հեքիաթները (թվով 4 հատ) Գր. Խալաթյանն ընդգրկել է «Փշրանք Շիրակի ամբարներից ժողովածուի մեջ [19]:

ռելիս Ափրիկյանն ուշադրություն է դարձնում, որ. «... մեզանում իրաքանչիւր հեքիաթ ասողը համարեա ունի իւր խոսակցութեան առանձին ոճերն ու վերջավորութիւնները» [5, էջ IX]

Նա Շիրակի տարածաշրջանի ժողովրդախոսակցական լեզուն անվանում է «բազմաբարբառ լեզու», որի մեջ մուտք են գործել և «պատշաճաւոր տեղ են բռնել» նաև օտար (պարսկական և տաճկական) բառերը: Հեքիաթների լեզուն դիտարկելով՝ նա հանգել է հետևյալ եզրակացությանը. «Արտաքսել, դուրս քշել այժմ միանգամից օտար բառերը մեր ժողովրդական հեքիաթների միջից, նշանակում է բոլորովին քամել նրանցից ժողովրդական ոգին, ջնջել նրանց վրայից ժողովրդական տիպարը:» [5, էջ IX]

Նմանօրինակ դիտարկումների արդյունքում ձևավորվեց բանահյուսական նյութերի գրառման ընդունված մեթոդը, այն է՝ ճշգրտորեն պահպանել բանասացի արտաբերած յուրաքանչյուր բառը, անհասկանալի բառերը տեղնուտեղը ստուգաբանել և բացատրել, հավատարիմ մնալ և դույզն իսկ չշեղվել բանասացի պատումից: Շատ կարևոր էր նաև բանասացի արմատները (ծագումով որտեղից էին նախնիները) և իր պատումի սկզբնաղբյուրը, նյութի փոխանցման ճանապարհները հստակեցնելը, որն անհրաժեշտ էր նյութի կրած փոփոխություններն ուսումնասիրելու համար:

XIX դարի 70-80-ական թթ. տոհմիկ ալեքսանդրապոլցի Աղեքսանդր Մխիթարյանցը (1846-1916)⁴ ուսուցչությանը և գրահրատարակչությանը զուգահեռ Շիրակի և Վանանդի⁵ բնակավայրերում հավաքել է բազմաժանր բանահյուսական-ազգագրական նյութեր: Դեռևս 1887 թ. նրա հավաքածուն պատրաստ էր հրատարակության, որը միջոցներ չլինելու պատճառով 14 տարի մնացել է անտիպ: Վերջապես 1901 թ. Աղեքսանդր Մխիթարյանցի «Փշրանք Շիրակի ամբարներից» խորհրդանշական վերնագիրը կրող ժողովածուն լույս է տեսել Էմինյան ազգագրական ժողովածուի Ա հատորում [19]: Այն բովանդակում է Շիրակի գավառի (Ալեքսանդրապոլ) վիպական բանահյուսության և ազգագրության առատ նյութ և տարածաշրջանի ժողովրդագիտության հավաքման, ուսումնասիրման և հրատարակման առաջին ամբողջական փորձն է: Շիրակի քնարական բանահյուսության նյութերը Մխիթարյանցը «Տաղեր և խաղեր» վերնագրով հրատարակում է 1900 թ: Սա պատմական այն ժամանակահատվածն էր, երբ առաջնորդվելով բանահյուսական «հում նյութի» արժեքով, որպես գիտական ուսումնասիրությունների հիմք, կարևորվում էր դրանց հավաքումն ու հրատարակությունը: 1899 թ. Ազգագրական հանդեսի Ե գրքում լույս է տեսնում բանահավաք և կրթական գործիչ Մկրտիչ Իսահակյանի (1870-1921)⁶ «Շիրակի ժողովրդական երգեր» հավաքածուն [8, էջեր 200-212], որը նա գրառել է Գյումրիի և շրջակա գյուղերի բնակիչներից: Հավաքածուում ընդգրկված են քնարական բանահյուսության Շիրակի տարածաշրջանում XIX դարավերջին կենցաղավարող սիրո երգերն ու պարերգերը, ինչպես նաև տեղական ամենա-

⁴ Աղեքսանդր Մխիթարյանցը սովորել է Ալեքսանդրապոլում, ապա ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: Չբաղվել է մանկավարժությամբ, գրահրատարակչությամբ, բանահավաքչությամբ:

⁵ Վանանդ գավառը մտել է Մեծ Հայքի Այրարատ աշխարհի մեջ, գտնվում է Ախուրյան գետի հովտում: Ուսումնասիրվող ժամանակահատվածում եղել է Կարսի մարզի մեջ [12, էջ 753]:

⁶ Մկրտիչ Իսահակյանը ծնվել, ապրել և գործել է Ալեքսանդրապոլում: Բանաստեղծ Ավետիք Իսահակյանի եղբայրն է: Երկար տարիներ զբաղվել է ուսուցչությամբ և բանահավաքչությամբ:

տարածված և սիրված աշուղական երգերը: XIX դարավերջին Շիրակի քնարական բանահյուսության հավաքման, ձայնագրման և ուսումնասիրման գործում մեծ ավանդ ունի ալեքսանդրապոլցի հայտնի երաժշտագետ, բանագետ Արշակ Բրուտյանը (1864-1936)⁷, որի «Ռամկական մրմունջներ» խորագիրը կրող ժողովրդական երգարանը այնպիսի մասսայականություն է վայելել, որ ինը տարիների ընթացքում չորս հրատարակություն է ունեցել (1895,1898,1901,1904): Թեև Բրուտյանն ուներ երգերի ձայնագրությունները, սակայն այլևայլ պատճառներով նա միայն տեքստերն է հրատարակում: Իր կենդանության օրոք նրան չի հաջողվում հրատարակել ժողովածուի ձայնագրված ամբողջական տարբերակը, որը 1898 թ. արդեն պատրաստ էր հրատարակության: 1985 թ. Արշակ Բրուտյանի թոռնուհին՝ երաժշտագետ Մարգարիտ Բրուտյանը, ի կատար է ածում մեծ երախտավորի երազանքը, և «Ռամկական մրմունջներ» արժեքավոր ժողովածուն (բանահյուսական տեքստերով, նոտագրություններով և ճանաչողական արժեք ներկայացնող ծանոթագրություններով) երկու լեզվով (հայերեն և ռուսերեն) [3] ներկայացվում է ընթերցողների և մասնագետների դատին:

Շիրակի վիպական բանահյուսությանն ու ժողովրդագիտական բազմազան նյութերին ուշադրություն է դարձրել և հավաքել նաև Հովհաննես Կոստանյանցը: Նա յուրովի մոտեցում է ունեցել ժողովրդական նյութերին և դրանց մշակումները 1896 թ. ներկայացրել է «Շիրակի լեգենդաներից և ժողովրդական կյանքից» գրքում [10]:

Շիրակի մարզի տարածքում բանահյուսության և ազգագրության նկատմամբ ձևավորված բուռն հետաքրքրությունն ու հավաքչական աշխատանքը շարունակվեց նաև XX դարակրթին: 1911 թ. ազգագրագետ-բանագետ Երվանդ Լալայանը նյութեր է գրառել Շիրակի գյուղերում:

Լալայանի գրառած Շիրակի հեքիաթներն ընդգրկվել են Շիրակի և շրջակա տարածաշրջանների հեքիաթները ներկայացնող «Հայ ժողովրդական հեքիաթներ» մատենաշարի IV հատորում [11, էջեր 15-194]:

Վերոհիշյալ բանահավաքների հավաքածուները և տարբեր սիրող-բանահավաքների գրառած և մամուլում տպագրած բանահյուսական նյութերն ամբողջացնում են XIX դարավերջի և XX դարակրթի Շիրակի վիպական բանահյուսության պատկերը:

Երկրորդ փուլ

Ինչպես արդեն ասվել է, Շիրակի բանահյուսական նյութերի հավաքման երկրորդ փուլը համընկնում է Խորհրդային Հայաստանի գոյության տարիների հետ: Շիրակը՝ որպես բանահյուսական բազմաժանր նյութերի շտեմարան, միշտ եղել է բանահավաքների ուշադրության կենտրոնում: Խորհրդայնացումից հետո ժողովրդի կյանքում մեծ փոփոխություններ տեղի ունեցան, և ավանդական կացութաձևը, սովորությունները, առավել ևս հավատալիքները հետին պլան մղվեցին: Կենցաղավարումից դուրս եկան բազում իրողություններ, երիտասարդությունն առաջնորդվեց նոր գաղափարներով, նոր կենցաղի յուրացմամբ, իսկ ավանդականը մնաց ավագ սերնդի հիշողության մեջ:

⁷ Արշակ Բրուտյանի ողջ ստեղծագործական, մանկավարժական, բանահավաքչական կյանքը կապված էր Ալեքսանդրապոլ-Լենինական-Գյումրի քաղաքի և Շիրակի հետ:

Դիտարկելով առաջին փուլի առաջին ենթափուլում գրառված բանահյուսական նյութերը՝ նկատում ենք, որ 1925-34 թվականներին հատկապես ուշադրություն են դարձրել քնարական բանահյուսության նորովի դրսևորումներին: Բանահավաք Գեղամ Թարվերդյանը շրջագայել է Հայաստանով մեկ (այդ թվում նաև՝ Շիրակում) և գրառել է ժամանակի պահանջներին համեմատ նորաստեղծ երգեր, որոնց թեմատիկան հիմնականում խորհրդային երկրի առօրյայի, կուսակցական ղեկավարների (Լենին, Ստալին), կոլտնտեսային կյանքի («Տրակտորի երգը», «Կոլխոզի խաղը») տեղական նշանակության անհատների և դեպքերի («Լենինականի հայկինոյի հրդեհը») մասին էր [6, էջեր FFI: 2349-3802]: Այս ենթափուլում Շիրակի Ամասիա, Ղուկասյան, Ախուրյան, Լենինական, Պեմզաշեն բնակավայրերից բազմաժանր բանահյուսական նյութեր են գրառել Մնացական Թամրազյանը, աշուղ Խայաթը (Սուքիաս Զահրիյան), Նիկողոս Նիկողոսյանը, Համբարձում Տեր-Վարդանյանը, Վարդ Բդոյանը, որոնց ձեռագիր հավաքածուները պահվում են ՀԱԻ արխիվում, իսկ մի մասը տպագրվել է տարբեր ժանրային ժողովածուներում: 20-30-ական թվականներին Հերիք Հարթենյանն իր հորից՝ աշուղ Ծաղկալուց (Մելիքսեթ Հարթենյան) գրառել է հրաշապատում և իրապատում հեքիաթներ, աստվածաշնչյան ավանդություններ, զվարճախոսություններ, երգեր, ժողովրդական բժշկության նմուշներ և այլն, որոնք անտիպ են և պահվում են ՀԱԻ արխիվում:

Այս ենթափուլի հավաքածուների մեջ առանձնանում են Շիրակի աշուղների գործունեությանը նվիրված աշխատանքները: Աշուղական ավանդույթի արմատները Շիրակում դարերի խորքն են գնում, և աշուղական երգարվեստը այս պատմաագագրական շրջանի բնորոշ ասանձահատկություններից մեկն է: Բանահավաք Մնացական Թամրազյանը ներկայացրել է 1830-1930 թթ ժամանակահատվածում Ալեքսանդրապոլ-Լենինականում ապրած և ստեղծագործած աշուղների մասին ինքնատիպ հուշապատում-ուսումնասիրություն, որն արժեքավոր սկզբնաղբյուր է այս ասպարեզն ուսումնասիրողների համար:

Հավաքչական աշխատանքի երկրորդ ենթափուլը (1960-90 թթ) ներկայացնում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության և բանահյուսական սկզբնաղբյուրների վավերագրման բաժինների հավաքչական, հետազոտական և հրատարակչական բուռն գործունեությունը, որի մեջ ընդգրկված է նաև Շիրակի մարզի բանահյուսական մշակույթը: 60-ական թվականներին Շիրակի մարզում աշխատել են բանագիտական-բանահավաքչական արշավախմբեր (Մարգիս Հարությունյան, Արտաշես Նազինյան, Արուսյակ Սահակյան, Ժենյա Խաչատրյան, Արագ Կարապետյան), ովքեր թե՛ ձեռքով և թե՛ ձայնագրիչով գրառել են բազմաժանր բանահյուսական նյութեր՝ հիմնականում ավագ սերնդի բանասացներից, որոնք մտապահել են մանկության տարիներին լսածը և սովորածը: Գիտաշխատողների հավաքածուները համալրվել են սիրող և կամավոր բանահավաքների հավաքածուներով: Միրող բանահավաքները, հիմնականում թոշակառու մտավորականներ, ուսուցիչներ, դերասաններ, լրագրողներ, պետական-կուսակցական աշխատողներ, իրենց հետաքրքրությունների շրջանակում Շիրակի գյուղերում և Լենինական քաղաքում գրառել են բանահյուսական բազմաժանր նյութեր, որոնք ընդգրկված են ՀԱԻ արխիվի ֆոնդերում և ներկայացնում են XX դարի 50-90-

ական թվականներին Շիրակի տարածաշրջանում պահպանված և դեռևս կենցաղավարող ավանդական բանահյուսական նյութերը:

Շիրակցի սիրող բանահավաքների հավաքածուներից յուրաքանչյուրն առանձնանում է իր ընդգրկած ժանրերով, որոնք գրեթե 100 տարվա կտրվածքով տարածաշրջանի վիպական բանահյուսության պատկերն են ներկայացնում: Ալեքսանդրապոլում ծնված և մեծացած, Մոսկվայում բարձրագույն կրթություն ստացած Պարույր Բարսեղյանի իր հավաքածուում ներկայացրել է Ալեքսանդրապոլ-Գյումրի-Լենինական քաղաքի ինքնատիպ դեմքը. «... ուրույն տրադիցիաներով, առանձնահատկություններով, կենցաղով և հոգեբանությամբ (այսինքն բարբառով, հայրենասիրությամբ, կրոնասիրությամբ, լոպպագոթյամբ, կատակասիրությամբ, սրամտությամբ, հումորով, մարդուն ձեռ առնելու ունակությամբ, երգի ու նվագի հանդեպ սիրով, «լազաթին քեֆերով», հակումով դեպի թևավոր խոսքերը, անլեզավ դարձվածքներով և հայհոյանքներով) այն անփոխարինելի քաղաքային միջավայրն էր, որը ծնունդ և սնունդ է տալիս զվարճախոսություններին»: [2, էջ FFVI: 6638]

Պարույր Բարսեղյանը ներկայացրել է այս ինքնատիպ քաղաքի զվարճախոսներին (Պոլոզ Մուկուչ, Ջղեր, Ծիտրո, Կուժիկ և ուրիշներ), նշանավոր հին գյումրեցիների իրենց բազում պատումներով, գյումրեցիների 1400 մականունները, որոնցից յուրաքանչյուրի տակ մի հետաքրքիր պատմություն է թաքնված, իրապատում և հրաշապատում հեքիաթներ, զրույցներ, քնարական բանահյուսության և ասույթաբանության շիրակյան ողջ շքեղ երանգապնակը:

Շիրակի ասույթաբանական նյութը՝ հազարավոր առած-ասացվածքները, անեծք-օրհնանքները, շուտասելուկները, հանելուկները, երդումներն ու փաղաքշական խոսքերը, կազմում է բանահավաքներ Անուշավան Գևորգյանի, Աշոտ Գևորգյանի, Հրաչ Մկրտչյանի, Հրաչ Օհանյանի և այլոց հավաքածուների հիմնական «մեխը»: Բանահավաքները պահպանել են բարբառային առանձնահատկությունները և իրենց հավաքածուներին կցել են բարբառային բառերի բացատրական բառարաններ:

Երրորդ փուլ

Շիրակում բանահավաքչական աշխատանքների երրորդ փուլը համընկնում է Հայաստանի երրորդ հանրապետության տարիներին (XX դարի 90-ական թվականներ – XXI դարասկիզբ) և հիմնականում կապված է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գործունեության հետ: Կենտրոնի գիտաշխատողների նպատակներից մեկն է հավաքել և գրառել ներկայումս կենցաղավարող բանահյուսական նյութերը և դրանց հետազոտությամբ ու համեմատություններով վեր հանել ավանդական բանահյուսական նյութի պահպանվածության, փոփոխությունների և ժանրային դրսևորումների խնդիրը:

Շիրակի բանահավաքչության պատմությունը ցույց է տալիս, որ XIX դարից մինչ օրս կուտակվել է ավանդական բանահյուսական ժառանգության հարուստ նյութ, որի հրատարակությունն ու ուսումնասիրությունը համարժեք չէ հավաքչական աշխատանքներին: Խորհրդային և հետխորհրդային տարիներին ակադեմիական հրատարակությամբ լույս աշխարհ են եկել հայ ժողովրդական հեքիաթների մատենաշարի շիրա-

կյան հատորը [11, էջեր 15-194] և բանահյուսական առանձին ժանրերին նվիրված ժողովածուներում ընդգրկված Շիրակի ավանդական նյութերը [16: 17:13: 14]: Սույն ժամանակահատվածում առանձին սիրող-բանահավաքներ, ըստ իրենց նախասիրությունների, գրառել և հրատարակել են ժողովրդական բանարվեստի երգիծական բնույթի գրույցներ, սրամտություններ, զվարճալի պատմություններ, անեկդոտներ և այլն: Այդ շարքում հատկանշական են Հ. Իկիլիկյանի «Գյումրին, Պոլոզ Մուկուչը և երգիծական մանրապատումներ» [7], Հ. Գևորգյանի «Լենինականյան զվարճալի գրույցներ և սրամտություններ» [4], Մ. Հովհաննիսյանի «Ոսկեհասկ (Մոլլա-Մուսա) գյուղի պատմությունը, ազգագրությունը, բանահյուսությունը» [15] գրքերը:

Շիրակի բանահյուսական ժառանգությանը նվիրված առանձին գիտական ուսումնասիրություններ նույնպես չեն եղել: Սակայն 20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի կազմակերպած գիտաժողովներում հնչել են բանահյուսության տարբեր խնդիրներին նվիրված գեկուցումներ, որոնք այնուհետև հոդվածների տեսքով հրատարակվել են ՇՀՀԿ-ի գիտական հետազոտությունների ժողովածուներում (Սարգիս Պետրոսյան, Կարինե Սահակյան, Հասմիկ Հարությունյան, Էսթեր Խեմյան, Սերգո Հայրապետյան, Մարինե Խեմյան, Լուսինե Ղեջյան, Հասմիկ Գալստյան, Հասմիկ Մատիկյան, Ռաիսա Խաչատրյան և ուրիշներ):

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Ամբողջացնելով Շիրակի բանահյուսության XIX դարավերջից մինչև մեր օրերը հավաքված և հրատարակված նյութերը՝ կարելի է ասել, որ գործ ունենք հսկայական հոգևոր ժառանգության հետ, որն ընդգրկում է բանահյուսության բոլոր ժանրերը, ներկայացնում է տարածաշրջանի բարբառների ու խոսվածքների երանգապնակը, բանահյուսության կենցաղավարած և կենցաղավարող տեսակներն ու բանահյուսական երկացանկը, տեղական սովորույթների, հավատալիքների, ծեսերի, կենցաղի առօրյա դրսևորումները, լեզվամտածողության և պատմելաոճի առանձնահատկությունները և այլն:

Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն

1. Անանիա Շիրակացի. *Մատենագրություն*: «Հայ մատենագիրներ» մատենաշար: Երևան: «Սովետական գրող» հրատ.: 1979: 400 էջ:
2. Բարսեղյան Պ. *Ձեռագիր հավաքածու*: ՀԱԻԱ էջեր FFVI: 6638:
3. Բրուսյան Ա. *Ռամկական մրմունջներ*: Երևան: «Սովետական գրող» հրատ.: 1985: 240 էջ:
4. Գևորգյան Հ. *Լենինականյան զվարճալի գրույցներ և սրամտություններ*: Երևան: «Հայաստան» հրատ. 1989: 180 էջ:
5. Էմինեան ազգագրական ժողովածու: Հ. Ա. *Փշրանք Շիրակի ամբարներից*, հավաքեց՝ Ա. Մխիթարեանց, Մոսկուա-Ալեքսանդրապոլ: Լազարեան ճեմարանի արևելեան լեզուաց հրատ.: 1901: 338 էջ:
6. Թարվերդյան Գ. *Ձեռագիր հավաքածու*: ՀԱԻԱ էջեր FFI: 2349-3802:
7. Իկիլիկյան Հ. *Գյումրին, Պոլոզ Մուկուչը և երգիծական մանրապատումներ*, Երևան, «Հայաստան» հրատ.: 1989: 350 էջ:
8. Իսահակյան Մ. *Շիրակի ժողովրդական երգեր* // Ազգագրական հանդես: Գիրք Ե: Թիֆլիս: Կ. Մարտիրոսեանցի տպարան: 1889: էջեր 200-212:

9. Կատվայան Մ. *Շիրակ // Հայկական Սովետական Հանրագիտարան*: Հ. VIII: Երևան: Հայկական հանրագիտարանի հրատ.: 1982: էջ 512-514:
10. Կոստանեանց Յ. *Շիրակի լեզներդաներից ու ժողովրդական կեանքից*: Ալեքսանդրապոլ: Մալխասեանց տպ.: 1896: 78 էջ:
11. Հայ ժողովրդական հեքիաթներ. *Շիրակ*: Հ. IV, Երևան, ԳԱ հրատ.: 1963: 552 էջ:
12. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան: Հ. 4, Ե-Վ, Թ.Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ.Խ. Բարսեղյան: Երևան: ԵՀ հրատ.: 1998: 812 էջ:
13. Հարությունյան Ս. *Հայ ժողովրդական հանելուկներ*: Երևան, ԳԱ հրատ.: 1965: 430 էջ:
14. Հարությունյան Ս. *Հայ հնայական և ժողովրդական աղբյուրներ*, Երևան: ԵՀ հրատ.: 2006: 504 էջ:
15. Հովհաննիսյան Մ. *Ոսկեհասկ (Մոլլա-Մուսա) գյուղի պատմությունը, ազգագրությունը, բանահյուսությունը*, Երևան: «Արեգ» հրատ.: 2005: 400 էջ:
16. Ղանալանյան Ա. *Առածանի*: Երևան: ԳԱ հրատ.: 1960, 398 էջ:
17. Ղանալանյան Ա. *Ավանդապատում*: Երևան: «Հայագիտակ»: 2022: 832 էջ:
18. Մանանդյան Հ. *Երկեր, հատոր Ե, Հին Հայաստանի և Անդրկովկասի պատմության մի քանի պորբլեմների մասին*: Երևան: ԳԱ հրատ.: 1984: 615 էջ.:
19. Մխիթարեանց Աղ. *Փշրանք Շիրակի ամբարներից // Էմինեան ազգագրական ժողովածու*: Հ. Ա: Մոսկուա-Ալեքսանդրապոլ: Լազարեան ճեմարանի արևելեան լեզուաց հրատ.: 1901: 338 էջ:
20. Մովսէս Խորենացի. *Պատմություն հայոց*: Աշխատասիրութեամբ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի: Տփղիս: Կ. Մարտիրոսեանցի տպ.: 1913: 396 էջ:
21. Շերենց Գ. *Վանայ սագ, Հաւաքածոյք Վասպուրականի ժողովրդական երգերի, հէքեայթների, առածների և հանելուկների*: Առաջին մաս (Տեղի բարբառով): Թիֆլիս: Կ. Մարտիրոսեանցի տպ.: 1885: 187 էջ:
22. Շերենց Գ. *Վանայ սագ, Հաւաքածոյք Վասպուրականի ժողովրդական երգերի, հէքեայթների, առածների և հանելուկների*: Երկրորդ մաս (Տեղական բարբառով), Թիֆլիս: Կ. Մարտիրոսեանցի տպարան: 1899: 191 էջ:
23. Սեդրակեան Ա. *Քնար մշեցոց եւ վանեցոց (մինչև այժմ չհրատարակված երգեր)*: Ի Վաղարշապատ: Ի տպարանի Կաթուղիկէ Էջմիածնի: 1874: 46 էջ:
24. Սրուանձտեանց Գ. *Մանանայ*: Կ. Պոլիս: Տպագրութիւն Ե.Մ. Տնտեսեան: 1876: 457 էջ:
25. Սրուանձտեանց Գ. *Համով-հոտով*: Կ. Պոլիս: Տպագրութիւն Գ. Պաղտատլեան (Արամեան): 1884: 384 էջ:
26. Քաջբերունի Գ. *Հայկական սովորություններ // Ազգագրական հանդէս*: Գրքեր VII-VIII: Թիֆլիս: Կ. Մարտիրոսեանցի տպարան: 1901: էջեր 113-204:
27. Քաջբերունի Գ. *Հայկական սովորություններ // Ազգագրական հանդէս*: Գիրք IX: Թիֆլիս: Կ. Մարտիրոսեանցի տպարան: 1902: էջեր 83-116:
28. Dan R. *A Study of the Toponyms of the Kingdom of Bia/Urartu: with a contribution by Marie-Claude Tremouille*. Roma. Scienze e Lettere. 2020. 352 p.
29. Бунятовъ Гр. *Памятники древности въ окрестностяхъ селенія Башъ-Шурагель // Сборникъ матеріаловъ для описанія мѣстностей и племень Кавказа*. Выпускъ XIII. Отдѣлъ I. Тифлисъ. 1892. 152с.
30. Варданян С. *Вкладъ Тиграна Навасардяна въ армянскую фольклористику // Հայ ազգագրություն և բանահյուսություն*: Հ. 18 Երևան: ԳԱ հրատ.: 1991, 5-58 էջեր.
31. Паткановъ К., *Ванскія надписи и значеніе ихъ для исторіи передней Азіи*. С.-Петербургъ. 1881.178с.

R e f e r e n c e s

1. Anania Shirakatsi. Cronicle (Armenian chroniclers) [*Matenagrutyun (Hay matenagirner)*]. Yerevan: “Sovetakan grosh” publ. 1979, 400 p. (in Armenian)
2. Barseghyan P. Manuscript collection [*Dzeragir havak'atsu*] Archive of the Institute of Archaeology and Ethnography of the National Academy of Sciences of the Republic of Armenia (AIAE NAS RA), p. FFVI:6638. (in Armenian)
3. Brutyan A. Peasant songs [*Ramkakan mrmunjner*]. Yerevan: “Sovetakan grosh” publ. 1985, 240 p. (in Armenian)
4. Gevorgyan H. Leninakan’s jokes and funny stories [*Leninakanian zvarchali zruyts'ner ev sramtutyunner*]. Yerevan: “Hayastan” publishing house. 1989, 180 p. (in Armenian).
5. Eminian ethnographic collection. Debris from the Shirak Ambars [*P'shranq Shiraki ambarnerits*]: Vol. A, Moskov-Alexandrapol: 1901, 388p. (in Armenian)
6. Tarverdyan G. Manuscript collection [*Dzeragir havak'atsu*] AIAE: p. FFI: 2349-3802 (in Armenian)
7. Iklilyan H. Gyumri, Poloz Mukuch and satirical miniatures [*Gyumrin, Poloz Mukuchy ev ergitsakan manrapatumner*]. Yerevan: “Hayastan” publishing house. 1989. 350 p. (in Armenian)
8. Isahakyan M. Folk Song of Shirak [Shiraki joghovrdakan erger] // Ethnographic journal, Book IX]. Tiflis. 1899, pp. 200-212 (in Armenian)
9. Katvalyan M. Shirak [*Shirak*] // Soviet Armenian Encyclopedia, volume VIII. Yerevan: Publishing House Armenian Encyclopedia.1982. pp. 512-514 (in Armenian)
10. Kostaneants H. From the Shirak legends and people’s life [*Shiraki lelgendanerits ev jhoxovrdakan kyanqits*]. Alexandropol: Malkhaseants publishing house, 1896. 78 p. (in Armenian)
Another noteworthy development is linked to the translation of literature specifically targeted at children and adolescents. As an example, Oscar Wilde's literary works come into focus. "Happy Prince" in Armenian translation was offered to the readers in 1904 [2, pp. 458-464]. Originally published in 1888, the full collection of "The Happy Prince and Other Stories" was intended for a youthful audience. The title "Happy Prince" holds significant intrigue in its Armenian translation, where it appears as "Prince Phelix". Our research has revealed that this was not a direct translation from the English original, but a mediated translation from Italian into Western Armenian, by Father Arsen Ghazikian. In Italian translation the title is "Il principe felice e altre storie". Given that both the English word "happy" and the Italian word "felice" have Armenian equivalents, and that the name "Felix" exists among Armenians, it appears that the Armenian translator made a deliberate choice to use the name "Փելիքս" (Felix) based on available Armenian equivalents and names. In this context, it could be considered a form of semantic adaptation, where the translator chose a name that conveys a similar meaning to the source language word "felice." *This approach is not uncommon in translation when there are multiple ways to convey a concept or name in the target language, and the translator selects an option that best fits the context and maintains the intended meaning.*

Bazmavep had a column for translated poetry called "Qertoghakan Tsaghkepoonj" (Bouquet of Poems) translated by Palian. Among English writers, it featured works from various periods, including works written as early as in the 18th -19th centuries. Through the columns, the readers notice a rise in poetry about national issues and love for the country. Under the "Bouquet of Poems", in various issues of Bazmavep, editors published the translations of poems written by Irish poet Thomas Moore (1779-1852) "Those Evening Bells" published twice. [16 p. 85, 17, p. 518]. Beneath the poem, a notation specifies that it was translated from English. Next was father Ghukas Bzhshkian's translation of "To the Fire-Fly" [18, p. 289], "Dear Harp of my Country", from "Irish Melodies" [19, p. 369].

American actor poet, playwright and author John Payne (1791 – 1852) was another notable poet featured in the same column of "English writers". His work, "Home! Sweet Home!" was published in Bazmavep in 1905 [22, p. 518]. The publishers noted that the translation was done from the original English text.

*Another famous writer whose works were introduced to the Armenian readers through translations, was the English poet and humorist Thomas Hood (1799 – 1845). Bazmavep published his poem "The Deathbed". The translator is Father Ghukas Bzhshkian [11, p. 182]. In Bazmavep's subsequent volumes, the readers are introduced with the English poet and translator Gabriel Charles Dante Rossetti (1828– 1882), through the translation of his "The Blessed Damosel", first published in 1850 in the journal *The Germ*. The translator is M. J. Ananikian [23, pp. 166-168].*

The works of Ossian have enjoyed robust representation, with multiple translations into Armenian dating back to 1901-1902. This significant aspect should be duly acknowledged in the translation history of the author's works. Notably, within the pages of Bazmavep, "Fingal's" translation was expertly rendered by Fr. Arsen Ghazikian [21, pp. 294-303]. It should be noted that Ossian was the narrator and purported author of a cycle of epic poems published by the Scottish poet James Macpherson, originally as Fingal (written in 1761 and dated in 1762) and Temora (1763), and later combined under the title "The Poems of Ossian". As it is known, Macpherson claimed to have collected word-of-mouth materials in Scottish Gaelic from ancient sources, and

that the work was his translation of that material. However, there is no mention about it to the Armenian reader.

2.3 A Window to English Education, Society and Language

Throughout various volumes, Bazmavep offered its readers a unique perspective into the English and European educational systems, as well as their literature and readership. Noteworthy articles that shed light on educational matters include "Teaching Morals and Discipline in English Schools" [14, pp. 88-90], which was translated by H. G. Lazarian. This article emphasizes the importance of values, with the well-known proverb "Honesty is the best policy". The article refers to "prof. Emile Cann". They collectively provide a comprehensive view of English education, literature, and contemporary discourse, enriching the readers' understanding of these subjects. Another significant article on the same topic translated by H. V. Khambeghian, is "The School of Tomorrow". "Minerva journal" is marked as the primary source of both articles, however, we were unable to trace back to the original sources via available resources.

2.4 Biographies

Bazmavep dedicated space to biographies of famous English, Scottish and other European writers, providing Armenian readers with insights into the lives and works of prominent figures. In the article, "English Writers", the author writes, "Nineteenth-century English literature, akin to a magician's museum, remains somewhat unfamiliar to Armenian readers. Excerpts from the biographies of English poets reveal a land of treasures, a literary realm akin to Transvaal, one might say, where each individual possesses a tool for conquest — reading" [10, pp. 514-518]. The author of the article signed as H.A.Y., which is recognized by most scholars as Father Alexis Hovsepian (Hayr Alexis Yovsepian).

One of the early articles, featuring biographies is dedicated to the life of William Shakespeare, as one of the best writers of all time [12, pp. 81-85]. Bazmavep's readers had the privilege of exploring the lives and literary contributions of such renowned figures as Thomas Moore (1779-1852), James Thomson (1700-1748), George Byron (1788-1824), Percy Bysshe Shelley (1792-1822), John Payne (1791 – 1852), Thomas Gray (1716-1771), etc. [10, p. 518], Walter Scott (1771-1832), Samuel Rodgers (1763-1855), John Keats (1795-1821) William Wordsworth (1770-1850), Mathew Arnold (1822-1888), Robert Browning (1812-1889), Bryan Waller Procter (1787-1874) and other (The 19th Century English Writers, 1906), Rudyard Kipling (1865-1936) [9, pp. 87-91]. The article has several sections, First Steps, Military Collections, Imperial (Universal) Poems, Sea Songs, Songs to God; For the Children. Furthermore, Bazmavep also offered an unsigned article, titled as "On Writing Style of Some Great Writers", that delved into the distinctive writing styles of other great authors, such as Scottish poet George Douglas (1869-1902), American fiction writer Robert Chambers (1827-1911), English writer and politician Edward Bulwer-Lytton (1803-1873) [20, p. 30].

A 1907 issue features an article about "The Lake School of Poets", Biographies of English poets William Wordsworth (1770-1850), Taylor Coleridge (1772-1834), Robert Southey (1774-1843), John Wilson (1785-1854) are introduced [7, p. 159-164]. From Lake Poets' works, the readers are introduced to "Hymn before Sun-rise, in the Vale of Chamouni", composed by the founder of the Romantic movement in England, Samuel Coleridge (1772-1834). It was translated from English by Yeghia Yervand Meleqian as Armenian publishers wanted the Armenian readers to have access to the poem in Armenian [9, p. 268].

3. Materials and Methods

Our primary source of data and information was the extensive Bazmavep archives, housed in the Mechitarist Monastery on the island of San Lazzaro degli Armeni in Venice, Italy.

However, it should be noted that access to these archives was not directly sought, and instead, our research heavily relied upon publicly available volumes of *Bazmavep* from 1843 to 1920. A significant portion of our analysis was facilitated through online resources, including the Union Catalog of Armenian Continuing Resources. This digital repository provided access to a wide range of 19th-century Armenian literary materials, including manuscripts, published works, and correspondence, which were instrumental in our research.

To provide a broader context for our research, we consulted a wide range of secondary sources, including scholarly articles, books, and historical records particularly related to Armenian and English literary heritage. Through the examination of *Bazmavep*, it became evident that the journal encompassed a wide array of themes and emphasized its commitment to cross-cultural and intellectual exchange. It served as a bridge for Armenian readers to access and engage with Western literary and intellectual currents, fostering a sense of connectedness to the broader world of letters. The Mechitarist fathers' proficiency in various European languages and their connections with the Armenian worldwide communities allowed them to undertake both direct and intermediary translations of renowned works of world literature. For instance, the translation of "The Story of Robinson Crusoe's Deeds" in 1836, translated by Father Minas Bzhshkian from French, highlighted their versatility in bringing literary classics to Armenian audiences. Our research also suggested reciprocal influences between Armenian and European literature during this period. This bi-directional exchange enriched both literary traditions, fostering a more interconnected global literary landscape.

In conclusion, the results of our study underscore the significant role played by *Bazmavep* and the Mechitarist fathers in facilitating cross-cultural literary exchanges during the 19th and early 20th centuries. Looking ahead, there are several promising avenues for future research in this field. Firstly, a deeper analysis of specific translations and their reception in Armenian society could provide insights into the preferences and literary tastes of the time. Additionally, a comparative study of *Bazmavep* with other contemporary literary journals in Europe may illuminate further facets of cross-cultural exchange. Exploring the Mechitarist fathers' networks and interactions with other intellectuals of the era could also offer a more comprehensive understanding of their role. Translations of French, Russian, Italian and German classics will be presented in the next articles.

CONCLUSION: The story of *Bazmavep*, the venerable Armenian periodical, is one that transcends the boundaries of time and geography. It is a story of intellectual curiosity, cultural exchange, and the enduring power of literature to bridge divides. As we conclude our exploration of *Bazmavep* in terms of translated English literature, we are left with a profound appreciation for the pivotal role it played in the cross-cultural communicator of ideas between Armenians and the English speaking world.

Bazmavep's commitment to biographies of famous European writers served as a means to provide Armenian readers with deeper insights into the lives and works of prominent figures. Through these biographies, readers could glimpse into the worlds of such figures as Shakespeare, Byron, Shelley, Moore, Thomson. These biographical explorations were not mere historical accounts; they were windows into the intellectual and creative landscapes of Europe.

In essence, *Bazmavep* was not merely a publication but a beacon of cultural and intellectual exchange. Its pages served as bridges that spanned linguistic and cultural gaps, enabling Armenians to engage with European thought and literature in profound ways. The Mechitarist fathers, the guardians of this literary haven, played a pivotal role in fostering these interactions. Their dedication to translation and cultural adaptation allowed Armenian readers to access a vast repository of European literary treasures. The periodical's contributions to introducing Armenian

readers to 19th-century English literature are particularly noteworthy. Works such as John Milton's "Paradise Lost," Daniel Defoe's "Crusoe," found a home in Bazmavep's pages.

The translations of English literature played a vital role in preserving and reviving these works. Many of these literary treasures might have faded into obscurity if not for their inclusion in Bazmavep's publications. These translated versions provided a second chance for these works, granting them renewed recognition and accessibility to a broader audience. The availability of Armenian translations shed light on overlooked aspects of the original works, enabling scholars to refine their historical understanding. Surprisingly, the history of many renowned European works' translations has omitted mention of Armenian translations and publications. Therefore, the articles featured in Bazmavep serve as valuable resources that facilitate European scholars in their endeavors to amend and refine their understanding of these literary masterpieces.

In the ever-evolving landscape of global culture, Bazmavep remains a shining example of how literature can transcend boundaries, fostering connections that enrich the human experience. It serves as an invitation to future generations to continue exploring the uncharted territories of intellectual exchange, for it is in this exchange that the truest and most profound understanding of our shared humanity is found. In hindsight, Bazmavep emerges as more than just a periodical; it is a living record of the profound literary and cultural connections that blossomed between Armenians and Europeans.

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. Անգլիական տիեզերակալության քերթողը Բիտիարդ Քիբլինկ // «Բազմավեպ», Սբ Ղազար, Վենետիկ: 1915: հ. 3: 87-91 էջեր:
2. Բայրըն, Շովահենը, թարգմ. Յ. Միրզայեանց: Սուրբ Ղազար, Վենետիկ. «Բազմավեպ»: 1911: հատ. 6: 284-285 էջեր (հայերեն) (բնագիրը հրատարակվել է 1814 թ.):
3. Բժշկեան Ղ. Լճամոլ Դպրոցը // «Բազմավեպ», Սբ Ղազար, Վենետիկ, 1907, հ. 4, 159-164, էջեր:
4. Հ. Ա. Յ. Անգլիացի մատենագիրներ // «Բազմավեպ»: Սբ Ղազար, Վենետիկ: 1905: հատ. 11: 514-518 էջեր:
5. Հուդ Թ. Մահուան անկողինը, թարգմ. Ղ. Բժշկեանը: «Բազմավեպ»: 1907: 4: 182 էջ:
6. Մատենագրություն. Գուլիելմոս Շեյքսպիր//«Բազմավեպ»: Սբ Ղազար, Վենետիկ: 1853, հ. 6: 81-85 էջեր:
7. Մերոպայան Ա. Լորդ Բայրոն Սան Լազարոյի հայկական վանքում: The Courier, 1973: 11: 27-37 էջեր:
8. Միներվա. Բարոյականության եւ կարգապահության ուսուցումը անգլիական դպրոցներու մէջ. թարգմ. Հ. Լազարեանի, «Բազմավեպ»: 1912: 2: 88-90 էջեր:
9. Մի քանի մեծ գրողների գրելու ոճի մասին [Մի քանի մեծ գրողներու աշխատելու եղանակե] // «Բազմավեպ», Սբ Ղազարոյ, Վենետիկ: 1919: հ. 1: 30- 31 էջեր:
10. Սուր Թ. Չանգակը երեկոյեան, թարգմ. Պալեանի կողմից: Սբ Ղազար: Վենետիկ: Բազմավեպ 1905 հատ. 2: էջ 85:
11. Սուր Թ. Երեկոյին Չանգակներ. Սբ Ղազար: Վենետիկ: Բազմավեպ: 1905: հ. 11: էջ 518 (հայերեն). (բնօրինակ աշխատությունը հրատարակվել է 1818 թվականին):
12. Սուր Թ. Կայծռիկին, թարգմ. Հ. Բժիկեան: Սբ Ղազար: Վենետիկ: Բազմավեպ: 1907: հ. 6: 289 էջ (հայերեն) (բնագիր՝ հրատարակված 1818 թ.):
13. Սուր Թ. Քաղցր քնարն իմ հայրենեաց, թարգմ. Տ. Ե Ս. Սբ Ղազար: Վենետիկ: Բազմավեպ: 1909: հ. 8: 369 էջ (հայերեն) (բնագիրը հրատարակվել է 1818 թ.):
14. Յովսէփեան Հ. Ա. Իննեւտասներորդ դարու Անգլիացի մատենագիրներ // «Բազմավեպ»: 1906: հ. 4: 169-173 էջեր:
15. Պայթըն Լ. Առ Ովկեան, թարգմ.՝ անհայտ: Սբ Ղազար: Վենետիկ: «Բազմավեպ»: 1858: հատ. 6: 173-174 էջեր:

16. Պայրըն. Տեպին Պաղտասարի, թարգմ. Յ.Պալեան: Սր Ղազար: Վենետիկ: «Բազմավէպ»: 1904: հատ. 7: 295 էջ:
17. Պայրըն, Կործանումն Սենեքերիմի, թարգմ. Յ.Պալեան: «Բազմավէպ»: 1904: հատ. 8: 378-380 էջեր:
18. Պայրըն, Լացէք ի վրայ. Բաբելոնեան ջրոց մօտ, թարգմ. Պալեան: Սր Ղազար, Վենետիկ: «Բազմավէպ»: 1904: հատ. 8: 380 էջ:
19. Ռոսէթի, Կ. Կոյսն երանեալ. Թարգմ. Մ.Անանիկյան: Սր Ղազար, Վենետիկ: Բազմավէպ: 1909: հ. 4, 166-168 էջեր::
20. Վիլտ Ռ. Փելիքս Իշխանը. Թարգմ. Հ. Ա.Ղազիկյան: Սր Ղազար, Վենետիկ: Բազմավէպ:, 1904: հ. 9: 458-464 էջեր:
21. Փէյն. Տո՛ւն, քաղցրիկ տուն. Հ. Ա. Յ. Բազմավէպ: 1905: հատ. 11: 518 էջ:
22. Քոլրիջ. Արեւածագէ առաջ, Շամունիի հովիտի մէջ, թարգմ. Ե. Մէլէքեան, «Բազմավէպ»: 1919: հ. 9: 268 էջ:
23. Օսիան, Փինգալ. Թարգմ. Հ. Ա.Ղազիկեան: Սր Ղազար, Վենետիկ: Բազմավէպ: 1901: հ. 10: 294-303 էջեր:
24. Byron G. *Beauties of English Poets, Lord Byron's English and Armenian Handwriting*. S. Lazzaro, Veniue. 1852. 233 էջ.
25. Moore T. *Letters and Journals of Lord Byron 2 Vols*. London: John Murray. 1830. 807 pages.

References

1. Byron G. *Beauties of English Poets, Lord Byron's English and Armenian Handwriting*. S. Lazzaro, Venice. 1852. 233 p..
2. Byron G. Ode to the Ocean, tr. uncredited [*Ar Ovkean*]. St. Lazare, Venise: “*Bazmavep*”. 1858. vol. 6, 173-174 pp. (in Armenian) (original work published in 1810).
3. Byron G. Vision of Belshazzar, tr. by H. Palian [*Tesiln Paghtasari*]. St. Lazare, Venise: “*Bazmavep*”. 1904. vol. 7, 295 p. (in Armenian) (original work published in 1815).
4. Byron G. The Destruction of Sennacherib, tr. by H. Palian [*Kortsanumn Seneqerimi*]. “*Bazmavep*”. 1904. vol. 8, 378-380 pp. (in Armenian) (original work Published in 1815).
5. Byron G. Corsair, tr. by J. Z. Mirzayan [*Tsovaheny*]. St. Lazare, Venise: “*Bazmavep*”. 1911. vol. 6, 284-285 pp. (in Armenian) (original work published in 1814).
6. Byron G. Oh! Weep For Those, tr. by Y. Palian [*Lats'eq I vray*]. By the Waters of Babylon, tr. by Y. Palian [*Babelonean Jrots Mot*]. St. Lazare, Venise: “*Bazmavep*”. 1904. vol. 8, 380 p. (in Armenian) (original work published in 1815).
7. Bzhshkian Gh. Lake School of Poets [*Lchamol Dprotsy*] // «*Bazmavep*», St. Lazzare, Venise, 1907, vol. 4, 159-164 pp. (in Armenian)
8. Coleridge S. Hymn Before Sunrise, tr. by Y. Meleqian [*Erg. Arevatsage Araj Shamoonii Hovtin Mej*] “*Bazmavep*”. 1919, 9, 268 p. (in Armenian). (original work published in 1802).
9. English Imperial Writer Rudyard Kipling [*Angliakan Tiezerakalutean Qertoghy*] // «*Bazmavep*», St. Lazare, Venise, 1915, v. 3, 87-91. pp (in Armenian)
10. H. A. Y. English Writers [*Angliatsi Matenagirner*] // «*Bazmavep*», St. Lazare, Venise, 1905, vol. 11, 514-518 pp. (in Armenian)
11. Hood T. *The Deathbed*, tr. by Gh. Bzhshkian. [*Mahvan Ankoghiny*] “*Bazmavep*”. 1907, 4, 182 p. (in Armenian) (Original work Published in 1830).
12. *Literature. William Shakespeare [Matenagrutyun, Guliemos Shakesbeer]* // «*Bazmavep*», St. Lazare, Venise, 1853, vol. 6, 81-85 pp. (in Armenian).
13. Mesrobian A. Lord Byron at the Armenian Monastery on San Lazzaro. *The Courier*, 1973, 11.1, pp. 27-37.
14. Minerva. Teaching Morals and Discipline in English Schools. tr. by H. Lazarian, [*Baroyakani ev Kargapahutean Usume Angliakan Dprotsneru Mej*] “*Bazmavep*”. 1912, 2, 88-90 pp.
15. Moore T. *Letters and Journals of Lord Byron 2 Vols*. London: John Murray. 1830. 807 p..

16. Moore T. Those Evening Bells, tr. by Y. Palian [*Zangakq Yerekoyean*]. St. Lazare, Venise: Bazmavep. 1905. vol. 2, 85 p. (in Armenian). (original work published in 1818).
17. Moore T. Those Evening Bells, tr. H. A. Y. [*Yekorin Zangakner*]. St. Lazare, Venise: Bazmavep. 1905, vol. 11, 518 pp (in Armenian). (original work published in 1818).
18. Moore T. *To the Fire-fly*, tr. H. Bzhikian. [*Kaysorikin*]. St. Lazare, Venise: Bazmavep. 1907, vol. 6, 289 p. (in Armenian) (original work published in 1818).
19. Moore T. *Dear Harp of My Country*, tr. by T. E. S. [*Qaghtsr Qnarn im Hayreneats*]. St. Lazare, Venise: Bazmavep, 1909, vol. 8, 369 p.. (in Armenian) (original work published in 1818).
20. *On the Writing Style of Some Great Writers [Mi qani mets groghneru ashkhatelu yeghanake]* // «Bazmavep», St. Lazzaro, Venice, 1919, vol. 1, 30- 31 pp. (in Armenian)
21. *Ossian, Fingal*. tr. by Fr. A. Ghazikian. [*Fingal*]. St. Lazare, Venise. Bazmavep, 1901, vol. 10, 294-303 pp. (in Armenian) (original work published in 1762).
22. Payne J. *Home! Sweet Home!* tr. by H. A. Y. [*Toon, Qaghtsrik Toon*] Bazmavep, 1905, vol. 11, 518 p. (in Armenian) (original work published in 1823).
23. Rossetti, G. *The Blessed Damosel*. tr. by M. Ananikian. [*Kuysn Yeraneal*]. St. Lazare, Venise. Bazmavep, 1909, vol. 4, 166-168 pp. (in Armenian). (original work published in 1830).
24. Wilde O. *The Happy Prince*. tr. by A. Ghazikian. [*Pelix Ishkhany*]. St. Lazare, Venise, Bazmavep, 1904, vol. 9, 458-464 pp. (in Armenian) (original work published in 1888).
25. Yovsepien H. A. *The 19th Century English Writers [Imevtasnerord Dareru Angliatsi Matenagirner]* // «Bazmavep», St. Lazare, Venise, 1906, vol. 4, 169-173 pp..

Շնորհակալ եմ / Принята / Received on: 02.10.2023

Գրախոսակալ եմ / Рецензирована / Reviewed on: 10.10.2023

Հանձնակալ եմ տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: 27.11.2023

Information about the author

Varduhi Ashot Baloyan:

PhD student at the Institute of Literature after M. Abeghyan of NAS,
Western Editor at "Erzenka" Publishing House. Yerevan, RA,
e-mail: varduhi.baloyan@edu.isec.am <https://orcid.org/0000-0001-5018-4045>

Վարդուհի Աշոտի ԲԱԼՈՅԱՆ՝ ԳԱԱ գրականության ինստիտուտի հայցորդ,
«Երզնկայ» խմբագրատան արևմտահայերենի խմբագիր, Երևան, ՀՀ,
էլ.հասցեն՝ varduhi.baloyan@edu.isec.am <https://orcid.org/0000-0001-5018-4045>

ՀՏԴ՝ 304

DOI: 10.52971/18294316-2023.26.2-190

**ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ
ՈՐՊԵՍ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆ ԵՎ ՄԱՐԶՈՒՄ
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Մարինե Գ. Գևորգյան

Երևանի պետական համալսարան

Պետական կառավարման ակադեմիա, Երևան, ՀՀ

Գայանե Ռ. Թովմասյան

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոն
Պետական կառավարման ակադեմիա, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Արարատի մարզը ՀՀ տասը մարզերից մեկն է և ընկած է հանրապետության հարավարևմտյան մասում: Այն հարուստ է պատմաճարտարապետական հուշարձաններով, այստեղ են գտնվում մի շարք թանգարաններ, որոնք բոլորը միասին զբոսաշրջային ռեսուրսներ են, որոնց հիման վրա կարող են կազմակերպվել մի շարք երթուղիներ: ***Մեթոդներ և նյութեր.*** Մարզի զբոսաշրջության հիմնախնդիրների համապարփակ վերլուծության նպատակով օգտագործվել են պատմական նկարագրողական, վիճակագրական և SWOT վերլուծության մեթոդները: ***Վերլուծություն.*** Հողվածում ուսումնասիրվել են մարզի հիմնական զբոսաշրջային ռեսուրսները՝ պատմամշակութային, կրոնական, էկոլոգիական, գաստրոնոմիական և այլն: Ներկայացվել են նաև մարզի հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները, զբոսաշրջային ենթակառուցվածքները, վերլուծվել է զբոսաշրջության առկա վիճակը մարզում: ***Արդյունքներ.*** Մշակվել են առաջարկություններ՝ նոր զբոսաշրջային երթուղիների մշակման, արդեն հանրահռչակված կամ քիչ հայտնի հուշարձանների՝ զբոսաշրջային երթուղիներում ներառման, զբոսաշրջության զարգացման ծրագրի մշակման, մարքեթինգային գործունեության բա-

րելավման, վիճակագրական հաշվառման իրականացման, փառաստոների կազմակերպման ուղղությամբ: Հեղինակների ներդրումը. Պատմական աղբյուրների հավաքագրում և վերլուծություն՝ Մ. Գևորգյան, սոցիալ-տնտեսական վիճակի և զբոսաշրջության զարգացման վերլուծություն՝ Գ. Թովմասյան, առաջարկությունների մշակում՝ Գ. Թովմասյան և Մ. Գևորգյան:

Բանալի բառեր՝ զբոսաշրջություն, պատմամշակութային ժառանգություն, Արարատի մարզ, Խոր Վիրապ, Խոսրովի անտառ, Դվին, Արտաշատ, մարքեթինգ, զբոսաշրջային երթուղի, SWOT վերլուծություն:

Ինչպես հղել՝ Գևորգյան Մ., Թովմասյան Գ. ՀՀ Արարատի մարզի պատմամշակութային ժառանգությունը որպես զբոսաշրջության զարգացման խթան և մարզում զբոսաշրջության զարգացման հնարավորությունների վերլուծությունը. // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Հ. 2 (26): 190-203 էջեր:

DOI: 10.52971/18294316-2023.26.2-190

HISTORICAL AND CULTURAL HERITAGE OF ARARAT REGION OF THE RA AS A STIMULUS FOR TOURISM DEVELOPMENT AND ANALYSIS OF TOURISM DEVELOPMENT OPPORTUNITIES IN THE REGION

Marine G. Gevorgyan

Yerevan State University
Public Administration Academy of the RA

Gayane R. Tovmasyan

"Amberd" Research Center of ASUE,
Public Administration Academy of the RA

Abstract

Introduction. Ararat region is one of the ten regions of the Republic of Armenia and is located in the southwestern part of the Republic. The region is rich in historical and architectural monuments and there are also a number of interesting museums, all of which are considered touristic resources. Based on them, number of routes can be organized. **Methods and materials.** Historical descriptive, statistical and SWOT analysis methods were used for the comprehensive analysis of tourism problems in the region. **Analysis.** The article examines the main tourism resources of the marz: historical, cultural, religious, natural, gastronomic, etc. The main socio-economic indicators of the region, tourism infrastructure and the current state of tourism in the region were also presented. **Results.** Some recommendations were processed: development of new tourist routes, inclusion of already popular or little-known monuments in tourist routes, development of a tourism development plan, improvement of marketing activities, statistical accounting, organization of festivals. **Authors contribution.** Collection and analysis of historical sources: M. Gevorgyan; socio-economic situation and tourism development analysis: G. Tovmasyan; development of recommendations: G. Tovmasyan and M. Gevorgyan.

Key words: *Tourism, historical and cultural heritage, Ararat region, Khor Virap, Khosrov forest, Dvin, Artashat, marketing, tourist route, SWOT analysis.*

Citation: Gevorkyan M., Tovmasyan G. *Historical and cultural heritage of Ararat region of the RA as a stimulus for tourism development and analysis of tourism development opportunities in the region.* // "Scientific works" of SCAS NAS RA. Gyumri, 2023. V. 1(26). pp. 190-203
DOI: 10.52971/18294316-2023.26.2-190

ИСТОРИКО-КУЛЬТУРНОЕ НАСЛЕДИЕ АРАРАТСКОЙ ОБЛАСТИ РА КАК СТИМУЛ РАЗВИТИЯ ТУРИЗМА И АНАЛИЗ ВОЗМОЖНОСТЕЙ РАЗВИТИЯ ТУРИЗМА В РЕГИОНЕ

Марине Г. Геворкян

Ереванский государственный университет
Академия государственного управления, Ереван, РА

Гаяне Р. Товмасын

Исследовательский центр «Амберд» Армянского гос. экономического университета
Академия государственного управления, Ереван, РА

Аннотация.

Введение: Араратский марз является одним из десяти марзов РА и расположен в юго-западной части республики. Регион богат историко-архитектурными памятниками, здесь также имеется ряд интересных музеев, все из которых считаются туристическими ресурсами. На их основе можно организовать ряд маршрутов. **Методы и материалы.** Для комплексного анализа туристических проблем региона были использованы методы историко-описательного, статистического и SWOT-анализа. **Анализ.** В статье изучены основные туристические ресурсы марза: исторические, культурные, религиозные, экологические, гастрономические и др. Также были представлены основные социально-экономические показатели региона, туристические инфраструктуры, проанализировано современное состояние туризма в регионе. **Результаты.** Были разработаны рекомендации: разработка новых туристических маршрутов, включение в туристические маршруты уже популярных или малоизвестных памятников, разработка плана развития туризма, совершенствование маркетинговой деятельности, ведение статистического учета, организация фестивалей. **Вклад авторов.** Сбор и анализ исторических источников: М. Геворкян; анализ социально-экономической ситуации и развития туризма: Г. Товмасын; разработка рекомендаций: Г. Товмасын и М. Геворкян.

Ключевые слова: туризм, историческое и культурное наследие, Араратская область, Хор Виран, Хосровский лес, Двин, Арташат, маркетинг, туристический маршрут, SWOT-анализ.

Как цитировать: Геворкян М., Товмасын Г. *Историко-культурное наследие Араратской области РА как стимул развития туризма и анализ возможностей развития туризма в регионе.* // "Научные труды" ШЦАИ НАН РА. Гюмри, 2023. Т. 1(26). сс. 190-203.
DOI: 10.52971/18294316-2023.26.2-190

ՆԱԽԱԲԱՆ. Արարատի մարզը գտնվում է ՀՀ հարավ-արևմուտքում, տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է: Արարատի մարզի տարածքը 2090 քառ. կմ է, բնակչությունը 2022 թ. դրությամբ կազմել է 256.6 հազար մարդ: Մարզն ունի 4 քաղաք, 95 գյուղ [16, էջեր 337-338]:

Զբոսաշրջությունն էական նշանակություն ունի ՀՀ տնտեսության մեջ և կարող է նպաստել երկրի տնտեսական աճին, զբաղվածության ավելացմանը և այլն [35, էջեր

83-98]: Հետևաբար կարևորվում է մարզերում պատմամշակութային և այլ զբոսաշրջային ռեսուրսների վերլուծությունը, որոնց հիման վրա հնարավոր է զարգացնել զբոսաշրջության տարբեր տեսակներ:

Արարատի մարզի պատմամշակութային ժառանգությունը և դրա կիրառման հնարավորությունները զբոսաշրջային երթուղիներում

Արարատի մարզի պատմամշակութային հուշարձաններին, մարզի խոշոր քաղաքներին, բնության հուշարձաններին և զբոսաշրջային այլ գրավչություններին անդրադառնալուց առաջ ընդգծենք հայերիս համար այնքան կարևոր մի տեղանվան՝ «Արարատ»-ի նշանակությունը: «Արարատ» տեղանունը գալիս է մարդկության հիշողության ակունքներից, այն կապված է համաշխարհային ջրհեղեղի և Նոյյան տապանի ժամանակների հետ: «Արարատյան թագավորություն». ահա այսպես է կոչվել համահայկական առաջին թագավորությունն Աստվածաշնչում: Արարատ անունով է հայտնի նաև հայոց սրբազան լեռը, որը Հայաստանի ազգային խորհրդանիշներից է: Հայաստանի առաջին հանրապետությունը (1918-1920 թթ.) հաճախ անվանվել է Արարատյան Հանրապետություն, քանի որ այն կենտրոնացած էր Արարատյան դաշտում:

Ինչ վերաբերում է տարածքի տեղադրությանը, ապա նշենք, որ մարզի տարածքը, ըստ 5-7-րդ դարերի «Աշխարհացոյցի»-ի, ընդգրկում է Այրարատ աշխարհի Ոստան Հայոց, Ուրծ, Արած գավառները և Մազազ գավառի մի մասը [29, էջ 297]:

Ներկայումս Արարատ անունն է կրում Հայաստանի Հանրապետության գողտրիկ անկյուններից մեկը՝ Արարատի մարզը: Մարզկենտրոնն Արտաշատ քաղաքն է, որը գտնվում է Արարատյան դաշտում՝ Երևանից 30 կմ հարավ-արևելք:

ՀՀ-ում կա 24221 պատմամշակութային հուշարձան, որից 906-ը Արարատի մարզում են [19, էջ 296]: Արարատում կա 111 հոգևոր կառույց, որից 78-ը՝ եկեղեցի, 20-ը՝ մատուռ¹:

Պատմական Արտաշատը կառուցվել է հայոց Արտաշես Ա արքայի կողմից Ք.ա. 185 թ. կարթագենացի զորավար Հաննիբալի կազմած հատակագծով: Արտաշատի քաղաքատեղին գտնվում է ներկայիս Արտաշատ քաղաքից 10 կմ հարավ-արևելք՝ Արաքս և Մեծամոր գետերի միախառնման տեղում: Ժամանակագիրներն Արտաշատ մայրաքաղաքի մասին գրում են «թագավորանիստ քաղաք», իսկ հռոմեացի զորավար Լուկուլոսն այն անվանել է «Հայկական Կարթագեն» [41, էջ 119]: Հին Արտաշատը կառուցապատված է եղել հելլենիստական քաղաքաշինության կանոններին համապատասխան. ուներ ջրամատակարարման համակարգ, ինչպես նաև ամֆիթատրոն: Արտաշատում էր գտնվում քաղաքի հովանավոր աստվածուհու՝ Անահիտի հեթանոսական մեհյանը: Արտաշատը մշտապես եղել է հնագետների ուշադրության կենտրոնում: 1967 թ. Փոքր Վեդի գյուղի տարածքում հայտնաբերվեցին լատիներեն երկու արձանագրություններ, որոնցից մեկը փորագրված էր իտալիկների լեզեռնի զինվորին վերաբերող տապանաքարի վրա, մյուսը՝ 0,8 մ բարձրությամբ և 8,5 մ ընդհանուր երկարությամբ հինգ սալա-

¹Տեղեկատվությունը տրամադրել է ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, տվյալները հիմնված են Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի հաշվարկների վրա:

քարերի վրա, որում հիշատակվում էին Արտաքսատա քաղաքանունը, հռոմեական կայսր Տրայանոսի (53-117թթ.) տիտղոսները և սկյութական IV լեգիոնի կողմից կատարվող ինչ-որ շինարարություն [40, էջեր 302-311; 39, էջեր 114-118]: 1970 թ. ՀՄՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախումբը սկսեց Արտաշատ մայրաքաղաքի կանոնավոր պեղումները [38, էջեր 44-60]: Պեղումներից հայտնաբերվել են հելլենիստական ժամանակաշրջանի ճարտարապետական հուշարձանների բազմաթիվ մնացորդներ, ինչպես նաև արվեստի եզակի նմուշներ:

Խոսելով Արարատի մարզի տարածքում գտնվող մեր մյուս պատմական քաղաքի՝ **Դվինի** մասին՝ նշենք, որ այն եղել է Հայաստանի մայրաքաղաքներից մեկը: Գտնվում է Այրարատ նահանգի Հայոց Ոստան գավառում (գավառը քաղաքի անունով կոչվել է Ոստան Դվին): Ըստ պատմահայր Մովսես Խորենացու՝ «Դվին» բառը պարսկերեն ծագում ունի և նշանակում է բլուր [8, էջ 245]: Դվին մայրաքաղաքի ավերակները գտնվում են Վերին Դվին, Վերին Արտաշատ գյուղերի տարածքներում: Ըստ Պատմահոր հաղորդման՝ Արարատյան դաշտի կլիման առողջացնելու համար քաղաքի մոտակայքում այն կառուցող Խոսրով Կոտակը կատարում է անտառատնկումներ [8, էջ 245], որոնք պահպանվել են մինչև այժմ «Խոսրովի անտառ» անունով: Դվինն ունեցել է նաև իր մատույցները պաշտպանող ամրոցներ (Տիկնունի և այլն): Կառուցվել են գեղեցիկ, քարաշեն շենքեր: Դրանցից նշանավորը Արշակունի թագավորների պալատն էր (IV դար), որից պահպանվել է արքայական գահասրահի (272 քառակուսի մետր մակերեսով) ավերակները: Դվինի հնագիտական ուսումնասիրության սկիզբը կապվում է Նիկողայոս Մառի անվան հետ, որը 1899 թ. մասնակի պեղումներ է կատարել միջնաբերդում: Տարբեր տարիներ արշավախումբը գլխավորել են՝ Մառի աշակերտ Սմբատ Տեր-Ավետիսյանը, Կարո Ղաֆադարյանը [24], Արամ Քալանթարյանը [31]: Երկարամյա պեղումներն իրենց գտածոներով փաստում են այն իրողությունը, որ Դվինը եղել է ժամանակի խոշոր արհեստագործական կենտրոններից մեկը: Դվինը հնուց ի վեր հայտնի էր նաև որպես մետաղագործական խոշոր կենտրոն: Այն հայոց զորքի զինապահեստն էր:

Տիկնունին ներկայումս ավերակ ամրոց է Դվին մայրաքաղաքի մոտ՝ Տիկնունյաց անտառում՝ մարզի Գետագատ գյուղի մոտակայքում [10]: Ամրոցը պատկանում էր Արշակունյաց թագավորներին: Կառուցվել է IV դարում, գոյատևել մինչև XVII դարը: Այն ծառայում էր որպես ամառանոց պալատական տիկնանց համար: Ըստ Փավստոս Բուզանդի՝ Տիկնունի ապարանքի շրջակայքում ստեղծվում է Տիկնունյաց անտառը, նրանից հյուսիս Տաճար մայրի անտառը, իսկ դեպի հարավ տնկված կաղնիների անտառը կոչվում է Խոսրովակերտ [4, էջ 78]: Այս անտառների մի մասը մտնում է Խոսրովի անտառ պետական արգելոցի պահպանվող տարածքի մեջ:

Հայաստանն ունի կրոնական և ուխտագնաց զբոսաշրջության մեծ ներուժ՝ ընդգրկելով շուրջ 1051 քրիստոնեական հուշարձաններ: **Խոր Վիրապի վանական համալիրը** դրանցից մեկն է:

Խոր Վիրապի վանքը գտնվում է Լուսառատ գյուղի մոտակայքում: Այն այսօր էլ հայոց հանրահայտ ուխտատեղիներից մեկն է՝ կապված Գրիգոր Լուսավորչի անվան

հետ, որին Տրդատ 3-րդ Մեծը քրիստոնյաների հալածանքի շրջանում 14 տարի փակել էր արքունական բանտում: Այժմ վանական համալիրում կանգուն են երկու եկեղեցիներ: Նրանցից հնագույնը կառուցվել է հենց վիրապի վրա Ներսես Գ Տայեցի (Շինող) կաթողիկոսի կողմից 642 թ., ինչպես այդ մասին վկայում է Հովհաննես Դրասխանակերտցին. «...շինե՛ տաճար սրբութեան և ի վերայ վիրապի Սրբոյն Գրիգորի...» [28, էջ 83]: Ներսեսաշեն եկեղեցին հետագայում ավերվել է և տեղում նոր եկեղեցի կառուցվել 1662 թ. ագուլիսցի խոջա Ծամոնի և թիֆլիսցի խոջա Ավթանդիլի ծախսերով: **Ս. Գրիգոր** կոչվող այս փոքր եկեղեցու Ավագ խորանի աջ մասից բացվում է մուտքը դեպի խորափոր վիրապ: Այն ունի 4,5 մ տրամագիծ, շուրջ 6 մ բարձրություն, գմբեթանման ծածկ:

Վանական համալիրի կենտրոնում վեր է խոյանում XVII դարում կառուցված **Ս. Աստվածածին եկեղեցին**: Եկեղեցիներից ոչ հեռու **Օթեաց Խաչ** ուխտատեղին է, ուր, ըստ ավանդության, հանդիպել են Հայոց Եկեղեցու հիմնադիրներ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները: 1859 թ. այստեղ մատուռ է կառուցել ալեքսանդրապոլցի Վարդան Քետերյանցը [25, էջ 174]:

Կաթավաբերդը գտնվում է Խոսրովի արգելոցի տարածքում, Ազատ գետի աջ ափին, պատմական Մազազ գավառի Բերդատակ լքված բնակավայրի մոտ: Կոչվում է նաև Թաթուլի կամ Քեղի բերդ: Միջնադարյան ամրոցի մասին հիշատակել է Հովհաննես Դրասխանակերտցին (IX-X դդ.)՝ որպես Բագրատունիների տոհմական տիրույթի: Այն եղել է Գևորգ Մարզպետունու նստավայրը, որը մանրամասն նկարագրել է մեծ վիպասան Մուրացյանը «Գևորգ Մարզպետունի» պատմավեպում [27]: Կաթավաբերդը գտնվում է 2075 մ բարձրությամբ լեռնագագաթին: Պահպանվել են 2-2,5 մ հաստությամբ պարիսպները, 8-10 մ բարձրությամբ աշտարակները, ամրոցի ներսում գտնվող եկեղեցու և տնտեսական շինությունների ավերակները [6]: Կաթավաբերդն ունի պատմամշակութային չափազանց մեծ արժեք ողջ Այրարատ նահանգի պատմության ուսումնասիրության համար: Այն նաև պատմական Հայաստանի ամրոցաշինության լավագույն օրինակներից է:

Ասորական եկեղեցիները ևս կարող են դառնալ զբոսաշրջային այցելության լավագույն վայրեր: ՀՀ տարածքում գործում է երեք ասորական եկեղեցի, որոնցից երկուսը հաշվառված են Արարատի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում [10]: Ամենավաղը 1828 թ. կառուցված Արարատի մարզի Վերին Դվին գյուղի Թովմաս առաքյալին նվիրված «Ումրա» (Մար Թումա) եկեղեցին է: Մյուսը՝ Մուրբ Կիրիլը (կամ Կիրիկ և Իուլիտա Մուրբ Նահատակների) գտնվում է Դիմիտրով գյուղում: Եկեղեցին կառուցվել է 1840 թ., վերակառուցվել՝ 1980 թ.: Ճարտարապետական տեսանկյունից երկու եկեղեցիները միմյանց շատ նման են: Եկեղեցիները հատկապես աչքի են ընկնում եռահարկ զանգակատներով [26, էջ 259]:

Արարատի մարզում են գտնվում նաև զբոսաշրջության երթուղիներում արդեն վաղուց ներառված երկու թանգարաններ՝ Պարույր Սևակի և Վազգեն Մարգարյանի տուն-թանգարանները:

Պարույր Սևակի տուն-թանգարանը գտնվում է գրողի ծննդավայրում՝ Արարատի մարզի Զանգակատուն գյուղում: Թանգարանը բացվել է Պարույր Սևակի ողբերգա-

կան մահվան տասնամյա տարելիցի օրը՝ 1981 թ. հունիսի 17-ին: Այն կառուցվել է նրա հայրենի տան կողքին՝ այգու մեջ: Թանգարանում պահպանվում են շուրջ 700 ցուցանմուշներ և 1000-ից ավելի գրականություն: Բակում է գտնվում Պարույր Մևակի գերեզմանը, որի վրա փորագրված է նաև կնոջ՝ Նելլի Մենադարաշվիլու անունը [30]:

Վազգեն Մարգսյանի տուն-թանգարանը գտնվում է Արարատի մարզի Արարատ գյուղում: Այն նվիրված է 20-րդ դարի երկրորդ կեսի հայ հասարակական-քաղաքական և ռազմական գործիչ Վազգեն Մարգսյանի կյանքին ու գործունեությանը: Բացվել է 2001 թվականի մարտի 5-ին՝ Վազգեն Մարգսյանի ծննդյան 43-րդ տարելիցի օրը: Թանգարանում ամփոփված է Վազգեն Մարգսյան գրողի, սպարապետի, պետական գործչի կենսագրությունը ներկայացնող պատմությունը: Բակում տեղադրված է սպարապետի կիսանդրին (քանդակագործ՝ Կամսար Ղազարյան):

Արարատի մարզի զբոսաշրջային ակտիվները, հիմնական և առաջարկվող ուղղությունները, զբոսաշրջության զարգացման վերլուծությունը

Արարատի մարզում է գտնվում **Խոսրովի անտառ պետական արգելոցը**, որը ստեղծվել է 1958 թ. Ազատ և Վեդի գետերի ավազաններում՝ Հայաստանի Կարմիր գրքում գրանցված կենդանիների ու բույսերի պահպանության նպատակով: Տարածքը կազմում է 23213.5 հեկտար [18]: Արգելոցի ֆլորան հարուստ է հազվագյուտ բուսատեսակներով, կենդանական ֆաունան ներկայացված է ավելի քան 1500 տեսակներով [11]:

Խոսրովի անտառ արգելոցն աչքի է ընկնում նաև իր պատմամշակութային կառույցներով, խաչքարերով և տապանաքարերով: Արգելոցի պատմաճարտարապետական հուշարձանների թիվը հասնում է 300-ի: Սփռված լինելով ողջ արգելոցի տարածքով՝ վերջիններս արտացոլում են միջնադարյան Հայաստանի տարբեր պատմափուլերին առնչվող մշակութային շերտեր:

Ազատի աջակողմյան սարալանջին են գտնվում Ավանիկ գյուղատեղիի (V-դ.) ավերակները: Հին գյուղատեղիում պահպանվել է կիսավեր եկեղեցին, որը թվագրվում է IV-V դդ: Եկեղեցու մոտակայքում կան փորագիր խաչերով կոթող, IX-X դդ. խաչքարեր, տապանաքարեր, բնակելի շինության հետքեր, պահպանվել է աղբյուր: Ազատի վերին հոսանքում՝ մոտ 3 հա տարածքի վրա սփռված են Իմիրզեկ գյուղատեղին և Վանաստան վանական համալիրը (XII-XVIIIդդ.): Գյուղատեղիի կենտրոնական մասում պահպանվել են XIII դարի Ս. Աստվածածին եկեղեցու ավերակները, արևմտյան կողմում կա հին գերեզմանոց: Իմիրզեկ գյուղատեղին և վանական համալիրը ավերվել են 1679 թ. երկրաշարժի ժամանակ: Հուշարձանախումբը միջնադարյան հարուստ ճարտարապետական նմուշներից է:

Արարատի մարզում են գտնվում նաև **Գոռավանի ավազուտներ** և **Խոր Վիրապ** [18] պետական արգելավայրերը, նաև ծովի մակարդակից 1050 մետր բարձրության վրա գտնվող **Ազատի ջրամբարը**, որ կառուցվել է Լանջազատ գյուղի մոտ՝ Ազատ գետի միջին հոսանքում և օգտագործվում է Արարատյան դաշտի ոռոգման համար: Ջրամբարի շուրջ վեր են խոյանում Երանոսի լեռները [1]: Ներկայումս շատ զբոսաշրջիկներ են այցելում Ազատի ջրամբար:

Արարատի մարզն ունի համեղ **ազգային խոհանոց**: Մարզի հայտնի ավանդական կերակրատեսակներից են՝ **տապակա Արարատը, այլազանը, արարատյան հազանին, հալվան** [5, էջ 226]:

Արարատում կարող են զարգանալ զբոսաշրջության կրոնական, պատմամշակութային, էկո, ագրո տեսակները: Զբոսաշրջային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման տեսանկյունից անհրաժեշտ է անդրադառնալ նաև մարզի սոցիալ-տնտեսական վիճակին:

2021թ. Արարատի մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռը ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել է՝ արդյունաբերություն՝ 10.7%, գյուղատնտեսություն՝ 15.1%, շինարարություն՝ 7.7%, մանրածախ առևտուր՝ 4.2%, ծառայություններ՝ 1.5% [16, էջեր 337-338]: Արարատի մարզի ՀՆԱ-ն 2020 թ. շուկայական գներով կազմել է 419235.6 մլն դրամ (ՀՀ-ի 6.8%-ը) [13, էջ 32], գործազրկության մակարդակը 2021թ. կազմել է 10.0%, զբաղվածները՝ 109.1 հազար մարդ, միջին ամսական անվանական աշխատավարձը՝ 180321 դրամ [14, էջեր 127-149]:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2019թ. ՀՀ է ժամանել 1894377 զբոսաշրջիկ, իսկ ՀՀ-ից մեկնել է 1867888 զբոսաշրջիկ [20, էջ 139]: 2020թ. ՀՀ ներգնա զբոսաշրջիկների թվաքանակը նվազեց 81 տոկոսով՝ կազմելով 360338 մարդ [36, էջեր 139-148]: 2021թ. ոլորտը սկսեց աստիճանաբար վերականգնվել, և ներգնա զբոսաշրջիկների թիվը կազմել է 875772 մարդ՝ 2020թ. համեմատ աճելով 2,4 անգամ [21, էջ 141] : 2022թ. ՀՀ է ժամանել 1665658 մարդ [23, էջ 130], որոնց կեսից ավելին՝ ռուս զբոսաշրջիկներ:

2019 թ. ներքին զբոսաշրջիկների թվաքանակը կազմել է 1544600 մարդ [34, էջեր 96-110]: 2020 թ. անկում ապրեց նաև ներքին զբոսաշրջիկների թվաքանակը՝ կազմելով 1045756, իսկ 2021 թ. կրկին ոլորտն աշխուժացավ՝ կազմելով 1595826 մարդ [22, էջ 114], ինչն ավելին է, քան 2019 թ. գրանցված ցուցանիշը: 2022 թ. ներքին զբոսաշրջիկների թվաքանակը կազմել է 1929940 մարդ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 21 տոկոսով ավելի [23, էջ 133]:

Պետք է նշել, սակայն, որ *չկա պաշտոնական վիճակագրություն, թե որքան են կազմել ներգնա և ներքին զբոսաշրջային այցելություններն ըստ ՀՀ մարզերի*: Արարատի մարզի ծառայությունների ծավալը ՀՀ ծառայությունների ծավալի ընդհանուր կառուցվածքում կազմում է 1.46%:

ՀՀ-ում վերջին տարիներին աճում է հյուրանոցային տնտեսության օբյեկտների (ՀՏՕ) և հանրային սննդի օբյեկտների թվաքանակը: 2021 թ. ՀՀ-ում եղել է 915 ՀՏՕ, որից ընդամենը 10-ը Արարատում [12, էջ 313]: 2021թ. ՀՀ-ում եղել է 2661 հանրային սննդի կազմակերպման օբյեկտ, որից 137-ը՝ Արարատի մարզում: Զբոսաշրջային գործակալությունների թիվը ՀՀ-ում 2021 թ. կազմել է 742, որից 16-ը՝ Արարատի մարզում²: Արարատի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության գերակայություններից է զբոսաշրջության զարգացումը՝ շեշտը դնելով մշակութային, էկո և գյուղական տուրիզմի վրա [17, էջ 51]:

² Տեղեկատվությունը տրամադրել է ՀՀ վիճակագրական կոմիտեն:

Մարին Գևորգյան, Գայանե Թովմասյան

Աղյուսակ 1. Ծառայությունների ծավալը Արարատի մարզում, մլն դրամ [15, էջեր 99-100]

	2017	2018	2019	2020	2021
Ծառայությունների ծավալը, ընդամենը					
ՀՀ	1434321.2	1725840.2	1993439.3	1721735.5	1914936.6
Արարատ	23106.3	29698.4	34535.1	24183.3	28124.8
Կացության և հանրային սննդի կազմակերպում					
ՀՀ	112035.6	150901.7	194257.4	114333.8	192615.3
Արարատ	628.1	1262.0	1538.4	843.2	1316.9
Մշակույթ, գվարճություններ, հանգիստ					
ՀՀ	249766.3	338451.6	420755.7	339450.8	236664.6
Արարատ	33.7	33.9	38.1	8.0	11.6

Տարբեր զբոսաշրջային գործակալությունների կողմից կազմակերպվող տուրերն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ Արարատի մարզի զբոսաշրջային գրավչություններից գործող տուրերում ընդգրկված են հետևյալ վայրերը՝ Խոր Վիրապը, Զանգակատունը, Ագատի ջրամբարը, Հովհաննես Կարապետի վանքը և Խոսրովի արգելոցը [3: 32: 33: 37]:

Արարատի մարզում կարող են կազմակերպվել հետևյալ երթուղիները.

- ✓ Նոր Խարբերդ – Դիմիտրով – Արտաշատ – Խոր վիրապ,
- ✓ Ագատի ջրամբար – Կաթավաբերդ,
- ✓ Դաշտաքար – Ուրցաձոր – Խոսրովի անտառ արգելոց,
- ✓ Երասխ – Զանգակատուն [2, էջեր 44-61]:

Արարատի մարզի զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրների վերլուծության նպատակով հարկ է իրականացնել SWOT վերլուծություն, ինչը թույլ կտա մատնանշել զբոսաշրջության զարգացման ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և սպառնալիքները:

Աղյուսակ 2. Արարատի մարզի զբոսաշրջության զարգացման SWOT վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր	Հնարավորություններ	Սպառնալիքներ
Պատմամշակութային և կրոնական կառույցների առկայություն	Զբոսաշրջային տուրերում ընդգրկված են քիչ թվով վայրեր	Զբոսաշրջային տուրերում մարզի տարբեր վայրերի ընդգրկում և զբոսաշրջային նոր երթուղիների մշակում	Ներմաքային համայնքների միջև զարգացման անհամամասնություններ
ԲՀԳՏ-ների առկայություն	Ներքին և ներգնա զբոսաշրջիկների թվաքանակի վերաբերյալ վիճակագրության բացակայություն	Մարքեթինգային ակտիվ միջոցառումների շնորհիվ ներքին և ներգնա զբոսաշրջիկների թվաքանակի աճ	Գյուղական բնակչության աղքատություն և գործազրկություն
Թանգարանների առկայություն	Զբոսաշրջային մարքեթինգի թերի իրականացում	Գյուղերում ագրոզբոսաշրջության զարգացման հնարավորություն՝ զարգացած գյուղատնտեսության շնորհիվ	Կլիմայական ռիսկեր
Ազգային խոհանոց	համեղ Մարզում ՀՏՕ-ների և հանրային սննդի օբյեկտների քիչ թիվ	Փառատոնների կազմակերպում մարզում	Կանաչ տարածքների պակաս
Գյուղական կենցաղ և հյուրընկալ վերաբերմունք	Մարզի զբոսաշրջության զարգացման ռազմավարական ծրագրի բացակայություն	Զբոսաշրջային ենթակառուցվածքի օբյեկտների ավելացում	Ենթակառուցվածքների թերզարգացվածություն
Ինքնուրույն մարզի տարածքով	Մարզում կուրորտային ռեսուրսների և կուրորտային գոտիների բացակայություն	Երևանին մոտ գտնվելը	Շրջակա միջավայրի պահպանման խնդիրներ

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ . Արարատի մարզի պատմամշակութային հարուստ ժառանգության, զբոսաշրջային այլ ռեսուրսների վերլուծության հիման վրա կարելի է ասել, որ մարզում զբոսաշրջությունն ունի զարգացման էական նախադրյալներ: SWOT վերլուծության արդյունքում կարելի է մատնանշել այն հիմնական քայլերը, որոնք կնպաստեն մարզում զբոսաշրջության զարգացմանը.

➤ մարզում առկա են մի շարք պատմամշակութային հուշարձաններ, որոնց հիման վրա անհրաժեշտ է մշակել նոր երթուղիներ՝ ավելի շատ վայրեր ներառելով երթուղիներում,

➤ անհրաժեշտ է մշակել մարզի զբոսաշրջության զարգացման ռազմավարական ծրագիր, որը կներկայացնի զբոսաշրջության զարգացման ռեսուրսները, առկա հիմնախնդիրները և դրանց լուծման ճանապարհային քարտեզը,

➤ բարելավել ենթակառուցվածքները, ավելացնել զբոսաշրջային ենթակառուցվածքի օբյեկտները մարզում,

➤ բարելավել ոլորտի վիճակագրական հաշվառումը՝ մարզում հանգրվանող ներքին և ներգնա զբոսաշրջիկների թվաքանակը, սեռատարիքային կազմը իմանալու, առկա պահանջարկը գնահատելու նպատակով,

➤ մարզում զարգացած է գյուղատնտեսությունը, ուստի կարելի է իրականացնել ագրոզբոսաշրջության զարգացման ծրագիր,

➤ կարելի է կազմակերպել տարբեր փառատոներ,

➤ հաշվի առնելով Խոր Վիրապի առկայությունը մարզում՝ կարելի է կազմակերպել հատուկ երթուղի՝ ուխտագնացությունն դեպի Խոր Վիրապ, իսկ տեղում կազմակերպել Գրիգոր Լուսավորչի կյանքի ու շագրավ դրվագները ներկայացնող պատմամշակութային ներկայացում:

Զբոսաշրջության զարգացումը կնպաստի Արարատի մարզում ենթակառուցվածքների զարգացմանը, ներդրումների ներգրավմանը, մարզի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը, բնակչության զբաղվածության ապահովմանը, ինչպես նաև ազգային, հոգևոր-մշակութային արժեքների պահպանմանն ու արժևորմանը:

Գ ր ա կ ա ն ո լ թ յ ո լ ն

1. Ազատի ջրամբար, <https://www.armgeo.am/azat-reservoir/>
2. Ավետիսյան Ս., Գրիգորյան Վ., Թովմայան Գ., Հայաստանի Հանրապետության մարզերի զբոսաշրջային երթուղիները: Կոլեկտիվ մենագրություն: Եր.: Հեղ. հրատ., 2021, 305 էջ:
3. Արշավներ ակումբ տուր, <https://www.facebook.com/arshavnerakumbtour/>
4. Բուզանդ Փ., Պատմություն Հայոց, թարգմ., ներածությունը և ծանոթագրությունները Ստ. Մայիսայանցի, Եր., 1968, 350 էջ:
